ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

ՀԱՏՈՐ Բ

ԵՐԵՎԱՆ
2009

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Մ 660

«Մեր հաղթանակները»
նախագծի ղեկավար և հեղինակ՝
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հեղինակային խմբի ղեկավար՝
ՍՈՒՐԵՆ ՄԱՐՏԻԿՅԱՆ

Գիտական խմբագիր՝
ԷԴՈՒԱՐԴ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
պատմ. գիտ. դոկտոր

Մեր հաղթանակները.- Հ.1.
Մ 660 - Եր.: Նորավանք, 2009, 332 էջ

«Մեր հաղթանակները» նախագծի նպատակն է հանրությանը ներկայացնել Հայաստանի հարուստ ռազմական պատմությունը: Այս հատորում ընդգրկված է IV-Xդդ. պարսկական և արաբական գերտերությունների դեմ մղած պայքարում մեր բանակի տարած հաղթանակների համառոտ նկարագրությունը:

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-9939-9000-2-5

© «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԿՀ, 2009թ.

Նախաբան

«Մեր հաղթանակների» 2-րդ հատորում ներկայացված է IV-X դարերի Հայաստանի ռազմական պատմությունը: Այդ ժամանակաշրջանի պատերազմական գործողությունների վերլուծությունից հետևում է, որ հայկական ռազմագիտական միտքը, ռազմավարությունը, մարտավարությունը և օպերատիվ արվեստը շարունակական զարգացում են ապրել: Ավելին. Խաղխաղի ճակատամարտում (450թ.) կիրառված *հանդիպական մարտը* ռազմարվեստի պատմության մեջ գրավոր արձանագրված նման մարտավարության առաջին նախադեպն է: Նկատենք, որ *հանդիպական մարտն* այդուհետ լայնորեն կիրառել են նաև ուրիշները, և ոչ միայն պատմական անցյալում: Բարձր ռազմագիտական պատրաստվածություն ենթադրող այդ մարտավարությունը արդի պատերազմներում նույնպես համարվում է խիստ արդյունավետ:

Մեր ռազմական պատմությանը հատկանշական է նաև, համաձայն ժամանակակից եզրաբանության, քաղաքակրթական բովանդակությունը: Հայտնի է, որ քրիստոնեությունը պետականորեն ընդունելը Հայության համար ոչ թե նախկին արժեքային համակարգի սկզբունքային մերժում էր, այլ եղածի յուրովի զարգացում և վերիմաստավորում: Այդ առումով, մինչքրիստոնեական շրջանում *մարդու արժեքի գիտակցությունից զուրկ* (Նիկողայոս Ադոնց) Ասորեստանի դեմ զինված պայքարը տիպիկ «միջքաղաքակրթական պատերազմ» էր:

Հայկական քաղաքակրթական ինքնության և արժեհամակարգի պաշտպանության խնդիրն առավել հրատապացավ քրիստոնեության ընդունումից հետո: Այդ համատեքստում Վարդանանց պատերազմը զրադաշտական Պարսկաստանի դեմ, որի խորհրդանիշն է ռազմավարական հաղթանակով ավարտված Ավարայրի ճակատամարտը (451թ.), «միջքաղաքակրթական պատերազմի» դասական օրինակ է: Նույն նպատակաուղղվածությունը և տրամաբանությունն են ունեցել նաև Արաբական խալիֆայության դեմ մղած պատերազմները: Հատկանշական է, որ ստեղծված իրադրությունը թելադրում էր ներքին հակասություններ ունեցող Հայաստանին և Բյուզանդիային միավորել իրենց ռազմական հնարավորությունները:

«Մեր հաղթանակների» առաջին հատորի հրատարակումից հետո «Նորավանք» հիմնադրամը ստացել է բազմաթիվ կարծիքներ և մաղթանքներ, որոնք մեծապես նպաստել են մեր հետագա աշխատանքին: Միևնույն ժամանակ, այս նախագծի իրագործումն անհնարին կլիներ առանց այն գործուն, անկեղծ աջակցության, որը ստացանք *«Հայռուսգազարդ» ընկերությունից, ի դեմս Գլխավոր տնօրեն Կարեն Կարապետյանի և փոխտնօրեն Ռուբեն Սուրենյանի, և ՀՀ ԱԺ պատգամավոր Վահե Հակոբյանից:* Օգտվելով առիթից՝ հայտնում ենք նրանց մեր խորին շնորհակալությունը:

Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նախագծի հեղինակ և ղեկավար

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

«Մեր հաղթանակների» սույն հատորը սկսվում է հին աշխարհից միջնադարին անցման ժամանակաշրջանով, երբ՝ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակում, Արևելք-Արևմուտք հարաբերությունների առանցքում էր Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև ծավալվող հակամարտությունը, որը III դարի վերջին վերաճեց պատերազմի: 296թ. Պարսկաստանը պատերազմ է սկսում Հռոմի դեմ: Փոփոխական հաջողություններով ընթացող ռազմական գործողությունները Հյուսիսային Միջագետքում նշանավորվում են հռոմեական բանակի պարտությամբ, սակայն Հայաստանում տեղի ունեցած ճակատամարտում պարսից արքա Ներսեհն է պարտվում և ստիպված խաղաղություն է խնդրում:

Տրդատ Գ Մեծ թագավորը զորահանդեսի ժամանակ

298թ. Մծբինում կնքվում է հռոմեա-պարսկական 40-ամյա խաղաղության պայմանագիրը, որով Պարսկաստանը տարածքային զիջումներ է կատարում Հյուսիսային Միջագետքում: Խաղաղությունը նպաստավոր էր Հայաստանի համար:

Մծբինի խաղաղության պայմանագիրը Մեծ Հայքի թագավորությանը հնարավորություն տվեց վերականգնել պատերազմներում տուժած տնտեսությունը և ռազմական հզորությունը: Այն ձեռնտու չէր Սասանյան Պարսկաստանին, որտեղ պայմանագրի կնքումից տասը տարի անց գահ էր բարձրացել Շապուհ Բ թագավորը (309-379թթ.): Սակայն նա գիտակցում էր, որ նախքան խաղաղության պայմանագրի ժամկետի ավարտը Հայաստանի դեմ բացեիբաց հանդես գալով՝ կարող է իր դեմ հանել Հռոմին: Մինչդեռ հայ-հռոմեական դաշինքին հաղթելու համար Պարսկաստանն ուժեր և հնարավորություններ չուներ:

Հայկական պետությանը մարտահրավերներ էին նետված: Պետք էր նախապատրաստվել նոր՝ անհամեմատ ավելի լարված հակամարտության, և միաժամանակ ապագայի համար մշակել նոր հայեցակարգային համակարգեր:

Նոր դարաշրջանի մարտահրավերներին դիմակայելուն կոչված կարևորագույն ձեռնարկում է դառնում 301թ. Հայաստանում՝ առաջինն աշխարհում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը:

ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԽՈՒԺԱԾ ՄԱԶՔՈՒԹՆԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ

336-337ԹԹ.

330թ. Մեծ Հայքի գահին էր բարձրացել Խոսրով Գ Կոտակը (330-338թթ.): Այդ ժամանակ էլ պարսից արքունիքում որոշում է ընդունվում «հետախուզել» Հայաստանի ռազմական ներուժն ու արտաքին հարվածներին դիմակայելու նրա կարողությունը: Չցանկանալով տարածաշրջանի բոլոր մարտունակ ուժերին իր դեմ միավորվելու համար առիթ տալ՝ Շապուհը Հայաստանի նկատմամբ ոտնձգություններն իրականացնում էր ուրիշների միջոցով:

Պատերազմի առաջին շրջանը

Շապուհ Բ Սասանյանի սադրանքով 336թ. հարևան մազքութների արքա Սանեսանը՝ Արշակունիների տոհմից, լեռնային ցեղերից կազմված զորքով հյուսիսից ներխուժում է Հայաստան:

> **Պատմական տեղեկանք.** «Այն ժամանակ Մազքութների Սանեսան թագավորը... ժողովեց, գումարեց բոլոր զորքերը- հոներ, փոխեր, թավասպարներ, հեծմատակներ, իժմախներ, գաթեր, գղվարներ, ճղբեր, բաղասիճներ, եգերսվաններ և այլ խառնիճաղանջ թափառական վաչկատուն ցեղերի անթիվ բազմություն, որոնց առհասարակ ինքն էր իշխում: Եկավ անցավ իր սահմանը, մեծ Կուր գետը, ու սփռվեց ու լցրեց Հայոց աշխարհը»:
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Գ, գլ. է***

Մեծ Հայքի թագավորության պաշտպանական համակարգի համաձայն՝ հյուսիսից սպառնացող վտանգը կասեցնելու համար Սանեսանի զորքերի դեմ է արշավում Գուգարաց Միհրան բդեշխը, որի հրամանատարության տակ գործող հայկական զորամասերը փորձելու էին կանգնեցնել երկիր ներխուժած հրոսակների առաջխաղացումը: Չնայած բդեշխը պատվով է կատարում իր առջև դրված խնդիրն ու հերոսի մահով զոհվում մարտում, սակայն հյուսիսային կողմի զորքերով հակառակորդի առաջխաղացումը կասեցնել չի հաջողվում: Սանեսանի զորքերը բաժանվում են ու թալանչիական ռազմերթեր իրականացնում Մեծ Հայքի հյուսիսային և արևելյան շրջաններում:

Հայոց սպարապետ Վաչե Մամիկոնյանն այդ ժամանակ գտնվում էր Հռոմում, ուստի Խոսրով արքան որոշում է դուրս չգալ հակառակորդի դեմ վճռական ճակատամարտի և ամրանում է Կոգովիտ գավառի Դարոյնք անառիկ ամրոցում:

Երկրի համար այս ճակատագրական պահին հերոսության ու անձնվիրության օրինակ են ցույց տալիս մայրաքաղաք Վաղարշապատի բնակիչները, որոնք համառ դիմադրությամբ իրենց վրա են գամում մազքութների հրոսակախմբերի հիմնական ուժերը: Սակայն երկարատև պաշարումից հետո մազքութները գրավում են Վաղարշապատը:

Պատերազմի սկիզբն ընդհանուր առմամբ հաջող էր մազքութների համար, բայց հայկական կողմի համառ դիմակայությունը հյուծում է նրանց բանակը, և Սանեսանը չի համարձակվում հարձակումը շարունակել. նա իր գլխավոր ուժերը տեղակայում է Վաղարշապատում ու որոշում այստեղ ձմեռել:

Թեև հանկարծակի հարձակումով հակառակորդը զգալի ռազմավարական նախաձեռնություն էր ստացել, ու հայկական զորքերը հարկադրված էին անցել պաշտպանության, սակայն պաշտպանությունը պասիվ չէր: Հայկական առանձին զորամասեր համառ դիմադրություն էին ցույց տալիս Սանեսանի հրոսակախմբերին: Չիմանալով, թե որ կողմից կարող է հետևել հայկական հեծելազորի հերթական հարձակումը, Սանեսանն ուժերը բաժանել էր երեք մասի. բացի Վաղարշապատում գտնվող գլխավոր ուժերից, զորամասեր է դիրքավորում Ցլու գլուխ լեռան ստորոտում ու Օշականի բերդում: Այս քայլով մազքութների առաջնորդն իրեն դնում է խիստ անբարենպաստ իրավիճակի մեջ՝ կորցնելով հանկարծակի հարձակման հետևանքով ձեռք բերված ռազմավարական նախաձեռնության առավելությունները: Հայկական կողմը ժամանակ է ստանում գարնանը ծավալվելիք մարտական գործողություններին համակողմանիորեն նախապատրաստվելու համար:

Դարոյնքի ամրոցը՝ Կոգովիտ գավառում

Պատերազմի երկրորդ շրջանը

337թ. Հռոմեական կայսրությունից վերադառնում է սպարապետ Վաչե Մամիկոնյանը և համախմբում երկիր ներխուժած հակառակորդին դիմակայելու պատրաստ բոլոր ուժերը՝ մտադրվելով վճռական ճակատամարտում գլխովին ջախջախել մազքութներին:

Պատերազմի հետևանքով ստեղծված անբարենպաստ իրավիճակը շտկելու նպատակով հայկական կողմը նախ ռազմավարական քայլերի է դիմում: Ենթադրվող հարձակողական գործողությունների տրամաբանությունը և հերթականությունը հուշում են, որ Վաչե Մամիկոնյանը հակահարձակման համար ուժերը կենտրոնացնի Արագածոտն գավառի բարձրադիր վայրերում: Այստեղից էլ որոշվում է սկսել հարձակումը:

Առաջին ճակատամարտը տեղի է ունենում Ցլու գլուխ լեռան մոտ:

Հակառակորդից ավելի բարձր և ռազմավարական առումով ավելի նպաստավոր դիրքում ուժերը կենտրոնացրած սպարապետը դիմում է նաև մի շարք մարտավարական հնարքների: Մասնավորապես, ձգտելով չեզոքացնել հակառակորդի ամրացված ճամբարների տեղանքի առավելությունները՝ հարձակումը որոշվում է սկսել Ցլու գլուխ լեռան ստորոտում տեղաբաշխված ուժերի վրա սրընթաց հարձակումով:

Ստեղծված իրադրությունում առաջին հարձակման հաջողությունն առանցքային նշանակություն էր ունենալու պատերազմի հետագա ընթացքի վրա: Այդ իսկ պատճառով Վաչե Մամիկոնյանը որոշում է հարձակումը սկսել մազքութների համեմատաբար մեծաթիվ խմբավորման ոչնչացումից:

Նախապատրաստական փուլի կարևոր մասն էին կազմում հետախուզական գործողությունները: Մասնավորապես, հաջողվել էր պարզել մազքութների լուսադեմի կրոնական արարողությունը կատարելու ժամանակը, որի ընթացքում հակառակորդն առավել խոցելի էր: Այսպիսով, հայկական բանակը հարձակում է սկսում՝ օգտագործելով ոչ միայն *պահը* (լուսադեմին), այլև *հակառակորդի մասին հետախուզական* բավական ուշագրավ *տեղեկությունները*: Ցլու գլխի ճակատամարտը հայոց ռազմական հմտության տպավորիչ օրինակներից է:

Ինչպես և պետք էր սպասել, հակառակորդը չի կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ հայկական զորագնդերին և գլխովին ջախջախվում է:

Հաղթանակը

Զարգացնելով հաջողությունը՝ Վաչե Մամիկոնյանը հակառակորդի գլխավոր ուժերը ջախջախելու նպատակով զորքերն առաջնորդում է Արարատյան դաշտ: Հակառակորդի համար անսպասելի գրոհով սպարապետն ազատագ-

րում է մայրաքաղաքը: Չդիմանալով հայերի հարձակմանը՝ հակառակորդը խուճապահար փախչում է Օշականի ուղղությամբ:

Օշականում ևս հայկական այրուձին ուշագրավ մարտավարական հնարք է կիրառում. մազքուքների նետաձիգներին ազատ գործելու և հեռամարտ վարելու հնարավորություն չտալու նպատակով գրոհը տարվում է այն հաշվարկով, որ հակառակորդը մղվի դեպի քարքարոտ դժվար տեղանքը: Փաստորեն, Սանեսանի զորքերը ջախջախվում են միայն այն բանից հետո, երբ զրկվելով գործողությունների ազատությունից, նահանջի հնարավորություն չունենալով՝ հարկադրված էին ընդունել մարտը անբարենպաստ տեղանքում (տե՛ս սխեման):



Օշականի և Վաղարշապատի ճակատամարտերը 336-337թթ.

Այստեղ ևս Վաչե Մամիկոնյանն աչքի է ընկնում ռազմական ուշագրավ մտահղացումներով: Օգտագործելով հակառակորդի մարտավարության իմացությունը և քաջ գիտակցելով, որ ցրված կարգով նետաձգության վարումը Սանեսանի բանակի մաս կազմող քոչվոր ցեղերի մարտավարության առավելություններից է՝ նա հակառակորդին այնպիսի պայմաններում ճակատամարտ է պարտադրում, որ նրանք չկարողանային շահարկել իրենց գլխավոր «խաղաքարտը»: Բացի այդ, ճիշտ էր ընտրված նաև գլխավոր հարվածի ուղղությունը. հակառակորդի նահանջի հիմնական ուղիները փակվել էին շրջանցող և թևանցող զորամասերով, ու կտրտված տեղանքը (խոր ձորը, որի միջով հոսում է Քասաղ գետը) նրանց զրկում էր կազմակերպված նահանջելու հնարավորությունից:

Պատմական տեղեկանք. «Նրանց (լեռնականների) վրա հանկարծակի հարձակվեցին մեր արևելյան և արևմտյան զորքերը և հետ վանեցին դեպի Օշականի առապարը[1] և թույլ չտվեցին, որ նրանք ցրիվ գալով նետաձգություն կատարեին ըստ իրենց սովորության, այլ քաջաձի հեծյալները նրանց շտապ շտապ ու արագատես հետամուտ լինելով՝ մղեցին քարքարոտ դժվար տեղերը, այնպես որ թշնամիներն ակամայից ստիպվեցին ճակատամարտ կազմելու»:

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. Թ

Այս ճակատամարտում հարկ է նշել Վահան Ամատունու և Բագրատ Բագրատունու գնդերի հերոսական գրոհը: Հատկապես այս երկու զորամասերի սրընթաց և հմուտ գործողությունների շնորհիվ է հակառակորդը խուճապի մատնվում և փախչում մարտադաշտից: Հաղթանակը լիակատար էր, քանի որ մարտում սպանվում է նաև Սանեսանը: Մարտում աչքի ընկնելու համար, որպես պարգև, Վահան Ամատունին թագավորից ստանում է Օշականն իր շրջակայքով:

Պատմական տեղեկանք. «Եվ Հայոց զորավարի նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիները և Ամատունյաց տոհմի նախարար Վահանը և Վարագ Կամսարականը, հասնում զարնում ջարդում էին ալանների, մազքութների, հոների և մյուս ազգերի զորքերը և ամբողջ առապարի դաշտը լցնում էին մեռածների դիակներով, այնպես որ արյունը գետի նման առատ հոսում էր, և թիվ չկար սպանված զորքերին: *Հրաման տվին՝ աշխարհից* ***գուգազ***[2] *հանել, դիակները թաղել, վրան քարերով ծածկելով...*»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Գ, գլ. Է

Եզրակացություն

Ինքնուրույն հզոր ռազմական ձեռնարկում է դառնում փախչող հակառակորդի հետապնդումը: Հակառակորդի զորքի միայն չնչին մասն է կարողանում հեռանալ Հայաստանից: Հայկական զորքը փախչողներին հալածում է մինչև Հյուսիսային Կովկաս:

Մազքութների արշավանքը Սասանյան Պարսկաստանի սադրանքով՝ IV դարում կատարած առաջին ոտնձգությունն էր Հայաստանի դեմ, որը թշնամու պարտությամբ է ավարտվում:

---

[1] Առապար - քարքարոտ տեղանք:

[2] Սովորաբար գուգազ էր կոչվում անկանոն և անկազմակերպ զորքը կամ աշխարհազորը: Այստեղ խոսքը աշխատանքային պարհակ կատարող այն շինականների մասին է, որոնք պետք է կատարեին նեխող դիակների թաղումը:

ԳԱՆՁԱԿԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
363Թ.

360-ական թվականները Մեծ Հայքի թագավորության համար դժվարին փորձությունների ժամանակաշրջան էին՝ պայմանավորված Առաջավոր Ասիայում գերիշխանության ձգտող մրցակից ուժերի հարաբերակցության փոփոխմամբ:

Պարսկա-հռոմեական հերթական պատերազմն ավարտվում է հռոմեացիների պարտությամբ: Հուլիանոս կայսրը (361-363թթ.) թեև իր զորքերով մոտենում է Տիզբոնին, սակայն Պարսկաստանի մայրաքաղաքից քիչ հեռու տեղի ունեցած ճակատամարտում պարտվում է և ինքն էլ ստացած վերքերից մահանում: Պարսից Շապուհ Բ արքայի և հռոմեական նոր կայսեր՝ Հովիանոսի (363-364թթ.) միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Մեծ Հայքի հարավային հինգ գավառները՝ 15 բերդերով և քաղաքներով, ներառյալ Հյուսիսային Միջագետքի մի քանի բնակավայրեր, որոնցից ամենամեծը Մծբինն էր, անցնում են Պարսկաստանին: Պայմանագրի մեկ այլ կետով կայսրը պարտավորվում է օգնություն ցույց չտալ Հայոց արքային Պարսկաստանի դեմ պայքարում:

*Արևելքում Հռոմի քաղաքականությունը բնութագրող այս պայմանագիրը IV դարի հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսը անվանել է **«ամոթալի պայմանագիր»**:*

«Ամոթալի պայմանագրին» հաջորդած տասնամյակը հայ ժողովրդի անկախ պետության պահպանման համար վարվող պայքարի մի փուլ է: Այն սկսվում է չորս տարի (363-367թթ.) տևած Հայ-պարսկական պատերազմով (որը ստանում է համաժողովրդական պայքարին բնորոշ գծեր) և ավարտվում Ձիրավի ճակատամարտում (371թ.) պարսկական բանակի ջախջախումով:

Պարսիկների դեմ հայ ժողովրդի մղած պայքարը հիմք է հանդիսացել «Պարսից պատերազմ» կոչվող մեծ վիպերգության համար, որի կենտրոնական անձը սպարապետ Վասակ Մամիկոնյանն է:

Պետության համար ծանր պահին իրեն լավագույնս է դրսևորում Արշակ Բ արքան (345-368թթ.), որի շուրջն են համախմբվում հայ նախարարները՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ:

Շապուհ Բ արքան, օգտվելով «Ամոթալի պայմանագրով» ընձեռված հնարավորություններից, պարսկական բանակը կենտրոնացնում է Մեծ Հայքի թագավորության սահմանագլխին: Ատրպատականի Գանձակ քաղաքում գտնվող հայ սահմանապահներն այդ մասին վաղօրոք տեղեկացնում են Արշակ արքային, որը սպարապետին հրամայում է բանակը շարժել հակառակորդին ընդառաջ:

Արքայի և սպարապետի մշակած ռազմավարական պլանն իրատեսական էր: Ստեղծված իրադրությունում բանակն ուներ երկու խնդիր, որոնց լուծմանը ներգրավվում է երկրի ամբողջ ներուժը:

1. *Ռազմաքաղաքական խնդիրը* ներառում է հակառակորդի՝ երկրի կենտրոնական շրջանները ներխուժելու հավանական երթուղիների փակումը:

Հիմնավորումը պարզ էր. պարսկական բանակը ձգտելու էր ավերել և ամայացնել երկիրը: Դրանով անուղղելի հարված կհասցվեր Մեծ Հայքի տնտեսական և ռազմական հզորությանը, իսկ թուլացած երկիրը նվաճելը դյուրին գործ էր:

2. Ռազմավարական խնդիրը բխում էր քաղաքականից և հանդիսանում նրա շարունակությունը:

Պետք էր շտապել հակառակորդին ընդառաջ և, հնարավորության դեպքում, կանխել պարսիկներին օգնության եկող զորամասերի և գլխավոր ուժերի միավորումը:

Պատերազմի նախապատրաստման միջոցառումները նկարագրող պատմիչը նշում է նաև, որ զորքի մարտունակությունը ստուգելու համար սպարապետը *զորահանդես* է անցկացրել: Դա վկայում է այն մասին, որ հայկական կողմը պատերազմին պատրաստվում էր ամենայն լրջությամբ:

> **Պատմական տեղեկանք.** «Հայոց թագավորի սահմանապահները, որ նստած էին Ատրպատականի Գանձակում, վաղօրոք այս բանը իմաց էին տալիս Արշակ թագավորին, դեռ (Շապուհը) Ատրպատական չհասած: Հայոց Արշակ թագավորն այս իմանալուն պես հրաման էր տալիս իր Վասակ սպարապետին՝ իր բոլոր զորքերը կազմակերպել և հասնել, Պարսից Շապուհ թագավորին դիմադրել... Վասակ սպարապետը առաջ շարժվեց, հասավ ու ընդհարվեց պարսից թագավորի հետ»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, գլ. ԻԱ***

Բավականին երկար ռազմերթով բանակը հասնում է Մեծ Հայքի թագավորության հարավային սահմաններին, որոնց մեջ այդ ժամանակ գտնվում էր Ատրպատականի Գանձակը (տե՛ս հաջորդ ակնարկի քարտեզը): Արագորեն նախապատրաստված և համարձակորեն իրականացված ռազմերթով լուծվում է հակառակորդի ներխուժում թույլ չտալու խնդիրը (նախանշված ծրագրի առաջին մասը):

Հայկական բանակը շուտով հանդիպում է Հայաստանի սահմանին հասած պարսկական բանակին: Սահմանագլխին էլ՝ Գանձակի մոտ, Վասակ սպարապետը որոշում է գրոհել հակառակորդի վրա: Թեև պարսկական բանակի ոչ բոլոր զորամասերն էին հասցրել կենտրոնանալ ռազմական գործողությունների թատերաբեմում, սակայն հակառակորդն ավելի մեծաթիվ էր: Այդուհանդերձ,

չդիմանալով հզոր գրոհին՝ պարսկական բանակը ծանր պարտություն է կրում և նահանջում:

Չգտելով առավել արդյունավետորեն օգտագործել ձեռք բերված հաջողությունը՝ Վասակ Մամիկոնյանը հրամայում է հակառակորդի ռազմավարական հետապնդում իրականացնել, որը շարունակվում է Հայաստանին սահմանակից պարսկական տիրույթներում:

Եզրակացություն

Գանձակի ճակատամարտում (363թ.) տարած հաղթանակի կարևորությունը դժվար է գերագնահատել: Վասակ Մամիկոնյանն այս հաղթանակով թերահավատներին ցույց է տալիս, որ տվյալ փուլում հզոր հակառակորդի դեմ պայքարում կարելի է հաջողության հասնել՝ միայն սեփական ուժերին ապավինելով: Այդպիսի հակառակորդի հետ նորանոր առճակատումների պատրաստվող մեր բանակի մարտիկների համար այս գիտակցումն անչափ կարևոր էր:

ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ 364Թ.

ԵՐԵՔ ՀԱՂԹԱԿԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Հեռատես զորավար լինելով՝ Վասակ սպարապետը, անշուշտ, հասկանում էր, որ Հռոմի բանակի ջախջախումից և ռազմական հաղթանակը դիվանագիտորեն վավերացնելուց ընդամենը մի քանի ամիս անց Սասանյան արքան չէր հաշտվելու իր բանակի կրած պարտության հետ: Հետևաբար, Գանձակի ճակատամարտի հաղթական ավարտից անմիջապես հետո սկսում է նախապատրաստվել նոր՝ էլ ավելի մեծ ու վճռորոշ ընդհարման: Վասակ Մամիկոնյանի կանխատեսումները հիմնված էին ռազմավարական իրադրության սթափ գնահատականի վրա: Եվ իրոք, 364թ. մարտական փղեր ունեցող պարսկական բանակը կենտրոնացվում է հարավ-արևմուտքում ու Հայաստանի դեմ լայնածավալ հարձակում սկսում:

Ներխուժումը

Շապուհը որոշում է իր հսկայական բանակը բաժանել երեք մասի, որոնք միաժամանակյա հարձակում էին գործելու: Զորաբանակներից մեկն անձամբ Շապուհն էր գլխավորում, մյուս երկուսը՝ Հազարավուխտ և Անդիկան զորավարները:

> **Պատմական տեղեկանք.** «Այս բաներն էլ վաղօրոք հայտնվում էին Հայոց Արշակ թագավորին և նրա Վասակ զորավարին: Սրանք էլ աշխարհից զորք հավաքեցին, որոնց բազմությանը թիվ ու համար չկար, և թեպետ շատ աճապարեցին, բայց և այնպես Պարսից զորքերը Հայաստան մտան և երեք ուղղությամբ ասպատակեցին»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, գլ. ԻԲ***

Եվ այսպես, պարսկական զորասյուները երեք կողմից ներխուժում են Մեծ Հայքի սահմանները: Հակառակորդի գործողությունները հայկական կողմի համար անակնկալ չէին. սպարապետը նախապատրաստական աշխատանքները սկսել էր Գանձակի ճակատամարտից անմիջապես հետո: Այս միջոցառումների մեջ հատկապես աչքի է ընկնում իր ժամանակի համար շատ բարձր մակարդակի վրա դրված *հետախուզական ծառայության* աշխատանքը: Արքային, սպարապետին և բանակի մյուս հրամանատարներին նախօրոք հայտնի է դառնում հակառակորդի գործողությունների մասին:

Ավելին, նախքան պարսկական բանակի՝ Մեծ Հայքի սահմանն անցնելը հայ հետախույզներին ոչ միայն հաջողվում է պարզել զորքը երեք մասի բաժանելու Շապուհի մտադրությունը, այլև տեղեկություններ ստանալ պարսկական զորասյուների հավանական երթուղիների մասին:

Հենվելով ստացված հետախուզական տվյալների վրա՝ Արշակ Բ արքան ուժերը բաժանում է երեք մասի (որոնց պատմիչը գունդ է անվանում) և շարժվում հակառակորդին ընդառաջ:

Առաջին հաղթանակը

Առաջին զորագունդը գլխավորում էր սպարապետ Վասակ Մամիկոնյանը, *երկրորդը*՝ նրա եղբայր Բագոսը (Բագաս), իսկ *երրորդը* վերցնում է ինքը՝ Արշակ արքան: Գրեթե հավասարաչափ տարածք անցնելով՝ երեք զորագնդերն էլ նույն օրն են հասնում հակառակորդին և գրոհում պարսկական զորասյուների վրա:

Արշակունիների դամբարանը Աղցք (Աղց) գյուղում, IV դ.

Հազարավուխտի հրամանատարությամբ Վանանդ գավառ ուղարկված ուժերի դեմ գործող Վասակ Մամիկոնյանի գունդը նրանց վրա գրոհում է *Երևյալ* (տե՛ս քարտեզը) կոչվող վայրում: Կենտրոնում հակառակորդի մարտակարգը ճեղքելով՝ սպարապետի գլխավորած զորամասերը նրան հարկադրում են նահանջել մի քանի ուղղություններով, ինչը պարսիկներին հնարավորություն չի տալիս միավորել ուժերը: Պարսիկներից խլված ռազմավարի մեջ Փավստոս Բուզանդն առանձնացնում է հատկապես *մարտական փղերին:* Սա վկայում է, որ անսպասելի հարձակումով պարսկական զորքը կաթվածահար է արվել և չի հասցրել մարտի մտցնել փղերի զորամասը:

Նույնպիսի եռանդով էլ սպարապետը հակառակորդի հետապնդումն է կազմակերպում, որը շարունակվում է մինչև նրան երկրի սահմաններից վտարելը: Հետապնդման ընթացքում սպարապետի հմուտ գործողությունների մասին է խոսում այն փաստը, որ ջախջախված պարսկական զորամասերի մնացորդները մինչև Հայաստանից հեռանալն այդպես էլ չեն հասցնում միավորվել և կանոնավոր դիմադրություն ցույց տալ հետապնդման ուղարկված զորամասերին:

Երկրորդ հաղթանակը

Առբերանի գավառ հասնելով՝ պարսից երկրորդ զորաբանակը Անդիկանի գլխավորությամբ ճամբար է կազմում Վանա լճի ափին գտնվող *Առեստ* ավանի ձկնորսարանի մոտ (տե՛ս քարտեզը): Տեղեկանալով հայկական զորամասերի մոտենալու մասին՝ պարսիկներն այստեղ հասցնում են միասնական մարտակարգ կազմել և սկսել մարտը: Մարտի սկզբում հայերը կարևոր հաջողության են հասնում. հակառակորդի զորքերի հրամանատարական դիտակետի ուղղությամբ գրոհող զորամասերը հասնում են Անդիկանին և մարտի թոհուբոհում սպանում ճեղքված մարտակարգը վերականգնել ձգտող պարսիկ զորավարին: Սակայն հակառակորդի քանակական գերազանցությունն իրեն զգալ է տալիս. պահեստազորի ուժերով պարսիկները ոչ միայն կարողանում են փակել ճեղքվածքը, այլև մարտական փղերի զորամասով հաջող հակագրոհի են անցնում:

Բագոս Մամիկոնյանը, որը ճակատամարտի սկզբից մարտիկների կողքին էր և *իր օրինակով ոգևորում էր նրանց*, անձամբ գլխավորում է հակագրոհի անդրադարձումը: Հայերին հաջողվում է հետ մղել գրոհը և փախուստի մատնել հակառակորդին, սակայն հաղթանակը ձեռք է բերվում մեծաթիվ զոհերի գնով: Հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելով՝ հերոսի մահով ընկնում է նաև Բագոս իշխանը, որն ըստ Փավստոս Բուզանդի՝ «քաջության և արիության մեջ իրեն նմանը չուներ»:

Շարքային զինվորի պես ամբողջ ճակատամարտի ընթացքում մարտնչած և մարտադաշտում զոհված իշխանի կյանքն անձնազոհության օրինակ է եղել հետագա սերունդների համար: Ժողովուրդը Բագոս Մամիկոնյանի պատվին հյուսել է հերոսապատումներ:

Պատմական տեղեկանք. «Ապա Բագոսը հանդիպում է փղերի գնդին. տեսնում էր, որ փղերից մեկը շատ զարդարված էր և կրում էր արքունական նշաններ: Բագոսը կարծեց, թե այդ փղի վրա (Շապուհ) թագավորն է, ձիուց իջավ, սուրը քաշեց, փղի վրա հարձակվեց. զենքը բարձրացրեց, փղի տակը մտավ, փղին փորից զարկեց, փիղն ընկավ նրա վրա և երկուսը միասին մեռան, որովհետև (Բագոսը) ժամանակ չունեցավ փղի տակից դուրս գալու համար»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Գ, գլ. ԻԲ

Երրորդ հաղթանակը

Շապուհ արքայի գլխավորած զորքն արդեն Այրարատի Բասեն գավառն էր հասել, երբ հայտնվում է Արշակ արքան՝ իր գնդով: Շապուհը, մարտավարական սխալ թույլ տալով, զորամասերը տեղաբաշխում է *Ոսխա* կոչվող վայրում (տե՛ս քարտեզը): Հակառակորդի անհոգության պատճառը, թերևս, նրա մեծաթիվ լինելն էր:

Ճիշտ գնահատելով իրավիճակը՝ Արշակ արքան անմիջապես չի գրոհում հակառակորդի վրա, այլ հարձակումը հետաձգում է մի քանի ժամով: Առանց ավելորդ շտապողականության գործող արքայի մարտավարությունը դրական արդյունքներ է տալիս:

Գիշերը հանգիստ քնած պարսկական բանակին հանկարծ արթնացնում են ահավոր աղմուկը և դղրդյունը: Պարսկական զորամասերը չեն հասցնում միասնական մարտակարգ ձևավորել և հայ քաջերի սրի բերանն ընկած՝ ջախջախվում են: Չկարողանալով համարժեք քայլեր ձեռնարկել՝ մարտադաշտից մի կերպ փախչում է Արևելքի հզոր տիրակալը:

> **Պատմական տեղեկանք.** «Գալիս հասնում էր Արշակ թագավորը իր զորքերի հետ և գտնում էր իրեն՝ Շապուհ թագավորին, որ եկել կուտակվել բանակ էր դրել Բասյան գավառում, Ոսխա կոչված տեղերում: Ապա Արշակ թագավորը գիշերով հարձակվում էր Պարսից բանակի վրա, բոլորին սրի էր անց կացնում. հազիվ Շապուհ թագավորը միայն մեկ ձիով ճողոպրում էր, փախչում Պարսից աշխարհն ընկնում:
>
> *Այն ժամանակ (Հայոց) երեք գնդերից **հաղթության ավետաբերները** հանդիպում էին միմյանց*»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, գլ. ԻԲ***

Եզրակացություն

Գանձակի, Երևյալի, Առեստի և Ոսխայի ճակատամարտերում տարած հաղթանակները հայ ժողովրդի պատասխանն էին **«ամոթալի» գործարքով Հայաստանի հաշվին համաձայնության գալու Պարսկաստանի և Հռոմի փորձերին:**

Պարսկական զորքի մնացորդները բոլոր ռազմավարական ուղղություններում փախչում էին: Հայոց թագավորության պահպանման համար մղված պայքարի այս դրվագում ևս հաղթանակը հայերի կողմն էր:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 363-364ԹԹ.


ՊՈՆՏԱԿԱՆ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԵԾՔ
Բաթիս
Տրապիզոն
Սեբաստիա
Տփղիս
Կարին
Բագավան
Արշակերտ
Դվին
Արտաշատ
Նախիջևան
Մարական
Մարանդ
Թավրեժ
Գանձակ
Դարտավ
Կարս
Սարդարապատ
Ամասիա
Սեբաստիա
Զարեհավան
Դարունք
Մանազկերտ
Տիգրանակերտ
Դատվան
Վան
(Տոսպ)
Բաղաղեշ
Մարդին
Ամիդ
Սամոսատ
Եդեսիա
Զեյթուն
Մծբին
Գանձակ
Գանձակ
Մարաղա
Ուրմի
Կապուտան ծով
Արբայից լ.
Մարաստ
Մարաստ
Մարաստ

ԱՐՏԱԳԵՐՍԻ ՀԵՐՈՍ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՂԸ

368Թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՀԱՋԱՐԱՄՅԱ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

360-ական թթ. երկրորդ կեսը Հայաստանի համար դժվարին ժամանակաշրջան էր: Տակավին շարունակվում էր Սասանյան Պարսկաստանի դեմ անհավասար պայքարը, որում *երկու կողմերն էլ* ծանր իրադրությունում էին հայտնվել: Զառամյալ Շապուհը կարծես հաշտվել էր այն մտքի հետ, որ Հայաստանն իր գահակալության տարիներին անհնար է լինելու նվաճել, սակայն, միևնույն ժամանակ, չէր ցանկանում դադարեցնել երկկողմանի հյուծիչ պատերազմը: Չնայած փայլուն հաղթանակներին, հայկական կողմը ևս նախանձելի վիճակում չէր: Պատերազմն ընթանում էր հիմնականում Մեծ Հայքի տարածքում, և ռազմական գործողությունների ընթացքում պարսկական զորքերն անխնա ավերում էին երկիրը:

Նորանոր պարտություններ կրելուց հետո Շապուհ Բ-ն հաշտություն կնքելու պատրվակով 368թ. իր մոտ է հրավիրում Արշակ Բ արքային և սպարապետ Վասակ Մամիկոնյանին ու ուխտադրժորեն ձերբակալում: Գերության մեջ անընկճելի են մնում ինչպես Արշակ թագավորը, այնպես էլ Վասակ սպարապետը: Աննկուն հայի, հաղթական զորավարի և հայրենիքի ազատության զոհասեղանին կյանքը դնելու պատրաստ մարտիկի կերպարի ամբողջացման աննախադեպ օրինակ է Վասակ սպարապետը: Նախկինում տարած հաղթանակները նրան իրավունք էին տալիս նույնիսկ գերության մեջ հաղթող լինել և անխուսափելի մահվանն ընդառաջ գնալ հաղթողի պես:

> **Պատմական տեղեկանք.** «Հաջորդ օրը Շապուհ թագավորը հրամայեց իր առաջ բերել Վասակ Մամիկոնյանին, Մեծ Հայքի զորավար-սպարապետին: Որովհետև Վասակը փոքր էր մարմնով՝ Պարսից Շապուհ թագավորը ասաց նրան. «Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ի՞նչպես պետք է իմ ձեռքից ազատվես. ես քեզ աղվեսի մահով պիտի սատկեցնեմ»: Վասակ սպարապետը պատասխան տալով ասաց. «Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա: Բայց երբ ես դեռ Վասակ էի՝ ես հսկա էի, մի ոտս մի լեռան վրա էր, մյուսը մյուս լեռան վրա, երբ աջ ոտքիս վրա էի հենվում՝ աջ կողմի լեռը գետինն էի կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էի գետին կոխում»: Շապուհ թագավորը հարցրեց ասաց. «Չի՞ լինի ասես, այդ ի՞նչ լեռներ են, որ դու տափն էիր կոխում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Հունաց թագավորը. քանի որ Աստված հաճ էր մեզ հետ՝ քեզ էլ էի գետին կոխում, Հունաց թագավորին էլ... Հիմա ինչ ուզում ես արա»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ, գլ. ԾԴ***

Ներխուժումը

Արքային և սպարապետին «թակարդը» գցած Շապուհը 368թ. աշնան սկզբներին Հայաստանը զավթելու նպատակով նոր զորք է ուղարկում: Նա շտապում է օգտվել պատեհ հնարավորությունից, քանի դեռ Արշակ Բ-ի ձերբակալությունից հետո գահը թափուր էր: Ամեն կերպ Հայաստանը նվաճել ձգտող պարսից արքային չէին մտահոգում ձմեռնամուտին լեռներում զորքի տեղաշարժերի և մատակարարման հետ կապված դժվարությունները: Այս անգամ զորագլուխներն էին Հայաստանից փախած և Պարսկաստանում ապաստանած Հայր մարդպետ Գլակն ու զորավար Արտավանը:

Պատմական տեղեկանք. «Պարսից Շապուհ թագավորը այդ անազնիվ չարությունը կատարելուց[1] հետո, ներքինի Գլակին և Արտավանին հանձնեց Հայաստանը՝ հանձնարարելով նրանց բոլոր ջանքերը գործադնել ոչնչացնելու համար Արտագերսը: Նրանցից մեկը՝ Գլակը, ներքինի էր, իսկ մյուսը՝ Արտավանը, բանակի հրամանատար: (Արտագերսը բերդաքաղաք էր. այն ուներ ամուր պարիսպներ և ուժեղ պահակազոր): Այստեղ էր պահվում Արշակի գանձարանը, այստեղ էր գտնվում նաև Արշակի կինը՝ տղայի հետ միասին»:

Ամմիանոս Մարկելլինոս, Գիրք XII, 5

Երկրի համար դժվարին իրադրությունում պետության կառավարումն իր ձեռքն է վերցնում Հայոց թագուհին՝ Փառանձեմը: Նա թագաժառանգ Պապի և 11 հազարանոց ընտիր սպառազինված պահակազորի հետ միասին ամրանում է Արշարունիք գավառի Արտագերս ամրոցում: Այստեղ են թաքցվում նաև պետական գանձերը:

Արտագերսի պաշտպանությունը

Հայոց արքայի գանձերին տիրանալու, ինչպես նաև թագուհուն և արքայազն Պապին գերելու նպատակով Շապուհն իր զորքերի առջև խնդիր է դնում առաջին հերթին գրավել Արտագերսը: Շուտով պարսկական ամբողջ զորաբանակը կենտրոնանում է Արտագերսի մոտ և 368թ. հոկտեմբերին պաշարում ամրոցը:

Ամրոցում պաշարվածները դրսից օգնության հույս չունեին, սակայն նախանձելի չէր նաև Արտագերսը պաշարած պարսկական զորամասերի վիճակը: Նրանք գիտակցում էին, որ բնականից անառիկ ամրոցը ձմռանը գրավելն անմտություն էր: Ի լրումն, թագուհու շուրջը համախմբված Արտագերսի հերոս պաշտպանները ցուցադրում էին իրենց պատրաստակամությունը՝ դիմադրությունը շարունակել մինչև հաղթական ավարտը: Այս հաստատակամությունը պարսիկներին հուշում էր, որ եղանակները տաքանալուց հետո էլ ամրոցը գրավել չի հաջողվելու, և ամրոցի պատերի տակ կրած անհաջողությունների իրական պատճառը ոչ թե խստաշունչ ձմեռն էր, այլ հայրենիքի անկախության համար պայքարող ամրոցի պաշտպանների համառ դիմադրությունը:

Գլակը և Արտավանը որոշում են բանակցել Փառանձեմ թագուհու հետ ու նրան հորդորում են դադարեցնել դիմադրությունը: Բանակցությունների ժամանակ Փառանձեմը հայտարարում է, որ ամրոցի անկման դեպքում առաջին հերթին որդու ճակատագիրն է մտահոգում իրեն և որ հակառակորդի հավաստիացումներին հավատալ չի կարող: Թագուհին բանակցությունների ընթաց-

---

[1] Խոսքը Արշակ Բ-ին և Վասակ Մամիկոնյանին բանտարկելու մասին է:

քում հայտարարում է դիմադրությունը շարունակելու պատրաստակամության մասին: Տեղեկացված լինելով, որ Գլակն ու Արտավանը պարսիկների կողմն են անցել Շապուհի առատ վարձատրության խոստումներին հավատալով, թագուհին ևս իր կողմն անցնելու և արքայազնին փրկելու համար վարձատրություն, իսկ հետագայում՝ աջակցություն է խոստանում նրանց:

Բանակցությունների եկածների վրա թագուհու հաստատակամությունն այնպիսի խոր տպավորություն է գործում, որ նրանք անցնում են թագուհու կողմը:

Արտագրոհի նախապատրաստումը

Արագորեն մշակվում է հակառակորդի ջախջախման հանդուգն ծրագիր, որը պետք է իրականացվեր «բանագնացների» վերադառնալուց հետո: Որոշվում է պարսիկների վրա հարձակվել գիշերը: Պարսկական բանակի տեղաբաշխմանը ծանոթ և, հետևաբար, նրա թույլ տեղերն իմացող Արտավանը հուշում է նաև այն տեղամասերը, որտեղին հասցվող հարվածը հակառակորդի շրջանում խուճապ կառաջացնի և հակառակորդին կզրկի միասնական պաշտպանություն ձևավորելու հնարավորությունից:

Պարսկական զորքերի ճամբար վերադարձած բանագնացները հայտարարում են, թե ամրոցի պաշտպանները ժամանակ են խնդրում պատասխանի համար: Թագուհու պատասխանին սպասող պարսիկներին նրանք վստահեցնում են, որ անելանելի դրության մեջ հայտնված ամրոցի կայազորը դադարեցնելու է դիմադրությունը, և թուլացնում են զգոնությունը:

Արտագերսի ամրոցը

Արտագրոհը

Հայկական կողմը օգտվում է հակառակորդի անհոգությունից և նույն գիշերը հանկարծակի դուրս գալով ամրոցից՝ գրոհում է հակառակորդի մեծաթիվ, բայց հանգստանալու համար ցրված զորքի վրա:

> **Պատմական տեղեկանք.** «Գլակը և Արտավանը, հույս ունենալով, որ հետագայում առատ վարձատրություն կստանան հռոմեացիներից, գաղտնի խորհրդակցելով համոզեցին (պաշտպաններին), որ ուժեղ մի գունդ, բաց անելով բերդի դուռը, գիշերվա պայմանավորված ժամին, անսպասելի հարձակում գործի թշնամու ճամբարի վրա: Նրանք աշխատեցին այնպես անել, որ դավադիրները մնան անհայտ: Համաձայնությունը ավարտվեց երդումով:
>
> Գլակը և Արտավանը դուրս եկան բերդից և հայտարարեցին, որ բերդաքաղաքի պաշարվածները խնդրում են երկու օր ժամանակ տալ, որպեսզի խորհրդակցեն, թե ինչպես են վարվելու իրենք: Դրանով նրանք կարողացան պարիսպների մոտ առաջացնել կատարյալ անհոգություն:
>
> Եվ ահա գիշերը, երբ բոլորը քնած էին խորը քնով, բացվեց բերդաքաղաքի դուռը. այնտեղից արագ դուրս եկավ մարտիկների մի զորամաս՝ սրերը հանած, գաղտագողի կամացուկ հարձակվեց թշնամու ճամբարի վրա, ուր վտանգ չէր ակնկալվում, և առանց դիմադրության հանդիպելու, սկսեց կոտորել բազմաթիվ քնած մարդկանց»:
>
> ***Ամմիանոս Մարկելլինոս, Գիրք XII, 6***

Իրադարձությունները նկարագրող հռոմեացի պատմիչը հատուկ շեշտում է, որ հարձակումն ավելի անսպասելի դարձնելու համար ամրոցի պաշտպանները պարսկական զորքի ճամբարին են մոտեցել «գաղտագողի»: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ Արտագերսի պաշտպանների արտագրոհը ոչ թե խենթություն էր, այլ հանդուգն և ռազմարվեստի բոլոր պահանջներին համապատասխան, ամենայն մանրամասնություններով մշակված մարտական գործողություն:

Հաղթանակը

Գործի են դրվում մեր ռազմարվեստում շուրջ երկու հազարամյակի պատմություն ունեցող գիշերային արտագրոհի հնարքները: Անսպասելի հարձակումից կաթվածահար եղած պարսկական զորամասերը, մթության մեջ չկողմնորոշվելով ու մեծաթիվ զոհեր տալով, փախչում են մի քանի ուղղություններով:

Պատմական տեղեկանք. «Շապուհը, տեղեկություններ ստանալով Արտագերսի իրադարձությունների մասին, *գազանային կատաղության* մեջ ընկավ. նա հավաքեց մեծ բանակ և մտավ Հայաստան ու ենթարկեց երկիրն անլուր ավերածության... Շապուհ թագավորը նկատի ունենալով, որ ձմռան ցրտերը վրա հասնելուց հետո իզուր ժամանակ է վատնելու, կրակի մատնեց բոլոր պտղատու ծառերը»:

Ամմիանոս Մարկելլինոս, Գիրք XII, 5-8

Եզրակացություն

Արտագերսի տակ կրած պարտությունն անսպասելի էր մոտալուտ հաջողության սպասող պարսկական արքունիքի համար և «գազանային կատաղության» մեջ է գցում Շապուհին: Նա հրամայում է էլ ավելի մեծ բանակ ժողովել և արշավել Հայաստան, բայց արդեն ուշ էր: Թագուհին հասցրել էր օգնության համար արքայազն Պապին ուղարկել Հռոմ՝ Վաղես կայսեր (364-378թթ.) մոտ:

Բացի այդ, Արտագերսի հերոսական պաշտպանությունն արդեն կատարել էր իր պատմական առաքելությունը՝ Հռոմում գիտակցում էին, որ Հայաստանում պայքարը չեն դադարեցնի՝ նույնիսկ եթե միայնակ մնան: Հայերի պայքարելու հաստատակամությունը հռոմեացիներին դժվարին ընտրության առջև էր դնում. հաշտվել Պարսկաստանի հետ կնքված պայմանագրի ամոթալի կետերի հետ կամ համարձակվել հանդես գալ տարածաշրջանում պարսկական տիրապետության դեմ և Պապ թագավորին ճանաչել Մեծ Հայքի թագավոր: Ստեղծված իրավիճակում Վաղեսը Պապին մեծ պատվով ուղարկում է Հայաստան:

Արտագերսի մոտ ձեռք բերված հաղթանակը հայրենիքի ու հայրենի գահի համար պայքարում Պապի առաջին քայլն էր: Պարտություն կրելով՝ պարսիկները ստիպված են լինում առժամանակ դադարեցնել ռազմական գործողությունները, իսկ Պապը հռոմեացիների աջակցությամբ հաստատվում է գահին:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
370Թ.

Արտագերսի մոտ կրած պարտությունը Սասանյան Շապուհ Բ թագավորի համար նոր արշավանքի առիթ է դառնում: Պարսկական բանակը, Զիկ և Կարեն զորավարների գլխավորությամբ, Հայաստան է մտնում: Ծանր դրության մեջ հայտնված Փառանձեմ թագուհին կրկին ապավինում է Արտագերս ամրոցին, սակայն ամիսներ տևած պաշարումից հետո ամրոցում սկսված համաճարակի պատճառով ստիպված է լինում դադարեցնել դիմադրությունը:

*Արտագերսի **տասնչորսամսյա** հերոսական պաշտպանությունը (368թ. հոկտեմբեր-369թ. դեկտեմբեր) հայոց պատմության հերոսական էջերից է:*

Թեև պետության համար անչափ դժվարին պահին իշխանությունը ստանձնելու կամք դրսևորած թագուհուն *վիճակված չէր* որդուն տեսնել Մեծ Հայքի գահին բազմած, սակայն նրա ջանքերն ապարդյուն չէին: Մասնավորապես, Արտագերսի պաշարման վրա հսկայական ուժեր ու ժամանակ վատնած պարսկական բանակը պաշարում, բայց չի կարողանում գրավել Կոգովիտ գավառի Դարոյնք բերդը, որտեղ կուտակված էր թագավորական գանձերի մյուս մասը: Հայրենիք վերադարձած Պապ արքան (369-373թթ.) տեր է կանգնում այս գանձերին և Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղ սպարապետի հետ միասին ձեռնամուխ լինում պետության հզորացմանը:

Հաղթանակը

Կանխատեսելով, որ պարսկական բանակը նորից կներխուժի Հայաստան, երիտասարդ արքայի առաջին գործն իրենց ամրոցներում փակված նախարարների ուժերը մեկ միասնական բանակում միավորելն է դառնում: Ցավոք, սպասումներն արդարանում են. Շապուհը կրկին բանակ է ուղարկում Հայաստան:

Մուշեղ Մամիկոնյանը հասցնում է ավարտել զինվորական պատրաստությունները և շտապում դեպի պետության հարավարևելյան սահմանները, ուր Ատրպատականից 370թ. ներխուժել էր պարսկական բանակը:



Նետվող զինատեսակների սայրեր

Պատմական տեղեկանք. «Հայոց զորավար ու սպարապետ Մուշեղը իր քառասուն հազարով գալիս հարձակվում էր (Շապուհի) բանակի վրա և կոտորում էր բոլորին: Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողոպրում էր, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի էր անցկացնում Մուշեղը Հայոց զորքի հետ: Շատերին կոտորում էին, Պարսից ավագներից շատերին ձերբակալում էին, ավար էին առնում Պարսից թագավորի գանձերը, բռնում էին նաև տիկնանց՝ մյուս կանանց հետ միասին»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. Բ

Հայկական բանակը ծանր պարտության է մատնում երկիրն ավերող պարսիկներին (տե՛ս քարտեզը): Մարտադաշտից ճողոպրած Շապուհը մի կերպ կարողանում է ազատվել հետապնդումից ու փրկել իր կյանքը, սակայն գերվում է Արևելքի հզոր տիրակալի կանանոցը:

> **Պատմական տեղեկանք.** «Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չէր տալիս Հայոց Մուշեղ զորավարը, այլ հրամայում էր բոլորի համար ժանվարներ[1] պատրաստել և նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից: Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ: Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարերարության, քաջության և ազնվության վրա, որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ: Այդ ժամանակները Մուշեղը մի ճերմակ ձի ուներ, իսկ Պարսից Շապուհ թագավորը երբ գինու (գավաթը) ձեռքն էր առնում, երբ ուրախության ժամանակ իր զորքին հյուրասիրում էր՝ ասում էր. «Ճերմակաձին թող գինի խմե»: Եվ մի գավաթի վրա նկարել տվեց Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձին հեծած, և ուրախությունների ժամանակ այդ գավաթը դնում էր իր առաջ»:
>
> «Երբ Հայոց զորքերը իրենց աշխարհը դարձան՝ Հայոց զորքերից շատերը Պապ թագավորի առաջ ամբաստանում էին Մուշեղ սպարապետին, թե ինչո՞ւ նա ազատ արձակեց Պարսից թագավորի կանանոցը, որ մեր թշնամին է և Հայոց Պապ թագավորի թշնամին: Այս բանի պատճառով (Պապը) երկար ժամանակ ոչ քիչ թշնամությամբ էր վարվում Մուշեղի հետ»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. Բ***

Հատկանշական է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի մարդասիրական արարքին Շապուհ Բ-ի տված գնահատականը: Ըստ Բուզանդի, իր նշանավոր կենացը («Ճերմակաձին թող գինի խմե») Շապուհն արտասանում է ոչ թե հերթական կերուխումներից մեկի ընթացքում, այլ զորքի հյուրասիրության ժամանակ:

---

[1] Ժանվար - թագուհիների և ազնվազարմ կանանց համար իբրև փոխադրամիջոց օգտագործվող բազմոց կամ գահավորակ: Ժ-ը կրում էին զույգ գրաստները, իսկ որոշ երկրներում՝ նաև ստրուկները:

Եզրակացություն

Մուշեղ Մամիկոնյանի զորավարական տաղանդի վկայությունը հանդիսացող այս առաջին հաղթանակը Շապուհ Բ-ին ևս մեկ անգամ ցույց տվեց, թե ինչ հակառակորդի դեմ է պայքարի դուրս եկել: Սպարապետն ապացուցեց, որ հակառակորդի պարտությունը պայմանավորված չէ նրա զորքի քանակով: Հաղթանակի իրական պատճառը նվաճողական արշավանքի ելած պարսկական բանակի նկատմամբ հայրենիքի ազատության համար պայքարող հայոց բանակի մարտական պատրաստվածության և բարոյահոգեբանական գերազանցությունն էր: Իսկ Շապուհի գերված կանանոցի նկատմամբ սպարապետի ցուցաբերած քրիստոնեական մարդասիրությունը Արևելքի արքայից արքային նետված մարտահրավեր էր, ապտակ, որին նա չէր կարողանալու պատասխանել:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 370-371 ԹԹ.



ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
371Թ.

Պարսկական բանակի ջախջախումը ծանր հարված էր Շապուհ Բ-ի հեղինակությանը: Բարդ իրավիճակում հայտնվելով՝ նա ըմբռնում է, որ իրենից ակտիվ քայլեր են ակնկալվում: Բնականաբար, բռնապետը չէր կարողանալու սպարապետի հետ մրցել իր վեհանձնությամբ ու մարդասիրությամբ, սակայն, ինչպես իրեն էր թվում, անգործությունն էլ ավելի էր հեղինակազրկելու իրեն: Այդուհանդերձ, Մեծ Հայքի սպարապետի մարդասիրական արարքով հիացող Շապուհը որոշում է հայկական կողմին պատասխանել նոր բռնություններով:

Պատերազմը

371թ. սկսվում է Սասանյանների տերության զինված ուժերի երբևիցե իրականացրած ամենամեծ արշավանքներից մեկը՝ երկարատև ավերիչ պատերազմից տուժած Հայաստանը վերջնականապես նվաճելու նպատակով: Ուշագրավ է, որ այս անգամ Շապուհը չի համարձակվում գլխավորել բանակը և փոքրաթիվ ուժերով մնում է Թավրիզում: Այստեղից պարսկական բանակի հիմնական ուժերը շարունակում են արշավանքն ու ներխուժում Հայաստան:

Շապուհն իր հրամանով միավորում է հսկայածավալ տերության բոլոր մարտունակ ուժերը, այդ թվում նաև հպատակ թագավորությունների զորամասերը: Մասնավորապես, արշավանքին մասնակցելու համար կանչվում են Աղվանքի Ուռնայր և ղեկերի (լեզգիների) Շերգիր թագավորների ուժերը: Հայաստան ուղարկվող բանակի հրամանատար է նշանակվում իր քաջությամբ պարսկական արքունիքում հռչակված Ուռնայրը: Նրա կողքին էր նաև դավաճան իշխան Մեհրուժան Արծրունին:

> **Պատմական տեղեկանք.** «Պարսից թագավորը նորից զորաժողով էր լինում բոլոր ուժերով ու զորությամբ, և բոլոր զորքերով շարժվում գալիս հասնում էր Ատրպատական աշխարհը: Ինքը քիչ զորքերով մնում էր այնտեղ, իսկ զորքերի բոլոր բազմությունը պատերազմի էր ուղարկում... Հայոց Պապ թագավորն էլ հրամայում էր զորաժողով անել Բագավանում: Հունաց զորքն էլ, որ գտնվում էր Եռանդում ու Բախիշում, եկավ, միասին ժողովվեցին Պապ թագավորի մոտ, իրենց բանակի շուրջը փոս կտրեցին Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու կազմակերպվեցին, պատրաստվեցին ճակատամարտի»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. է***

Ճակատամարտի նախապատրաստումը

Ինչպես և սպասվում էր, պարսկական բանակը Հայաստան է մտնում Ատրպատականից և շարժվում դեպի երկրի Միջնաշխարհը՝ Այրարատ: Հայոց բանակի հրամանատարության համար հակառակորդի ներխուժումն անսպասելի չէր, քանի որ հայտնի էր պարսիկների մտադրությունը. նվաճել ամբողջ երկիրը և վերացնել հայկական պետությունը: Այնպես որ, հայկական բանակը միավորելուց հետո Մուշեղ Մամիկոնյանին մնում էր մարտավարական առումով հարմար տեղ ընտրել ճակատամարտի համար և սպասել հակառակորդին:

Ստեղծված իրավիճակի համար առավել նպաստավոր էր Բագրևանդ գավառի տարածքը, որտեղ Բագավան քաղաքից քիչ հեռու՝ Նպատ լեռան ստորոտում գտնվող Ձիրավի դաշտում էլ սպարապետը որոշում է հակառակոր-

դին ջախջախել (տե՛ս նախորդ ակնարկի քարտեզը): Մուշեղ Մամիկոնյանի վստահությունը հիմնված էր բարդ և խճճված իրավիճակի միանգամայն իրատեսական վերլուծության վրա: Թեև ավելի քան հարյուր հազարանոց պարսկական բանակի դեմ վճռական ճակատամարտն այդքան էլ դյուրին գործ չէր, սակայն սպարապետի ակնկալիքները մեծ էին: Նախորդ տարվա ընթացքում Պապ թագավորի գործուն մասնակցությամբ սպարապետի իրականացրած ռազմական բարեփոխումները հուսադրող արդյունքներ էին տվել:

Պատմական տեղեկանք. Հյուսիսում Մուշեղը վերականգնում է. «...հին սահմանը, որ առաջ գոյություն ուներ Հայոց երկրի և Վրաց երկրի միջև, որպիսինն էր մեծ գետ Կուրը»»:

Փավստոս Բուզանդ, Ե

Ընդամենը մի քանի ամսում (բանակաշինության համաշխարհային պատմության համար աննախադեպ կարճ ժամանակում) ստեղծվել էր 90 հազարանոց բանակ, որն ուներ իր ժամանակի լավագույն սպառազինությունը: Եթե դրան ավելացնենք նաև հայրենի հողն ամեն գնով պաշտպանելու հայ զինվորների պատրաստակամությունը, ապա պատկերն ամբողջական կլինի:

Բացի այդ, վերջապես Վաղես կայսրը հայոց բանակին աջակցելու համար հռոմեական լեգեոններ էր ուղարկել:

Պարսից արքայի դեմ հայ-հռոմեական դաշինք է ձևավորվում, ինչը մոտալուտ հաղթանակի կարևոր նախապայման էր:

Մարտավարությունը

Ձիրավի ճակատամարտում հայկական բանակը գլխավորում էր երիտասարդ Պապ արքան: Նա ցանկանում էր մասնակցել ճակատամարտին, բայց Տերենտիոսի խնդրանքով, որը Պապի կյանքի համար պատասխանատու էր Հռոմի Վաղես կայսեր առաջ, ձեռնպահ է մնում: Պապին խնդրում են, Նպատ լեռան գագաթի մոտ հարմար տեղ ընտրելով, Ներսես Ա կաթողիկոսի հետ ճակատամարտին հետևել հեռվից: Ուստի զորքերի անմիջական հրամանատարությունն իրականացնում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը: Աջ թևի հրամանատարությունը ստանձնում է սպարապետը, կենտրոնինը՝ Սպանդարատ Կամսարականը, իսկ ձախ թևը կազմում էին օգնության եկած հռոմեացիները՝ զորավար Տերենտիոսի գլխավորությամբ: Հատկանշական է, որ դիրքերն ամրացնելու նպատակով մարտից առաջ խրամ է փորվել:

Նպատ լեռը և Ձիրավի դաշտը Այրարատ աշխարհում

Գիտակցելով, որ տեղանքը միանշանակորեն նպաստելու է հայ-հռոմեական բանակին, պարսկական բանակի հրամանատարությունը ձգտում է հնարավորինս հարմար «փոխհատուցում» գտնել: Պարսից զորապետերը փորձում են օգտագործել օրվա ժամանակը: Հարցն այն է, որ հարավ-արևելքից մարտադաշտին մոտեցող պարսկական զորամասերի ճանապարհը փակելու նպատակով հայ-հռոմեական զորամասերը շարվել էին ճակատով դեպի արևելք: Հետևաբար, վաղ առավոտյան արևը դաշնակիցների բանակի առջևում էր լինելու և խանգարելու էր նրանց: Փորձելով օգտագործել այս հանգամանքը՝ պարսիկները վաղ առավոտյան մոտենում են հայ-հռոմեական բանակին և նրան հարկադրում գրոհել իրենց վրա: Այսպիսով, երկու հսկայական բանակների վճռական ճակատամարտը սկսվում է վաղ առավոտյան և շարունակվում մինչև ուշ երեկո:

Պատմական տեղեկանք. «Իսկ երբ արևը ծագեց, մեր զորքերի դեմուդեմ, պղնձապատ վահանների ցոլքը լեռների վրա էր փայլատակում ինչպես մեծ ամպից, և (այդ ճակատից) դուրս էին թռչում մեր նախարարներից լավ զրահավորվածները, ինչպես փայլատակող ճառագայթներ, որոնց տեսքից միայն պարսկական գունդը երկյուղի մեջ ընկավ, բայց մի քիչ նաև մեր գունդը, որովհետև (դիմացից) ծագած արևի պատճառով չէր կարող դեմուդեմ նայել: Բայց երբ միմյանց ընդհարվեցին, ամպը հովանի եղավ և մեր կողմից սաստիկ քամի փչեց պարսկական գնդի դեմ»:

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. Լէ

Ըստ Մովսես Խորենացու, պարսիկների մտահղացմանը վիճակված չէր իրականանալ: Նախ, հայոց բանակի զինվորների պղնձապատ վահանները նույնպես փայլում էին՝ կուրացնելով հակառակորդին, ապա՝ ճակատամարտի սկզբում ամպը փակում է արևի ճառագայթները, իսկ հետո արևմուտքից քամի է բարձրանում: Կարծես բնության ուժերն էլ էին միացել հայրենի հողը պաշտպանելու ելած հայկական բանակին:

> **Պատմական տեղեկանք.** «Պատերազմը գումարվեց Ձիրավ կոչված դաշտում, և ճակատներն իրար մոտեցան: Հայոց քաջ նախարարների պատանիներն իրենց կամքով խիզախելով՝ մտան երկու ճակատների մեջ, առաջնորդությամբ իրենց սպարապետ Սմբատ ասպետի՝ Բագարատի որդու, որ Բագրատունյաց ցեղից էր: Պարսից զորքերի միջից էլ դուրս եկան նրանց հասակակիցները, երկու ճակատների մեջ այս ու այն կողմը շարժվեցին և ցրիվ եկան: Երբ պարսից պատանիները ետ էին դառնում, մերոնք անմիջապես հասնում էին նրանց հետևից և ինչպես փոթորիկ, որ անտառը տերևաթափ է անում, այնպես էլ նրանք արագորեն նիզակներով նրանց վայր էին գցում ձիերից և սառը դիակները գետնի երեսին փռում, քանի որ նրանք չէին կարողանում իրենց ճակատի մեջ մտնել: Իսկ երբ պարսիկներն էին մերոնց ետ դարձնում, սրանք մտնում էին հունաց՝ վահաններով պատսպարված ճակատը, իբրև մի ամուր քաղաք, և ամենևին չէին վնասվում»:
>
> ***Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. Լէ***

Ճակատամարտը

Ճակատամարտը սկսում է հայոց սեպուհական այրուձին՝ Սմբատ Բագրատունու ղեկավարությամբ: Սպարապետը առաջինը մարտի է ուղարկում առաջապահ հեծելազորը՝ հակառակորդի ուժերը հետախուզելու նպատակով: Պարսկական կողմից նրանց դեմ է դուրս գալիս նույնպես հեծելազորը:

Համեմատաբար հավասար ուժերով վարվող ընդհարումը (ժամանակակից խոսքերով ասած՝ *մարտով հետախուզությունը*) ավարտվում է հայկական կողմի հաղթանակով: Պարսիկների վրա գրոհելով՝ Սմբատ Բագրատունու գլխավորած սեպուհական զորագունդը հաջողությամբ նահանջում և խրամի ու հռոմեական հետևակի վահանների պատի հետևն անցնելով՝ կատարում է իր առջև դրված մարտական առաջադրանքը: Սեպուհական հեծելազորին հետապնդող պարսկական բանակի զորամասերը, որոնք առանց այդ էլ մարտի էին մտցվել լեռան ստորոտից և դեպի լեռնալանջն էին գրոհում, չեն կարողանում ընթացքից անցնել խրամն ու հայտնվում են անբարենպաստ իրավիճակում: Առաջին հաջողությունը ոգևորում է դաշնակիցների գլխավոր ուժերին, որոնք այս նպաստավոր բնագծում էլ շարունակում են մարտը և խափանում պարսկական բանակի հակագրոհը (տե՛ս սխեման):



Չիրավի ճակատամարտը (371թ.)

Պատմական տեղեկանք. «Կռվի խառնուրդի ժամանակ Սպանդարատ Կամսարականը հանդիպեց մի մեծ խմբի, որի մեջ էր քաջ ղեկաց (լեզգիների) թագավոր Շերգիրը, որ ճակատի մեջտեղում պինդ կանգնած էր՝ միջին գնդի գլուխն անցած: Սպանդարատը հարձակվեց, խումբը ճեղքեց և քաջին գետին տապալեց շանթահար եղածի նման, և խումբը շուռ տալով փախուստի մատնեց: Եվ այսպես հունաց և հայոց զորքերն առհասարակ, երկնային օգնությամբ զորացած, թշնամիների դիակներով ամբողջ դաշտը լցրին և մնացածներին փախցնելով հալածեցին: Սրանց հետ էր և Ուռնայրը, Աղվանից թագավորը, որ խոցված էր Վասակ Մամիկոնյանի որդի Մուշեղից, պատերազմից դուրս հանեցին»:

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. Լէ

Ճակատամարտի ընթացքում պասիվ էին հռոմեացիները: Նրանք չէին դիմում հարձակողական գործողությունների և բավարարվում էին պաշտպանողական գործողություններով: Մասնավորապես, պարսիկների հակագրոհների ժամանակ, երբ հայկական զորամասերը հետ էին քաշվում, հռոմեացիները վահանափակում էին վերջիններիս: Դա հնարավորություն էր տալիս հայերին փոքր-ինչ հանգստանալ և վերադասավորված, թարմ ուժերով նոր գրոհների անցնել:

Ճակատամարտը հայերի համար հաջող ընթացք է ստանում: Սպանդարատ Կամսարականի զորաթևը հարձակվում է հակառակորդի կենտրոնի զո-

ռաթևի վրա և ջախջախելով փախուստի մատնում: Ղեկերի թագավոր Շերգիրը, որ գլխավորում էր պարսից բանակի կենտրոնը, սպանվում է: Ուռնայրը Մուշեղ Մամիկոնյանի հետ մենամարտում վիրավորվում է: Նրա մարտիկներին մի կերպ է հաջողվում մարտադաշտից դուրս բերել վիրավոր թագավորին. այս միջադեպը ավելի է ոգևորում մեր զինվորներին: Սպարապետի հաջողությունը փաստորեն վճռում է ճակատամարտի ելքը, քանի որ առանց միասնական ղեկավարման մնացած պարսկական զորամասերի միջև *փոխգործողություններ* կազմակերպել չի հաջողվում: Անհամաձայնեցված գործողությունների արդյունքում պարսկական բանակի մարտակարգում առաջացած ճեղքվածքները փակել չի հաջողվում, և նրանց շարքերում սկսվում է խուճապ: Ծանր կորուստներ կրելով՝ պարսկական բանակի մնացորդները սկսում են նահանջել:

Հետապնդումը

Հակառակորդի ջախջախման գործն ավարտին հասցնելու համար Մուշեղ Մամիկոնյանը հնարավոր բոլոր ուժերով սկսում է հակառակորդի հետապնդումը, որի ընթացքում ևս արձանագրվում են մի շարք հաջողություններ: Օրինակ, փախուստի ժամանակ գերվում է վիրավոր Ուռնայրը: Սակայն պարսկական բանակի դեմ պայքարում աղվանների հետ դաշինք կազմելու ծրագիր ունեցող սպարապետն ազատ է արձակում նրան:

Իսկ Մեհրուժան Արծրունու գլխավորած զորամասին հետապնդման ուղարկված Սմբատ Բագրատունին գերում է դավաճան նախարարին և մահապատժի ենթարկում:

> **Պատմական տեղեկանք.** «Բայց չարագործ Մեհրուժանը ձիու վիրավորված լինելու պատճառով չկարողացավ փախչողների հետ արագ հեռանալ, Հայոց Սմբատ սպարապետը աճապարելով հասավ նրա մոտ, նրա հետ եկող զորքերին կոտորեց և այն թշվառականին ձերբակալեց Կոգահովտի եղեգնուտի ափին: Նույն տեղերում չարագործին փչացնելու համար պատրաստ է գտնում վրանաբնակներ, որոնք կրակ էին վառել, որպեսզի միս խորովեն երկաթե շամփուրով: Նա շամփուրը տաքացնելով երկու փաթ բոլորեց պսակի ձևով և շիկացնելով ասաց. «Քեզ պսակում եմ, Մեհրուժան, որովհետև դու ձգտում էիր Հայոց վրա թագավորելու և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրերի իշխանության կարգով»: Եվ կրակի նման շիկացած (շամփուրը) դրեց Մեհրուժանի գլխին, և այսպես այն չարը սատկեց: Այսուհետև երկիրը խաղաղվեց՝ Պապի ձեռքի տակ նվաճվելով»:
>
> ***Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գլ. Լէ***

Ձախջախված հակառակորդի հետապնդումը դադարեցվում է Ատրպատականի սահմանի մոտ՝ հակառակորդին երկրի սահմաններից վտարելուց հետո:

Եզրակացություն

Ձիրավի հաղթական ճակատամարտով վերջացան Պարսկաստանի հարձակումների դեմ որոշ ընդհատումներով մոտ չորս տասնամյակ շարունակվող պատերազմները: Այդ հաղթանակի արդյունքում ամրապնդվեցին Մեծ Հայքի թագավորությունն ու Պապի թագավորական իշխանությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ 383Թ.

Հռոմեացիների դավադրությամբ Պապի սպանությունից հետո Մեծ Հայքի գահին է բարձրանում երիտասարդ Վարազդատը (374-378թթ.):

Պատմական տեղեկանք. «Այս Վարազդատը երիտասարդ էր տարիքով, սրտոտ, հաղթահասակ, ուժեղ, լի արիության բոլոր գործերով և շատ հզոր նետաձգության մեջ: Շապուհից փախչելով նա գնացել էր կայսեր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել: Նախ Պիսայում[1] բռնցքամարտիկներին հաղթելով, հետո ելլեդացիների Արեգ քաղաքում կես օրում մի քանի առյուծ կոտորեց, որի համար Օլիմպիական հանդեսի ըմբշամարտների խաղերում փառք վաստակեց և հարգանք: Իսկ այն քաջ և արիական գործերը, որ նա կատարեց Ղանկվարտների[2] ազգի դեմ, համարձակվում եմ ասել, թե հավասար էին սուրբ Տրդատի (գործերին), որովհետև թշնամիների կողմից հինգ ախոյան հարձակվեցին նրա վրա և նա մեկը մյուսի հետևից բոլորին սրով կոտորեց. և մի բերդի վրա դիմելով, բերդի պատվարի վրա տասնևյոթ մարդ նետով զարնելով իրար վրա ներքև գլորեց, ինչպես շուտ հասունացած թզերը թափվում են սաստիկ մրրիկից»:

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք Գ, Գլուխ Խ

Երիտասարդ թագավորը լավագույն մարզիկի՝ Օլիմպիական խաղերի հաղթողի ու ռազմական գործի վարպետի համարում ուներ: Մուշեղ սպարապետն էր բարի խրատներ տալիս թագավորին, առաջնորդում բանակը ու հսկում Հայոց սահմանները: Արտաքին քաղաքականության մեջ Մուշեղ Մամիկոնյանը կարևորում էր սերտ ռազմական համագործակցությունը Հռոմեական կայսրության հետ, իսկ ներքին՝ Հայոց աշխարհի ամեն մի գավառում ամրացված քաղաքներ կառուցում երկրի պաշտպանության ուժեղացման նպատակով:

Սակայն Վարազդատ թագավորի դայակի ու ուսուցչի՝ Բատ Սահառունու բանսարկությամբ, որը ցանկանում էր Մուշեղ Մամիկոնյանից խլել սպարապետության գործը, Վարազդատ թագավորը փոխում է վերաբերմունքը Մուշեղ սպարապետի նկատմամբ: Եվ հենց Բատի դավադրությամբ Մուշեղը սպանվում է: Իսկ մյուս կողմից, վեստգոթերի արշավանքի հետ կապված՝ արևմուտքում կրկին ծանրացել էր իրավիճակը, և Հռոմեական կայսրությունը որոշ ժամանակ չէր կարողանալու զբաղվել Հայաստանի հարցերով:

---

[1] Պիսան հին քաղաք է Հունաստանի Էլիտա նահանգում, իսկ Արեգ քաղաքի գտնվելու վայրի շուրջ պատմաբանների շրջանում առայժմ միասնական տեսակետ չկա:

[2] Ղանկվարտներ - լանգոբարդներ (= երկայնամորուսներ) Էլբայի ձախ ափին բնակվող գերմանական ցեղեր, որոնք աստիճանաբար տարածվել են դեպի Դանուբ, ապա անցել Ալպյան լեռները և հաստատվել Հյուսիսային և կենտրոնական Իտալիայում: Նրանց անունն է կրում այժմյան Իտալիայի հյուսիսային նահանգներից մեկը՝ Լոմբարդիան:

Ռազմավարության փոփոխումը

Սպարապետական պատիվը ստացած Մանուել Մամիկոնյանը հայտարարվում է արքայական ընտանիքի խնամակալ և սկսում է կարգի բերել պետական գործերը: Մամիկոնյան իշխանը Պապի որդու՝ թագադրված Արշակ Գ-ի (378-391թթ.) անունից սկսում է անկախ քաղաքականություն վարել:

Պարսից արքունիքի հետ բանակցությունների ուղարկված Գարջոյլ Խորխոռունին մեծ պատվով ու պարգևներով է ընդունվում, իսկ պարսից արքա Արտաշիրը շտապում է իր «բարյացակամությունը» հայտնել հայոց արքունիքին: Արտաշիրն իր դեսպան Սուրենի միջոցով պատանի արքային և արքայական ընտանիքի մյուս անդամներին թագեր է ուղարկում, ինչպես նաև Հայաստանի պետական դրոշը, իսկ սպարապետ և խնամակալ Մանուելին՝ ծիրանի, ինչպես նաև ոսկե արծվազարդ վրան և այլ նվերներ:

> **Պատմական տեղեկանք.** «Պարսից թագավորը... Հայոց աշխարհն էր ուղարկում պարսիկ Սուրենին, իր ճոխ նախարարներից մեկին, և նրա հետ տասը հազար լավ սպառազինված ձիավոր զորք, (պատվիրելով) որ Սուրենը Հայոց աշխարհը գա իբրև թիկունք Մանուել սպարապետին՝ Զարմանդուխտ[1] տիկնոջը թշնամիներից պաշտպանելու համար: Եվ Պարսից թագավորը Սուրենի ձեռքով Զարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ և պատմուճան[2] և թագավորական վառ, և երկու մանուկների՝ Արշակի և Վաղարշակի համար թագեր: Նույնպես Մանուել սպարապետի համար ուղարկեց թագավորական պատմուճան, մի սամույր և գլխի պատիվ՝ ոսկուց և արծաթից շինած գարգմանակ, և գլխի պատվի վրա, գագաթում, արծվի ետևից, թագի կապը՝ աշխարհավանդ հանգույցը, և կուրծքին պատիվ՝ ապիզակ, ինչպիսին կրում են թագավորները, նաև շիկակարմիր խորան (վրան - հեղ.), խորանի վրա արծվի նշան, և մեծամեծ սրահակներ ու կապուտակ երկնագույն հովանոցներ: Նաև սեղանի ոսկի սպաս էր ուղարկում Մանուել Սպարապետին...
>
> Այսպես նաև բերել էին պարգևներ Հայոց ամեն մի ավագի համար, բոլոր տանուտերերի և մեծամեծների համար»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. ԼԸ***

---

[1] Զարմանդուխտ թագուհին սպանված Պապ թագավորի կինն էր: Իրավաբանական տեսանկյունից Մանուել Մամիկոնյանը ոչ թե մանուկ թագավորի խնամակալն էր, այլ անչափահաս որդու՝ Արշակ Գ-ի խնամակալությունը ստանձնած Զարմանդուխտի օգնականը:

[2] Պատմիչը հիշատակում է մի քանի զարդեր և պատվանշաններ, որոնք նվիրվում էին բարձրաստիճան անձերին: Դրանց բացատրությունները ևս բերել ենք հատորի վերջում տեղակայված բառարանում:

Արտաշիր Բ-ի կողմից ուղարկված Սուրեն դեսպանին ուղեկցելու համար Հայաստան էր եկել 10 հազարանոց հեծյալ մի զորագունդ, իբր երկիրը հռոմեացիների ոտնձգություններից պաշտպանելու համար: Եվ այն ժամանակ, երբ հաստատվել էր խաղաղություն ու, թվում է, թե հայ ժողովուրդը վերջապես կարող էր լծվել խաղաղ աշխատանքին՝ կրկին իրադրությունը բարդանում է:

Պարզվում է, որ Սուրենն արքայից արքայի կողմից լիազորված եկել էր Հայաստանում փաստական իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու:

Այս իրողությունն առաջին հերթին անհանգստացնում է Մանուել Մամիկոնյանին և երերացող գահը փրկելու գործում նրա շուրջ համախմբված բոլոր հայրենասեր նախարարներին:

> **Պատմական տեղեկանք.** «Երբ Մանուելը... համոզվեց, թե (պարսկական զորքի «առաքելության» մասին - հեղ.) իր լսած բաները ստույգ են՝ ապա նա շատ զորք կուտակեց իր մոտ»:
>
> ***Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. ԼԸ***

Հաղթանակը

Իրադրությունը բնավ բարենպաստ չէր պարսից զորագունդը երկրից դուրս քշելու համար: Անկախության ամրապնդման գործում անզիջում դիրք գրաված Մանուել սպարապետը սկսում է պատրաստվել պատերազմին:

*Բազմափորձ զորավարը նախապատրաստական աշխատանքներն իրականացնում էր **բացարձակ գաղտնիության** պայմաններում:*

Նախապատրաստվող զորամասերի ու ստորաբաժանումների մարտական առաջադրանքների, առավել ևս՝ դրանց նպատակների մասին ոչինչ հայտնի չէր Սուրենին: Գլխավորապես ապստամբական բանակներում կիրառվող այս *անկանոն հնարքը* հսկայական առավելություն էր տալիս հայկական կողմին, որը մինչև վերջին պահը կարողանում է գաղտնի պահել իր մտահղացումը:

Մանուել Մամիկոնյանն ի մի է բերում թագավորական գահին հավատարիմ մնացած նախարարների ուժերը և պատրաստվում *հաղթական «ցատկին»,* երբ տեղեկություն է ստացվում Արտաշիր Բ-ի մահվան և Պարսկաստանում սկսված խլրտումների մասին: 383թ. մարտավարական իրավիճակը վերջնականապես փոխվում է հօգուտ հայկական կողմի: Սպարապետը չի հապաղում հասցնել երկար նախապատրաստված և բարեխղճորեն քողարկված հարվածը:

Պատմական տեղեկանք. «Հայոց Մանուել զորավարը հանկարծակի անսպասելի կերպով հասնում հարձակվում էր Սուրենի բանակի վրա և տասը հազար պարսիկներին ամբողջապես կոտորում է: Բայց Սուրեն մարզպանին մի ձիով բաց է թողնում, որ գնա. նրա արևը նրան պարգև է շնորհում: Սուրենը զարմացավ այս բանի վրա, թե ինչո՛ւ նա այս արավ, և Մանուելը ասաց Սուրենին. «Քեզ իբրև բարեկամի սիրով արձակում եմ, ողջ առողջ գնա՝ քո ճանապարհդ, բայց ես այլևս պարսիկների թակարդի մեջ չեմ ընկնի»»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. ԼԸ

*Այրուձիու հարձակումը **անսպասելի էր** պարսկական զորագնդի համար:*

Մասնավորապես, հանկարծակի հարվածի ենթարկված նրանց զորամասերին չի հաջողվում միասնական մարտակարգ ձևավորել: Վաղ միջնադարում բոլոր բանակների հեծյալ զորամասերի գլխավոր առավելությունը մարտակարգով հասցվող ճակատային գրոհն ու արագ զորաշարժերի դիմելու նրանց կարողությունն էր[1]: Պարսիկները զրկված էին թե՛ առաջինից և թե՛ երկրորդից: Այնպես որ, ապշահար եղած պարսիկները չեն կարողանում պատասխան հակաքայլեր ձեռնարկել:

Հայաստանում օտար տիրապետության հենարան դարձած պարսկական զորամասի զինվորները սրի են քաշվում:

Ազատ է արձակվում միայն Սուրեն մարզպանը, որին թույլ են տալիս վերադառնալ Պարսկաստան՝ պայմանով, որ երբեք չի գա Հայաստան:
Մարզպանի հեռանալով, սակայն, պայքարը չի ավարտվում:

Պատմական տեղեկանք. «Ինքը Մանուելը պատրաստում էր զորքերը, գնդեր էր կազմակերպում, որովհետև գիտեր, որ մեծ թշնամություն ու գրգռմունք ծագեցրեց Պարսից թագավորի հետ: Այնուհետև Հայոց Մանուել զորավարը բոլոր գնդերով... աշխարհի շենության համար պատերազմներ էր մղում ամեն կողմից թշնամիների և իրենց շրջակա սահմանակիցների, մանավանդ Պարսից զորքերի դեմ իր կյանքի բոլոր օրերում»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. ԼԸ

Մանուել Մամիկոնյանն անմիջապես սկսում է բանակը վարժեցնել ու պատրաստել հետագա պատերազմներին:

---

[1] Անկախ հեծելազորի մարտակարգի տարրերի առանձնահատկություններից՝ հեծելազորի գրոհը *խիստ կանոնավոր դասավորությամբ* իրականացնելը համընդհանուր պահանջ էր:

Եզրակացություն

Հայաստանում տեղակայված պարսկական զորագնդի ջախջախումը մեր հաղթանակների փառավոր էջերից է:

Պատմական տեղեկանք. «Սրանից հետո յոթը տարի պարսիկներն այլևս չշարունակեցին Հայաստանի սահմանները մտնել, և երկիրը խաղաղացավ: Մանուել զորավարի մոտ ժողովվեցին երկրում ցրված-ները, եկան մեկտեղացան, և անհոգ ապրում էին, և Հայոց Մանուել զո-րավարը նրանց առաջնորդում էր... Եվ ամբողջ Հայոց աշխարհը ապ-րում էր խաղաղության մեջ Մանուելի հովանու տակ՝ որքան ժամանակ կենդանի էր նա: Բոլոր մարդիկ իրենց արևի ձենն էին ածում, ուտում, խմում, ուրախանում էին»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. ԽԲ

Ռազմերթի տեսարան

Հիրավի, այս ճակատամարտի նշանակությունը ոչ միայն մարտավարական էր, որում հայկական կողմի առավելությունն անվիճելի էր, այլև ռազմավարական: Փառավոր հաղթանակի իրական արդյունքն, անշուշտ, հաստատված խաղաղությունն էր:

Պատմական տեղեկանք. «Սրանից հետո Հայոց զորավար-սպարապետ Մանուելը հիվանդացավ մահառիթ հիվանդությամբ: Նա կանչեց իր Արտաշիր որդուն, նրան հանձնեց իր տանուտիրական իշխանությունն ու իր զորավար-սպարապետությունը: Նրան պատվիրեց հնազանդ ու հպատակ լինել Արշակ թագավորին, հավատարիմ լինել, ջանալ և աշխատել, Հայոց աշխարհի համար պատերազմել: «Ուրախությամբ հանձն առ մահն աշխարհի համար, ինչպես և քո քաջ նախնիքը, որովհետև, ասաց, դա արդար և աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք՝ Աստված ձեզ անտես չի անի: Երկրի վրա քաջության անուն թողեք և ձեր արդարությունը երկնքին նվիրեցեք, *մահից ամենևին մի՛ վախեք*...»:

Երբ բոլորը հավաքված էին նրա շուրջը, այնտեղ էին և Արշակ թագավորը, և Վարդանդուխտը՝ թագավորի կինը, և Հայոց բոլոր ավագները, մեծամեծներն ու նախարարները, առհասարակ բոլոր երևելի մարդիկ, տղամարդ թե կին՝ ապա Մանուելը այս բոլորի առաջ բացեց իր բոլոր անդամները, մերկացավ և ցույց էր տալիս, որ նրա մարմնի վրա *մի դրամի մեծության չափ ողջ տեղ չէր մնացել,* այլ խոցված էր պատերազմների մեջ...

Մանուել Մամիկոնյանը ասաց. «Մանկությունից հետո ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձն առա քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի պես մեռնեի: *Ո՜րքան լավ կլիներ՝ եթե պատերազմի մեջ մեռնեի աշխարհի համար,* որպեսզի եկեղեցիները և աստծու պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեին: Ո՜ւր էր թե ինձ վիճակվեր մեռնել մեր աշխարհի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդոց համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես շատ հանդուգն էի ինձ պահում (պատերազմների մեջ), բայց այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե, գլ. ԽԲ

ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ 450-451ԹԹ.

ՄԱՀ ՈՉ ԻՄԱՑՅԱԼ՝ ՄԱՀ Է, ՄԱՀ ԻՄԱՑՅԱԼ՝ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Վդարը մեր ժողովրդի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի բախտորոշ ժամանակահատվածներից մեկն է, երբ մեծ զարգացում ապրեցին գիտական միտքը, հասարակական ու մշակութային կյանքը: Այդ հորձանքից դուրս չմնաց մինչ այդ էլ բարձր մակարդակի հասած ռազմարվեստը:

V դարը սկսվեց 405թ. Մաշտոցյան գրերի ստեղծումով, 428թ. հայ Արշակունիների թագավորության անկումով, որին հաջորդեցին մեր ժողովրդի ազատագրական պայքարի երկու գագաթները՝ 450-51թթ. Վարդանանց և 481-84թթ. Վահանանց պատերազմները: Դժվար չէ նկատել, որ *զարգացած ռազմավարությունը և մարտավարությունը հիմնված պետք է լինեին պատմական փորձի վրա:*

Թեև Բյուզանդիային էր անցել Մեծ Հայքի միայն 1/5 մասը (երկրի արևմուտքում), այդ տարածքի հայ նախարարների ուժերի մեկուսացումն էապես ազդում էր Հայկական բանակի հնարավորությունների վրա: Ուժերի հարաբերակցության փոփոխությունը հարկադրում էր փոխել ռազմական գործողությունների կազմակերպման ու վարման ձևերը:

Հայաստանի մի զգալի մասը հայտնվել էր Սասանյան Պարսկաստանի տիրապետության տակ, սակայն պահպանվել էին պետության բոլոր տարրերը: Դրանք վերացնելու նպատակով պարսից արքունիքը վարում էր երկիրն իր զինված ուժերից զրկելու, հայ նախարարների իրավունքների սահմանափակման, հայերի կրոնափոխության և ձուլման քաղաքականություն: Այս քաղաքականությանը հայ ժողովուրդը պատասխանեց հզոր դիմադրողական շարժումով՝ *450-51թթ. Վարդանանց պատերազմով:*

Վարդանանց պատերազմը անկանոն մարտավարությանն անցման կարևոր օղակ էր ու ***կանխորոշեց հայոց ռազմարվեստի զարգացման միտումները:***

ԽԱՂԽԱՂԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
450Թ.

ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՄԱՐՏԸ

Հայաստանում Արշակունյաց հարստության անկումից հետո հայ նախարարները պետք է կարողանային ցույց տալ, որ ի վիճակի են պահպանելու իրենց ռազմական ներուժը և անհրաժեշտության դեպքում կկարողանան արժանի հակահարված տալ հայ ժողովրդի համար կենսական կարևորություն ունեցող ազգային արժեքների ոտնահարման փորձերին: Այս առումով բնական էր, որ երկրի սահմանների պաշտպանության ամրապնդումը սկսվում է Հայաստանի ռազմավարական հենակետերում տեղակայված պարսկական զորամասերի ոչնչացումից:

Արշավանքը

450թ. ամռանը պարսից զորապետ Միհրներսեհը, Աղվանքի մարզպան Սեբուխտ Նիխորականի զորաբանակին միանալու և միացյալ ուժերով ապստամբությունը ճնշելու համար, խոշոր բանակով մտնում է Փայտակարան: Պետք էր օգնության գնալ աղվաններին, որոնք նույնպես ապստամբել էին և աջակցություն խնդրել հայերից: Սեբուխտի ու Միհրներսեհի ուժերի միավորումը կանխելու, ինչպես նաև Ճորապահակը (Դերբենդ քաղաքի մոտ) գրավելու և հոների հետ կապ հաստատելու համար Կուրի ձախ ափին գտնվող Աղվանք է շտապում սպարապետ Վարդան Մամիկոնյանը:

Ռազմական տեղեկանք. Ապստամբության առաջնորդների *հաշվենկատության* մասին է վկայում առկա զինված ուժերի տեղաբաշխման տրամաբանությունը: Ներշապուհ Արծրունու հրամանատարությամբ գործող *առաջին զորամասը* հայ-պարսկական սահմանի անվտանգության ապահովման նպատակով տեղաբաշխվում է Հեր և Զարևանդ գավառներում: Մարզպան Վասակ Սյունու գլխավորությամբ *երկրորդ զորամասը* մնում է Այրարատում: Միայն *ուժերի մեկ երրորդ մասն* է ուղարկվում Աղվանք (տե՛ս հաջորդ ակնարկի քարտեզը): Այս զորասյան հրամանատարն էր Վարդան Մամիկոնյանը:

Այսպիսով, մի կողմից երկրում մնացած ուժերը բավարար էին սահմանների ու ներքին անվտանգության պահպանման համար, իսկ մյուս կողմից՝ Աղվանք ուղարկվող զորամասը պետք է տեղացի ապստամբների հետ համատեղ ուժերով կարողանար արժանի դիմադրություն ցույց տալ պարսից մարզպանին:

Պարսիկներին հայտնի է դառնում Աղվանքին օգնության շտապող հայկական զորքի ռազմերթի մասին, Սեբուխտը հասցնում է պարտության մատնել այստեղի ապստամբների գլխավոր ուժերին և շարժվում է հայերի դեմ:

Մտահղացումը

Սեբուխտի նախապատրաստական միջոցառումներից անտեղյակ՝ հայոց զորքը 450թ. սեպտեմբերին ռազմերթով Խաղխաղի[1] դաշտ է հասնում, որտեղ մարտակարգով նրանց էր սպասում պարսկական բանակը: Սեբուխտը մարտակարգի կենտրոնում և աջ թևում շարել էր պարսկական զորամասերը, իսկ ձախ թևում՝ Բաղասական ու Լփնաց[2] զորամասերը: Պարսիկներն արդեն մար-

---

[1] Հնում Մեծ Հայքի Ուտիք աշխարհում Հայոց արքաների ձմեռոցը:
[2] Կուրի ձախ ափից հյուսիս-արևելք բնակվող կովկասյան ցեղեր:

տակարգ էին ընդունել, սակայն քանի որ վերջապահ գնդերը դեռևս չէին ավարտել Կուրի գետանցումը, նրանց գրոհը հապաղում է, որն էլ Վարդան Մամիկոնյանին հնարավորություն է տալիս արագ կողմնորոշվել և ընդունել մարտը սկսելու որոշումը: Մինչ պարսիկներն անցնում էին Կուրը, նա կարողանում է զորքը բաժանել երեք զորաթևերի, որոնք էլ ինքնուրույնաբար բացազատվելով (երթակարգից նախամարտական կարգ, ապա՝ զորաթևերի մարտակարգ ձևավորելով)՝ հասցնում են ձևավորել զորքի ընդհանուր մարտակարգը:

Ընդհանուր ղեկավարումից բացի, Վարդան Մամիկոնյանը ստանձնում է նաև կենտրոնի հրամանատարությունը: Սպարապետը աջ թևի հեծելազորի հրամանատարությունը հանձնում է իր փեսա Արշավիր Կամսարականին (Արշարունուն), ձախ թևը՝ Խորեն Խորխոռունուն: Որոշ ուշացումով մարտադաշտ հասած վերջապահ զորամասը՝ մարդպետական այրուձին, փաստորեն, կազմում է մարտակարգի պահեստազորը (ռեզերվ):

Գետանցումն ավարտելով՝ պարսիկները գրոհում են դեռևս նախամարտական կարգով շարված հայկական զորքի կենտրոնի զորամասերի վրա: Մարտադաշտն ընդհանուր առմամբ բարենպաստ էր պարսիկների համար, քանի որ լավ տեսադաշտ էր ապահովվում: Ճահճուտների ու դաշտը եզերող անտառի պատճառով հայոց բանակի գլխավոր հարվածող ուժը՝ այրուձին, բաց դաշտավայրային տեղանքում լինելով, չէր կարողանա ազատորեն գործել: Այսինքն՝ հայերը զրկվելու էին իրենց գլխավոր առավելությունից՝ զորաշարժային բարձր ցուցանիշները գործի դնելու հնարավորությունից:

Հայոց զորքը մարտադաշտ էր մտել երթակարգով: Գետանցումն ավարտելով՝ պարսիկները գրոհում են դեռևս նախամարտական կարգով շարված հայկական զորքի կենտրոնի զորամասերի վրա: Բաց տեսադաշտը Սեբուխտին հնարավորություն էր տալիս հետևել հայկական գնդերի *բացազատման* ընթացքին՝ կիրառելով ամբողջ ճակատով միաժամանակյա հարձակում: Ճակատամարտը այդպես սկսելով՝ Սեբուխտը մի շարք առավելություններ էր ստանում: Հանկարծակի հարձակման հետևանքով *նախաձեռնությունը* մարտի սկզբից պարսիկներինն էր: Նախաձեռնությունը խլելու համար Վարդան Մամիկոնյանը *հարկադրված էր* զորաշարժերի ու մի քանի տեղամասերում միաժամանակ *հատող գրոհների* դիմել:

Ճակատամարտը

Առաջին փուլ

Մարտի կազմակերպման (դաշտի դիտում, տեղազննություն, մարտակարգով զորամասերի շարում և այլն) համար անհրաժեշտ ժամանակ չունենալով հանդերձ՝ սպարապետը կարողանում է ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը և ընդունում է մարտը: *Մարտի ընթացքում մարտակարգ*

ծևավորելով՝ հայկական զորամասերը համարձակ հակագրոհի են անցնում (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.



Խաղխաղի ճակատամարտը 450թ.
(Հայոց բանակի ռազմերթը և նախամարտական կարգի բացազատվելը)

Ճակատամարտի սկզբում առանցքային նշանակություն են ունենում նետաձիգների գործողությունները: Այրուձիու զորագնդերի բացազատումն ապահովելու նպատակով սպարապետը նետաձիգներին (նաև մյուս թեթևազեն զորամասերը) առաջ է բերում ու հրամայում պաշտպանական՝ հակառակորդին կաշկանդող գործողություններով ապահովել գլխավոր ուժերի բացազատումը:

Պատմական տեղեկանք. «Իսկ քաջ Վարդանը և նրա հետ գտնվող ամբողջ զորքը, երբ տեսան հեթանոսների (պարսիկների - հեղ.) գնդի մեծ պատրաստությունը, նայեցին նաև իրենց սակավությանը. թեև թվով նրանցից շատ ավելի քիչ էին, բայց ամենևին չվախեցան նրանց մեծ բազմությունից...»:
Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Գ, էջ 153

Հատկապես հաջող էր Արշավիր Կամսարականի զորաթևի գրոհը, որի հզոր հարվածների տակ պարսիկների ձախ թևը սկսում է նահանջել: Նրանց հետապնդելով՝ հեծելագունդը դիմում է թևանցման, բայց հայտնվում է մերձկուրյան ճահճուտներում և ստիպված դադարեցնում հաջող սկսված զորաշարժը: Անհաջողության պատճառը մարտը սկսելու հարկադրված հապճեպությունն էր: Շարունակվող մարտի պայմաններում վերախմբավորումների իրականացումը զգալի ժամանակ և ջանքեր էր պահանջում: Դրանից օգտվելով՝ պարսիկները նոր գրոհով կարողանում են նեղել հայերին:

Երկրորդ փուլ

Բարդ իրավիճակում արագորեն կողմնորոշվելով՝ Արշավիր Կամսարականը պարսիկների համար անսպասելի արագությամբ վերադասավորում է ճահճուտներում խրված ու մարտակարգը խախտած իր զորամասերը: Վերադասավորումն ավարտելով՝ ձախ թևի հեծելազորը խոր թևանցման զորաշարժով դուրս է գալիս Կուրի ափը (տե՛ս սխեմա 2):

Սխեմա 2.



Խաղխաղի ճակատամարտը 450թ. (ճակատամարտի ընթացքը)

Հին աշխարհում իր զորաշարժային հատկություններով փայլող այրուձիու պատրաստվածության բարձր մակարդակի շնորհիվ դժվարին իրավիճակում հաջողվում է ավարտել ձախ թևի վերադասավորումը:

> **Պատմական տեղեկանք.** «Խումբ կազմեցին ու հարձակվեցին, և (պարսկական զորքի) աջ թևը ճեղքելով՝ ձախ կողմը գցեցին, բոլորին սրի ճարակ արին ամբողջ դաշտի վրա և փախցրին մինչև անտառի ամուր տեղերը՝ Լոփնաս գետի խոր ձորերի մոտ... Այստեղ աչքը վեր բարձրացրեց Արշավիր Արշարունին, մռնչաց առյուծի պես և հարձակվեց վարազի նման, խփեց սատկեցրեց Լփնաց թագավորի եղբայր քաջ Վուրկին և նրա բազմաթիվ համհարզներին էլ նրա հետ սպանեց»:
>
> ***Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Գ, էջ 153-155***

Այստեղ պետք է շեշտել *Արշավիր Կամսարականի* զորավարական տաղանդը: Արտակարգ բարդ իրավիճակում վճռական որոշումներ կայացնելու նրա ընդունակությունը հնարավորություն ընձեռեց *անբարենպաստ պայմաններում սկսած մարտը* փրկել անխուսափելի թվացող պարտությունից: Ավելին, ճահճուտներին սեղմված ձախ զորաթևը, օգնական ուժեր ստանալով, էլ ավելի հանդուգն քայլի՝ խոր թևանցող (փաստորեն՝ շրջանցող) զորաշարժի է դիմում: Արդյունքում, պարսիկների աջ թևին հարվածելով՝ Արշավիր Կամսարականի զորագունդը հայտնվում է նրանց մարտակարգի թիկունքում: Առաջացած խուճապն էլ վճռում է ճակատամարտի ելքը:

Պարսից զորքի մարտական դասավորությունը նախատեսված չէր թևերում ու թիկունքում մարտ վարելու համար, և այրուձիու դեմ ամբողջական մարտաշար ձևավորել չկարողանալով՝ սկսում է նահանջել նաև կենտրոնը: Հակառակորդի ջախջախումը կատարյալ է դառնում, երբ նահանջող պարսկական զորամասերը սեղմվում են Կուրի աջ ափին ու գետը լողալով անցնող պարսկական զորքի մի մասը խեղդվում է ջրում:

> **Պատմական տեղեկանք.** «Գետը թափածների թիվն ավելի շատ էր, քան թե ցամաքի վրա սրի անցրածներինը: Եվ ընկած դիակների բազմությունից գետի հստակ ջրերն արյուն դարձան, և նրանցից ոչ ոք չկարողացավ փրկվել և թաք կենալ դաշտերի խիտ անտառներում: Բայց թշնամիների զորականներից մեկը իր զենքերով միասին բարձրանալով ձիու մեջքին՝ անցավ մեծ գետը (Կուրը - հեղ.), մազապուրծ պրծավ պատերազմից՝ գույժ տարավ մնացած բուն բանակին, որոնք փախան գնացին»:
>
> ***Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Գ, էջ 155***

Հատկանշական է, որ մարտի վերջին փուլում Վարդան Մամիկոնյանն առաջ է բերում նետաձիգներին, որոնք նետահարում էին գետը լողալով անցնել փորձող հակառակորդի զինվորներին:

Ճակատամարտի վերջում նետաձիգներին առաջ բերելը[1] *Վարդան Մամիկոնյանի* ***ուշագրավ*** *մարտավարական հնարքներից մեկն է, թեև ռազմարվեստում նորություն չէ:*

---

[1] Նետաձիգների զորամասերը մարտի ընթացքում սովորաբար ծանրազեն հետևակի ու հեծելազորի թիկունքում են գտնվում:

Հաղթանակը

Մարտում հաջող գրոհով, ապա նաև համառ դիմադրությամբ, աչքի է ընկնում սպարապետի անմիջական հրամանատարության տակ գտնվող կենտրոնի զորաթևը: Այն ոչ միայն կաշկանդում է պարսիկների մեծաթիվ ուժերին, այլև հուսալի հանգույց դառնում հզոր գրոհներին դիմակայող աջ թևի և նոր գրոհի համար վերադասավորվող ձախ թևի միջև: Կենտրոնի մարտակարգի կայունությունն էր, որ կենտրոնի ու ձախ թևի միջև մխրճված պարսիկներին հնարավորություն չէր տալիս կտրել նրանց կապը:

Ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային ռազմարվեստում Խաղխաղի ճակատամարտի դերը չի սահմանափակվում մարտի հմուտ կազմակերպումով, իրավիճակի արագ գնահատումով ու փայլուն իրականացված թևանցումով: Դրանք ռազմարվեստում վաղուց արդեն նորություն չէին, թեև կարող էին բավարար լինել *ցանկացած* զորավարի փառաբանման համար:

Համաշխարհային ռազմարվեստում ***առաջին անգամ*** *մեր զորքը Խաղխաղում* ***հանդիպական մարտ*** *է կիրառել: Նորարարություն, որն այս ճակատամարտից հետո էլ երկար ժամանակ զորավարների կողմից չէր ընդունվում:*

Ընթացքից մարտի մեջ մտնելը սպարապետի զորավարական տաղանդի վառ արտահայտությունն է: Այս հնարքը ևս ռազմարվեստում առաջին անգամ էր կիրառվում[1]: Որպեսզի պարզ դառնա կատարվածի կարևորությունը, նշենք միայն, որ հետագա ավելի քան 13 դարերի ընթացքում զորավարները չեն փորձել կամ համարձակվել ընթացքից մտնելու մարտի մեջ:

Մերժելով միջնադարի ռազմարվեստում իշխող տեսակետը՝ Վարդան Մամիկոնյանը ***վերացնում է ռազմերթի ու մարտի միջև պարտադիր դադարը:*** *Ռազմարվեստի զարգացման համար սա նորարարություն էր:*

Սպարապետի ռազմական տաղանդի և համարձակության լրացուցիչ վկայությունը մարտակարգը դեռևս չձևավորված գրոհը սկսելու որոշումն է: *Զորքը գրոհը սկսել է նախամարտական կարգով, ինչը նախադեպը չունեցող մտահղացում էր:*

---

[1] Ընթացքից մարտի մեջ մտնելն այսօր հանդիպական մարտի պարտադիր նախապայմանն է համարվում:

Տեղեկանք. Խաղխաղում կիրառված նորարարություններին անտեղյակ լինելն է պատճառը, որ մինչև վերջերս պատմական գրականությունում հանդիպական մարտի առաջին օրինակ էր համարվում 1799թ. հունիսին Տրեբիա գետի մոտ Ալեքսանդր Սուվորովի գլխավորած ռուս-ավստրիական բանակի ճակատամարտը ֆրանսիացիների դեմ: Ավելին, ռազմական պատմաբանները ևս մեկ սխալ էին թույլ տալիս՝ եզրակացնելով, որ հանդիպական մարտի կազմակերպումը հնարավոր դարձավ արագաձիգ հրազենի ի հայտ գալու և շարասյուների մարտավարության կիրառման շնորհիվ: Մինչդեռ, Խաղխաղի ճակատամարտի օրինակը վկայում է, որ հանդիպական մարտի պատմությունը սկսվել է նախքան հրազենի ստեղծումը:

Այսպիսով, Խաղխաղի փայլուն հաղթանակով ոչ միայն մեր, այլև համաշխարհային ռազմարվեստը հարստացավ ընթացքից (առանց նախամարտական դադարի) մարտի մեջ մտնելու և հանդիպական մարտի հաջող փորձով: Դրանով Խաղխաղի ճակատամարտը Վարդան Մամիկոնյանի կիրառած ռազմավարությամբ հավասարազոր է այնպիսի ճակատամարտերի, ինչպիսին են Ք.ա 371թ. *Լևկտրայի*[1], Ք.ա. 331թ. *Գավգամելայի*[2], Ք.ա. 216թ. *Կաննեի*[3], Ք.ա. 48թ. *Փարսալոսի*[4] մարտերը: Վարդան Մամիկոնյանն արժանի տեղ է գրավում ռազմարվեստի այնպիսի *բարեփոխիչների* կողքին, ինչպիսիք են *Էպամինոնդասը, Ալեքսանդր Մակեդոնացին, Հաննիբալը, Հուլիոս Կեսարը* և ուրիշներ:

Խաղխաղի ճակատամարտի համակողմանի վերլուծությունը էապես հարստացնում է հայոց ռազմարվեստի զարգացման աստիճանի մասին պատկերացումները:

---

[1] Առաջին անգամ զորքը շարվել է ճակատով անհավասար, և հակառակորդի մարտակարգը ճեղքելու նպատակով ուժեր են կենտրոնացվել:

[2] Կիրառվել է նախահրազենային դարաշրջանում բարդ համարվող զորաշարժ՝ շրջանցում:

[3] Առաջին անգամ փոքր բանակը շրջապատել ու ջախջախել է ավելի մեծաթիվ բանակին՝ վերջնականապես ապացուցելով, որ զորքի քանակը չի կարող հաղթանակի հասնելու բացառիկ նախապայման լինել:

[4] Առաջին անգամ պահեստազորը մարտադաշտում վճռական դեր է կատարել: Ճակատամարտի սկզբում պահեստազորի ուժերով կասեցվել է հակառակորդի ճեղքող (հատող) հարվածը, ապա իրականացվել է մարտի ելքը վճռող զորաշարժը՝ թևանցում:

ԱՌԱՆՁԱՐ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՁՈՐԱՄԱՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՊԱՀ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ

451Թ. ՄԱՅԻՍ

ՄԱՐՏՈՎ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ ԱԿԱՐԱՅՐԻՉ ԱՌԱՋ

Խաղխաղի ճակատամարտից հետո Վարդան Մամիկոնյանը շարունակում է իրականացնել իր ռազմավարական ծրագիրը: Զարգացնելով հաջողությունը՝ սպարապետը, անցնելով Կուր գետը, ձեռնամուխ է լինում Աղվանքի ամրոցներում տեղակայված պարսկական կայազորների ոչնչացմանը: Այս խնդրի լուծումը կարևոր էր, քանի որ հակառակորդի գլխավոր ուժերի դեմ առճակատման նախօրյակին թիկունքը վտանգված չէր լինի: Այլ խոսքերով՝ սպարապետը կխուսափեր իր փոքրաթիվ ուժերը փոշիացնելու հեռանկարից և կկարողանար վճռական ճակատամարտի հանել հնարավորինս մեծաթիվ ուժեր:

Աղվանքը պարսկական կայազորներից ազատելու գործը ևս իրագործվում է: Դրանով սպարապետը լուծում է միանգամից մի քանի խնդիր.

Փայտակարան ներխուժած պարսկական զորքերը, չհամարձակվելով բախվել հայկական զորքի հետ, նահանջում են Պարսկաստան, և 450թ. պատերազմաշրջանի ընթացքում նոր մեծ ճակատամարտ տալու անհրաժեշտությունը վերանում է: Հաջողության հասնելով Աղվանքում՝ Վարդան Մամիկոնյանը շարժվում է դեպի Ճորապահակ և ոչնչացնում այնտեղի կայազորը:

Ճորապահակի վերահսկողությունը հանձնելով Աղվանքի իշխաններից Վահանին՝ սպարապետը ռազմական դաշինք է կնքում հոների հետ:

Ռազմավարությունը

Պարսիկների համար անսպասելի էր Վարդանի գործելակերպը: Ակնհայտ էր, որ նրանք չէին հասցնում սպարապետի գործողություններին համարժեք հակաքայլեր մշակել: Մասնավորապես, ոչ մեծաթիվ զորաբանակը *սրընթաց* անցնում է Աղվանքով՝ կարճ ժամանակամիջոցում այդ երկիրն ազատելով պարսկական կայազորներից: Սպարապետի հեռատեսության մասին է վկայում նաև Ճորապահակի ամրությունների գրավումը (տե՛ս քարտեզը):

Հատկանշական է, որ հզոր ամրությունները գրավվեցին արագորեն, ինչը վկայում է վճռական հարձակողական գործողություններ վարելու Վարդան Մամիկոնյանի մեծ ընդունակության մասին:

Այս վճռական պահին գուժկան է հասնում Հայաստանից. Վասակ Սյունին հրաժարվել էր ապստամբությունից: Ստեղծված իրավիճակում, երբ ժողովուրդը կենաց-մահու պայքարի էր ելել հանուն Հայրենիքի ազատության, Վասակ Սյունու կողմից ապստամբությունից հրաժարվելը և, նույնիսկ, դրան հակառակվելը ծանր հետևանքներով էր լի:

Իրադրությունը թելադրում է Վարդան Մամիկոնյանին անմիջապես վերադառնալ Հայաստան:

Պարսկական արքունիքը շարունակում է փորձել պառակտում մտցնել հայերի շարքերում, սակայն անհաջողության մատնվելով՝ անցնում է ազատագրական շարժումը զենքի ուժով ճնշելուն:

Ներխուժումը

451թ. գարնանը պարսկական մեծաքանակ բանակը հասնում է Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Փայտակարան քաղաքը: Այնուհետև, Մուշկան Նյուսալավուրտի հրամանատարությամբ, Հեր և Զարևանդ գավառներով պարսիկները շարժվում են դեպի երկրի կենտրոնական շրջանները:

> **Պատմական տեղեկանք.** «Մի քանի օրից հետո Պարսից զորագլուխը առաջ խաղաց ամբողջ հեթանոս բազմության հետ. եկավ-հասավ Հայոց Հեր և Զարևանդ գավառը: Այնտեղ՝ գավառում կանգ առնելով, բանակ դրեց, փոս փորեց, պատնեշ շինեց, ցցապատնեշով փակեց և ամեն պատրաստությամբ ամրացրեց ինչպես քաղաք»:
>
> ***Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե***

Պարսկական բանակի առաջխաղացման նկարագրությունից կարելի է դատել, որ Նյուսալավուրտն իր գործողություններում զգուշավորություն էր ցուցաբերում: Պարսիկ զորավարը գիտեր, որ սպարապետ Վարդանից կարելի է ռազմավարական կարգի ցանկացած անակնկալ սպասել:

Պարսիկները առաջ են շարժվում անշտապ, իսկ գիշերելու համար հարմար տեղանքի հասնելով՝ դադարեցնում հետագա առաջխաղացումը և ամրացված ճամբար դնում:

Հետախուզումը

Սպարապետը պարսկական բանակի հետախուզման համար ուղարկում է Առանձար Ամատունու երկու հազարանոց հեծյալ զորամասը: Այս հնարքը հիշեցնում է բդեշխների կողմից հակառակորդի գործողությունները կաշկանդելու գործողությունը:

*Ռազմարվեստի մեծ բարեփոխիչը հարազատ է մնում **նախնյաց մարտավարության դարավոր ավանդույթներին**՝ ցույց տալով, որ իր կիրառած նորարարությունները ռազմարվեստի բնականոն զարգացման արդյունք են:*

> **Պատմական տեղեկանք.** «Հայոց երանելի սպարապետ Վարդանը... (Ամատունու զորամասը) ուղարկեց հետախուզելու Պարսից զորքերի բազմությունը և, եթե հնար լիներ, *գրգռելու*...»:
>
> ***Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Բ, գլ. Լէ***

Հետախուզության ուղարկված զորամասը *նկատում է*, որ պարսիկները ձեռնարկում են անվտանգության արտակարգ միջոցառումներ: *Ակնհայտ է դառնում*, որ հակառակորդին անսպասելի գործողություններով հանկարծակիի բերելն անհնարին է լինելու: Միևնույն ժամանակ *հաջողվում է պարզել*, որ բնակչությանն ահաբեկելու նպատակով պարսկական զորամասերը ասպատակում էին շրջակա գավառները: Հետևաբար, գիշերն անվտանգության միջոցառումներ իրականացնող հակառակորդը՝ իր քանակական գերազանցության պատճառով, ցերեկն իրեն ավելի վստահ էր զգում և դրանով իսկ դառնում խոցելի:

Հարձակումը

Առանձար Ամատունին որոշում է օգտագործել պարսիկների այդ անզգուշությունը և իր զորամասով գրոհում հերթական անգամ ասպատակության ուղարկված պարսկական զորամասերից մեկի վրա (տե՛ս քարտեզը):

> **Պատմական տեղեկանք.** «(Պարսից) զորքերից մեծաթիվ գունդ բաժանվեց, ասպատակելով արշավեց և կամենում էր բազմաթիվ գավառներ կողոպտել:
>
> Երբ այդ բանը լսեց Հայոց զորքը, բոլոր զորականների միջից ընտրեցին Ամատունյաց ցեղի մի սեպուհի Առանձար անունով, որ իմաստությամբ ու քաջությամբ լցված մի մարդ էր: Սա երկու հազարով դուրս եկավ նրա դեմ, ջարդեց-սատկեցրեց նրա գնդից շատերին, իսկ մնացածներին փախցրեց-հասցրեց նրանց բանակը: Իսկ ինքը ողջ և առողջ վերադարձավ, և այն օրը մեծ ուրախության տոն եղավ Հայոց զորքի համար»:
>
> ***Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե***

Մեծաթիվ լինելով հանդերձ, պարսկական զորամասը հանկարծակի գրոհից խուճապի է մատնվում և անկանոն նահանջում դեպի բանակի ամրացված ճամբարը: Չնայած փախչող հակառակորդին կարելի էր ծանր հարվածներ հասցնել, սակայն գլխավոր ուժերին մոտենալով՝ նրանք կարող էին շրջափակել հայերին: Ուստի Առանձար Ամատունին որոշում է դադարեցնել հետապնդումը և վերադառնալ հայոց զորքի բանակատեղի:

Հաղթանակը

Այս համարձակ գրոհը Վարդան Մամիկոնյանի մարտավարական զինանոցի բազմազանության նոր վկայությունն է, քանի որ թեև սպարապետը մարտին մասնակցություն չունեցավ, սակայն պատմիչները միաբերան պնդում են, որ հետախուզության իրականացման մտահղացումը նրա ռազմավարական ծրագրի հերթական օղակն էր:

Ղազար Փարպեցին վկայում է, որ Ամատունու զորամասը մարտով հետախուզություն իրականացնելու ***առաջադրանքը ստացած է եղել նախքան հետախուզության ուղարկվելը:*** *Հետևաբար, արդեն V դարում հայ զորավարներին հայտնի էր հետախուզության ուղարկվող զորամասերի առջև տարբեր բնույթի առաջադրանքներ դնելու հնարավորությունը:*

Մարտական ապահովման բավականին ակտիվ տարատեսակ համարվող այս հնարքը Վարդան Մամիկոնյանի, առավել ևս՝ Առանձար Ամատունու նորարարությունը չէ: Այդուհանդերձ, հանդուգն մարտական առաջադրանքի նախապատրաստումն ու իրականացումը մեծ համարձակություն էին պահանջում, և պետք է արժանին մատուցել երիտասարդ տարիքում իմաստուն զորականի հռչակ վայելող Ամատունի սեպուհին:

Գիտակցելով, որ իր ոչ մեծ զորամասով հակառակորդին մեծ վնաս չի կարողանա հասցնել, սակայն այս ոչ մեծ հաղթանակը ոգևորելու է ազատագրական պայքարի ելած իր հայրենակիցներին՝ Ամատունին հաջող հարձակումից հետո արագորեն նահանջում է և միանում գլխավոր ուժերին:

Այսպիսով, Առանձար Ամատունու գլխավորությամբ իրականացված մարտով հետախուզությունը վկայում է հայոց ռազմարվեստում *մարտական ապահովության* միջոցառումների զարգացման բարձր մակարդակի մասին:

Դժվար է գերագնահատել այս հաղթանակի դերը հզոր հակառակորդի դեմ պայքարի ելած Վարդանանց ոգին բարձրացնելու գործում:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ 450-451ԹԹ.


ՎՐՔ
ՄՇԽԵԹԱ
Տփղիս
Ճորա պահակ
Աչքասար լ.
Խաղխաղ
Կապաղակ
Ամասիա
Կումայրի
Թեժ լ.
Արագած լ.
Քաշաքաղ լ.
Գանձակ
Պարտավ
ՍԱՍԱՆ
ՄԱՍՏԵՍ
ՄՈՂՔ
ՀԱՅՔ
ՍԱՍԱՆ
ՊԱՐՏԱՎ
ՍԱՍԱՆ
ՄՈՂՔ
ՄՈՂ

ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
451Թ. ՄԱՅԻՍԻ 26

ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Առանձար Ամատունու զորամասի հաջողությունը ոգևորում է ազատագրական շարժման մասնակիցներին: Թշնամու դեմ պայքարում միավորվել էին հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչները. պատերազմ վարելը ստեղծված իրադրությունում վաղուց արդեն զինվորականության «մենաշնորհը» չէր:

Գրիգոր Խանջյան. «Վարդանանք»

Պատմական տեղեկանք. «Երանելի Ղևոնդ երեցը... բարձր ձայնով ասաց (զորքի) պատգամավորների առաջ...

«Եղբայրնե՛ր, չթուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել-գալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք՝ կապրենք և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ... Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թեպետև սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին, որևէ ամուր տեղ էիք թողնում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները և երեցներն ու սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու ջարդել ճշմարտության թշնամիներին: Եվ եթե նույնիսկ մեռնեն էլ նրանց ձեռքով, այդ բանից էլ չեն վախենալու»:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե

Նախապատրաստումը

Պարսկական բանակը հասնում է Արտազ գավառը, ճամբար է դնում Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում (տե՛ս նախորդ ակնարկի քարտեզը): Հետախուզության միջոցով հակառակորդի թվաքանակի, նաև տեղաշարժի և մտադրությունների մասին տեղեկացված լինելով՝ Վարդանն իր զինակիցների հետ շտապում է հակառակորդին ընդառաջ:

Սպարապետ Վարդան Մամիկոնյանի կոչը Ավարայրի ճակատամարտից առաջ

«Իմ քա՛ջ նիզակակիրներ, չերկնչենք ու չվախենանք և ոչ էլ մահկանացու մարդու ահռելի սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի, եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը՝ մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե

Վարդանանց բանակը պատրաստվում է հաջորդ օրվա դժվարին ճակատամարտին: Նախապատրաստական աշխատանքների մասն է կազմում չմկրտ-

ված մարտիկների մկրտության արարողությունը, որը կատարվում է ճակատամարտի նախորդ գիշերը: Պարսկական արքունիքի ծուլման քաղաքականության դեմ ըմբոստացած հայության համար այս ազատագրական պատերազմը սրբազան պայքար էր, և խորհրդանշական էր, որ վճռական ճակատամարտից առաջ մարտիկները սուրբ հաղորդություն էին ընդունում:

Ճակատամարտին էր պատրաստվում նաև հակառակորդը: Մուշկան Նյուսալավուրտն իր մոտ է կանչում Վասակ Սյունուն և «Հայոց աշխարհի բոլոր ուրացած իշխաններին», հարցուփորձ անում հայոց բանակի մարտավարության գաղտնիքների մասին ու փորձում կռահել ճակատամարտում Վարդան Մամիկոնյանի մարտի մտահղացումը: Ուշագրավ է, որ պարսիկ զորավարն իր զորքի մարտակարգը շարում է հայկական կողմի մասին տեղեկությունները հավաքելուց հետո:

> **Պատմական տեղեկանք.** «Պարսից բանակի զորավարը... սովորում էր հաղթության հնարագիտությունը: Եվ երբ տեղեկացավ ամեն մեկի քաջությունները, կանչեց նաև իր զորագլուխներից շատերին և հրամայեց իր առաջ բերել փղերի երամակները. գունդ-գունդ բաժանեց այդ գազաններին և ամեն մի փղի մոտ երեք հազար մարդ դրեց, բացի մնացած ամբողջ զորքից... »:
>
> ***Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե***

Այնուհետև հայկական ամբողջ զորքը շարժվում է Ավարայրի դաշտ՝ պարսիկներին վճռական ճակատամարտ տալու: Մայիսի 25-ին հայկական ուժերը բանակ են դնում Տղմուտի ձախ ափին:

Հրամկազմի նշանակման կարգը

Սպարապետը զորքերը բաժանում է չորս մասի, որոնց հրամանատարությունը ստանձնում են զորավարական տաղանդ ու փորձառություն ունեցող այրեր: Կենտրոնը գլխավորում է Ներշապուհ Արծրունին, աջ թևը՝ Խորեն Խորխոռունին, ձախ թևի հրամանատարությունը ստանձնում է Թաթուլ Վանանդեցին: Բացի ընդհանուր հրամանատարությունից՝ Վարդան Մամիկոնյանը ստանձնում է նաև պահեստազորի հրամանատարությունը:

> **Պատմական տեղեկանք.** «Իսկ քաջ Վարդանը առաջ գալով՝ հարցուփորձ արեց մեծամեծներին և *բոլորի տված խորհրդի համաձայն* զորագլուխներ նշանակեց:
>
> *Առաջին զորամասը* հանձնեց Արծրունյաց իշխանին և նրան *նիզակակից կարգեց* Մոկաց մեծ իշխանին. և ուրիշ բազմաթիվ նախարարների այս երկուսին նիզակակից նշանակեց, և զորամասի ամբողջ բազմությունը այս ու այն կողմից օգնական տվեց նրանց:

Երկրորդ զորամասը հանձնեց Խորեն Խորխոռունուն, և նրան *նիզակակից կարգեց* Ընծայինին[1] և Ներսեհ Քաջբերունուն:

Երրորդ զորամասը հանձնեց Թաթուլ Վանանդեցուն և նրան *նիզակակից կարգեց* Տաճատ Գնթունուն, և շատ քաջ մարդիկ էլ այս ու այն կողմից օգնական տվեց նրանց:

Ինքը վերցրեց չորրորդ զորամասը և իրեն նիզակակից՝ քաջ Արշավիրին և իր հարազատ եղբայր Համազասպյանին»:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե

Շարունակելով հրամանատարական կազմի նշանակման դարավոր ավանդույթը, որը մեզ հայտնի է դեռևս Հայոց ձորի ճակատամարտից, սպարապետը այս ճակատամարտից առաջ ևս, զորաթևերի հրամանատարներից բացի, նշանակում է նրանց տեղակալներ՝ նիզակակիցներ:

Ճակատամարտը

Առաջին փուլ

Ճակատամարտը սկսվում է մայիսի 26-ի վաղ առավոտյան՝ փոխադարձ նետաձգությամբ, որին հաջորդում է մերձամարտը (տե՛ս սխեման): Պարսիկները հասնում են գետին և կանգ առնում՝ վախենալով գետանցի դժվարությունից: Իսկ հայկական զորքը, անցնելով Տղմուտը, ամբողջ ճակատով մարտի է բռնվում պարսիկների հետ: Հայկական այրուձին հարձակվում է հակառակորդի թևերի վրա և մխրճվում նրա մարտակարգի մեջ: Չդիմանալով հայերի ճնշմանը՝ հակառակորդի ձախ ու կենտրոնի զորաթևերն սկսում են հետ քաշվել, սակայն փոքրաթիվ ուժերով գրոհող հայկական զորամասերն ավելին անել չեն կարողանում: Այս տեղամասերի իրենց զորամասերին օգնական ուժեր ուղարկելով՝ պարսկական բանակի հրամանատարությունը կարողանում է խափանել երերացող մարտակարգի խախտման հայկական կողմի փորձերը: Մարտադաշտի մյուս կողմում մեր զորամասերին հաջողվում է հետ շպրտել պարսիկների աջ թևը: Միաժամանակ պահեստազորի մի մասն Արշավիր Կամսարականի գլխավորությամբ առաջ է խաղում՝ կենտրոնում պարսկական զորամասերի ճեղքում թույլ չտալու առաջադրանքով:

---

[1] Արսեն Ընծայացին:

Երկրորդ փուլ

Հակառակորդի ուշադրությունը կենտրոնում և աջ թևում ծավալված գործողությունների վրա կենտրոնացնելով՝ Վարդանը Մամիկոնյանների զորամասով թևանցում է պարսից բանակի մարտակարգի կենտրոնը և մարտի բռնվում հակառակորդի պահեստազորը կազմող Մատյան գնդի հետ (տե՛ս սխեման): Իր մարտիկներին ոգևորելու համար սպարապետն անձամբ է նրանց գրոհի առաջնորդում: Ծավալվում է կատաղի մարտ, որը տևում է մինչև մայրամուտ:



Ավարայրի ճակատամարտը 451թ. մայիսի 26

Հայկական զորքերն արիաբար մարտնչում են թվով գրեթե երկու անգամ գերազանցող հակառակորդի դեմ: Նրանք այնպիսի իրարանցում են առաջ բերում, որ նույնիսկ անպարտելի համարվող Մատյան գնդի մարտական դասավորությունը ևս կազմալուծվում է: Պարսիկներին միայն փղերի գնդի օգնությամբ է հաջողվում վերադասավորել ուժերը և շարունակել ճակատամարտը:

Այսպիսով, Նյուսալավուրտը հայոց բանակի խրոխտ գրոհը կարողանում է կասեցնել ամբողջ պարսկական բանակը մարտի նետելու գնով միայն: Ընդ որում, թեև ուժերի գերլարման գնով, սակայն այդ քայլը նրան հաջողվում է: Չախ թևում պարսիկների մարտական դասավորությունը ճեղքելու նպատակով հզոր գրոհ ձեռնարկած Վարդան Մամիկոնյանը չի կարողանում ավարտել ճեղքումը և գրոհի կասեցման պահին իր փոքրաթիվ զորախմբով հայտնվում է աքցանի մեջ: Չգտելով ավարտել ճեղքումը՝ սպարապետը մարտի է նետվում և հերոսաբար զոհվում:

Ուշագրավ է, որ առաջնորդի մահը հայկական զորամասերի խուճապի պատճառ չի դառնում, և մարտը շարունակվում է մինչև ուշ երեկո:

Պատմական տեղեկանք. «Եվ որովհետև ժամանակը գարնանային էր, ծաղկալից դաշտերը լցվեցին հորդահոս արյունով: Մանավանդ, երբ մեկը տեսնում էր ընկած բազմաթիվ դիակների կույտերը՝ սիրտը կտրատվում էր, և աղիքները գալարվում, լսելով խոցվածների մրմռոցը, և ջարդվածների մռնչյունը, վիրավորների թավալգլոր սողալն ու շարժվելը, վախկոտների փախուստը, վիատվածների թաք կենալը, անարի մարդկանց սրտաբեկությունը, թուլասիրտների ճիչերը, սիրելիների ողբը, մերձավորների սուգը, բարեկամների վայնասունը: Որովհետև *ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուսը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմն էլ պարտություն կրեցին»:*

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, գլ. Ե

Երեկոյան երկու բանակներն էլ քաշվում են այն բնագծերը, որտեղից սկսել էին ճակատամարտը: Ընդհարման ելքը վճռվելու էր հաջորդ օրը: Պարսկական բանակն անմիջապես սկսում է նախապատրաստվել երկրորդ ճակատամարտին: Սակայն գիշերը հայկական կողմի հրամանատարական կազմի խորհրդակցության ժամանակ որոշվում է խուսափել նոր ճակատամարտից: Հայկական կողմն իր առջև դրված խնդիրը կատարված էր համարում, և նախարարները, յուրաքանչյուրն իր զորամասով, քաշվում են իրենց գավառները:

«Ավարայրի ճակատամարտը».
մանրանկար 1482թ. Ականց անապատում Կարապետ Բերկրացու ծաղկած Շարակնոցից, Երևանի Մատենադարան

Ամփոփում

Հայության ազգային հիշողությունում Ավարայրի ճակատամարտը ամրագրվել է որպես մեր ամենակարևոր և առանցքային հաղթանակներից մեկը: Նման գնահատականը միանգամայն օրինաչափ է, քանի որ այն շարքային ճակատամարտ չէր և ոչ էլ զուտ «բարոյական հաղթանակ», ինչպես դա երբեմն պարզունակորեն փորձում են ներկայացնել: Հանուն հայրենիքի և հավատքի պաշտպանության մղած Ավարայրի ճակատամարտը մեր ազգային - քրիստոնեական ինքնության պահպանման համար մղվող երկարատև պայքարում տարած ռազմավարական հաղթանակն է: Եթե փորձենք Վարդանանց պատերազմը մեկնել արդի հասկացողությունների միջոցով, ապա անհրաժեշտ է վերհիշել, որ ազգային անվտանգության հիմնական նպատակը սեփական արժեքային համակարգի, կամ այլ խոսքերով՝ «քաղաքակրթական - մշակութային կոդի» պահպանումն է: Այդ համատեքստում պարսկական ագրեսիայի գլխավոր թիրախը մեր հոգևոր - արժեքային համակարգն էր: Անձնազոհությամբ պաշտպանելով այդ համակարգը՝ Վարդանանք փայլուն լուծեցին մեր ազգային-հոգևոր անվտանգության գերխնդիրը. Հազկերտ Բ-ն հրաժարվում է իր ծրագրերից և դուրս է բերում զորքերը Հայաստանից: Ավարայրի հաղթանակի համահեղինակներն էին հայոց ռազմաքաղաքական և հոգևոր ընտրանին, ողջ հանրությունը: Դա վկայում է այն մասին, որ ցանկացած ժամանակահատվածում ազգային անվտանգության արդյունավետ ապահովումը պահանջում է Հայության իշխանական և հոգևոր ներկայացուցիչների ու համաժողովրդական ուժերի միասնական ջանքեր և համաձայնեցված գործողություններ:

Լեոնարդո Գավանյինի. «Ավարայրի ճակատամարտը», 1872թ., Վենետիկի Մխիթարյան միաբանության հավաքածու

ՎԱՀԱՆԱՆՑ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 481-484ԹԹ.

Վդ. 60-ական թթ. սկսած՝ պարսից արքունիքն աստիճանաբար վերադառնում է Հազկերտ Բ-ի նախորդ տասնամյակներում վարած հակահայկական քաղաքականությանը: Ի պատասխան հայերը նորից ելնում են պայքարի. սկսվում է Վահանանց ազատագրական պատերազմը 481-484թթ.: Այդ պատերազմը գլխավորում է Հայաստանում մեծ հեղինակություն վայելող Վահան Մամիկոնյանը (Վարդան Մամիկոնյանի եղբորորդին):

Վահան Մամիկոնյանը որոշում է ձերբակալել պարսիկ մարզպան Ատրվշնասպին ու զորահրամանատար Վեհվեհնամին, սակայն նրանց հաջողվում է փախչել Պարսկաստան:

Ազատագրական պայքարի ալիքը տարածվում է ամբողջ երկրով: Նախապես շարժման կենտրոն է ընտրվում Դվին քաղաքը, բայց հաշվի առնելով, որ իրենց փոքրաթիվ ուժերով չեն կարող բաց դաշտում ճակատամարտել պարսից գերակշիռ ուժերի դեմ, հայկական զորքը որոշում է ամրանալ Տայքի անառիկ լեռներում:

Տայքում էլ ռազմարվեստի տաղանդավոր բարեփոխիչ Վահան Մամիկոնյանը վերջնական տեսքի է բերում իր նոր ռազմավարության հիմնական դրույթները:

Մարտավարության բարեփոխումը

(Մեր հաղթանակների նոր հայեցակարգը)

V դարի վերջին քառորդում, ի շարունակություն Վարդանանց ժամանակաշրջանի, հայոց ռազմարվեստի ամբողջ համակարգն աննախադեպ վերափոխում է ապրում: Ձևավորվում է Արշակունյաց թագավորության անկումից հետո ստեղծված իրադրությունում առավել արդյունավետ գործող հայեցակարգ, որն ընդունված է պայմանականորեն անվանել *անկանոն* կամ *ապստամբական ռազմարվեստ:* Քանի որ նոր հայեցակարգում մեծ էր մարտավարության «տեսակարար կշիռը», առանձին դեպքերում այն կոչվում է նաև *անկանոն (ապստամբական) մարտավարություն:* Դրա էությունը վճռական ճակատամարտերի (այսպես կոչված՝ կանոնավոր մարտերի) փոխարեն հակառակորդին հյուծիչ (անկանոն) գործողություններով կաշկանդելն ու անբարենպաստ իրավիճակի մեջ դնելով՝ ջախջախելն էր: Նոր համակարգը վերջնական տեսքի է բերում տաղանդավոր զորավար, մեր ռազմարվեստի *մեծագույն* բարեփոխիչներից մեկը՝ սպարապետ Վահան Մամիկոնյանը:

Անկանոն մարտավարությանը բնորոշ տարրեր մեր ռազմարվեստում միշտ էլ կիրառվել էին: Դարերով ձևավորվել էին զինված պայքարի սկզբունքներ, որոնք մի շարք ընդհանրություններ ունեին անկանոն մարտավարության հետ: Եվ դա բնական էր: Լեռներին բնորոշ *կտրտված տեղանքը, կլիմայի ուղղաձիգ գոտիականությունը,* զինագործության զարգացման համար վճռական նշանակություն ունեցող *օգտակար հանածոների բազմազանությունն* ու, վերջապես, հզոր հեծելազոր ունենալու համար կարևոր՝ *զարգացած ձիաբուծությունը* վճռական ազդեցություն էին ունեցել ռազմարվեստի վրա: Այս, ինչպես նաև մի շարք այլ գործոններով էին պայմանավորված մեր ռազմարվեստի էական տարբերությունները հարևան ժողովուրդների մարտավարական համակարգերից: Մասամբ նաև դրանք են պատճառը, որ անկանոն մարտավարության տարրերը խորթ չէին մեր ռազմարվեստին, ու դրանց կիրառման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել: Սակայն մինչ Վահան Մամիկոնյանը այս մարտավարությունը *գերիշխող* չէր եղել:

Հատկանշական է, որ մինչև 480-ական թվականները անկանոն մարտավարությունը ***չէր կիրառվել*** *ոչ միայն պատերազմների, այլև ապստամբությունների ժամանակ:*

Տեղեկանք. Հիշենք տարբեր պատմական դարաշրջաններում տեղի ունեցած ազատագրական պատերազմների երկու դրվագ՝ Ք.ա. 521-20թթ. Աքեմենյանների զորքերի հարձակումների դեմ կռիվները և 450-51թթ. Վարդանանց պատերազմը:

Ինչպես հայտնի է, *առաջինում* գրոհող պարսից զորքերի դեմ հայերը ոչ միայն հաջող պաշտպանվում էին, այլև համարձակորեն դուրս են գալիս լեռնաշխարհի սահմաններից ու մարտական գործողությունները տեղափոխում Ասորեստանի տարածքը (Իզալայի ճակատամարտը) (տե՛ս «Մեր հաղթանակները», հատ. Ա, էջ 142-147):

Երկրորդում՝ 450թ. ամռանը, հայկական ուժերը բաժանվում են երեք մասի: Սպարապետ Վարդան Մամիկոնյանը, ուժերի ընդամենը մեկ երրորդի գլուխն անցած, շարժվում է ապստամբ աղվաններին օգնության և պարսիկներից փոքրաթիվ բանակով Խաղխաղի մոտ ջախջախում նրանց գլխավոր ուժերին: Անկանոն մարտավարության կիրառման մասին խոսք անգամ լինել չի կարող ոչ միայն այն պատճառով, որ փոքրաթիվ ուժերը համարձակվել էին բաց դաշտում հզոր հակառակորդին ճակատամարտ տալ, այլև՝ որ սպարապետը մարտական գործողությունները տեղափոխել էր Կուրի հովտի հարթավայրային շրջանները, այնպիսի տեղանք, որը լեռներին սովոր հայոց մարտավարության կիրառման ամենանպաստավոր տեղանքը չէր: Պակաս կարևոր չէ նաև, որ հոների հետ ռազմական դաշինք ձևավորել ձգտող հայոց սպարապետը մարտից հետո շարունակում է առաջխաղացումը և վտանգի տակ դնելով իր զորքերի առանց այն էլ անկայուն թիկունքը՝ հասնում Ճորա պահակ: Հատկանշական է, որ Ավարայրում ևս, չնայած փոքրաթվությանը, հայկական կողմը նախընտրում է բաց դաշտում հակառակորդի հիմնական ուժերի հետ վճռական ճակատամարտը և չի դիմում հակառակորդին հյուծելու, ժամանակ շահելու, նահանջի կամ խուսանավող այլ քայլի:

ԱԿՈՌԻԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
481Թ.

Հետապնդումից մի կերպ ազատված պարսիկ մարզպան Ատրվշնասպը շուտով 7 հազարանոց զորքով Ատրպատականի տարածքով վերադառնում է Հայաստան՝ նպատակ ունենալով «բնում խեղդել» ազատագրական շարժումը: Պարսիկները հասնում են Արաքս գետը՝ Նախիջևանի մոտ: Տեղեկանալով այդ մասին՝ որոշվում է 400 հոգանոց հայկական զորամաս ուղարկել հակառակորդին ընդառաջ: Զորամասը մտադիր էր պարսիկների վրա հարձակվել գետանցի ժամանակ, սակայն պարսիկները հասցնում են անցնել Արաքսը (տե՛ս քարտեզը): Ուստի, անցկացնելով անհրաժեշտ հետախուզություն, հայ զինվորականները որոշում են պարսիկներին քաշել Մասիսի հյուսիսային լեռնոտ լանջերը: Հայկական կողմը կարողանում է իրականացնել այս ծրագիրը:

Ճակատամարտը

Զոկատին հետապնդելով՝ պարսիկները հասնում են Ակոռի գյուղին, որի մոտ էլ տեղի է ունենում ճակատամարտը: Մարտից առաջ հայկական զորամասը բաժանվում է չորս մասի, որոնցից մեկն առանձնացվում է՝ որպես պահեստազոր: Ըստ Ղազար Փարպեցու՝ պարսիկ մարզպանը, տեսնելով հայերի փոքրաթվությունը, ծիծաղելով նրանց անվանում է *«մահվանն ընդառաջ գնացող խելագարներ»*: Բայց մեծամիտ Ատրվշնասպը չարաչար սխալվում էր:

Տեղանքը նպաստավոր էր: Նեղ ու կտրտված լեռնագրություն ունեցող տեղանքում հակառակորդը չէր կարող բացազատվել մարտի (առանց նախամարտական կարգ շարելու երթակարգից անցնել մարտակարգի): Օգտագործելով տեղանքի ընձեռած հնարավորությունները՝ հայկական զորամասը շեշտակի գրոհում է, խուճապ առաջացնում պարսիկների շարքերում և մատնում փախուստի: Մարտից հետո ակտիվ հետապնդում է իրականացվում: Ճակատամարտում սպանվում է նաև Ատրվշնասպ մարզպանը:

Առաջին իսկ՝ Ակոռիի ճակատամարտը վկայում է, որ որակական զարգացում են ապրել արագ փոփոխվող մարտավարական իրավիճակի գնահատման ու մարտակարգերի կառուցման սկզբունքները:

Կարևորագույն նշանակություն է ստանում տեղանքը՝ որպես մարտական իրավիճակի տարր:

Բաց ճակատային բախումներից խուսափելով՝ մարտը սկսվում է մեծաթիվ ուժերին բացազատման հնարավորություն չտվող նեղ կամ կտրտված տեղանքում հակառակորդից բարձր դիրք զբաղեցնելուց ու նահանջի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուց հետո: Այս տեսակետից Ակոռիում նպաստավոր էին ոչ միայն տեղանքի թեքությունը, այլև շրջակա ձորակները: Պատահական չէ, որ պարսիկների կողմն անցած ու Կատշաց զորամասով շրջանցում իրականացնող Գարջոյլ մաղխազը չի հասցնում ժամանակին ավարտել զորաշարժը: Ձորակներում «դեգերող» շրջանցող ուժերը մարտադաշտ են հասնում պարսիկների գլխավոր ուժերի պարտությունից հետո:

Մարտակարգի առանձնահատկությունները

Պետք է հատուկ շեշտել, որ անկանոն մարտավարության յուրացումը չէր նշանակում մերժել անցյալի ժառանգությունը: Մասնավորապես բնութագրա-

կան է, որ պահպանվում է ճակատամարտից առաջ բանակի հրամանատարի կողմից զորաթևերի հրամկազմ նշանակելու՝ նախկինում տարածում ստացած կարգը: Ճակատամարտերի նկարագրություններում տեսնում ենք մարտից առաջ զորաթևերի հրամանատարների տեղակալի տեղակալ (կամ տեղակալի տեղակալներ) նշանակելու այն համակարգի գոյության ապացույցները, որոնք հայտնի են դեռևս Հայոց ձորի ճակատամարտի նկարագրությունից:

Այդպիսի քայլը թելադրված էր ոչ միայն այս ապստամբության, այլև Հայոց բանակի վարած այլ պատերազմների նկարագրություններում պատմիչների կողմից վեր հանվող և բանակաշինության պատմության համար մեծ նշանակություն ունեցող՝ մարտի ընթացքում զոհված հրամանատարին փոխարինելու կարգով: Ուշագրավ է, որ զորավարը, նախքան մարտը սկսելը, ինչպես իրեն, այնպես էլ զորաթևերի հրամանատարներին փոխարինելու համար նշանակում էր ոչ թե մեկ, այլ միանգամից մի քանի տեղակալ:

Ակոռիի ճակատամարտի Ղազար Փարպեցու նկարագրությունը համաշխարհային ռազմարվեստում եզակի է:

Պատմիչը 400 հոգանոց զորամասի մարտակարգը նկարագրելիս, ընդունված կարգի համաձայն, զորաթևերի հրամանատարների կողքին նշում է նրանց տեղակալներին: Հատկանշական է, որ ոչ միայն բանակ, այլև զորամաս կոչվելու համար փոքրաթիվ այս ուժերի մարտակարգը նկարագրելիս նշվում է պահեստազոր առանձնացնելու մասին: Ի դեպ, կարևոր է, որ ընդամենը մի քանի տասնյակ մարդուց բաղկացած պահեստազորի հրամկազմում ևս հիշվում է ոչ թե մեկ, այլ երկու անուն:

Այսպիսով, տեսնում ենք, որ անկախ ճակատամարտի մեծությունից և ռազմավարական առումով կարևորությունից, հայոց ռազմարվեստում ընդունված սկզբունք էր նախքան մարտը սկսելը հրամանատարների երկու կամ ավելի տեղակալներ նշանակելու կարգը:

Մարտավարության համաշխարհային փորձի վերլուծության համար կարևոր է հետևյալ ուշագրավ պահը: Մինչև V դարը ոչ մի երկրում, երբեք նախքան մարտը սկսվելը, ենթակաների տեղակալներ նշանակելու կարգ չի եղել:

Ռազմական տեղեկանք. Հույն պատմիչ Արիանոս Փլաբիոսի «Ալեքսանդրի արշավանքը» աշխատությունում նկարագրված է Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան կամ Պարսկական արշավանքը: Պատմիչն ամենայն մանրամասնություններով ներկայացնում է Գավգամելայի ճակատամարտին (Ք.ա. 331թ.) մակեդոնական բանակի նախապատրաստվելն ու նրա ընթացքը (տե՛ս «Մեր հաղթանակները», հատ. Ա, էջ 157): Մասնավորապես, թվարկվում են ճակատամարտին մասնակցած մակեդոնական և նրանց դաշնակից զորքերի զորամասերի՝ ընդհանուր առմամբ երեք տասնյակ հրամանատարներ: Դա եզակի դեպք է ոչ միայն հունա-հռոմեական, այլև հին աշխարհի պատմագրության մեջ, սակայն, այդուհանդերձ, նույնիսկ ակնարկ չկա զորաթևերի հրամանատարների նշանակման՝ վերը նշված համակարգը հիշեցնող կարգի գոյության մասին:

Մեկ այլ ճակատամարտ նկարագրելիս Արիանոսը թվարկում է զորամասերի տասնչորս հրամանատարների, և կրկին պատկերը նույնն է:

Այսպիսով, Ակոռիում հայերը ոչ միայն փայլուն հաղթանակ են տանում պարսիկ նվաճողների դեմ, այլև սկսում են փոխել ռազմարվեստի հիմնական տարրերը: Սկսվում է անկանոն մարտավարության տարրերի կիրառումով բնութագրվող նոր դարաշրջան: Այդ հաղթանակը ոգևորիչ մեծ լիցք է հաղորդում ազատագրական պայքարին:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 481Թ.



ՆԵՐՍԵՀԱՊԱՏԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
482Թ.

Ակոռիի հաղթական ճակատամարտից հետո ազատագրական շարժման ղեկավարները քաջ գիտակցում էին, որ պարսից արքունիքն ապստամբությունը ճնշելու նպատակով ավելի հզոր մի զորաբանակ կուղարկի Հայաստան, և պատրաստվում էին դիմագրավել վերահաս վտանգը: Բյուզանդիայից ու Վիրքից օգնություն ստանալու փորձերի ձախողումից հետո սպարապետ Վահան Մամիկոնյանը և մարզպան Սահակ Բագրատունին ձեռնամուխ են լինում հայ նախարարների ուժերի համախմբմանը: Սպարապետը մյուս նախարարների հետ միասին կազմակերպում և մարզում է հայկական զինված ուժերը: Ձեռք բերվելիք փորձը ռազմարվեստի բարեփոխման համար կարևորագույն նշանակություն էր ունենալու և դառնալու էր նոր հայեցակարգի ձևավորման հենքը:

Մարտավարական նոր համակարգը

Վահան Մամիկոնյանի համար կարևոր էր մեծ ճակատամարտերում նոր մարտավարության տարրերը կիրառելու հնարավորությունը: Հարցն այն է, որ եթե ոչ մեծ ստորաբաժանումների համար դյուրին գործ էր հակառակորդին դարանների և ծուղակների մեջ գցելը, ապա մարտադաշտի շրջակայքում տասնյակ հազարավոր մարտիկների քողարկելը կարող է ոչ միայն դժվար, այլև անհնարին լինել:

Անկանոն ռազմարվեստի տարրերի կիրառումով վարվող հակամարտության պայմաններում հանկարծակի հարձակումների ենթարկվող հակառակորդն անընդհատ մարտական պատրաստության բերված զորամասեր է ունենալու: Հետևաբար, *պետք չէ* ամեն անգամ ձգտել, որ մարտը բոլոր առումներով անսպասելի լինի հակառակորդի հրամանատարության համար: Ուժերի գերլարման գնով իրականացվող այս կարգի գործողությունները կարելի է փոխարինել համեմատաբար ավելի զուսպ, սակայն ոչ պակաս արդյունավետ միջոցառումներով:

*Ըստ նոր հայեցակարգի՝ բավարար էր լինելու, որ հայերի կողմից անսպասելի գործողությունների իրականացման հնարավորությունը կանխատեսելով հանդերձ՝ հակառակորդն **ընդամենը** չհասցնի համապատասխան հակաքայլերի դիմել:*

Հակառակորդի հետ առճակատման ընթացքում սպարապետը մեծ տեղ էր տալիս «անհարմար» հարձակումներին: Այսինքն՝ երբ, անկախ այն բանից, թե հակառակորդը սպասում է հարձակում, թե ոչ, նրա համար այդ ձևով (այդ պահին և/կամ այդտեղ) մարտը վարելն անցանկալի է:

Մեծ էր նաև զենքի տարբեր տեսակների մարտավարական նշանակության վերագնահատումը՝ դրանց «ենթարկեցումը» նոր հայեցակարգի պահանջներին: Մասնավորապես, համեմատաբար *մեծացվում են հեռամարտ վարող զորամասերը* (նետաձիգներ, տեգաձիգներ և այլն), որոնք ապահովում էին մարտադաշտում գլխավոր հարվածային ուժի՝ ծանրազեն հետևակի ու հեծելազորի առաջխաղացումը կամ նահանջը: Ծանրազեն զորամասերի սպառազինության փոփոխություն էլ է տեղի ունենում: Ավելի քան երկու հազար տարի *մարտական դաշույններ* կիրառելու փորձ ունեցող մեր ռազմարվեստում սկսում է կրկին բարձրանալ այդ զինատեսակի դերը:



Մարտական դաշույններ

Ներխուժումը

482թ. գարնանը պարսկական մի խոշոր զորաբանակ՝ թիկնազորի պետ Ատրներսեհի հրամանատարությամբ, ներխուժում է Հեր և Զարևանդ գավառները (տե՛ս հաջորդ ակնարկի քարտեզը): Պարսից արքունիքը մեծ նշանակություն էր տալիս իրականացվող արշավանքին, այդ պատճառով, թեև պարսկական բանակում ծագումով ավելի բարձր մարդ կար, սակայն զորքի ղեկավարումն իրականացնում էր Ատրներսեհը, որը փորձված զինվորական էր: Պարսիկները այս պատժիչ գործողությանն էին ներգրավել այդ պահին հնարավոր բոլոր ուժերը՝ մոտ 60 հազար զինվոր:

> **Պատմական տեղեկանք.** «Լուր հասավ, թե պարսից բազմաքանակ զորքն է գալիս, և, իբրև, արդեն Հեր և Զարևանդ գավառի սահմանին են հասել շատ զորագլուխներ, որոնք են Սուրեն պահլավ, փուշտիպանաց սաղար Ատրներսեհը, Վին-ի-Խոռյանը, Ատրվշնասպ-ի-Տապյանը... Եվ, չնայած սրանց մեջ կար մեկը, որ գահով ավելի բարձր էր, սակայն փուշտիպան սաղարն էր հրամանատուն և զորքի ավագը»:
>
> ***Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ, Գլուխ ՀԱ***

Հակառակորդի ներխուժման մասին տեղեկանալով՝ սպարապետ Վահան Մամիկոնյանն անմիջապես վերցնում է իր շուրջ 35 հազարանոց զորքը և շարժվում հակառակորդին ընդառաջ:

*Սպարապետը **շտապում էր՝** հակառակորդին միջնաշխարհ ներխուժել թույլ չտալու համար:*

Մտահղացումը

Վահան Մամիկոնյանը զորքը Դվինից մինչև Ներսեհապատ տանում է միայն գիշերային ռազմերթով, իսկ պարսկական բանակի վրա նախապատրաստում հարձակման առավոտյան: Այս կարգի գործողություններն էին կազմում սպարապետի ընտրած նոր ռազմարվեստի հիմքը: Վահան Մամիկոնյանը գիտակցում էր, որ բավականին մեծաթիվ զորքի բոլոր գործողություններն անհնար է լինելու գաղտնի պահել: Մանավանդ, անհնար է այդչափ մեծ ուժերը հակառակորդի հետախուզության համար աննկատ շարել մարտակարգով: Հետևաբար, նա չի էլ ձգտում հակառակորդից գաղտնի պահել իր բոլոր մտահղացումները: Որոշվում է բավարարվել միայն զորքի տեղաշարժերը գաղտնի պահելով: Այս քայլը վկայում է սպարապետի հաշվենկատության մասին:

Մարտադաշտը ևս պարսիկների համար անբարենպաստ էր: Նրանց մեծաթիվ ուժերը ազատ գործելու հնարավորություն չունեին: Այդ ամենն անբավա-

րար համարող սպարապետի մարտի մտահղացումը հանգում էր պարսիկներին դեպի «փոքր լանջակողմը» տանելուն ու այնտեղ նրանց ջախջախելուն: Դա տեղանքն առավելագույնս օգտագործելու նրա մարտավարության կարևոր տարրերից էր:

Ճակատամարտը

Վահան Մամիկոնյանի նպատակն էր հակառակորդին ջախջախել Հայաստանի հարավային սահմանների մոտ՝ կանխելով նրա առաջխաղացումը: 482թ. ապրիլին հայկական բանակը դուրս է գալիս Դվինից և մի քանի օր անց հասնում Արտազ գավառը: Մոտենալով պարսկական զորքերին՝ բանակ է դրվում Ներսեհապատ գյուղի մոտ: Զորքին ոգեշնչելու համար այնտեղ էր գտնվում նաև կաթողիկոս Հովհան Մանդակունին:

Գիշերը սպարապետը դասավորում է իր զորքի մարտակարգը:

> **Պատմական տեղեկանք.** «Այնուհետև հայոց զորավար Վահան Մամիկոնյանը սկսեց ըստ պատշաճի կազմակերպել ճակատի յուրաքանչյուր թևը: Կենտրոնական կողմը բազմաքանակ այրուձիով տվեց մարզպան ու քաջ ասպետ Սահակի ձեռքը: Աջ թևում կարգեց Բարշղ Վահևունուն, Բաբգեն Սյունիին, Ատոմ Գնունիին և Փապակ Պալունիին՝ յուրաքանչյուրի այրուձիով ու այլ հավելվածով: Իսկ ձախակողմը հանձնեց ուխտասեր Կամսարականներին՝ Վահանին, Ներսեհին, Հրահատին, և իր սիրելի եղբայրներին: Աջ կողմում, գնդերի յուրաքանչյուրից մեկական այրուձիով ինքն էր լինելու: Ուրիշ ավագ տղամարդկանցից էլ կազմեց մի ջոկ՝ ընտիր այրուձիով, Վրեն Վանանդեցու գլխավորությամբ, որի մոտ ուղարկեց ոստանիկ Արտակունյաց Պապին՝ Բաբոցի որդուն»:
>
> ***Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ, Գլուխ ՀԱ***

Սպարապետը մտադիր էր անակնկալ հարձակումով խուճապի մատնել հակառակորդին: Սակայն որքան էլ անսպասելի լինեին հայկական կողմի ձեռնարկած քայլերը, և որքան էլ անհարմար լիներ տեղանքը, միևնույն է, պարսկական բանակը քանակապես գերազանցում էր: Պարսիկների հրամանատարը որոշում է, որ ուժերի տվյալ հարաբերակցության պայմաններում կարող է ընդունել մարտը և բանակը դուրս է բերում վճռական ճակատամարտի: Ավելին, պարսիկներն իրենք են նախահարձակ լինում: Հավանական է, որ այդ կերպ մարտը սկսելով՝ Ատրներսեհը ձգտում էր փոխհատուցել մարտավարական անբարենպաստ իրավիճակի անհարմարությունները (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.



Ներսեհապատի ճակատամարտի առաջին փուլը

Հակառակորդի անսպասելի գործողություններից հայերը մի պահ անակնկալի են գալիս: Դրա պատճառն այն էր, որ զորքի մարտակարգը կազմելիս Վահան Մամիկոնյանը նշել էր նաև զորամասերի մարտի մեջ մտնելու հերթականությունը և զորաթևերի հրամանատարներին խստորեն նախազգուշացրել այդ կարգը չխախտելու մասին: Ամբողջ ճակատով միաժամանակ գրոհելով՝ պարսիկներին նույնիսկ հաջողվում է կենտրոնում խախտել հայկական զորաբանակի մարտակարգը:

Բայց այդ վճռական պահին հայոց սպարապետն անօրինակ խիզախությամբ բեկում է մտցնում ճակատամարտի ընթացքի մեջ:

Հաղթանակը

Սպարապետի ու Կամսարական եղբայրների զորամասերը շեշտակի գրոհով ջախջախում են հակառակորդի թևերը (տե՛ս սխեմա 2): Վահան Մամիկոնյանն իր հեծյալ գնդով պարսիկների վրա է հարձակվում աջից, իսկ Կամսարական եղբայրները՝ ձախից: Կոտրելով պարսկական զորքերի աջ և ձախ թևերի դիմադրությունը և փախուստի մատնելով նրանց՝ հայկական գնդերն այնուհետև հուժկու հարվածներով ջախջախում են հակառակորդի կենտրոնը:

Սխեմա 2.



Ներսեհապատի ճակատամարտի երկրորդ փուլը

Պատմական տեղեկանք. «Հայոց զորավար Վահան Մամիկոնյանը *զորացավ սրտով, երեսը խաչակնքեց* ու երկու Կամսարականների հետ միասին հարձակվեց իրենց հասած թշնամիների վրա: Իսկ նրանք, *առանց դիմադրելու,* այլ իրենց թևը միանգամից սաստիկ տեղահան անելով՝ փախուստի մատնեցին: Եվ այն թևն առնելով՝ մյուսն էլ քաշեցին կենտրոնի վրա: Հայոց զորավար Վահան Մամիկոնյանի քաջերը երկու թևերի թշնամական զորքերն առաջներն արած տարան դեպի փոքր լանջակողմը և քաջ զինվորների անթիվ բազմություն դիաթավալ անելով, ջախջախեցին ու սաստիկ արյունահեղություն արին: Եվ միայն Խոռյան Վինը, ուրիշ երկու նիզակակիցների հետ միասին, շուռ էր եկել, խիզախորեն դիմադրում էր: Այնտեղ էլ Հայոց քաջ զորավար Վահան Մամիկոնյանն իր հզորությամբ սպանեց նրան: Եվ Շիրակի տեր Ներսես Կամսարականն էլ՝ Ատրվշնասպ Տապյանին, իսկ մյուսներից էլ յուրաքանչյուրը շատ քաջերի գետնատարած տապալելով՝ կոտորեցին»:

Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ, Գլուխ ՀԱ

Աքցանի մեջ առնելով՝ հայկական զորքի թևերը փակում են պարսկական զորամասերի նահանջի ուղիները և նրանց հարկադրում նահանջել դեպի ոչ մեծ զառիվայրը՝ *լանջակողմ,* որտեղ էլ ջախջախում են: Չդիմանալով հայ զինվորների շեշտակի գրոհին՝ պարսիկներն անկանոն փախուստի են դիմում:

Պատմական տեղեկանք. «Պարսից զորքից սպանվածների թիվն ավելի մեծ էր, քան փախչելով փրկվածներինը, քանի որ մեռածների թվի մեջ էին ոչ միայն պատերազմի վայրում ընկածները, այլև շատերը, որոնք վիրավորված էին և մեռան այս ու այնտեղ»:

Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ, Գլուխ ՀԱ

Այսպիսով, հայկական ուժերը Ներսեհապատի ճակատամարտում հերթական անգամ հաղթանակ են տոնում օտար նվաճողների դեմ:

Վահան Մամիկոնյանի զորավարական տաղանդի կարևոր վկայություններից մեկը հանդիսացող այս ճակատամարտում սպարապետը *նոր հնարքներ չի կիրառել:* Նա ուղղակի ամբողջացրել ու վերջնական տեսքի է բերել մեծաթիվ հակառակորդի հետ հակամարտության նոր մարտավարությունից բխող դրույթները և կիրառելով՝ ցույց տվել, որ ստեղծված ռազմական և քաղաքական իրադրությունում դրանք *այլընտրանք չունեն:*

Ռազմարվեստի տեսանկյունից ուշագրավ է, որ հակառակորդի գլխովին ջախջախման մտահղացման համաձայն՝ նույնիսկ նահանջելիս վերջինիս զորամասերը չէին կարող շեղվել հայ զորավարի նախանշած ուղուց: Պարսիկները հարկադրված նահանջում են դեպի այնպիսի տեղանք, որտեղ նրանց համար դժվար էր լինելու ոչ միայն մարտնչելը, այլև փախչելը:

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՅՔՈՒՄ 482-484ԹԹ.

ՓՈՔՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՎ ՄԵՁԸ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Երկու կարևոր հաղթանակ տանելուց հետո հայկական բանակը օգնության է շտապում նաև պարսիկների դեմ ապստամբած վրացիներին: Ճարմանայի ճակատամարտից (482թ.) հետո Վիրքից վերադառնալով՝ Վահան Մամիկոնյանը հրաժարվում է մեծաթիվ պարսկական զորամասերի հետ ճակատային բախումներից: Սպարապետը թեև հարկադրված, սակայն հիմնարար բարեփոխման է ենթարկում նաև ռազմավարությունը. նա հրաժարվում է ռազմական հիմնական բազան պարտադիր կերպով երկրի կենտրոնում տեղակայելու կարգից: Որոշումը բխում էր նոր հայեցակարգի պահանջներից, և զգալի ազդեցություն է ունենում այն վերջնական տեսքի բերելու համար: Ռազմավարական *հենադաշտի* է վերածվում Մեծ Հայքի Տայք աշխարհը: Լինելով Մամիկոնյանների տիրույթը՝ այն առավել հեռու էր պարսկական սահմանից, պատված էր լեռնային սաղարթախիտ անտառներով ու դժվարամատչելի էր:

«Լեռնանտառային» մարտավարությունը

Առաջին փուլ

Հայաստան ներխուժած պարսից զորքերը՝ Միհրանի գլխավորությամբ, բանակ են դնում Տայքի հարևանությամբ՝ Բասեն գավառի Դու գյուղի մոտ: Միհրանը փորձում է բանակցությունների միջոցով համոզել Վահանին դադարեցնել պայքարը, սակայն մերժում է ստանում:

> **Պատմական տեղեկանք.** «Աստված իր զորության շնորհներն այնքան շատ էր զեղել այն քաջ Վահան Մամիկոնյանի վրա, որ բազմաթիվ գնդերի ու զորավոր ավագների մեջ էլ Միհրանը դողում էր սարսափահար: Աստծո երկյուղից ու ահից փակված՝ չէր համարձակվում հարձակվել ու կոտորել իր հակառակորդներին, հալածել ու կորստի մատնել մնացած փախստականներին: Այլ թախանձալից խոսքերով ամեն օր նրա մոտ պատգամավորներ էր հղում՝ խաղաղություն կնքելու համար»:
>
> ***Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ., գլուխ Հե***

Ռազմական գործողություններ, սակայն, տեղի չեն ունենում, քանզի Միհրանն իր զորքով կանչվում է հեփթաղների[1] դեմ պատերազմելու: Պարսկական զորքերի Հայաստանից հեռանալուց հետո՝ 482թ. աշնանը, Վահան Մամիկոնյանն իր ուժերով վերադառնում է Դվին:

> **Տեղեկանք.** Անկանոն ռազմարվեստին բնորոշ գործողությունները *լայն տարածում էին ստացել* պարսկական տիրապետության դեմ պայքարի ելածների շրջանում: Նրանք այս համակարգով էին առաջնորդվում ոչ միայն հակառակորդի գլխավոր ուժերի դեմ համեմատաբար լայնածավալ գործողությունների ժամանակ, այլև բազմաթիվ այլ՝ մասնավոր դեպքերում: Օրինակ՝ Միհրանն իր հետ Պարսկաստան էր տանում Ճարմանայի ճակատամարտում գերի ընկած Հրահատ Կամսարականին: Վերջինիս եղբայրը՝ նախարար Ներսեհը, մի ջոկատով հետապնդում է պարսիկներին՝ նպատակ ունենալով ազատել գերյալին: Այս մտադրությունն իրագործվում է, երբ պարսից զորքը կանգ էր առել Բագավանի մոտ՝ գիշերելու: Մթության մեջ հարձակվելով պարսիկ պահապանների վրա՝ Ներսեհը կարողանում է ազատել եղբորը և հեռանալ:

---

[1] Հեփթաղներ, կոչվում էին նաև «սպիտակ հոներ» - արևելաիրանական ցեղային միավորում Միջին Ասիայում, Աֆղանստանում և Հնդկաստանի մի մասում:

Դվինի ճակատամարտը

483թ. գարնանը պարսկական մի նոր զորք՝ Հազարավուխտի հրամանատարությամբ, կրկին մտնում է Հայաստան և շարժվում Դվինի ուղղությամբ (տե՛ս քարտեզը): Պարսիկները տեղեկացել էին, որ Վահանն ուժերի կեսն ուղարկել էր Վիրք, և ինքը՝ սպարապետը, մայրաքաղաքում մնացել էր փոքրաթիվ հեծելագնդով: Հազարավուխտը մտադրություն ուներ աննկատ մոտենալ ու պաշարել Դվինը: Նա լավ էր հասկանում, որ Դվինում պաշարված սպարապետին գերելով՝ կգլխատեր հայկական բանակը և արագորեն կկարողանար հաջողության հասնել:

Պարսիկներին հաջողվում է անակնկալ հայտնվել Դվինի մոտ և շրջափակել քաղաքը: Արտակարգ բարդ իրադրությունում, երբ *մեծաթիվ* հակառակորդն *անսպասելի* զորաշարժով նախաձեռնություն էր ստացել և, թվում է՝ իր կամքն էր թելադրելու հայկական զորքին, Վահան Մամիկոնյանը փայլում է իր զորավարական տաղանդով: Նա, իր ուժերը մի քանի մասի բաժանելով, համարձակ գրոհով ճեղքում է պարսիկների պաշարման օղակը և հակառակորդին մեծ կորուստներ պատճառելով՝ զորամասը դուրս բերում շրջապատումից: Հանդուգն գրոհի սրընթացությունից ապշահար եղած պարսիկները չեն հասցնում համապատասխան հակաքայլեր ձեռնարկել:

> **Պատմական տեղեկանք.** «Հայոց սպարապետ Վահանը, նրա հետ գտնվող հայ մյուս նախարարները և Հայոց ռամիկ այրուձին (ազատներից կազմված հեծելազորը), պարսից զորքերի այս բազմությունը տեսնելով ու դիտելով շրջակա բոլոր դաշտերը, որ ծովացել էին պարսից զորքերով, թեպետև գիտեին իրենց *փոքրաքանակությունը,* որով անհնար էր դիմակայել, սակայն շատ էլ չզարհուրեցին, որ շտապեին փախչել, այլ որքան իրենց զորքը բավականացրեց՝ բաժանելով մեկ-մեկ կամ երկու-երկու նախարարների վրա՝ անցան հարձակման: Եվ *քաջասրտորեն* ճեղքելով Պարսից զորքի մի թևը, բազում ընտիր տղամարդկանց դիաթավալ գետին տապալեցին ու իրենց երիվարների սանձերը բաց թողնելով՝ հեռացան քաջաբար»:
>
> ***Ղազար Փարպեցի, Պատմություն հայոց, Գ.,Գլուխ ՀԸ***

Նոր մարտավարության փորձությունը

Երկրորդ փուլ

Նկատի ունենալով հակառակորդի ուժերի մեծաթվությունը՝ սպարապետն իր գնդով կրկին Տայք է քաշվում, որտեղ արդեն իսկ բավականին մեծ ծավալի աշխատանք էր տարվել նահանգը պայքարի գլխավոր հենադաշտի վերածելու

ուղղությամբ (տե՛ս քարտեզը): Հակառակորդին երկարատև հյուծիչ մարտերի մեջ ներքաշելու ռազմավարությունը կյանքի կոչելուց առաջ սպարապետը որոշում է միավորել իր ուժերը: Այդ նպատակով Տայք է կանչվում նաև Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ Վիրք ուղարկված զորամասը:

Պարսիկները կրկին փորձում են հետապնդել և ոչնչացնել Վահան Մամիկոնյանի ուժերը: Նրանք հասնում են Տայքի Ոքաղե գավառը, բայց շուտով պարսից Պերոզ թագավորից հրաման են ստանում մեկնել Վիրք՝ պատերազմելու վրաց Վախթանգ թագավորի դեմ: Պարսկական զորքերի մի մասը մնում է Հայաստանում՝ Շապուհի գլխավորությամբ, որին պարսից արքունիքը կարգում է երկրի մարզպան: Շապուհը շարունակում է հետապնդումը՝ աշխատելով կիրառել *հանկարծակիի բերել և ոչնչացնել* սկզբունքը: Այդ ռազմավարությանը Վահան Մամիկոնյանը հակադրում է իր իսկ կողմից *վերջնական տեսքի բերված* նոր ռազմական հայեցակարգը, որի դեմ հակառակորդն անզոր էր:

Հայկական փոքրաթիվ զորամասերը հայտնվում էին մերթ այստեղ, մերթ՝ այնտեղ: Վահան Մամիկոնյանը պարսիկների համար դարձել էր անորսալի: Շապուհը չէր հասցնում իրականացնել իր որոշումները և շատ շուտով հրաժարվում է հայերի դիմադրությունը ճնշելու «համարձակ» որոշումներն իրականացնելու մտքից: Ավելին, սպարապետի կայծակնային գրոհներն այն աստիճան էին ապակողմնորոշել նրան, որ չնայած ուժերի քանակական գերազանցությանը՝ նա որոշում է անցնել պաշտպանական (սպասողական) ռազմավարության:

Այս մարտերում սպարապետը ***փայլուն կերպով*** *կարողանում է համադրել* ***անհամատեղելի թվացող*** *այնպիսի որակներ, ինչպիսիք են զգուշավորությունն ու համարձակությունը:*

Նա ամենօրյա գիշերային հարձակումներով ոչ միայն կարողանում է հավասարեցնել իրադրությունը, այլև առավելություն ստանում տակավին մեծաթիվ հակառակորդի նկատմամբ: Հարձակումներն իրականացվում էին այն հաշվարկով, որ հակառակորդին կորուստներ պատճառելուց բացի՝ սարսափի մթնոլորտ ձևավորեն: Հանկարծակի գրոհներից ապակողմնորոշված հակառակորդի զինվորներն առանձին դեպքերում խուճապահար միմյանց էին կոտորում: Հաշտյանք գավառի Շտյա գյուղի մոտ Շապուհի զորամասը հասնում է Վահանի փոքրաթիվ ուժերին: Լինելով ընդամենը 30 հոգի՝ հայերը չեն երկնչում, այլ համարձակ գրոհում են հակառակորդի վրա: Մի քանի հարյուրի հասնող պարսիկները սարսափահար դիմում են փախուստի: Փարպեցու խոսքերով. *«Ինչպես արծիվն է սլանում կաքավների երամի հետևից, այնպես էլ (Վահանը) ոմանց սպանում է, իսկ մյուսները ցրվում, թաքնվում են ծերպերի մեջ և քարի ճեղքերում»*:

Սպարապետին մեծ օժանդակություն էր ցույց տալիս բնակչությունը՝ ապաստան տալով նրա ուժերին, ապահովելով մթերքներով և տեղեկություններ հաղորդելով հակառակորդի տեղաշարժերի մասին: Այսպիսով, ազատագրական պայքարին մասնակցում էր ողջ ժողովուրդը, ինչը և վերջնական հաղթանակի նախապայմանն էր:

Հաղթանակը

Ազատագրական պատերազմը տևում է մինչև 484թ. ամառը, երբ պարսիկները ծանր պարտություն են կրում հեփթաղներից Միջին Ասիայում:

Հայաստանում հաջողության չհասնելով՝ պարսկական արքունիքը ստիպված է լինում դադարեցնել ռազմական գործողությունները և դուրս բերել իր պարտված բանակը:

Դրանով ձևակերպում է ստանում ազատագրական շարժման հաղթանակի ռազմական կողմը: 484թ. պարսիկները բանակցություններ են սկսում Վահան Մամիկոնյանի հետ, որոնք ռազմական փաստացի հաղթանակին ավելացնելու էին նաև դիվանագիտականը:

Սպարապետի ձեռք բերած հեղինակության մասին է վկայում, որ պարսիկները համաձայնվում են բավարարել բանակցություններ սկսելու համար պատանդներ տրամադրելու՝ Վահանի նախապայմանը: Բանակցություններն ավարտվում են Հեր գավառի Նվարսակ գյուղում կնքված պայմանագրով, որի *բոլոր կետերն* առաջադրել էր Վահան Մամիկոնյանը: Ըստ այդմ, պարսիկները պարտավորվում էին հրաժարվել կրոնափոխության քաղաքականությունից, ճանաչել Հայ եկեղեցին և նախարարների ժառանգական իրավունքը, չմիջամտել Հայաստանի ներքին գործերին և այլն:

Մամիկոնյանների զինանշանը (Դսեղի Բարձրաքաշի Սբ. Գրիգոր եկեղեցի)

*Պարսից արքունիքը **ճանաչում է** Վահան Մամիկոնյանին որպես սպարապետ և մարզպան: Վահան Մամիկոնյանը դառնում է Արևելյան Հայաստանի, որպես Տանուտերական իշխանության երկրի, կառավարողը:*

Ամփոփում

Հաղթանակին նպաստած նոր հայեցակարգի վերլուծությունը վկայում է, որ Վահան Մամիկոնյանը *գիտակցաբար* էր հրաժարվել հակառակորդի հետ ճակատային բախումներից ու ընտրել մարտավարության անկանոն ձևերը: Վահան Մամիկոնյանը մեծ ուշադրություն է դարձնում նահանջի, հակառակորդի հետ առճակատումից խուսափելու և մի շարք այլ խնդիրների նոր մեկնաբանմանը:

*Կարող ենք արձանագրել, որ մարտին հաջորդող նահանջն **ինքնուրույն** մարտական գործողության էր վերածվում:*

Դա ևս նորություն էր մեր ռազմարվեստում: Օրինակ, Երիզայի մոտ պարսկական բանակի ճամբարի վրա գիշերային հարձակումից հետո նահանջող ապստամբներին հետապնդելու ուղարկված զորամասերի հետ տեղի ունեցած մարտն ու հետապնդումից ազատվելու դժվարին մարտական գործողությունը շարունակվում էին *երկու օր և երեք գիշեր* (տե՛ս քարտեզը):

*Լայն տարածում են ստանում **գիշերային մարտերը:***

Տեղեկանք. Պատմիչ Ղազար Փարպեցին ներկայացնում է գիշերային մարտավարության բավականին հետաքրքրական մի տարբերակ: Ըստ նրա, ապստամբները պարսիկների հետ մերձամարտի չէին բռնվում և նրանց նետահարելով նահանջում էին:

Այս տարբերակն ուներ առավելություններ և թերություններ:

Գլխավոր թերությունն այն էր, որ գիշերվա մթության պայմաններում նետաձիգները չէին կարողանում նշանառու նետածգությամբ մեծ վնաս հասցնել հակառակորդին: Սակայն այս ձևով հնարավոր էր լինում հասնել կատարյալ արդյունքի, երբ ապստամբները բազմաթիվ մարտեր էին վարում ոչ մի զոհ չտալով: Փոքրաթիվ ուժեր ունեցող սպարապետը հոգ էր տանում յուրաքանչյուր զինվորի մասին: Այսպիսի մարտավարությունը շեշտակի բարձրացրել էր Վահան Մամիկոնյանի հեղինակությունը զինվորների շրջանում և նորանոր հաղթանակների կարևոր նախապայման էր:

Ի դեպ, այս կարգի գործողություններն անընդհատ լարվածության մեջ էին պահում հակառակորդին: Դրանք ունեին նաև բարոյահոգեբա-

նական նշանակություն: Այսպես, Երիզայի մոտ տեղի ունեցած գիշերային մարտից հետո իրականացված վերոհիշյալ հետապնդման ընթացքում տեղի ունեցած բախման ժամանակ զոհված Գդիհոն Սյունու զորամասը, պատմիչի խոսքերով, «քայքայվում» է ու լքելով մարզպան Շապուհին՝ վերադառնում Սյունիք:

Այսպիսով, Վահան Մամիկոնյանն ամբողջացրեց ու վերջնական տեսքի բերեց մեծաթիվ հակառակորդի հետ հակամարտության նոր ռազմարվեստից բխող դրույթները և կիրառելով՝ ցույց տվեց, որ ստեղծված իրադրությունում դրանք այլընտրանք չունեն: Հատկանշական է, որ մարտավարության հիմնական տարրերի փոփոխումը և ստեղծված պայմաններին նրանց հարմարեցումը չէր ընթանում անցյալի փորձի մերժման ճանապարհով:

Որքան էլ բեկումնային և խոր լինեին փոփոխությունները, միևնույն է, Վահան Մամիկոնյանի իրականացրած բարեփոխումը հայկական ռազմարվեստի և մարտավարության ***հետևողական զարգացման*** *արդյունք էր:*

Ռազմարվեստի զարգացման գործում Վահան Մամիկոնյանի խաղացած դերին գնահատական տալով՝ կարող ենք նշել, որ նրա սպարապետության ընթացքում մեր ռազմարվեստը յուրօրինակ հեղափոխական դարաշրջան մտավ: Վերջնական տեսքի եկավ *անկանոն մարտավարությունը,* որն առանձին բացառություններով գրեթե մինչև 20-րդ դարը տիրապետող էր մեր ռազմարվեստում:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 482-484 ԹԹ.

ՊՈՆՏԱԿԱՆ ԾՈՎ
ՎՐԱՍՏԱՆ
ԿՈՎԿԱՍԻՑ
ԱՂՎԱՆՔ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
ՄՈՍԽԵԹԱ
Տֆղիս
Բաթիս
Կերասոս
Տրապիզոն
Անպնջակ
Արտահան
Ամասիա
Զարիշատ
Կումայրի
ԿԱՐՍ
Լալվար
Խաղխաղ
Կապաղակ
Գանձակ
Պարտավ
Զիգանա
3305
Բայտերդ
Սատաղ
Թեոդոսուպոլիս
Ոու
Սեպուհ
Անի
Երիզա
Կամախ
Մնձուր
Երիզա
Բագավան
Զարեհավան
Դարույնք
Նապատ
Սինակ
Ուղտիս
Մեծրաց
Ամբերդ
ԵՐՎԱՆԴԱՇԱՏ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ԴՎԻՆ
Ռեղուտի ծով
Վարդենիս
Ոստան
Ոստանք
Ոստանք
Ոստանք

ՀԱՅՈՑ ՌԱՅՄԱՐՎԵՍՐԸ VI - VII ԴԴ.

ԴՎԻՆԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
572Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 2

ԱՆՍՊԱՍԵԼԻ ԳՐՈՇՆԵՐԻ ՎԱՐՊԵՏԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Պարսկական արքունիքի կրոնական, վարչական և հարկային ճնշումները բորբոքում են հայ հասարակության բոլոր խավերի դժգոհությունը, նպաստում Հայաստանում նոր ազատագրական շարժման ծավալմանը: Այն կազմակերպում և գլխավորում են Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսը (557-574թթ.) և սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Նախքան զենքի դիմելը՝ սկզբում նրանք փորձում են պարսկական սաստկացած ճնշումները վերացնել խաղաղ ճանապարհով:

Կաթողիկոսը նախարարների հետ պարսից Սուրեն մարզպանին հայտնում է, որ հայ ժողովուրդը հավատափոխություն չի հանդուրժի: Նրանք մարզպանին հիշեցնում են Նվարսակի 484թ. պայմանագիրը, որով հայերին կրոնական ազատություն էր երաշխավորվում: Չնայած նախազգուշացումներին՝ մարզպանը շարունակում է ատրուշաններ կառուցել: Ավելին, նա հնազանդության կոչ է անում հայ ժողովրդին և սպառնում դաժանություններով:

Ապստամբությունը

Ապստամբության նախօրյակին ապահովության համար հայերը Թեոդոսուպոլիս (Կարին) են տեղափոխում Դվինում գտնվող գանձերը, դիվանը և կաթողիկոսարանի թանկարժեք սպասքը:

Ազատագրական շարժման կազմակերպումն ու ղեկավարությունը ստանձնում է սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Նա VIդ. նշանավոր հայ գործիչներից է և իրեն դրսևորել է իբրև զորավար ու դիվանագետ:

Կաթողիկոսի կոչով երկրի բոլոր կողմերից հավաքվում է մեծ բազմություն, ստեղծվում է 20 հազարանոց զորաբանակ, որը Վարդանի եռանդուն ջանքերի շնորհիվ կարճ ժամանակում վերածվում է բավականին կազմակերպված և մարտունակ ուժի:

Քրիստոնեական ժողովուրդների միասնական ճակատ կազմելու առաջարկով պատվիրակություն է մեկնում Բյուզանդիա, որը կնքում է հայ-բյուզանդական դաշինքը:

Մարզպանը չի հասցնում արձագանքել իրադրության փոփոխությանը և պարսկական արքունիքից համապատասխան հրահանգներ չի ստանում, բայց լրացուցիչ զորք ստանալու համար մեկնում է Տիզբոն:

Պատմական տեղեկանք. «Երբ մարզպանը տեսավ նրանց (հայերի) հաստատակամությունը և իրեն դիմադրելու պատրաստակամությունը, և հասկացավ, որ նրանք ավելի ուժեղ են, քան ինքը, (ուստի) նա մեկնեց բարկությամբ ու սպառնալիքներով: Մեծ բարկությամբ գնաց և բոլոր տեղի ունեցածը պատմեց արքային: Արքան սաստիկ ջղայնացավ և ցասումով լցվեց ու որոշեց մահով (պատժել) Հայաստանի բնակիչներին: Նա նրանց դեմ ուղարկեց մարզպանին՝ 15.000 մարդկանցով պատերազմելու համար, հրամայելով, որ եթե նրանք հակառակվեն իր հրամանին, ոչնչացնեն նրանց, և այնտեղ կրակի ատրուշան կառուցեն»:

Հովհան Եփեսացի[1], Եկեղեցական պատմություն, Գիրք II, Գլուխ 20

Խոսրով Անուշիրվան արքան, լսելով հայերի ազատագրական տրամադրությունների մասին, սաստիկ զայրանում է, զորաբանակ տրամադրում Սուրեն մարզպանին և ուղարկում Հայաստան՝ կարգադրելով ճնշել ապստամբությունը:

Ռազմավարությունը

Մարզպանի զորամասերի Դվին հասնելու պահին Վարդան Մամիկոնյանը Արտաշատում էր կենտրոնացրել պայքարի պատրաստ բոլոր ուժերը: Հակառակորդի ժամանակավրեպ ձեռնարկումները չէին կարող էապես փոխել իրադրությունը: Ուստի, ազատագրական շարժման ղեկավարները որոշում են դիմել վճռական գործողությունների: Նրանց վստահություն էր հաղորդում ամբողջ երկրում տիրող հակապարսկական տրամադրությունների աճը:

Պատմական տեղեկանք. «Երբ բնակիչներն իմացան այդ (պարսկական բանակի Հայաստան գալու) մասին, 20.000 մարդ հավաքեցին մեկ մարդու նման, մարտի պատրաստ, նույնիսկ մինչև մահ... պաշտպանելու համար իրենց քրիստոնեությունը»:

Հովհան Եփեսացի, Եկեղեցական պատմություն, Գիրք II, Գլուխ 20

Սպասվում էր նաև բյուզանդացիների օգնությունը, սակայն սպարապետ Վարդան Մամիկոնյանը խնդիր է դնում բյուզանդացիներին չսպասելով՝ գլխովին ջախջախել մարզպան Սուրենի զորաբանակը: Հետագա զարգացումները ցույց են տալիս, որ սպարապետը ճիշտ էր գնահատել իրադրությունը. Բյուզանդիան օգնություն չի ուղարկում:

---

[1] VI դարի ասորի պատմիչ է: Եղել է բարձրաստիճան եկեղեցական և երկար տարիներ ապրել Կոստանդնուպոլսում: Հեղինակ է մի շարք երկերի:

Ռազմական տեղեկանք. Մինչև 572թ. փետրվարի սկիզբն ապստամբների ռազմավարությունն *ակտիվ պաշտպանական* էր: Ռազմաքաղաքական իրադրության փոփոխման հետևանքով այն արագորեն վերափոխվում է *հարձակողականի*, ընդ որում, հարձակողական գործողություններին աննախադեպ *վճռականություն* է հաղորդվում, որը *բնորոշ չէ* անկանոն ռազմարվեստին: Բազմաթիվ են գործողությունները, որոնցում ապստամբները հարկադրված հարձակողական (ակտիվ պաշտպանական) ռազմավարությունը փոխարինել են ակտիվ (պասիվ) պաշտպանականով: Սակայն *ոչ միայն հայոց, այլև համաշխարհային պատմության մեջ եզակի է,* երբ ապստամբության սկզբնական փուլում պաշտպանական ռազմավարություն ունեցող ապստամբները *մի քանի օրում* անցնում են հարձակողականի և գործողությունները վարում այսչափ վճռական նպատակներով:

Հաղթարշավը

Որոշվում է առավելագույն արագությամբ շարժվել հակառակորդին ընդառաջ և վճռական ճակատամարտ պարտադրել նրան: Քանի որ հակամարտող կողմերի գլխավոր ուժերի (Արտաշատում գտնվող ապստամբների և Դվին հասած պարսիկների) միջև հեռավորությունը մեծ չէր, ապա պետք էր անսպասելի հայտնվել հակառակորդի առջև և նրան զրկել ոչ միայն արդյունավետ ճակատամարտելու, այլև կանոնավոր մարտակարգով նահանջելու հնարավորությունից:

Փետրվար և մարտ ամիսներին պարսկական բանակն աշխատելու էր ձեռնպահ մնալ ակտիվ գործողություններից՝ միաժամանակ գարնանային պատերազմաշրջանին այնպես պատրաստվելով, որ եղանակների տաքանալուն պես հնարավորինս արագ նախաձեռնություն ստանար: Հետևաբար, խստաշունչ ձմռան պայմաններում արագացված ռազմերթից հետո հասցված հարվածն անսպասելի կլիներ: Դրանով կօգտագործվեին կլիմայական պայմանները:

Արտաշատում կենտրոնացված ուժերն ի մի բերելով՝ Վարդանը սկսում է մեր ռազմարվեստում իրականացված ***ամենասրընթաց և ամենակարճատև*** *ռազմերթերից մեկը:*

Զորամասերը ռազմերթն իրականացնում էին ցրտաշունչ ձմռան պայմաններում, առավելագույն արագությամբ: Այլ կերպ հնարավոր էլ չէր 20 հազարանոց բանակի գործողությունները հակառակորդից գաղտնի պահել:

Հաղթանակը

Պատմական տեղեկանք. «Այդ տեղի է ունեցել... արեգ ամսվա քսաներկուսին, որը փետրվար ամիսն էր՝ երկուշաբթի օրը»:
Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն տիեզերական, Հանդես Բ, Գլուխ Բ

Հայկական զորքը 572թ. փետրվարի 2-ին անսպասելի հայտնվում է Դվինի պատերի տակ և հարձակվում քաղաքի վրա (տե՛ս սխեման): Մտահղացումը հաջողվում է ամբողջությամբ իրականացնել: Ապստամբներից այս կարգի հանդուգն գործողություններ չսպասող հակառակորդը հայտնվում է ծանր իրավիճակում:



Դվինի ճակատամարտ 572թ. փետրվարի 2

Արտաշատից Դվին ձմեռային ռազմերթն ու հակառակորդի համար անսպասելի հարձակումը մեր ռազմարվեստի ***բոլոր ժամանակների*** *փառահեղ ձեռնարկումներից է:*

Անակնկալի եկած պարսկական զորաբանակը չի կարողանում կազմակերպված դիմադրություն ցույց տալ: Հակառակորդի շարքերում խուճապ է սկսվում, որն անկառավարելի է դարձնում զորամասերի մեծ մասը: Խուճապն էլ ավելի մեծ չափերի է հասնում, երբ հայտնի է դառնում պարսիկ

մոգերի ու Սուրեն մարզպանի սպանվելու լուրը: Դրանից հետո դադարում է նույնիսկ ձևական դիմադրությունը, և նահանջը վերածվում է փախուստի: Հայկական զորքերը հետապնդում են և սրի քաշում հակառակորդի մեծ մասին:

> **Պատմական տեղեկանք.** «Խոսրովի (Անուշիրվան) գահակալության քառասունմեկերորդ տարում Վարդանը ապստամբեց: Նա համաձայնության գալով բոլոր հայերի հետ, դուրս եկավ Պարսից թագավորի ծառայությունից: Նրանք հանկարծակի հարձակվելով Սուրենի վրա Դվին քաղաքում՝ սպանում են նրան, վերցնում մեծ ավար... Նրանք հարձակվեցին Դվինի վրա, պաշարեցին քաղաքը... և այնտեղից դուրս վտարեցին պարսկական զորքը»:
>
> ***Սեբեոս, Պատմություն, Գլուխ Զ***

Ինչպես նախորդ դարի ազատագրական պայքարի ամբողջ ընթացքում, այնպես էլ այս ապստամբության ժամանակ Մամիկոնյան սպարապետների կողքին էին նրանց հավատարիմ զինակիցները՝ Կամսարականները: Դվինի ճակատամարտին մասնակցում էր Զորակ Կամսարականը, որն էլ մարտում սպանում է Սուրեն Վշնասպին, որի գլուխը ուղարկում են Կոստանդնուպոլիս:

Եզրակացություն

Սպարապետն առաջին իսկ ճակատամարտում իրեն դրսևորում է որպես տաղանդավոր զորավար, մարտավարական իրավիճակում արագորեն կողմնորոշվող և կամային որոշումներ ընդունող առաջնորդ: Դվինի ճակատամարտը մեր ռազմարվեստի պատմության մեջ կմնա որպես կլիմայական պայմաններն օգտագործելու և խստաշունչ ձմեռվա պայմաններում հանկարծակի գրոհի իրականացման փայլուն օրինակ:

Այս ճակատամարտով է դրվում Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետությունը տապալելու գործընթացի սկիզբը:

ԽԱՂԱՄԱԽԻՒ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
572Թ.

Դվինի ճակատամարտում կրած պարտությունը ծանր հարված էր պարսկական տերության հեղինակությանը:

Պարսկական արքունիքը փորձելու էր պայքարել ազատատենչ ոգի ունեցող ժողովրդի դեմ: Սակայն այդ փորձերն, ինչպես ցույց են տալիս հետագա զարգացումները, այդպես էլ հաջողությամբ չպսակվեցին:

Ներխուժումը

Խոսրով Անուշիրվան արքան մարտական փղերով համալրված 20 հազարանոց նոր բանակ է ուղարկում Հայաստան՝ Միհրան Միհրևանդակի հրամանատարությամբ: Մտնելով Հայաստան՝ պարսիկները բանակ են դնում Խոսրովակերտ անտառի և Ջրվեժի լեռների հարավային լանջերի միջև ընկած Խաղամախիի դաշտում:

Իր հետախույզների միջոցով իմանալով այդ մասին՝ Վարդան Մամիկոնյանը միավորում է հայկական զորքերը և շարժվում հակառակորդի դեմ: Սպարապետը զորքը բաժանում է երեք գնդի: Դրանցից մեկին կարգադրում է դարան մտնել և ճակատամարտի վճռական պահին հարվածել հակառակորդին: Երկրորդ գնդին հրամայում է պարսիկների վրա հարձակվել ձախից: Երրորդ գունդն իր իսկ հրամանատարությամբ պետք է գրոհեր աջից:

Ճակատամարտը

Արևածագին, երբ դեռ հակառակորդը չէր ավարտել ճակատամարտի նախապատրաստական աշխատանքները, Վարդանը հանկարծակի հարձակում է սկսում: Միաժամանակ ձախից պարսկական զորքերի վրա է գրոհում հայկական երկրորդ գունդը: Թևերից անսպասելի հարվածի ենթարկված պարսկական զորամասերում իրարանցում է սկսվում (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.



Խաղամախիի ճակատամարտը 572թ.

Այնուամենայնիվ, հակառակորդը կարողանում է սթափվել առաջացած խուճապից և դիմադրություն ցույց տալ հայկական զորքերին: Ավելին, հավանաբար նկատելով, որ սպարապետն աջ զորաթևում է գործում, պարսիկները շարունակվող մարտի պայմաններում կարողանում են ուժերի վերախմբավորում իրականացնել և հակագրոհում են հայոց աջ զորաթևի վրա: Թեև պատմիչները տեղեկություն չեն հաղորդում հակագրոհող պարսկական զորամասերի մասին, սակայն ակնհայտ է, որ հակագրոհն իրականացվում էր պարսկական բանակի կենտրոնի զորաթևի ուժերով: Հարցն այն է, որ երկու թևերում հարվածի ենթարկվելով՝ պարսկական բանակի կենտրոնն «անգործ» էր մնացել:

Երկրորդ փուլը

Հակագրոհի տեղամասում կատաղի կռիվ է ծավալվում (տե՛ս սխեմա 2): Ի վերջո, Վարդան Մամիկոնյանը կարողանում է ուժերը վերադասավորել և կասեցնել պարսիկների հակագրոհը: Իրենց զորավարի կողքին հերոսաբար էին մարտնչում բոլոր զորամասերի զինվորները: Հակագրոհի կասեցման պահին պարսկական բանակը հայտնվում է ծայրահեղ անբարենպաստ իրավիճակում.

Սխեմա 2.



Խաղամախիի ճակատամարտը 572թ.

կենտրոնի զորամասերն աջ զորաթևի դեմ նետելով՝ Միհրանը փաստորեն մասնատել էր իր բանակի մարտակարգը: Այսպիսով, նույնիսկ նախքան դարանի գունդը մարտի մտցնելը՝ մասնատված պարսկական բանակի քանակական գերազանցությունն էական դեր չէր խաղում:

*Սպարապետի զորավարական տաղանդի վկայությունն է, որ հակագրոհի անդրադարձումից հետո ստեղծված բարենպաստ մարտավարական իրավիճակն օգտագործելով՝ հակագրոհի կասեցմանը մասնակցած զորամասերի առջև խնդիր է դրվում **խոր թևանցող զորաշարժ** իրականացնել:*

Նոր զորաշարժն այս թևում գտնվող պարսկական զորամասերին էլ ավելի ծանր դրության մեջ է դնում, քանի որ մարտակարգի ճակատը ևս մեկ անգամ փոխելու անհրաժեշտություն է առաջանում: Պարսիկներին չի հաջողվում ժամանակին նոր վերադասավորում իրականացնել, քանի որ մինչ նրանք կհասցնեին ուշքի գալ՝ հարձակման է անցնում դարան մտած հայկական գունդը և նոր հոգսի առաջ կանգնեցնում պարսկական բանակի հրամանատարությանը:

Հաղթանակը

Պարսկական բանակն այժմ արդեն նոր խնդիր ուներ, քանի որ ամենաանսպասելի ուղղությունում (վերախմբավորման հետևանքով դատարկված կենտրոնում) էր ճակատ բացվել (տե՛ս սխեմա 3): Մարտի առաջին փուլում «անկանոն» ճակատամարտ էր պարտադրվել այս կարգի գործողությունների համար չնախապատրաստված հակառակորդին, որն այժմ անլուծելի խնդրի առջև է կանգնեցվում: Արտակարգ բարդ ու խճճված իրավիճակից ելք գտնել չկարողացող պարսիկները ջախջախվում են և դիմում փախուստի:

> **Պատմական տեղեկանք.** «Դրանից հետո քսան հազար հոգուց բաղկացած զորքով և բազմաթիվ փղերով Վարդանի վրա հարձակվեց Միհրան Միհրևանդակը: Տեղի ունեցավ մեծ ճակատամարտ Խաղամախյան դաշտում. պարսիկների զորքը սոսկալի պարտության մատնվեց. բոլորին էլ սրահար արեցին և խլեցին նրանց ունեցած բոլոր փղերը: Ինքը՝ Միհրանը, փոքրաթիվ մարդկանցով փրկվեց և գնաց իր երկիրը»:
>
> ***Սեբեոս, Պատմություն, Գլուխ Զ***

Սխեմա 3.



Խաղամախիի ճակատամարտը 572թ.

Ապակողմնորոշված հակառակորդի նկատմամբ տարած հաղթանակի կարևոր ցուցանիշ է, որ հայերի ձեռքն են անցնում հակառակորդի փղերը:

> **Պատմական տեղեկանք.** «Հայոց կաթողիկոսն ու իրեն ընկերացած եպիսկոպոսները... պատմեցին այնտեղ եղած պատերազմական ճակատամարտերի, մեծ ավերածությունների մասին: Թե ինչպես հետո նորից բանակներն իրար ընդհարվեցին, և թե ինչպես պարսիկները շատ անգամ պարտվեցին, և թե ինչպես նրանցից փղեր գրավեցին»:
> ***Հովհան Եփեսացի, Եկեղեցական պատմություն, գիրք II, Գլուխ 21***

*Իր համարձակ մտահղացումը կյանքի կոչող զորավարն **այն հաշվարկով էր իրականացրել զորաթևերի գրոհները,** որ պարսիկները չկարողանային մարտի մտցնել մարտական փղերի զորամասը:*

Պարսից զորքի հրամանատար Միհրանին մի կերպ հաջողվում է փախչել:

*Խաղամախիի ճակատամարտում դարանի գնդի կիրառումը մեր ռազմարվեստը զարգացնելու գործում արձանագրված **նոր** քայլ է:*

Դարանի գնդի գրոհի սկզբում պարսկական բանակը հայտնվել էր երեք կողմից (ճակատ, ձախ թև ու թիկունք) հարվածի տակ: Հայ զորավարի այս հնարքը թույլ է տալիս խոսել այն մասին, որ նա փորձել է հակառակորդի մեծաթիվ բանակը ոչնչացնել՝ շրջապատման մեջ գցելով: Եթե մտահղացումը հաջողվեր իրականացնել ամբողջությամբ, ապա Խաղամախիի ճակատամարտը կլիներ համաշխարհային պատմության մեջ նմանօրինակ երկրորդ մարտը:

Տեղեկանք. Հռոմի և Կարթագենի միջև Երկրորդ Պունիկյան պատերազմի (Ք.ա. 218-201թթ.) սկզբում կարթագենցի տաղանդավոր զորավար Հաննիբալը (Ք.ա. 247-183թթ.), ռազմական խորամանկության դասագրքային օրինակներ տալով, մի քանի ճակատամարտերում փայլուն հաղթանակներ է տանում և, շրջանցելով լավ պաշտպանված Հռոմը, շարժվում հարավ: *Կարթագենի բանակը գրավում է Կաննե ամրոցը և նրանից քիչ հեռու Ք.ա. 216թ. վճռական ճակատամարտ տալիս հռոմեացիներին:*

Կաննեի ճակատամարտում Հաննիբալը 48 հազարանոց բանակով շրջապատում և ոչնչացնում է հռոմեական 70 հազարանոց բանակը: Դա պատմությանը հայտնի միակ ճակատամարտն է, երբ փոքրաթիվ ուժերով մեծաթիվ հակառակորդը ջախջախվում է շրջապատման միջոցով:

Այսպիսով, Խաղամախիի ճակատամարտում հայկական բանակը կրկին ապացուցեց, որ միշտ պատրաստ է անձնվիրաբար պաշտպանել իր հայրենիքն ու ազգային ինքնությունն օտարերկրացիների ոտնձգություններից:

Այս հաղթանակից հետո Արևելյան Հայաստանը դուրս բերվեց պարսկական տիրապետության տակից, որը քաղաքական հարթությունում ***նոր իմաստ և բովանդակություն*** *է հաղորդում ռազմական հաջողությանը:*

Դրանից հետո էլ պարսից արքունիքը բազմիցս փորձել է զենքի ուժով ճնշել հայկական ազատագրական պայքարը, բայց ամեն անգամ անհաջողության է մատնվել:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՁՈՐԱՄԱՍԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՕՁ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՈՒՄ 602Թ.

(ԲԱՁՄԱՔԱՅԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ)

590-ական թթ. սկզբին տարածաշրջանում ձևավորված ուժերի հարաբերակցությունը նպաստավոր էր Բյուզանդիայի համար: Պարսկաստանում սկսված գահակալական կռիվների հետևանքով Մավրիկիոս (Մորիկ) կայսրը (582-602թթ.) հնարավորություն էր ստացել միջամտելու Պարսկաստանի ներքին գործերին: Բյուզանդական զորքի կազմում ռազմական գործողություններին մասնակցում է նաև Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած հայկական 15 հազարանոց զորաբանակը: Բյուզանդական բանակի օգնությամբ գահ բարձրացած Խոսրով Բ Փերվեզն (590-628թթ.), ի նշան «շնորհակալության», 591թ. պայմանագրով հրաժարվում է մի շարք տարածքներից, այդ թվում՝ Հայաստանի մեծ մասից:

Մորիկ կայսերը հաջորդած Փոկասի (602-610թթ.) օրոք Խոսրով Փերվեզը, նախկինում կորցրած տարածքները վերականգնելու նպատակով, պատերազմ է սկսում Բյուզանդիայի դեմ: Պատերազմի սկզբում Խոսրով Բ արքան ձգտում է իր կողմը գրավել Տարոնի իշխան Մուշեղ Մամիկոնյանին, սակայն վերջինս մերժում է առաջարկն ու հավատարմորեն պաշտպանում է հայրենի սահմանները:

Ներխուժումը

602թ. պարսից արքան Տարոնի դեմ 30 հազարանոց բանակ է ուղարկում՝ Միհրանի գլխավորությամբ: Տարոնի բնակչությունն ամրանում է Մեղտի, Աստղունք (Աստեղունս) և Ողական ամրոցներում: Պարսիկները դաժան բռնություններ են սկսում, որոնց զոհ են գնում Սբ. Կարապետ (Գլակա, Իննակնյան) վանքում մնացած յոթ հոգևորականները: Օգնության համար Մուշեղ իշխանին է դիմում Սբ. Կարապետի վանահայր Թոդիկը:

Տարոն արշավող պարսկական զորաբանակի դեմ ծավալված ռազմական գործողությունները գլխավորում է Մուշեղ Մամիկոնյանը: Բյուզանդիայից աջակցություն ստանալու հույս չունեցող արդեն զառամյալ իշխանը համարձակորեն գլխավորում է հայրենի հողը նվաճողներից պաշտպանելու գործը, սակայն զորքի ղեկավարումը հանձնում է որդուն՝ տաղանդավոր զորավար և հմուտ դիվանագետ Վահան Մամիկոնյանին, որին նա Տարոնի իշխան էր կարգել:

Առաջին փուլը

Հնարավորինս նվազագույն կորուստներով հակառակորդին ջախջախելու համար Վահանը բազմաքայլ գործողություն է իրականացնում, որը հարստացնում է մեր և համաշխարհային ռազմարվեստի պատմության հանրագիտարանը:

Պարսկական մեծաթիվ բանակը ջախջախելու համար Վահանը նախ ռազմական խորամանկությամբ այն մասնատում է: Վահանը դեսպանների միջոցով իբրև թե իր հավատարմությունն է հայտնում Միհրանին և տեղեկացնում, որ ցանկանում է ապստամբել հոր դեմ: Պարսկական զորքերը չէին կարողացել գրավել Տարոնի բերդերը և ամրոցները: Ուստի Միհրանը, հավատալով Վահանին, իր մոտ է հրավիրում նրան՝ հույս ունենալով հայ զորավարի միջոցով հասնել հաջողության:

Հանդուգն մտահղացումն իրականացնելու համար Վահանն անվարան վտանգում է իր կյանքը: Տարոնի առանձին ամրոցներում նախապես դարաններ պատրաստելով՝ Վահանը գնում է հակառակորդի որջը և Միհրանին համոզում շրջակա ամրությունները գրավելու համար իրեն 4 հազարանոց պարսկական մի զորամաս վստահել: Նա զորագունդն առաջնորդում է դեպի Օձ բերդաքաղաքը, որտեղ պարսիկների համար ծուղակ էր պատրաստվել:

Պատմական տեղեկանք. «Վաղ առավոտյան (Վահանը) քաղաքում գտնվողներին պատվեր ուղարկեց՝ դարպասը բաց անել և պարսից զորքին ներս առնել: Որովհետև քաղաքադուռը շատ նեղ էր, մեկական էին ներս մտնում: Դռներից ներս անցնողներին իսկույն առնում էին, տանում տուն, զգեստները հանում և գլուխը կտրելով՝ պարսպից դուրս, մի աներևույթ խոր տեղ նետում: Չորս հազարից միայն հիսուն հոգի թողել էր Խարձք (կամ Հարձք) կոչվող գյուղում»:

Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն առաջին

Վահանը նախօրոք էր մշակել հակառակորդի մաս-մաս ոչնչացման ծրագիրը: Պարսկական զորամասի հետ դեպի բերդաքաղաք շարժվելուց առաջ նա մեկ հիսնյակ թողնում է Խարձք գյուղում և հրամայում սպասել իր կարգադրություններին: Մարտական գործողությունները սկսվում են վաղ առավոտյան, ինչը հայ զորավարին պետք է հնարավորություն տար մի քանի գործողություն իրականացնել նախքան մութն ընկնելը:

Երկրորդ փուլը

Օձում ծուղակը գցված պարսկական զորամասը կարճ ժամանակում ամբողջությամբ ոչնչացվում է, սակայն դա սկիզբն էր միայն: Դեռևս չէր ավարտվել ծուղակն ընկած զորամասի «հետքերի վերացումը», երբ Խարձքում գտնվող ստորաբաժանումը ստանում է այն կարգադրությունը, որի համար առանձնացվել էր զորամասից (տե՛ս սխեմա 1): Հիսնյակին Վահանը հրամայում է սուրալ Միհրանի մոտ և նրանից ևս երկու հազարանոց օգնական զորամաս խնդրել:

Պատմական տեղեկանք. «Երբ բավականին մոտեցել էին քաղաքի դռանը, Վահանը պարսիկներից խլած ձիերը ու հանդերձանքը տալով քաղաքացիներին՝ ներսից դուրս կանչեց նրանց: Ապա խրատ տվեց, թե երբ պարսիկները տեսնեն ձեզ, դուք միահամուռ դեպի քաղաքը արշավեք և ներս մտնելով հաղթանակի փողեր հնչեցրեք. դուռն էլ բաց թողեք, որպեսզի նրանք կարծեն, թե քաղաքն արդեն գրավեցին: Եվ այդպես էլ արեցին: Պարսիկները, երբ տեսան, որ նրանք միահամուռ դեպի քաղաքն են դիմում, չափազանց ուրախացած՝ իրենք էլ դեպի քաղաքը արշավեցին և անհամբերությամբ քաղաքի դռնից ներս էին լցվում»:

Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն առաջին

Սխեմա 1.



Օձի ճակատամարտը 602թ.

Վահանը հասցնում է պարսիկ զինվորների ձիերն ու ռազմական հանդերձանքը բաժանել Օձի բնակիչներին, որոնց օգնությամբ նոր ծուղակ է պատրաստում մոտեցող պարսկական զորամասի համար: Մինչ «զինավառված» տեղացիները ներս են մտնում և հաղթական փողեր հնչեցնում՝ նա ընդառաջ է շարժվում պարսկական զորամասին և հաղթանակի լուրը հայտնում (տե՛ս սխեմա 2): Հարուստ ավարի տիրանալու մոլուցքով տարված պարսիկները կորցնում են զգոնությունը և քառատրոփ արշավում դեպի բերդաքաղաք: Օձին մոտեցող պարսկական զորամասի ջախջախումը ձեռնարկելուց առաջ Վահանը համարձակորեն սկսում է բազմաքայլ մարտի երրորդ փուլը:

Դեռ բերդաքաղաքին չհասած՝ պարսկական զորամասից երկու տասնյակ զինվորների նա հրամայում է վերադառնալ և Միհրանին հայտնել Օձի գրավման մասին: Դժգոհելով, որ վերցված ռազմավարից իրենց անմասն են թողնելու, սակայն չհամարձակվելով չենթարկվել հրամանին՝ ստորաբաժանումը վերադառնում է Միհրանի մոտ և հայտնում բերդաքաղաքի գրավման լուրը (տե՛ս սխեմա 2):

Վահանն իր ստորաբաժանումով հետևում է պարսիկներին: Պարզվում է՝ այդ քայլը ևս նախօրոք մտածված էր: Պարսկական զորամասի մեծ մասն արդեն բերդաքաղաք էր մտել, երբ զինվորները սկսում են կասկածել, որ ծուղակն են ընկել: Սակայն այդ պահին բերդաքաղաքի դարպասները փակվում են, և

Սխեմա 2.



Օձի ճակատամարտը 602թ.

պարսիկների վրա են գրոհում դարան մտած հայկական զորամասերն ու սկսում նրանց կոտորածը:

Հակառակորդի փախուստը թույլ չտալու համար էլ նախատեսված էր Վահան Մամիկոնյանի հետ գործող ստորաբաժանումը, որը թիկունքից հարվածում է Օձ չմտած հակառակորդին: Պարսիկները միայն դեպի ճահճուտ են կարողանում նահանջել, որտեղ էլ Վահանի ուժերը շրջապատում են նրանց և ոչնչացնում:

Երրորդ փուլը

*Մտահղացման երրորդ փուլն իրականացնելու համար **մեծ համարձակություն** էր պահանջվում:*

Հաջորդ օրն առավոտյան Վահանը մեկ անգամ ևս ուղևորվում է Միհրանի մոտ և նրան հայտնում, որ բերդաքաղաքը գրաված զորամասերը խռովություն են բարձրացրել և չեն ցանկանում հրամանատարի հետ կիսել հարուստ ռազմավարը (տե՛ս սխեմա 3):

Սխեմա 3.



Օձի ճակատամարտը 602թ.

Միհրանը որոշում է, որ խռովարարների ելույթը ճնշելու համար հազար հոգանոց հեծյալ զորամասը բավարար կլինի, բայց Վահանի չափազանցրած լուրերին հավատալով՝ պատժիչ զորամասի մարտիկների թիվը կրկնապատկում է: Վահանն այդ տեղամասում բավարար ուժեր չուներ հեծյալ զորագնդի ջախջախման համար: Այդ նպատակով նա «առաջարկում» է զորագունդը կիսել երկու մասի և գիշերը հանկարծակի հարձակումներով այս զորամասերը ևս ոչնչացնում:

Պատմական տեղեկանք. «Երբ գնացին հասան Մեղտի գետի եզերքը, (Վահանը) նրանց (պարսկական առաջին զորամասը) թողեց գետի այն կողմը, որ քնեն, իսկ ինքը դարանակալներին պատրաստ պահելով, սպասավորներին հրամայեց անջատել ձիերի երամակը՝ արոտի տանելու պատրվակով: Այսպես բոլորին անհոգ անելով, հանկարծակի երկու կողմից հնչեցրին փողերը և բոլորին մեջտեղն առնելով իսկույն ևթ կտրեցին նրանց գլուխները և գետը նետեցին. և նրանցից ոչ մեկը չկարողացավ փախչել ազատվել: Ապա հրամայեց երիվարներին ծմակը տանել: Մինչև սրանք կոտորածի այս գործն էլ ավարտեցին, այնուհետև շարժվեցին մյուսներին (երկրորդ հազարյակին) ընդառաջ, քանի դեռ նրանք չէին եկել հասել ծմակին… Երբ եկան և բանից անտեղյակ այնտեղ հասան, այնժամ կամուրջի երկու ծայրերը շրջափակեցին, նրանց շուրջանակի մեջտեղը առան և ահեղագոչ որոտալով սկսեցին անխնա կոտորել»:

Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն առաջին

Կարճ ժամանակում իրականացված մարտերում տարած հաղթանակները վկայում են, որ Վահան Մամիկոնյանը կարող է համարվել շուրջկալների և գիշերային մարտերի բոլոր ժամանակների ամենահաջողակ հայ վարպետներից մեկը:

Գիշերային մարտի արվեստը

Գիշերային մարտին ռազմական խորամանկություն ավելացնելով՝ Վահան Մամիկոնյանը նոր մակարդակի է բարձրացնում մեր ռազմարվեստը: Այդ պատճառով հայ զորավարը հետագա սերունդների հիշողության մեջ մնացել է որպես «Գայլ Վահան»: Ուշագրավ է, որ Վահանին առաջինը «Գայլ» է անվանում նրա դեմ մարտական գործողություններ վարող սարսափահար եղած պարսիկ զորավարներից մեկը: Հայաստանում ջախջախված պարսիկ զորավարը հավանաբար չէր կարծում, որ իր տված *մականունը* շատ արագ *պատվանվան* է վերածվելու:

Իր կիրառած մարտավարությունով Վահան Մամիկոնյանը հետևել է Տայքի անտառներում այս հայեցակարգը մշակող իր մեծ նախնու և անվանակցի փորձին:

Պարսկական երկու զորամասերի ջախջախումով ավարտվում է նվաճողների դեմ Տարոնի հայության հերոսամարտի առաջին պատերազմաշրջանը, որը, սակայն, երկարատև ու հյուծիչ հակամարտության սկիզբն էր միայն: Առաջին հաղթանակով հակառակորդն այնպիսի ծանր հարված է ստանում, որ նորանոր «անակնկալներից» գլուխը կորցնելով՝ որոշ ժամանակ անց հեռանում է քաջ և հնարամիտ լեռնականների երկրամասից:

Այսպիսով, երկու օրից էլ քիչ ժամանակ տևած հակամարտության ընթացքում պարսկական բանակը կորցնում է իր անձնակազմի գրեթե մեկ երրորդը: Մինչդեռ հակառակորդից անհամեմատ քիչ ուժեր ունեցող հայկական կողմի զոհերը տասնապատիկ քիչ էին:

Օձ բերդաքաղաքի շրջակայքում ***հաղթարշավն իրականացնելով,*** *մեր ազատագրական պայքարի* ***երկնակամարում հայտնվեց*** *ամենավառ* ***անհատականություններից մեկը՝*** *տաղանդավոր զորավար և եռանդուն կազմակերպիչ* ***Վահան Մամիկոնյանը:***

Մինչև կյանքի վերջը (606թ.) Գայլ Վահանը գլխավորում է Տարոնի հայության պայքարն օտար նվաճողների դեմ՝ դառնալով մեր ռազմարվեստի անվանի բարեփոխիչներից մեկը: Հայ զորավարի համարձակությունը, բոլոր հանգամանքները մանրակրկիտ հաշվի առնելու կարողությունը, արագ փոփոխվող իրավիճակում նույնքան արագ կողմնորոշվելու ընդունակությունը կարող են զարմանալի թվալ անգամ մեր օրերում:

Օձի երկօրյա ճակատամարտը համաշխարհային ռազմական գիտության մեջ օպերատիվ արվեստի առանձնանալուն նախորդած դարաշրջանի ամենաբազմաքայլ մարտական գործողություններից է:

ՄԱՇՈՒ ԲԼՐԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
607Թ.

Գայլ Վահանի *արժանի ժառանգորդն ու նրա գործի շարունակողն է դառնում* որդին՝ Սմբատը, որը սկզբից ևեթ դառնում է ազատագրական պայքարի արժանի առաջնորդներից մեկը:

Որպես զորավար՝ Սմբատը հանդես է գալիս 607թ.՝ Վախթանգ զորավարի գլխավորությամբ Հայաստան արշաված պարսկական 20 հազարանոց զորքի դեմ մարտական գործողությունների ժամանակ: Կարծելով, թե հնգամյա հյուծիչ պատերազմում Տարոնի հայությունն ուժերը սպառել է և առանց Գայլ Վահանի հաջողությամբ պաշտպանվել չի կարողանա, Վախթանգը Սմբատի դեմ «ընդամենը» 9 հազարանոց զորագունդ է ուղարկում:

Առաջին հաղթանակը

Սմբատն իր 4 հազար մարտիկներով շարժվում է պարսիկների դեմ: Երեկոյան՝ աղջամուղջից հետո, պարսիկները շրջափակում են Սմբատի ուժերը, բայց նրան հանկարծակիի բերել չեն կարողանում: Վստահ լինելով, որ հայկական զորագնդի ջախջախումն անխուսափելի է, պարսիկները ճակատամարտը հետաձգում են մինչև առավոտ:

Սմբատը չի հապաղում օգտվել հակառակորդի թույլ տված սխալից և գիշերը իր մարտիկներին ջահերով շրջապատման օղակը ճեղքելու է տանում: Հայկական զորագնդի հարձակումն անսպասելի էր հակառակորդի համար: Հատկանշական է, որ գիշերային գրոհի մասնակիցներին նախօրոք հրամայվում է գրոհի ընթացքում հակառակորդին աղմուկ-աղաղակով խուճապի մատնել:

Հանգստանալու պատրաստվող պարսիկ զինվորները խուճապի են մատնվում և չեն կարողանում կազմակերպված դիմադրություն ցույց տալ: Հայ զորավարի համարձակ քայլը տալիս է սպասված արդյունքը՝ պարսիկները գլխովին ջախջախվում են:

9 հազարանոց զորագնդից փախչում և հետապնդումից ազատվում են միայն 200 հոգի:

Սմբատ Մամիկոնյանի կիրառած ռազմական խորամանկությունը վկայում է, որ նա, Գայլ Վահանի գիշերային մարտերին մասնակցելով, լավ էր յուրացրել անկանոն ռազմարվեստի տարրերը: Սակայն հակառակորդի հիմնական ուժերը դեռևս ոչնչացված չէին: Այդ պատճառով ժամանակ շահելու համար զորավարը որոշում է խուսափել ճակատամարտից:

> **Պատմական տեղեկանք.** «(Սմբատը) ութ օր շարունակ խույս էր տալիս և իր զորքն էր կազմում ու դասավորում: Ութ օրից հետո Վախթանգը եկավ հասավ այնտեղ՝ պատերազմի դաշտը. և վաղ առավոտյան պատրաստվեցին ճակատամարտի»:
>
> ***Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն երրորդ***

Հայ իշխանին հակառակ, պարսից զորավար Վախթանգը ձգտում էր ամեն գնով վճռական ճակատամարտով արագորեն ավարտել իր «անելիքը»: Պարսկական զորքի գործողություններն ակտիվացնելու նպատակով հետապնդումն իրականացնող ուժերի հրամանատարությունն անձամբ Վախթանգն է ստանձնում:

Մտահղացումը

Պարսից հետապնդող զորամասերը շուտով հասնում են հայերին: Առճակատումից խուսափելն անհնար էր, և Սմբատը որոշում է վճռական ճակատամարտի դուրս գալ:

> **Պատմական տեղեկանք.** «Այստեղ Սմբատը երկու հազար հեծյալ զինվորներ անջատեց զորքից և գիշերով գաղտնի անցկացրեց պարսիկների թիկունքը՝ նախապես պատրաստած թաքստոցը: Երկու հազար էլ անցկացրեց բլրի հակառակ կողմը. և այսպես երկու կողմերից գաղտնի բանակներ կազմեց ու պատրաստ պահում էր: Ապա ինքը մնացած ութ հազարը առանձին ճակատների բաժանելով՝ դասավորեց մինչև լուսաբաց, որպեսզի գաղտնի դարանի մասին ոչինչ չհասկացվի և վաղ առավոտյան փութանակի ուղիղ թշնամու վրա շարժվեց»:
> ***Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն երրորդ***

Մեծաթիվ հակառակորդին հաղթելու նպատակով հայ իշխանն ուժերը բաժանում է գրեթե հավասար վեց մասի: Հակառակորդի առջևում մարտակարգով (երեք զորաթև և պահեստազոր) շարվում են ութ հազարանոց գլխավոր ուժերը: Մյուս չորս հազարանոց զորագունդը ճակատամարտի նախորդած գիշերը երկու մասի բաժանվելով՝ գաղտնի անցնում է պարսկական զորաբանակի թիկունք, դիրքավորվում նախօրոք կազմակերպված թաքստոցում ու մարտադաշտի եզրին գտնվող բլրի հակառակ կողմում՝ համապատասխանաբար թիկունքից ու թևից հարվածներ հասցնելու համար (տե՛ս սխեմա 1): Այս հնարքը 571-572թթ. Վարդան Մամիկոնյանի կիրառած մարտավարությունը զարգացնելու հաջող փորձ է:

Սխեմա 1.



Մահու բլրի ճակատամարտը 607թ.

Ճակատամարտից առաջ մարտի ինժեներական ապահովման միջոցառումների իրականացումը (զորամասերի տեղաշարժման համար անհրաժեշտ ուղիների և թաքստոցի նախապատրաստում) ռազմարվեստում նորություն չէր, սակայն անկանոն մարտավարության պայմաններում կիրառելու համար պետք էր զորավարական տաղանդ և հմտություն ունենալ:

Ճակատամարտը

Այսպիսով, հայկական զորքի մի մասին հանդիպելով՝ պարսիկները ճակատային գրոհ են սկսում նրանց ուղղությամբ: Սկզբում նրանց հաջողվում է դժվարին իրավիճակի մեջ դնել Սմբատի ղեկավարությամբ գործող գլխավոր ուժերին: Իր գաղտնի զենքը՝ դարանի զորքը մարտի մտցնել չշտապող Սմբատն այդ զորամասերի գրոհի համար ավելի հարմար պայմաններ ստեղծելու, ինչպես նաև նպաստավոր դիրք գրավելու համար հետ է քաշվում դեպի մարտադաշտի եզրի բլուրը: Պարսիկ զորավարը հայկական զորամասերի հետ քաշվելն ընկալում է որպես նահանջ և որոշելով, որ անհանգստանալու կարիք չկա, պահեստազորի բոլոր զորամասերն ուղարկում է «հետապնդման»:

Նախօրոք որոշված բնագծին հասնելով՝ Սմբատ Մամիկոնյանը հակագրոհներով կասեցնում է պարսիկների առաջխաղացումը: Համառ դիմադրության հանդիպած թշնամու զորամասերը շարունակվող մարտի պայմաններում անորոշության մեջ էին, երբ նրանց վրա են գրոհում դարանակալ զորամասերը: Առանց պահեստազորի մնացած հակառակորդի համար դարանակալ գնդերի գործողություններն անսպասելի էին (տե՛ս սխեմա 2): Թևանցված և շրջանցված պարսկական բանակը երեք կողմից հարվածների տակ է ընկնում ու չնայած քանակական գերազանցությանը՝ գլխովին ջախջախվում:

> **Պատմական տեղեկանք.** «Բայց ահա, երբ միմյանց դեմ դուրս եկան Վախթանգն ու Սմբատը… Սմբատը հարձակվելով՝ խփեց կտրեց նրա ազդրի սռնապանը, խոցեց նրան ուժգին և կամենում էր գետին տապալել: Բայց Վախթանգը հասցրեց տեգով հարվածել նրա կրծքին, որը ցցվեց նրա լանջապանի մեջ, բայց ներս չթափանցեց… (Սմբատը) տեգով ուժգին հարվածեց Վախթանգի թիկունքին, պատռեց *[երկաթյա]* զրահը և սրտի մեջ մխրճելով՝ մյուս կողմից դուրս բերեց. ապա հանեց սուրը, թափով խփեց կտրեց Վախթանգի գլուխը»:
>
> ***Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն երրորդ***

Սխեմա 2.



Մահու բլրի ճակատամարտը 607թ.

Շրջապատվելուց հետո անելանելի դրության մեջ հայտնված պարսիկները երկար ժամանակ շարունակել են անկանոն, բայց համառ դիմադրությունը, որի հետևանքով մարտը շատ երկարատև և արյունահեղ է եղել ու ավարտվել հայկական կողմի լիակատար հաղթանակով:

Պատմական տեղեկանք. «Մեծավ հաղթությամբ վերադարձան բոլորը: Զորքերն էլ շրջապատելով պարսիկներին, բոլորին կոտորեցին ու նույն տեղում վայր թափեցին, և ոչ մեկը նրանցից կենդանի չմնաց, բացի այն չորս հարյուր հոգուց, որոնք ուղտապաններ էին: Նրանց հրամայեց չսպանել, այլ վերցրեց նրանցից հազար քառասունչորս ուղտ և ութ հազար ձի ու ջորի:

Իսկ երբ ավարտվեց պատերազմը, հրամայեց նրանց (ճակատամարտում ընկած պարսիկների) դիակները լցնել ձորերն ու հեղեղատները. և բլրի անունն էլ կոչեցին Մահու բլուր»:

Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Պատճեն երրորդ

Հաղթանակը

*Մարտից հետո Սմբատ Մամիկոնյանը հրամայում է **չսպանել պարսկական բանակի չորս հարյուր ուղտապաններին**, թեև պատմիչը նշում է, որ նրանք սպասարկում էին հակառակորդի բանակը, այսինքն՝ **ծառայության մեջ էին գտնվում**:*

> **Իրավական տեղեկանք.** «Հակառակորդ կողմի իշխանության տակ ընկած մարտիկը, եթե նա չի մասնակցում հարձակմանը կամ հարձակման նախապատրաստություն հանդիսացող ռազմական գործողությանը, չի կորցնում *մարտիկ* և *ռազմագերի* համարվելու իր իրավունքը՝ նախկինում նրա կողմից կատարված գործողությունների պատճառով»:
> ***ԺԿԼ I, հոդված 44, կետ 5***

Ուղտապաններին չսպանելու հրամանն արձակել է Սմբատ Մամիկոնյանը՝ հետևելով հայ զինվորականության պատվո վարքականոնի պահանջներին:

*Մարդասիրական արարքն էլ **ավելի մեծ արժեք է ստանում,** եթե նկատի ունենանք, որ կատարվում է արտակարգ համառ ճակատամարտից հետո: Բավական է նշել միայն, որ **մեծաթիվ զոհերի** պատճառով մարտադաշտի եզրի բլուրը ճակատամարտից հետո անվանվում է **Մահու բլուր:***

Այսպիսով, Մահու բլրի ճակատամարտը վկայում է, որ արդեն VIIդ. սկզբին մեր ռազմական իրավունքում գործում էին գերված հակառակորդի հանդեպ մարդասիրական վերաբերմունքի նորմեր:

ՊԱՅՔԱՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ ԵՎ ՁՈՐԱՎԱՐ ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

630-40-ական թթ. Առաջավոր Ասիայում տեղի են ունենում քաղաքական փոփոխություններ: Ռազմաքաղաքական ասպարեզ է իջնում նորաստեղծ մահմեդական պետությունը՝ Արաբական խալիֆայությունը: Արաբական նվաճումների արդյունքում ընդամենը երկու տասնամյակի ընթացքում կործանվում է Սասանյան տերությունը, Բյուզանդիայից գրավվում են Ասորիքը, Պաղեստինը, Եգիպտոսը:

Արաբական արշավանքներին դիմակայող պարսկական և բյուզանդական բանակների հայկական զորամասերը, տեսնելով քաղաքական նոր իրողությունները, աստիճանաբար մտահոգվում են բուն Հայաստանի անվտանգության խնդրով և վերադառնում հայրենիք:

Արաբների արշավանքների նախօրյակին (639թ.) Հայաստանի բյուզանդական մասի նախարարների առաջնորդությունն է ստանձնում Թեոդորոս Ռշտունին: Տաղանդավոր քաղաքական և ռազմական գործիչը միավորում է Հայաստանի արևմտյան ու արևելյան մասերը և երկրում ինքնուրույն իշխանապետություն հաստատելով՝ իր վրա է վերցնում ոչ միայն Հայոց իշխանի, այլև սպարապետի պարտականությունները: Հայոց իշխանի նստավայրը Աղթամար կղզին էր:

639թ. արշավանքի ընթացքում արաբական զորքերը վերահսկողություն են հաստատում Միջագետքում, իսկ 640թ. սկզբին արաբները Ասորիքից և Հյուսիսային Միջագետքից հանկարծակի ներխուժում են Հայաստան: 641թ. Ամիդն ու Տիգրանակերտը (Նփրկերտ) գրավելով՝ արագորեն առաջ են շարժվում դեպի երկրի կենտրոնական շրջանները:

Ներխուժումը

Ներխուժման մասին տեղեկանալով՝ Հայոց իշխանը միավորում է ուժերը և փորձում հակառակորդի առաջխաղացումը կասեցնել Բաղաղեշի (Բաղեշ) լեռնանցքում:

> **Պատմական տեղեկանք.** «Վերցնելով իր զորքը՝ նա (Թեոդորոս Ռշտունին) կամենում էր Ջորա ճանապարհի կիրճերը[1] գրավել, սակայն չկարողացավ նրանցից առաջ ժամանել, քանզի թշնամիները, *թևավոր օձերի նման,* օդաթև արագությամբ հարձակվելով, իրենց ետևում թողեցին հայկական զորքը և առաջանալով՝ ընթացան դեպի Դվին մայրաքաղաքը»:
>
> ***Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ***

Արաբական հրոսակախմբերը ներխուժում են Տարոն, որտեղ հանդիպում են Տիրան Մամիկոնյանի կազմակերպած դիմադրությանը: Գլխավոր ճակատամարտը տեղի է ունենում Գրգուռ լեռան հարավային ստորոտում: 8 հազարանոց հայկական զորագունդը որոշում է կասեցնել 18 հազարանոց հակառակորդի առաջխաղացումը: Չնայած թվական այսպիսի տարբերությանը, հայերը կռվում էին արտակարգ եռանդով ու քաջությամբ: Շատերի մեջ աչքի էր ընկնում Տիրան Մամիկոնյանը: Արաբները մեծ դժվարությամբ են կարողանում հաղթահարել մեր նախարարի կազմակերպած դիմադրությունը և շարժվում են դեպի Դվին:

> **Պատմական տեղեկանք.** «Ոչ ոք չկարողացավ Դվին ավանում գտնվող հայկական զորքերին տեղեկություն հասցնել, միայն թե երեք իշխաններ, որոնք գնացել էին զորք հավաքելու՝ Թեոդորոս Վահևունին, Խաչյան Առավեղյանը և Շապուհ Ամատունին, փախստական գալով Դվին, հասնելով Մեծամորի կամուրջը, քարուքանդ արեցին այն, իսկ իրենք հասնելով ավանը, գուժեցին սպառնացող վտանգի մասին: Նրանք բերդի մեջ հավաքեցին շրջանի բոլոր մարդկանց, որոնք դուրս էին եկել խաղողահավաքի:
>
> Իսկ Թեոդորոսը գնացել էր Նախիջևան քաղաքը»:
>
> ***Սեբեոս եպիսկոպոսի պատմություն, Գլուխ ԽԲ***

Հայոց իշխանը տեղեկություն էր ստացել Ատրպատականից արաբների հնարավոր ներխուժման մասին:

Հակառակորդի ուժերի միավորումը կարող էր կործանարար հետևանքներ ունենալ, և Թեոդորոսը հիմնական ուժերով շտապում է դեպի Նախիջևան:

---

[1] Բաղաղեշի լեռնանցք:

Սպարապետը հույս ուներ, որ Դվինի հզոր ամրությունները բավականին երկար կկաշկանդեն արաբներին և իր գլխավորած ուժերը կհասցնեն նրանց վրա գրոհել թիկունքից: Սակայն արաբները ռազմական խորամանկությամբ և գրոհով կարողանում են գրավել քաղաքը:

Դվինի գրավումից հետո արաբները սկսում են կոտորածն ու բարգավաճ քաղաքի ամայացումը: Մի քանի օրում սպանվում են 12 հազար ու գերեվարվում 35 հազար մարդ: Այնուհետև արաբներն արագորեն հեռանում են Հայաստանից: Բյուզանդական իշխանություններն արաբների հեռանալուց հետո են սկսում «մտահոգվել» Հայաստանում իրենց տիրապետության պահպանման հարցերով: Նրանք գիտեին, որ Հայաստանում կա ուժ, որը կարող է իր վրա վերցնել այդ ծանր իրադրությունում երկրի պաշտպանության պատասխանատվությունը: Կոստանդին Գ կայսրն ընդառաջելով կաթողիկոս Ներսես Գ Տայեցու դիմումին՝ պաշտոնապես Հայաստանի սպարապետ է ճանաչում պատրիկի բարձր տիտղոս ստացած Թեոդորոս Ռշտունուն:

Հայաստանում արաբական նվաճումներին դիմակայելու համար կայսրը Պրոկոպիոս (Պռոկոպ) զորավարի հրամանատարությամբ 60 հազարանոց բանակ է ուղարկվում:

Արշավանքի նախապատրաստումը

Բյուզանդական զորքի տեղ հասնելուն պես Թեոդորոս Ռշտունին հույն զորավարին ներկայացնում է գործողությունների բավականին համարձակ մի ծրագիր, որի նպատակն էր հարձակողական գործողություններով արաբներին անակնկալի բերել: Տարածաշրջանի բոլոր ուժերի անվերջանալի թվացող համընդհանուր պարտությունների պայմաններում այս ծրագիրը բավականին համարձակ էր: Հայոց իշխանը կարողանում է բյուզանդական զորավարին համոզել, որ պասիվ գործողությունները նպաստելու են արաբներին՝ նրանց հնարավորություն տալով ամրանալ նվաճված տարածքներում:

*Արաբները կործանման եզրին էին հասցրել Սասանյան տերությունը և, **ինչպես իրենց թվում էր**, մահացու հարվածներ հասցրել Բյուզանդիային: Տարօրինակ ոչինչ չկար, որ արաբները բյուզանդացիներից ևս ակտիվ հակահարձակողական գործողություններ չէին սպասում:*

Հաղթարշավը

Պրոկոպիոսի ու Թեոդորոս Ռշտունու գլխավորած բանակը 643թ. Աղձնիքի վրայով մտնում է Վերին Միջագետք (տե՛ս քարտեզը): Հույն զորավարն աչքի չէր ընկնում զորավարական ունակություններով, և արշավանքը փաստորեն գլխավորում էր Հայոց իշխանը: Եթե բյուզանդացիներին անհանգստացնում էր նվաճված հսկայական տարածքների կորուստը, ապա Թեոդորոսը ձգտում էր պաշտպանել Հայաստանը քոչվորների հրոսակախմբերի ասպատակություններից: Գիտակցելով, որ արշավանքի անհաջողությունը խիստ բացասական հետևանքներ կարող է ունենալ, Թեոդորոս իշխանը հանգամանորեն նախապատրաստել էր այն: Միջագետք մտած հայ-բյուզանդական զորքերը, կոտրելով արաբների դիմադրությունը, սրընթաց առաջ են շարժվում դեպի Եդեսիա:

> **Պատմական տեղեկանք.** «955 թվին (643-644) պատրիկ Վաղենտինը՝ Հռոմեացոց զորավարը, եկավ կռվելու արաբների դեմ: Ահաբեկված նրանց ներկայությունից՝ նա փախավ և թողեց իր հետ եղած բոլոր հարստությունները, որ ընկան արաբների ձեռքը:
> Նույն թվին Պռոկոպը և Թեոդորոսը մի խիստ ուժեղ հարձակում գործեցին և հասան մինչև Բատնա-Սառուգ»:
>
> ***Դիոնիսիոս Տելմահարցի***

Հայ-բյուզանդական զորքերի հաղթարշավն այդ պահին անելանելի իրադրության մեջ դրեց արաբներին, որոնք զբաղված էին Իրանը գրավելով: Հայ-բյուզանդական զորքերը ևս մի շարք հաջողությունների են հասնում: Նրանք նույնիսկ կարողանում են գրավել Բատնա-Սեռուգը (Բատնա-Սառուգ) (տե՛ս քարտեզը), որը գտնվում է Եդեսիայից հարավ-արևմուտք:

> **Պատմական տեղեկանք.** «Նրանք (Պրոկոպիոսը և Թեոդորոս Ռշտունին) ավերեցին և կողոպտեցին քաղաքը (Բատնա-Սեռուգը), վերցրին ինչ որ ցանկանում էին և վերադարձան իրենց երկիրը»:
>
> ***Դիոնիսիոս Տելմահարցի***

Բատնա-Սեռուգից մեծաթիվ ավարով վերադարձող հայ-բյուզանդական բանակը հաղթականորեն էր ավարտել ոչ մեծ, սակայն կարևոր արշավանքը: Թեև հաղթանակը կերտվել էր ընդհանուր ուժերով, սակայն դա Թեոդորոս Ռշտունու հաղթանակն էր և նրա զորավարական տաղանդի արդյունքը:

ՀԱՅ - ՀՈՒՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ 642Թ.



ԵՂԲԱՐՔ ՍԱՐԱԿԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

643Թ.

Արաբական երկրորդ արշավանքի նախօրյակին Բյուզանդիան որոշակիորեն հոգ էր տարել Հայաստանում իր դիրքերն ամրապնդելու համար: Թվում էր, թե այդպիսի պատասխանատու պահին հայկական և բյուզանդական հրամանատարությունները պետք է գործեին համաձայնեցված, սակայն նույնիսկ ընդհանուր թշնամու դեմ պայքարը նրանց չէր միավորում: Եթե հայկական կողմին մտահոգում էր երկրի անվտանգությունը, որի համար նրանք պատրաստ էին համագործակցել արաբների դեմ հանդես գալու պատրաստ ցանկացած ուժի հետ, ապա բյուզանդացիները պատրաստ էին նույնիսկ Հայաստանը կորցնելուն, սակայն չէին հանդուրժի հայ նախարարների ինքնուրույնության և ոչ մի դրսևորում: Հետևելով այդ տրամաբանությանը՝ հույն զորավար Պրոկոպիոսն իր անհեռատես քաղաքականությամբ ոչ միայն չի նպաստում ընդհանուր գործին, այլև իր դանդաղկոտությամբ վերջնականապես հակառակորդին է զիջում մեծ զոհողությունների գնով ձեռք բերված ռազմավարական նախաձեռնությունը:

«Ժամանակ շահելու» ռազմարվեստը

Քանի որ մեծաթիվ արաբական հրոսակախմբերի դեմ չէր կարելի բաց ճակատային գործողություններ իրականացնել, Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, իրեն բնորոշ եռանդով, սկսում է Հայաստանի ամրոցների ու բերդերի ամրացումը:

Որոշվում է հակառակորդի գործողությունները կաշկանդել անառիկ ամրոցների երկարատև պաշտպանություններով և անսպասելի հարվածներ հասցնել: Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ ամեն տարի ձմեռնամուտին արաբները հարկադրված են լինելու հեռանալ Հայաստանից:

> **Պատմական տեղեկանք.** «Իսմայելցիներն (արաբները) այնուհետև իրենց բանակից առանձնացնելով խոշոր մի զորամաս, հարձակվեցին Հայոց աշխարհի վրա Պարսկաստանի կողմից: Նրանք ասպատակեցին Մարաց ավանները, Գողթան գավառը և Նախիջևան դաստակերտը: Տղամարդկանցից շատերին կոտորեցին, իսկ մյուսներին՝ կանանց և երեխաներին անցկացրեցին Երասխ գետը Ջուղայի գետանցով և գերի տարան: Ապա զորքը երկուսի բաժանեցին, մի մասը գերիներին տարավ իրենց երկիրը, իսկ բաժանված մի գունդը ասպատակեց Արտազ գավառը և (հարձակվեց) հունական զորքի վրա, որի զորավարի անունն էր Պրոկոպիոս»:
>
> ***Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ***

643թ. արաբները նվաճում են մարզպանական շրջանում Հայաստանի մաս կազմող «Մարաց աշխարհը» և ապա մտնում են Արաքսի հովիտը, ասպատակում Գողթանը և Նախիջևանը: Այստեղ նրանք բաժանվում են երկու մասի: Մի մասը ռազմավարի ու գերեվարվածների հետ վերադառնում է Ատրպատական, իսկ մյուսը՝ մտնում Արտազ գավառ: Թեոդորոս Ռշտունին ցանկանում է Կոգովիտ գավառում հակահարված տալ արաբներին, սակայն Պրոկոպիոսը ոչ միայն չի համաձայնում, այլև վիրավորական ծաղրի է ենթարկում նրա ծրագիրը:

> **Պատմական տեղեկանք.** «Իսկ դա (Պրոկոպիոսը) զորքի բազմության ապավինելով և ոչ՝ Աստծուն, որը հաջողություն է տալիս պատերազմներում, հայոց իշխանի խոսքերին կարևորություն չտվեց, և սա դառնացած Հայոց աշխարհի կորստյան և զորավարի անտարբերության համար չկարողացավ համբերել, այլ մտնելով՝ երկրորդում և երրորդում էր իր խոսքը: Զորավարը, բարկանալով իշխանի վրա, իր ձեռքում եղած գավազանը նետեց նրա ետևից»:
>
> ***Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ***

Մտահղացումը

Բյուզանդական զորակայանից հեռանալուց հետո Թեոդորոս Ռշտունին անմիջապես դիմում է վճռական գործողությունների: Նա իր զորագնդերով դարան է կազմակերպում Մարդուցայքից (Մարդաստան) Կոգովիտ տանող ճանապարհին Եղբարք Սարակ[1] կոչվող փոքրիկ լեռան մոտ, որտեղով, ըստ հետախուզության տվյալների, պետք է անցնեին արաբական զորամասերը (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.



Եղբարք Սարակի ճակատամարտը (643թ.)

Տաղանդավոր զորավարն իր ժամանակի ռազմարվեստի ամենախիստ պահանջներին համապատասխանող դարան էր կազմակերպել: Գրոհի համար շատ հարմար տեղանք էր ընտրվել, որը հնարավորություն էր տալիս կիրճ մտած արաբներին ջախջախել՝ նրանց համար անհասանելի մնալով: Քողարկումն այնպիսի վարպետությամբ էր իրականացվել, որ ընդհուպ մինչև գրոհի սկիզբը հակառակորդի հետախուզության համար անհայտ էին ոչ միայն առանձին ստորաբաժանումների, այլև ամբողջ զորագնդի դիրքերը:

---

[1] Եղբարք Սարակի ճշգրիտ տեղադրությունն անորոշ է:

Դարանի նախապատրաստման ընթացքին հետևելիս դժվար չէ նկատել, որ Թեոդորոս Ռշտունին նոր որակ է հաղորդում հայկական զորքերի կողմից կիրառվող մարտավարությանը: Մասնավորապես, կիրառվում է ցերեկային հանկարծակի հարձակման մարտավարություն, որը նոր խոսք էր անկանոն ռազմարվեստում:

Մարտը

Արաբական զորամասերը նոր էին մտել կիրճը, երբ անսպասելի նրանց վրա է գրոհում հայկական զորագունդը: Նույնիսկ սրընթաց զորաշարժերով հպարտացող արաբական ընտիր հեծելազորը պատրաստ չէր դիմակայելու այրուձիու փոթորկալից հարվածին: Կաթվածահար եղած արաբական զորամասերն այս ու այն կողմ էին նետվում՝ չկարողանալով դիմակայել ոչ մեծ տեղամասում հասցվող հզորագույն հարվածներին:

> **Պատմական տեղեկանք.** «(Թեոդորոս Ռշտունին) իսկույն հրամայեց իր իշխանության տակ եղած զորքերին՝ «զրահավորվեցեք և ելեք Իսմայելի դեմ»: Նրանք, իրենց երիվարները հեծնելով՝ դարանամուտ եղան այն բլրի ետևում, որը Եղբարք էր կոչվում: Կիրճերի մուտքը կտրելով՝ նրանցից (արաբներից) շատերին կոտորեցին և կողոպտելով ընկածներին, թողեցին (Պռոկոպիուս) զորավարին ու գնացին Գառնի գավառը»:
>
> ***Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ***

Հայկական զորախումբը, կտրելով կիրճի մուտքն ու ելքը, հակառակորդին հնարավորություն չի տալիս արագ զորաշարժերի դիմել, որով Հայոց իշխանը մարտի ամբողջ ընթացքում նախաձեռնությունն իր ձեռքում է պահում (տե՛ս սխեմա 2): Այս հնարքով Թեոդորոս իշխանն իր հավատարմությունն էր հայտնում գրեթե երկու դար մեր ռազմարվեստում տիրապետող դարձած անկանոն մարտավարությանը:

Վերախմբավորվելով՝ հակառակորդը միասնական մարտակարգ է ձևավորում և համառորեն դիմադրում այրուձիու գրոհներին: Շարունակվող մարտի պայմաններում արաբներն օգտագործում են հայկական զորագնդի նկատմամբ ունեցած քանակական գերազանցությունը և իրենց զորաշարժային հնարավորությունները: Նկատելով, որ մարտն աստիճանաբար հավասարազոր կողմերի բախման է վերածվում, Թեոդորոս Ռշտունին *իր առջև դրված խնդիրը կատարված է համարում* և հրաժարվում է հետապնդել կանոնավոր մարտակարգով նահանջող հակառակորդին: Հարցն այն էր, որ դեպի բաց տարածք նահանջող արաբներն այնտեղ կարող էին հակագրոհել հետապնդման ուղարկված զորամասերի վրա:

Սխեմա 2.



Եղբարք Սարակի ճակատամարտը (643թ.)

Արշավանքի ընթացքում արաբները հարուստ ռազմավար էին ձեռք գցել, և հաղթանակած հայկական զորագունդը, արաբներից ռազմավարի զգալի մասը խլելով, հեռանում է դեպի Գառնի: Զորագնդի հաղթանակն ամբողջ ժողովրդին ոգևորում է և նոր պայքարի կոչում:

Մարտի պատրանքը

Հայերի այս հաղթանակը գրգռում է Պրոկոպիոսի ինքնասիրությունը, և նա որոշում է հարձակվել արաբական հիմնական ուժերի վրա և «ավարտին հասցնել» հակառակորդի ջախջախումը: Սակայն տեղի ունեցած ճակատամարտում արաբներից մի քանի անգամ[1] ավելի զորք ունեցող բյուզանդացիները ծանր պարտություն են կրում:

[1] Հնարավոր է, որ Ղևոնդ պատմիչի տեղեկությունները չափազանցված են, սակայն անվիճելի է, որ բյուզանդական բանակը գերազանցում էր արաբներին:

Պատմական տեղեկանք. «Այդ ժամանակ Պրոկոպիոսը հրամայեց իր զորքերին հարձակվել թշնամու վրա: Բայց թշնամին հակահարված տալով, կոտորեց, ջարդեց հունական զորքի մեծ մասը և մյուսներին փախուստի մատնեց մինչև նրանց ճամբարը ու վերադարձավ իր բանակատեղը: Ասում են, թե հունական զորքի թիվը հասնում էր մինչև 60 000, այնինչ իսմայելացիների զորքը ընդամենը 10 000 էր:

Իսմայելացիները հաջորդ օրը հավաքեցին հռոմեացիների թողած ավարը և վերադարձան իրենց երկիրը»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. Բ

Արաբների կորուստները ևս մեծ էին և, Հայոց իշխանի նորանոր անակնկալներից խուսափելու համար, ճակատամարտից հետո արաբները չեն շարունակում արշավանքը, այլ հեռանում են Հայաստանից:

Այսպիսով, Եղբարք Սարակի ճակատամարտը մեր ռազմարվեստի զարգացման բարձր մակարդակի մասին վկայող ռազմական հաջողություններից է: Թեոդորոս Ռշտունին այս մարտում իրականացրեց միջնադարի համաշխարհային ռազմարվեստում հազվադեպ կիրառվող՝ մեծաթիվ ուժերով դարանակալումը, որն, անշուշտ, վկայում է նրա զորավարական տաղանդի մասին:

Դարանակալ զորամասերի առջև խնդիր չէր դրվել ոչնչացնել մեծաթիվ հակառակորդին: Ուժերի տվյալ հարաբերակցության պայմաններում դա անիրագործելի էր, սակայն հանկարծակի իրականացված հարվածով հակառակորդի առաջխաղացումը կասեցվել էր: Արաբները կորցրել էին անչափ կարևոր ժամանակը, որը նույնիսկ բյուզանդացիներին *ծանր* պարտության մատնելուց հետո էլ չէին կարողանալու վերականգնել:

Դժվար է ասել, թե ինչպիսի ընթացք կստանար պատերազմը, եթե բյուզանդական զորավար Պրոկոպիոսը Եղբարք Սարակի ճակատամարտում հայկական զորագնդին միայնակ չթողներ: Այդուհանդերձ, ստեղծված իրավիճակում այս հաղթանակն այն առավելագույնն էր, որին ի վիճակի էր հասնելու առանց դաշնակցի մնացած հայկական կողմը:

ԱՐՇԱՓԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

647Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12

647թ. արաբական արշավանքի նախօրյակին հայ ժողովրդի համար բավականին ծանր դրություն է ստեղծվում: Բյուզանդացիներից գրեթե ոչ մի կարգի աջակցություն չստացող Հայաստանն արաբական ներխուժման նախօրյակին միայնակ է մնում:

Ներխուժումը

Ամռանը Ատրպատականից արաբական մի զորաբանակ ներխուժում է Հայաստան՝ ասպատակելու նպատակով: Մի մասը Այրարատով անցնում է մինչև Տայք, այնուհետև շարժվում է դեպի Վիրք ու Աղվանք, իսկ վերադարձին, չկարողանալով գրավել Նախիջևանի բերդը, հարձակվում է Խրամի բերդի վրա, գերեվարում կանանց ու մանուկների և Հայաստանից հեռանում խալիֆայություն: Արաբական մյուս զորքը ասպատակելով Վասպուրականը («Սեպուհական գնդի կողմերը»)՝ գալիս է Տուրուբերան նահանգի Հարք գավառը:

Չնայած այս արշավանքն իր ընդգրկումով անհամեմատ ավելի մեծ էր և *զուտ հետախուզական նպատակներ չէր հետապնդում,* սակայն արաբներին ամենուր անհամեմատ ավելի կազմակերպված դիմադրություն է ցույց տրվում: Նախորդ տարիներին Թեոդորոս Ռշտունին և իր կողմնակիցները հիմնականում կարողացել էին նախապատրաստել երկրի ինքնապաշտպանությունը:

> **Պատմական տեղեկանք.** «Այն զորամասը, որը նախատեսված էր Վասպուրականի կողմերի համար, ցրվեց ողջ երկրամասում, սրի մատնեց ամենքին, կողոպտեց, հավաքեց ավարը և գերիները: Այնուհետ նրանք եկան և հավաքվեցին Հերևանում: Գրոհեցին բերդի վրա, բայց չկարողացան վերցնել: Այստեղից շարժվեցին Որդոսպ: Այնտեղ ևս ոչինչ չկարողացան անել»:
>
> ***Սեբեոս եպիսկոպոսի պատմություն, Գլուխ ԽԲ***

Առաջին հաջողությունները

Հայաստան ներխուժած արաբական զորագնդերից մեկը՝ Օսման և Օկբա զորապետերի գլխավորությամբ, հարձակվում է Հարք գավառի Հերևան բերդի վրա, որտեղ արաբները համառ դիմադրության են հանդիպում: Նրանց բոլոր գրոհները հաջողությամբ հետ մղելով՝ հայերը ոչ միայն թանկարժեք ժամանակ են շահում, այլև ոգևորում են մյուս շրջանների ինքնապաշտպանական ուժերին:

Անհաջողության մատնված արաբական հրոսակախումբը դադարեցնում է Հերևանի պաշարումն ու հարձակվում Որդսպուի[1] վրա: Այստեղ ևս արաբ-

[1] Որդսպուն (Որդոսպ) գտնվում էր Բերկրի-Կոգովիտ ճանապարհի վրա՝ Բայազետից հարավ-արևմուտք:

ները համառ դիմադրության են հանդիպում, ինչն այժմ արդեն ոչ միայն անսպասելի էր, այլև անչափ վտանգավոր: Հայկական զորքի հերոսական դիմադրությունն արդեն իսկ հարցականի տակ էր դրել այս զորագնդի հետագա առաջխաղացումը: Հետևաբար, Որդսպուի պաշտպանների դիմադրությունն առանց չափազանցության *ռազմավարական* անհաջողության կարող էր հանգեցնել:

Արագ կողմնորոշվելով՝ արաբները որոշում են այստեղ ևս վերացնել պաշարումը և հեռանում են դեպի Կոգովիտ:

Ռազմական պարտություն կրած *Արաբական զորամասը գալիս և բանակ է դնում Արծափ բերդի դիմաց, որը նշանավոր Դարոյնքի մատույցների ամրություններից մեկն էր:*

Սկսվում է Արծափի պաշարումը, որը ևս արաբներին հաջողություն չէր խոստանում: Արծափի փոքրաթիվ պաշտպանները որոշում են իրենց վրա գամել հակառակորդի ուշադրությունը և վերջնականապես խափանել նրանց արշավանքը: Այս համարձակ ծրագրի իրականացման համար անբավարար ուժեր ունեցող արծափցիները օգնության համար դիմում են Դարոյնքի ամրաշինական համակարգի պաշտպանությունը ղեկավարող Սմբատ Բագրատունուն, և նրա մոտ Կախանակտուց կոչվող բարձունքի կողմից աննկատելիորեն սուրհանդակներ են ուղարկվում:

Ճակատամարտը

Նկատի ունենալով խնդրի կարևորությունը՝ ձեռքի տակ բավարար ուժեր չունեցող Սմբատ Բագրատունին քառասուն հոգանոց օգնական ջոկատ է տրամադրում Արծափի պաշտպանությունն ուժեղացնելու համար: Իր զորագնդով Արծափին օգնության էր շտապում նաև Թեոդորոս Ռշտունին:

Արծափցիներից ընդամենը պահանջվում էր դիմադրել այնքան, մինչև որ Հայոց իշխանի զորագունդն օգնության հասնի և թիկունքից հարվածի հակառակորդին:

Արծափից եկած սուրհանդակների ուղեկցությամբ ստորաբաժանումը բարձրանում է ամրոց: Սակայն եթե մի քանի սուրհանդակներին հաջողվել էր բերդից աննկատ դուրս գալ, ապա ամբողջ ստորաբաժանումը նույն հաջողությամբ ամրություններից ներս մտցնել չի հաջողվում: Արաբական գիշերային դիտակետերը նկատում են Արծափին օգնության շտապողներին, հետևում նրանց և գտնում գաղտնի մուտքը: Լուսադեմին (օգոստոսի 12-ին, կիրակի օրը) նրանք գաղտնի մտնում են Արծափ և գրավում բերդը:

Պատմական տեղեկանք. «Արաբները գնացին Արծափ և ճամբար դրին բերդի հանդեպ, գետի մոտ: Սկսեցին կռվել բերդի հետ և բազում վնասակար ոճիրներ գործեցին այնտեղ: Բերդը ելք ուներ թիկունքից, որը դուրս էր գալիս դեպի Ասորենի կողմը, որին Կախանկտուց են անվանում: Մի քանի հոգի բերդի այդ ելքից ներքև իջան՝ նպատակ ունենալով օգնություն խնդրել Դարոյնքից: Սմբատ Բագրատունին՝ Վարազ Սահակի որդին, տվեց 40 հոգի: Այդ նույն գիշերը նրանք բարձրացան բերդը և անզգույշ գտնվեցին. իսմայելացիներն իմացան անցքի տեղը, գնալով նրանց հետքերով, բարձրացան բերդ և բռնեցին բերդի անցքը մինչև առավոտ»:

Սեբեոս եպիսկոպոսի պատմություն, Գլուխ ԽԲ

Պաշտպաններից շատերը զոհվում են բերդի պատերի վրա: Արաբ զինվորները կանանց ու երեխաներին հավաքելով Արծափ բերդի առջև, որպես վրեժխնդրության դրսևորում, ցանկանում էին կոտորել նրանց:

Հաղթանակը

Թեոդորոս Ռշտունին չի թողնում, որ արաբների այս անմիտ բարբարոսությունն իրականացվի: Նա թշնամու վրա է գրոհում իր վեց հարյուր հոգանոց զորամասով: Անսպասելի բերդ մտած հայկական զորագունդը գլխովին ջախջախում է արաբներին և կոտորածից փրկում Արծափի բնակչությանը:

Պատմական տեղեկանք. «Եվ պատահեց այնպես, որ վաղ առավոտյան եկավ և նրանց վրա գրոհեց Հայոց զորավար Թեոդորոս Ռշտունին և անթիվ կոտորած արեց: Սպանեց երեք հազար սպառազենների, որոնք իսմայելացոց զորքի ամենից ընտիր մարտիկներն էին... Քչերին հաջողվեց ճողոպրել հետիոտն ու ամրանալ եղեգնուտներում: Տերը փրկեց այդ օրը բազմաթիվ գերիների իսմայելացիների ձեռքից և խորտակեց նրանց մեծ կործանումով: Սպանվեցին նաև իսմայելացների երկու իշխաններ՝ Օթմանը և Օգոման (Օսման և Օկբա զորապետերը)»:

Սեբեոս եպիսկոպոսի պատմություն, Գլուխ ԽԳ

Փաստացի ծուղակում հայտնված արաբական զորամասը գրեթե ամբողջությամբ ոչնչացվեց՝ տալով երեք հազար սպանված: Ընդհարման ընթացքում սպանվածների թվում էին Օսման և Օկբա զորապետերը: Արաբների երկրորդ զորամասը Հայաստանում՝ Նախիջևանի բերդի մոտ, նույնպես անհաջողության է մատնվում:

Եզրակացություն

Օտար նվաճողների դեմ պայքարում Հայաստանը դիմակայում էր՝ ապավինելով սեփական ուժերին: Հարքի Հերևանի, Կոգովիտի, Որդսպուի և Արծափի ու Նախիջևանի հերոսական պաշտպանությունն ու Արծափի ճակատամարտում տարած հաղթանակը դասվում են Հայոց պատմության հերոսական էջերի շարքը: Այսպիսի հաղթանակներում է երևում օտար նվաճողների դեմ միասնական ճակատ կազմելու անհրաժեշտությունը, որը կյանքի էր կոչում Թեոդորոս Ռշտունին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

650-ական թթ. արաբական խալիֆայության լայնածավալ զավթողական պատերազմների արհավիրքը հասել էր նաև Հայաստան, որի գրավման հավանական սպառնալիքի վերացումը օրակարգի հարց էր դարձել:

Ռազմական քաղաքականությունը

Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, երկիրն ավերածություններից զերծ պահելու համար որոշում է բանակցություններ սկսել Ասորիքի և Վերին Միջագետքի կուսակալ Մուավիայի հետ, որն Օսման խալիֆայի օրոք (644-656թթ.) բարձր հեղինակություն ուներ: Արաբ կուսակալը ձգտում էր Բյուզանդիայի դեմ ձեռնարկվելիք արշավանքից առաջ ուժերն այլ գործողությունների վրա չվատնել ու չփոշիացնել:

652թ. պայմանագիր է կնքվում, ըստ որի Հայաստանը երեք տարի ժամանակով ազատվում է արաբներին հարկ վճարելուց, որից հետո պետք է վճարեր այնքան, որքան կամենար: Հայերը կարող էին ունենալ 15 հազարանոց այրուձի: Հայաստանի բերդերում չէին լինելու արաբական կայազորներ, սակայն եթե բյուզանդացիները հարձակվեին, արաբները հայերի պահանջով պարտավոր էին զորք ուղարկել:

*Հայ-արաբական պայմանագիրը **լավ մտածված** քաղաքական-դիվանագիտական քայլ էր, որի նպատակն էր ճանաչելով արաբական խալիֆայության ձևական գերիշխանությունը՝ ապահովել Հայաստանի ինքնուրույնությունը:*

Տեղեկանալով կնքված պայմանագրի մասին՝ Կոստանդ Բ կայսրը (642-668թթ.) 652թ. հսկայական բանակով (ըստ Սեբեոսի՝ 100 հազարանոց) գալիս և կանգ է առնում Բարձր Հայքի Դերջան գավառում (տե՛ս քարտեզը): Այնտեղ նրան է ներկայանում Մուավիայի դեսպանը՝ զգուշացնելով, որ արաբները զենքով կդիմավորեն նրան: Սակայն կայսրը շարունակում է ճանապարհը և հասնում Կարին, ուր բանակցելու համար գնում են Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը և Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ մի խումբ նախարարներ:

Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը պաշտպանող հայ նախարարները հայտնվում են դժվարին ընտրության առջև: Արաբական հրոսակախմբերի դեմ միայնակ պայքար վարողները՝ մի սպառնալիքը չեզոքացնելուց հետո, կանգնած էին նորի առջև:

Հայոց իշխանի կողքին էին շուրջ քառասուն նախարարներ, այդ թվում նրա փեսան՝ Համազասպ Մամիկոնյանը, Սյունյաց Հրահատ իշխանը, Թեոդորոս և Գրիգոր Վահևունիները ու մի քանի այլ նախարարներ, ինչպես նաև Վրաց և Աղվանից իշխանները, որոնց հետ խորհրդակցելով էլ Թ.Ռշտունին որոշում է, հենվելով 652թ. դաշնագրի վրա, օգնական զորք պահանջել արաբներից: Ծերա-

ցած Օսման խալիֆան, զբաղված լինելով ներքին խռովություններով, դեպքերի զարգացման հետ մեկտեղ միջամտում է Հայաստանում ծավալված ռազմական գործողություններին:

Բյուզանդական հսկայական բանակի դեմ բաց՝ ճակատային գործողություններ վարելն անիմաստ էր, և Թեոդորոս Ռշտունին ընտրում է անկանոն գործողությունների մարտավարությունը: Նա իր մոտ գտնվող ազնվականներին անհրաժեշտ ցուցումներ ու խորհուրդներ տալով՝ ուղարկում է իրենց տեղերը: Հայոց իշխանը հիվանդացել էր և ավելին անել չկարողանալով՝ առժամանակ հեռանում է իր նստավայր Աղթամար կղզի և ամրանում այնտեղ:

Առաջին հաջողությունները

Զգալով, որ Հայաստանում բյուզանդական տիրապետությունը հաստատուն չէ, Կոստանդը զորքով որոշում է ձմեռել Դվինում, սակայն պետական անհետաձգելի գործեր ունենալով, ի վերջո, ստիպված է լինում վերադառնալ: Հայաստանից հեռանալով՝ կայսրը Մավրիանոսի գլխավորությամբ բյուզանդական զորք է թողնում Հայաստանում:

Բյուզանդացիները փորձում են Վասպուրականում ամրացած հայկական զորքի դեմ պատժիչ գործողություններ իրականացնել (տե՛ս քարտեզը): Այդ նպատակով ուղարկված 3 հազարանոց զորամասն անհաջողության է մատնվում և մեծաթիվ զոհեր տալով՝ Դվին է վերադառնում: Այս հաջողությունը մեծ ոգևորություն է առաջ բերում բյուզանդացիների դեմ պայքարի ելած հայ մարտիկների շրջանում: Մուավիան յոթ հազարանոց զորագունդ է ուղարկում Հայաստան:

Բյուզանդացիները հեռանում են Տայոց աշխարհ, որտեղից արաբական զորքը նրանց դուրս է մղում:

Նահանջող բյուզանդական զորամասերի հետապնդումը շարունակվում է ընդհուպ մինչև Տրապիզոն քաղաքը, որը արաբական զորքը գրավում է: Բյուզանդացիներին Հայաստանից դուրս մղելուց հետո Թեոդորոս Ռշտունին գնում է Դամասկոս և ոչ միայն վերահաստատվում որպես Հայոց իշխան՝ ստանալով ոսկեթել դրոշ, այլև գերագույն իշխանությունը Վրաց, Աղվանից երկրների վրա, մինչև Ճորապահակը:

Հաղթանակը

Հայաստանի պաշտպանության գործում տաղանդավոր զորավարի կողքին էր որդին՝ Վարդը: Հատկանշական է, որ առանձին դեպքերում Վարդ Ռշտունու մասնակցությունը վճռական նշանակություն էր ունենում մեծաթիվ հակառակորդի ջախջախման գործում: Հայ իշխանի գործունեությունը հատկապես նշանակալի էր հետապնդման երկրորդ փուլում՝ բյուզանդական զորքերի վերջնական ջախջախման ժամանակ:

Վարդ իշխանը Կոլոնիա քաղաքի մոտ ռազմական խորամանկությամբ կարողանում է բյուզանդական 30 հազարանոց բանակն անցկացնել գետի այն ափը, որտեղ գտնվում էին դաշնակիցների զորքերը՝ Սահակ զորավարի առաջնորդությամբ:

Տեղանքն անհարմար էր բյուզանդացիների գործողությունների համար: Նրանց համար մարտավարական իրավիճակն էլ ավելի է վատանում, երբ մարտի բռնված արաբական զորամասերը ճակատամարտի սկզբում կեղծ փախուստ են տալիս և բյուզանդացիներին հարկադրում «հետապնդել» իրենց:

Հետապնդման ընթացքում բյուզանդացիների կազմած մարտակարգը խախտվում է: Անկանոն հետապնդում իրականացնող բյուզանդացիների վիճակը կտրուկ փոխվում է, երբ կարճատև նահանջից հետո՝ նախանշած տեղում, արաբները կտրուկ հետ են դառնում ու հարձակվում նրանց վրա: Հանկարծակիի եկած բյուզանդացիներն այլևս չեն կարողանում անբարենպաստ տեղանքում միասնական մարտակարգ ձևավորել և ջախջախվում են:

Ահաբեկված փախչող բյուզանդական զինվորների համար Վարդ իշխանը նոր անակնկալ էր պատրաստել: Հարցն այն է, որ ճակատամարտի ընթացքում Վարդի հրամանով քանդվել էր այն կամուրջը, որով բյուզանդացիներն անցել էին և դեպի ուր նահանջում էին նրանց բանակի մնացորդները: Անելանելի իրավիճակում հայտնվելով՝ բյուզանդական զորքի մնացորդները գրեթե ամբողջությամբ ոչնչացվում են:

Եզրակացություն

Թեոդորոս Ռշտունին Հայաստանի համար ծանր ժամանակների մեծ քաղաքական և ռազմական գործիչներից է: Հայկական պետականությունը համարելով հայ ժողովրդի բարօրության գլխավոր երաշխիքը՝ այդ նվիրական նպատակին հասնելու համար նա իրականացնում էր և՛ ռազմարվեստը զար-

դարող հանդուգն հարձակումներ, և՛ դիվանագիտական նուրբ խուսանավումներ: Նրա շրջահայաց քաղաքականության շնորհիվ հաջորդ տասնամյակներում (VII դարի 60-80-ական թթ.) Հայաստանը փաստացի անկախություն է ձեռք բերում՝ պետականության նախարարական համակարգի վերականգնումով:

Հայոց իշխանի անձնավորությունն ու նրա գործունեությունն այնքան մոտ են եղել ժողովրդին, որ նրա կերպարը վիպականացվել է ու դարձել «Սասնա ծռեր» դյուցազներգության քեռի Թևոս-Թորոսը:

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
703Թ. ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ՍԱՌՅԱՁԱՐԸ

Արաբական խալիֆաթը Հայաստանը կարողանում է նվաճել 701թ. իրականացված մեծ արշավանքից հետո միայն: Երկիրը թշնամուց ազատագրելու նպատակով հայ զորավարները համախմբում էին ուժերը արաբական զորաբանակների դեմ: Այս ռազմավարության կիրառման լավագույն օրինակներից է Վարդանակերտի ճակատամարտը:

Ներխուժումը

Հարավից Հայաստան ներխուժած արաբական բանակը հանդիպում է Մոկք նահանգի լեռնային ամրոցներում ապաստանած հայկական զորախմբերի համառ դիմադրությանը: Չկարողանալով նվաճել ամրությունները՝ արաբները բարեկամական խոստումներով խաբում են պաշարվածներին, ցած իջեցնում նրանց, որից հետո մի մասին կոտորում, իսկ մեծ մասին գերում են: Ուխտադրժությամբ և նվաճումներին հաջորդող վայրագություններով արաբները շուտով նվաճում են Հայաստանը, Վիրքը, Աղվանքը և Մերձկասպյան շրջաններն ու վերածում մեկ՝ Արմինիա անվանվող նահանգի:

Նորաստեղծ վարչական միավորի առաջին իսկ կառավարիչ (ոստիկան) Աբդուլլահը հարկային ճնշումներ և կրոնական հալածանքներ է սկսում, ինչպես նաև մեր նախարարական տոհմերը ոչնչացնելու դաժան ծրագիր մշակում: Արաբ ոստիկանի խարդախ դիտավորությունները հայտնի են դառնում հայերին: Այդ ժամանակ սպարապետ Սմբատ Բագրատունու ղեկավարությամբ նախարարները գաղտնի խորհրդակցությունում քննում են արաբների դավերից խուսափելու միջոցները: Նկատի ունենալով Հայաստանում արաբների թողած կայազորներին օգնության եկած համալրող ուժերի մեծաթվությունը՝ ժողովականներն, ի վերջո, որոշում են հեռանալ երկրից և ապաստանել Բյուզանդիայի կողմերում:

> **Պատմական տեղեկանք.** «Երբ Մահմետ զորավարը Ասորիք գնաց, Հայոց աշխարհի վրա իրեն փոխարեն իշխան թողեց իսմայելացի մեկին:
> Սա վատ խորհուրդ հղացավ՝ Հայոց աշխարհից նախարարական ազատախումբ տոհմերը, իրենց հեծյալներով հանդերձ, մեջտեղից վերացնել: Նրա նենգ խորհուրդը անմիջապես հայտնի դարձավ Սմբատին, որը Բագրատունի տոհմից էր, և այլ նախարարների ու նրանց հեծյալներին: Երբ նա իմացավ դավադրությունը, իր մոտ կանչեց

ազատանի դասից տոհմակիցներին՝ Աշոտ իշխանի որդի Սմբատին, Թեոդորոս իշխանի որդի Վարդին, իր եղբորը՝ Աշոտին և այլ նախարարների: Խորհում էր հնար գտնել, որով կարելի կդառնար իրենց անձերը փրկել: Վերջապես խորհրդաժողովը որոշեց հեռանալ երկրից և գնալ հունաց թագավորի մոտ»:

Ղևոնդ, Պատմություն, գլ. է

Խորհրդակցությունից հետո Վասպուրականի նախարարներից մի քանիսը մեկնում են իրենց տեղերը, իսկ Սմբատ սպարապետն իր 2 հազար հեծյալներով ուղևորվում է դեպի Ակոռի ավանը (տե՛ս սխեման):

Հայկական զորախմբի տեղաշարժն աննկատ չի մնում արաբներից: Աբդուլլահը Նախիջևանում գտնվող ավելի քան 5 հազարանոց (որոշ տվյալներով՝ մոտ 8 հազարանոց) կայազորի գլուխն անցած՝ հետապնդում է սկսում:

Սառցաջարդը

Տեղեկանալով արաբների կազմակերպած հետապնդման մասին՝ Սմբատ Բագրատունին արագացնում է ռազմերթն ու, գետանցելով Արաքսը, ճամբար դնում Վարդանակերտ ավանում: Դիրքերն ամրացնելու հետ մեկտեղ սպարապետը պատգամավոր է ուղարկում Աբդուլլահի մոտ՝ համոզելու, որ չհետապնդեն հայկական զորախմբին: Նույնիսկ Բյուզանդիա անցնելու պայմանով արաբները չէին հանդուրժում հայկական կազմակերպված ուժի տեղաշարժի հնարավորությունը:

Արաբները ձգտում էին ինչ գնով էլ լինի ճակատամարտի բռնվել հայերի հետ, իսկ վերջիններս ամեն ջանք գործադրում էին, որպեսզի խուսափեն արյունահեղությունից:

702/703թթ. ցրտաշունչ ձմեռվա պայմաններում արաբները հարկադրված էին ճակատամարտի նախորդ գիշերը դրսում մնալ, մինչդեռ հայկական կողմը հիմնականում (Վարդանակերտի մատույցներում դրված պահակակետերի զինվորներից բացի) տեղաբաշխվում է գյուղում:

Հարավային կլիմային սովոր արաբների համար անբարենպաստ մարտավարական իրավիճակ էր ստեղծվել, և սպարապետը չի հապաղում օգտվել հնարավորությունից: Լուսադեմին, *նախապատրաստական աշխատանքներ կատարելով* (մարտակարգի շարում, գրոհի, ինչպես նաև զորաշարժերի ուղղությունների ճշգրտում և այլն), նա վաղ առավոտյան հարձակում է սկսում արաբների վրա (տե՛ս սխեման):

Փոքրաթիվ հակառակորդից այսպիսի հանդուգն քայլի չսպասող արաբները նույնիսկ մարտակարգ շարել չեն հասցնում և, սրընթաց գրոհը կասեցնել չկա-



Վարդանակերտի ճակատամարտը 703թ.

րողանալով, կարճատև անկանոն դիմադրությունից հետո նահանջում են դեպի Երասխը (Արաքսը): Սկսված խուճապը և հայերի հետապնդումը արաբներին հնարավորություն չեն տալիս Արաքսի սառույցների վրայով կազմակերպված անցնել գետի մյուս ափը: Հախուռն գետանցում սկսած արաբական զորամասերի ծանրության տակ սառույցը ջարդվում է, և նրանց զինվորների մեծ մասը ջրախեղդ է լինում:

Պատմական տեղեկանք. «Հայոց զորքերը, ամրացնելով ավանի փողոցները, պահապաններ կարգեցին մինչև առավոտը լուսանալը և իրենք ամբողջ գիշերը աղոթքի հսկումի մեջ էին... Արևածագին թեթև կերակրելով՝ իրենց մարմինները զորացրին և անմիջապես վեր կենալով՝ հարդարեցին գունդ առ գունդ և ճակատ առ ճակատ ու պատերազմն սկսվեց... *Ովքեր սրից ազատվեցին՝ ընկան Երասխ գետը,* որն օդի խստությունից սառել էր, և երբ զորքի բազմությունը ելավ սառույցի վրա, *սառույցը անմիջապես ջարդվեց, խորասույզ խեղդվեցին բոլոր սրից փախածները* և հեղձամահ եղան»:

Ղևոնդ, Պատմություն, գլ. Ը

Հաղթանակը

Գետը հասցնում է անցնել ընդամենը 300 հոգի, որոնց հետապնդում է Աշոտի որդի Սմբատն իր զորքով: Արաբները ապաստան են խնդրում հայ իշխանուհի Շուշան Կամսարականից, որն աղերսանքով դիմում է հայ զորավարին ու խնդրում չկոտորել նրանց:

Շուշան իշխանուհին վեհանձնորեն կապել է տալիս թշնամի վիրավորների

վերքերը, նույնիսկ գրաստ տրամադրում վիրավորների համար և ուղարկում խալիֆա Աբդ ալ-Մալիքի մոտ:

Շուշան իշխանուհու վեհանձն քայլը իր բովանդակությամբ համապատասխանում է դարեր անց միջազգային պայմանագրերով սահմանված մարդասիրական վարվելակերպին՝ գերության մեջ հայտնված զինված ուժերի անձնակազմի վիրավորների նկատմամբ:

> **Իրավական տեղեկանք.** «Զինված ուժերի անձնակազմը... վիրավորվելու կամ հիվանդանալու դեպքում, պետք է օգտվեն հովանավորությունից և պաշտպանությունից՝ բոլոր հանգամանքներում:
>
> Ընդհարման մեջ գտնվող այն կողմը, որի իշխանության տակ կհայտնվեն նրանք, նրանց համար կապահովի մարդասիրական վարվելակերպ և խնամք՝ առանց այնպիսի խտրականության, ինչպիսիք են՝ սեռը, ռասան, ազգությունը, կրոնը, քաղաքական համոզմունքները կամ մյուս համանման չափանիշները»:
>
> ***ԺԿ I, հոդ. 12***

Վարդանակերտի ճակատամարտում տարած հաղթանակն ամբողջական չէր լինի առանց մարտի (բուն բախման) շարունակությունը հանդիսացող հետապնդման գործողության: Սմբատ Բագրատունին իրեն դրսևորում է որպես մեր ռազմարվեստի բազմադարյան ավանդույթների արժանի շարունակող: Նա ընդհանուր առմամբ ոչ մեծ ճակատամարտը վերածում է անթերի նախապատրաստված, կազմակերպված և իրականացված հաղթահանդեսի: Այդ գործողությունների բարձրակետն էր փախուստի դիմած և տիկին Շուշանի մոտ ապավինած արաբների ազատ արձակումը Աշոտի որդի Սմբատի կողմից, ինչը մեր ռազմարվեստում և ռազմական իրավունքում մարդասիրական նորմեր գործելու վկայություն էր:

Վարդանակերտում ձեռք բերված փայլուն հաղթանակից հետո Սմբատ Բագրատունին անցնում է Տայք, այնուհետև Վանանդ, միանում Կամսարականների ուժերին և շարունակում պայքարն արաբ նվաճողների դեմ:

Եզրակացություն

Վարդանակերտի ճակատամարտը արաբների նկատմամբ տարված տպավորիչ *հաղթանակներից* մեկն է: Վարդանակերտի ճակատամարտը ռազմական խորամանկության ուսանելի օրինակ է, ունի մարտի ուշագրավ մտահղացում, որը սպարապետն ամբողջությամբ կարողացել է իրականացնել:

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՎԱՆԱՆԴՈՒՄ ՈՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ, ԳՈՒԿԱՆՔԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

703Թ.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ի պատասխան արաբների ասպատակությունների, Վարդանակերտի հաղթանակից հետո ազատագրական շարժումը տարածվում է Հայաստանի շատ նահանգներում և 703թ. գարնանն ընդգրկում գրեթե ամբողջ երկիրը:

Վանանդի ազատների հեծելագունդը միավորվում է Կամսարական իշխանի շուրջ և անսպասելի գրոհում Օքբա (Ուկբա) զորավարի ենթակայության տակ գտնվող զորամասի վրա: Դաժան և անզիջում մարտ է սկսվում: Արաբները երկար ժամանակ դիմադրում էին, սակայն հաղթանակը ժպտում է հայկական կողմին, որոնք գլխովին ջախջախում են հակառակորդին: Արաբական զորամասը գրեթե ամբողջությամբ ոչնչացվում է:

Այս մարտերի ընթացքում հայկական կողմը նոր հաջողության է հասնում. Վանանդում նրանց հաջողվում է սպանել ոստիկան Աբդուլլահին: Ոստիկանի սպանությունը ծանր հոգեբանական հարված էր Հայաստանում տեղակայված արաբական կայազորներին և էլ ավելի է ոգևորում հայերին: Մարտադաշտից փախչելով՝ Օքբան կարողանում է մի կերպ խուսափել արդար դատաստանից և անցնում Ասորիք, որտեղ խալիֆայից նոր զորք է խնդրում՝ Հայաստան վերադառնալու համար:

Ճակատամարտը

Վանանդում ծավալված իրադարձությունների հետ գրեթե միաժամանակ արաբական մեկ այլ զորամաս հարձակվում է Վասպուրականի վրա ու հասնում մինչև Ռշտունիք: Արաբների գործած բարբարոսությունների պատճառով պատմիչը նրանց զորամասն անվանում է «ավազակախումբ»:

> **Պատմական տեղեկանք.** «Այդ ժամանակ դարձյալ *ավարառու թշնամին* մի այլ հարձակում գործեց Վասպուրական նահանգի կողմում գտնվող (հայոց) զորքի դեմ. և գալով իրար հանդիպեցին Ռշտունյաց գավառի Գուկանք կոչված գյուղում: Այստեղ նրանք իրար բախվեցին»:
>
> ***Ղևոնդ, Պատմություն, գլ. Ը***

Արաբների հետ հայկական զորքի ընդհարումը տեղի է ունենում Գուկանք գյուղի մոտ (տե՛ս սխեման): Զորքի հրամանատարը Վարդանակերտի ճակատամարտից հետո հակառակորդի հետապնդումն իրականացրած Աշոտի որդի Սմբատ իշխանն էր, որը նախքան մարտը սկսելը մի քանի նախապատրաստական միջոցառումներ է իրականացնում: Իրավիճակի գնահատման ժամանակ որոշվում է գրոհն իրականացնել այնպես, որ հաջողու-



Գուկանքի ճակատամարտ 703թ.

թյան դեպքում միաժամանակ հնարավոր լինի նաև փակել արաբների նահանջի ուղիները:

Ուշագրավ է, որ այս մարտում ևս արաբները հույսը դնում են իրենց քանակական գերազանցության վրա:

> **Պատմական տեղեկանք.** «Երբ (արաբները) տեսան, որ հայերը սակավաթիվ են, սաստկապես հարձակվեցին նրանց վրա, սակայն ողորմածն Աստված այս անգամ ևս գթալով՝ անմիջապես նրանց թիկունք դարձավ, օգնության հասավ: (Հայերը) ամենքին սրի քաշեցին»:
>
> ***Ղևոնդ, Պատմություն, գլ. Ը***

Բռնություններով տեղական բնակչությանը իրենց դեմ հանած արաբների համար Գուկանքի ճակատամարտը դառնում է Վանանդում իրենց կրած պարտության կրկնությունը: Պայքարի ելած խիզախ հայորդիները Սմբատ իշխանի գլխավորությամբ կարողանում են իրականացնել մարտի *մտահղացման* բոլոր կետերը: Համարձակ գրոհով հայկական զորամասը ճեղքում է արաբների մարտակարգն ու դուրս գալիս նրանց թիկունքը: Վարպետորեն իրականացված զորաշարժից հետո արաբների նահանջի ուղիները փակված էին: Փաստացի շրջափակման մեջ հայտնված, սակայն հուսահատ դիմադրությունը շարունակող հակառակորդի ջախջախումը երկար չի տևում:

Հաղթանակը

Մարտադաշտից նահանջող արաբական զորամասի մնացորդները (280 հոգի) կարող էին շարժվել միայն մեկ ճանապարհով, որը տանում էր դեպի Գուկանքի եկեղեցի: Այլ հնարավորություն չունենալով՝ նրանք հենց այդ ուղղությամբ էլ նահանջում են և ապաստանում գյուղի եկեղեցում: *Հետապնդումների իրականացման մեծ վարպետը՝* Սմբատ իշխանը, փայլուն կերպով կարողանում է այստեղ ևս փակել արաբների նահանջի բոլոր ուղիները: Հակառակորդին պարզ էր, որ նահանջի հնարավորություն չի մնացել, և նրանք բանակցության միջոցով են փորձում փրկել իրենց կյանքը: Սակայն եկեղեցու շուրջը կենտրոնացող ապստամբների հրամանատարության հետ համաձայնության գալու փորձն ավարտվում է անհաջողությամբ:

Պատմիչն ուշագրավ է ներկայացնում արաբների ճակատագիրը վճռող ապստամբների բանավեճը:

Պատմական տեղեկանք. «Եվ որովհետև (հայերը) չկարողացան որևէ այլ միջոց գտնել, խորհեցին սրբարանը հրկիզել, սակայն Վասպուրականի իշխան Սմբատը, Աշոտ իշխանի որդին, չթողեց այդ բանն անել, թույլ չտվեց այդ ապիրատությունը գործել: Նա ասում էր. «Քավ լիցի, որ ձեռք տանք Տիրոջ փառքի բնակարանին, որը նման հաղթություն պարգևեց մեզ»: Եվ պահապաններ կարգեցին նրանց հսկելու, մինչև որ ինքը՝ սրբարանը նրանց ստիպի իրենից դուրս գալ»:

Ղևոնդ, Պատմություն, գլ. Ը

Նախկինում գործած ռազմական հանցագործությունների համար արաբներին չներելով՝ հայ ապստամբներն, ի վերջո, նրանց դուրս են բերում եկեղեցուց և բոլորին մահապատժի ենթարկում:

Պատմական տեղեկանք. «Քիչ անց Իսմայելի զորականներից մեկը, որ նրանց գլխավորն էր, հաշտություն խնդրեց իր անձի համար, որպեսզի չսպանվի: Դիմեց հայոց զորքին՝ ասելով. «Լսել ենք, որ քրիստոնյաների ազգը ողորմած է, երբ մեկին տեսնում է վշտի մեջ, գթում է և ողորմում: Արդ, ողորմեցեք մեզ և մեր անձերը մեզ պարգևեցեք, իսկ մեր ինչքը ավարի մատնեք»: Պատասխան տվեց Սմբատ զորավարը և ասաց. *«Մենք սովորել ենք Տիրոջից, թե ողորմությունը ողորմածներին է արժանի ցույց տալ, իսկ դուք անողորմ ազգ եք ու արժանի չեք ողորմածության, և ոչ էլ մենք այդ բանը կանենք»:* Երբ իսմայելացին այս խոսքը լսեց, ասաց. «Արդ, գոնե իմ անձը խնայեցեք և մի սպանեք, իսկ մնացածներին ձեր ձեռքը կհանձնեմ»: Նրանք հանձն առան չսպանել նրան, իսկ նա ներս մտավ և ասաց. «օգուտ չկա մեր այստեղ մնալուց, քանզի տեսնում եմ, որ անողորմ են մեր նկատմամբ: Արդ, դուրս ելնենք նրանց մոտ: Եթե սպանեն մեզ, կմեռնենք, քանզի մեր օրենսդիր Մահմետը մեզ դրախտն է խոստացել, իսկ եթե խնայեն՝ կապրենք»:

Այս խոսքերից քաջալերվելով՝ նրանք ամենքը դուրս ելան և անմիջապես սրի բերանն ընկան, իսկ այն մարդուն, որին խոստացել էին չսպանել, կենդանի ուղարկեցին»:

Ղևոնդ, Պատմություն, գլ. Ը

Հատկանշական է, որ ապստամբներն իրենց տված խոսքի տերն են լինում և նույնիսկ այդ պահին կարողանում են զսպել իրենց զայրույթն ու ազատ են արձակում եկեղեցում ապաստանած արաբների ստորաբաժանման հրամանատարին:

ԱՐԱԲ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ

774Թ.

760-ական թթ. Արաբական խալիֆայության հարկերն այնքան էին ծանրացել, որ Հայոց իշխան Սահակ Բագրատունին (752-770թթ.) և Տրդատ Ա կաթողիկոսը (741-764թթ.) քանիցս բողոքում են Մանսուր խալիֆային, սակայն իրադրությունը չի փոխվում: Հայաստանում ազատագրական շարժման նոր ալիք է բարձրանում: Սկսվում են նախապատրաստական գաղտնի աշխատանքներ, որոնք զինված պայքարի նախերգանքն են դառնում:

Պատմական տեղեկանք. «Քանզի, երբ Հայաստանի նախարարները տեսան իրենց վրա կախված սարսափելի վտանգը, մահը հանձն առան և ձեռնամուխ եղան մի բանի, որը չէին կարող իրագործել, վասնզի փոքրաթիվ էին: Սակայն լավ համարելով քաջությամբ մեռնել, քան աղետալի կյանք վարել, ձեռնամուխ եղան ապստամբության և մերժեցին Իսմայելացիներին հնազանդվել»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Ռազմական խորամանկությունը

Մանրակրկիտ ծրագրավորված և նախապատրաստված զինված ելույթը սկսում է Հմայակ Մամիկոնյանի որդի Արտավազդը:

Զորավարի զորամասը փոքրաթիվ էր և անբավարար սպառազինված: Գիտակցելով, որ իր ուժերը մեծամասշտաբ ապստամբական շարժում սկսելու համար անբավարար են, հայ զորավարը դիմում է վտանգավոր քայլի: Արտավազդն իր մարտիկների հետ ներկայանում է Դվինում հաստատված Հասան իբն-Քահթաբա ոստիկանին:

Հայրենի երկրի ազատության համար ցանկացած զոհողության պատրաստ ***հերոսը*** *հանդգնում է արաբների դեմ կիրառելու համար նախատեսվող սպառազինությունը խնդրել արաբ ոստիկանից:*

Հայոց հեծելազորը դարեր շարունակ աչքի էր ընկնում մարտունակությամբ և ամբողջ տարածաշրջանում այնպիսի հռչակ էր վայելում, որ Հայաստանում իրենց տիրապետությունը հաստատելուց հետո արաբները ցանկացել էին օգտագործել այն: Ավելին, այրուձին պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը հոգալու նպատակով նրանք գանձվող հարկերից դրամական հատկացում էին կատարում Հայոց իշխաններին: Ճիշտ է, դա անբավարար էր կանոնավոր զորաբանակ պահելու համար, սակայն արաբական իշխանության տակ հայտնված մյուս քրիստոնյա ժողովուրդները ոչ միայն այս կարգի աջակցություն չէին ստանում, այլև զրկված էին սեփական զորամասեր ունենալու իրավունքից:

Արաբները կասկածամտությամբ էին վերաբերվում հայ նախարարների զորամասերին, դրանք համարում հաճախ ծագող ապստամբությունների ընթացքում ամենակազմակերպված ռազմական ուժը: Այդ պատճառով նրանք վաղուց արդեն վարում էին այրուձին կրճատելու քաղաքականություն:

Արտավազդի համար ևս ակնհայտ էր, որ արաբներն առանձնապես շահագրգռված չեն լինելու հայկական զորամասը զինելու գաղափարով: Բացառված չէր, որ արաբ ոստիկանը ոչ միայն չհավատար խոստումներին, այլև ջոկատի մարտիկներին ձերբակալելու հրաման տար: Հետևաբար, պետք էր գտնել

ջոկատը զինելու համար առավելագույնս հարմար հիմնավորում, որը, մի կողմից, պետք է արաբներին արժանահավատ թվար, մյուս կողմից՝ հայկական զորամասին, թեկուզ որոշ ժամանակ, ոչնչի չպարտավորեցներ: Այս տեսանկյունից խալիֆայության թշնամիների դեմ պայքարելու պատճառաբանությունն ամենանպատակահարմարն էր:

Պատմական տեղեկանք. «Սույն դեպքերի սկիզբը կատարվեց Արտավազդի ձեռքով, որ Մամիկոնյան տնից էր: Գնալով Դվին մայրաքաղաքը, մեծ չափով կազմակերպեց իր զորքը, ստացավ զենք ու պատերազմի գործիքներ, զինվեց զրահով ու սաղավարտով, ամենայն սպառազինությամբ և իրեն մտերիմ ձևացրեց Իսմայելի զորքերին, իբր թե կամենում էր մարտնչել նրանց թշնամիների դեմ:

Բաժանվելով նրանցից՝ նա (Արտավազդը) հասավ Շիրակ գավառի Կումայրի գյուղը և սպասեց գլխավոր հարկահանին ու նրա մոտ եղած ամեն ինչը վերցնելով՝ ամբողջ տնով գնաց Վրաց աշխարհի կողմերը»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Հարձակումը

Զինելով իր մարտիկներին՝ Արտավազդը շարժվում է դեպի Կումայրի, որտեղ էլ հանդիպում է արաբ հարկահաններին և նրանց պաշտպանող զինված ստորաբաժանմանը (տե՛ս քարտեզը): Հայ զորավարը *մարտի մտահղացման մեջ* առավելագույնս հաշվի էր առնում ստեղծված իրադրությունը: Համաձայն ընդունված որոշման, գրոհը պետք է լիներ հանկարծակի և սրընթաց, որպեսզի առաջին հարվածից կաթվածահար եղած արաբները չկարողանային միասնական մարտաշար ձևավորել: Բավականին բարձր որակի սպառազինություն ունեցող զորամասի մարտիկներին մնում էր միայն ճշտորեն և ժամանակին կատարել հրամանատարի բոլոր հրահանգները:

Ինչպես և պետք էր սպասել, մարտի սկզբից ևեթ արաբները խուճապի են մատնվում, չեն հասցնում շատ թե քիչ ամբողջական մարտակարգ ձևավորել և գլխովին ջախջախվում են: Արտավազդի մարտիկներն արաբներից խլում են նրանց վերցրած հարկերն ու հեռանում հյուսիս-արևմուտք:

Արտավազդի հանդուգն արարքի լուրը հասնում է Դվին, որտեղի արաբական կայազորը հետապնդում է սկսում: Հետապնդման ուղարկված արաբական հեծելազորը բավականին երկարատև հետապնդումից հետո հասնում է հայկական զորամասին (Սամցխե գավառում՝ ժամանակակից Ախալցիխեից ոչ հեռու): Կիրճերը փակելով՝ արաբները շրջապատում են ապստամբներին՝ կտրելով ինչպես առաջխաղացման, այնպես էլ նահանջի ուղիները (տե՛ս քարտեզը):

Ճեղքումը

Մարտավարական իրավիճակն անբարենպաստ էր: Առանց այն էլ մեծաթիվ հակառակորդի ձեռքում էին գտնվում բոլոր գերիշխող բարձունքները, ինչը լեռնային տեղանքում առանցքային նշանակություն ուներ: Արտավազդ Մամիկոնյանը ոչ միայն չի հուսահատվում, այլև մեծ եռանդով սկսում է նախապատրաստել առաջիկա մարտը:

Խիզախ ու հնարամիտ զորապետը համախմբում է իր զորամասը, ճշտում բոլոր մարտիկների մարտական առաջադրանքը և հուժկու գրոհով ճեղքում հակառակորդի պաշարման օղակը: Քանի որ արաբ հարկահաններից առգրաված ամբողջ ռազմավարն իրենց հետ տանել չէին կարող, ռազմավարի մի մասը թողնվում է տեղում՝ արաբների ուշադրությունը նահանջող ստորաբաժանումներից շեղելու նպատակով:

Մինչ հակառակորդի զինվորները զբաղված էին հայերից «խլած» ռազմավարի յուրացումով՝ Արտավազդի զորամասը, ոչ մեծաթիվ զոհեր տալով, կարողանում է ճեղքել շրջապատման օղակն ու կտրվում է հետապնդումից:

Պատմական տեղեկանք. «(Արտավազդը) ստանձնեց Եգերաց իշխանությունը, ինչպես նաև Վեռիայի, այսինքն Վիրքի»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Հզորության գագաթնակետին հասած գերտերությանը մարտահրավեր նետած զորավարը տեղափոխվում է Բյուզանդիա: Այստեղ կարողանում են գնահատել Արտավազդ Մամիկոնյանի զորավարական տաղանդը, և նա բյուզանդական զորքերի հետ մասնակցում է արաբ-բյուզանդական պատերազմներին, որոնցում ևս աչքի է ընկնում:

Եզրակացություն

Արտավազդ Մամիկոնյանի համարձակ գործողություններն արաբներին ցույց էին տալիս, որ հայ ժողովուրդը պատրաստ է օտար տիրապետությունը թոթափելու համար պայքարի նոր էջ բացել: Հայ հայրենասերների հանդուգն արարքը նոր լիցք է հաղորդում մյուս գավառների այն ուժերին, որոնք պայքարում էին արաբական տիրապետության դեմ:

ԱՐԱԲ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ 774Թ.



ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԽԱՐՍԻ ՁԱԿԱՏԱՄԱՐՏԸ

774Թ.

Կումայրիում կրած պարտությանը և Արտավազդ Մամիկոնյանի զորամասին հետապնդելու ուղարկված հեծելազորի անհաջողությանն ի պատասխան՝ արաբներն ավելացնում են հարկերը: Ըստ Ղևոնդ պատմիչի՝ անձամբ Հասան իբն-Քահթաբա ոստիկանն էր հրամայել, որ բնակչությանը սարսափեցնելու նպատակով հարկահավաքությունն ուղեկցվի բռնություններով: Դա նորանոր հուզումների պատճառ էր դառնում:

Պատմական տեղեկանք. «Առավել զայրացավ կառավարիչ Հասանը և շուտափույթ մարդ ուղարկեց իր իշխանության բոլոր կողմերը՝ հրամայելով հարկը մեծ բռնությամբ հավաքել: Հույժ սաստկացավ մեր աշխարհի հեծեծանքը հարկապահանջների ձեռքից: Քանզի արծաթի հանումը Հայոց աշխարհում բոլորովին նվազել էր:

Այստեղ արդեն նախարարներից մեկի սիրտը ցասումով լցվեց: Սա Մամիկոնյան տնից Հրահատ կոմսի որդին էր, որի անունն էր Մուշեղ»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Առաջին հաջողությունները

Շարժման առաջնորդ է դառնում տաղանդավոր ռազմագետ և եռանդուն գործիչ Մուշեղ Մամիկոնյանը, որն իր համարձակ և հանդուգն հարձակումների համար ստացել է «Քաջ» պատվանունը: Նա կարճ ժամանակում իր շուրջն է հավաքում մի խումբ հայ նախարարների և ապստամբություն նախապատրաստում:

Առաջին քայլն արվում է Տարոնում: Արաբ պաշտոնյաները մտել էին Մուշեղի գավառը և արյան հատուցում էին պահանջում Արտավազդի ձեռքով սպանված արաբների համար: Մուշեղն իր տրամադրության տակ ունեցած փոքրաթիվ ջոկատով հարձակվում է արաբների վրա և «խողխողում նրանց ու սրի մատնում»: Սակայն ապստամբները սակավաթիվ էին, որի պատճառով Մուշեղը որոշում է ընտանիքի հետ միասին հեռանալ Տարոնից և հաստատվում է Արտագերս անառիկ ամրոցում:

Հերթական անգամ Արտագերսը վերածվում է ազատագրական շարժման կենտրոնակայանի:

Արտագերսից Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը համարձակ և հանդուգն գրոհներով կաթվածահար է անում Հայաստանում արաբների հարկահանության ամբողջ ծառայությունը:

Հայ նախարարի գրոհներից մեկում սպանվում է Բագրևանդ գավառ ուղարկված հարկահանը՝ Աբու Մջուրը (Ապու Մճուր), որը հայտնի էր իր դաժանություններով: Մուշեղը, որն արդեն իր շուրջն էր համախմբել երկու հարյուր վաթսուն մարտիկների, հարձակվել էր արաբ հարկահանի և նրան «ուղեկցող» ուժերի վրա ու կոտորել բոլորին:

Պատմական տեղեկանք. «Այսպիսով (Մուշեղ Մամիկոնյանը) միառժամանակ դադարեցրեց հարկի պահանջումը մեր երկրից: Երբ (գործն) այսպիսի ընթացք ունեցավ, նրա մոտ հավաքվեցին բոլոր վշտացյալները ու հոգով տառապածները»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Առաջին հաջողությունը լինելով՝ այս հաղթանակը ոգևորում է ծանր հարկերի տակ կքած ժողովրդին: Զինված պայքարին էին միանում նաև շատ անզեն մարդիկ, որոնց զինելն ապստամբության առաջնորդների համար իրապես դժվարին խնդիր էր դարձել:

Մինչդեռ վտանգավոր դարձած ապստամբությունը «խեղդելու» համար արաբներն ընդհանուր հարձակման են անցնում:

Ռազմական բարեփոխումները

Ստեղծված իրադրությունը հարկադրում է ոչ ավանդական միջոցների դիմել, և մարտական գործողությունների վարմանը զուգընթաց՝ Մուշեղ Մամիկոնյանը համարձակորեն լծվում է մեր ռազմարվեստի *բարեփոխման* գործին:

Հարցն այն է, որ դեռևս Վահանանց պատերազմի տարիներին լայն տարածում ստացած անկանոն մարտավարությունը որոշակի լրացումների կարիք ուներ: Մասնավորապես, գիշերային մարտի վարման ավելի քան երկուհազարամյա ավանդույթներ ունեցող մեր ռազմարվեստում *տակավին մշակված չէին* գիշերային մարտի վարման կարևորագույն բաղկացուցիչներից մեկը հանդիսացող մերձամարտի սկզբունքները: Իր հերթին 774թ. ստեղծված ուժերի հարաբերակցության պայմաններում Մուշեղն ուղղակի հարկադրված էր հնարավորին չափով խուսափել ցերեկային մարտից: Այս մտահոգությամբ է Մուշեղ Մամիկոնյանը սկսում պայքարի նոր փուլը:

Հետախուզական համակարգը և մարտի մտահղացումը

Ապստամբներին ճնշելու համար Կարինից դուրս եկած և դեպի Բագրևանդ շարժվող արաբական հարկահանների զորամասի դեմ գործողությունների ժամանակ նոր մարտավարական համակարգը «փորձարկելու» պատեհ հնարավորություն է ընձեռվում:

Պայքարի սկզբից ևեթ պատշաճ հետախուզական աշխատանք էր կազմակերպվել: Բոլոր կողմերից արաբների մասին տեղեկություններ էին ստացվում: Կարինից դուրս եկած զորամասի առաջխաղացումը ևս անմիջապես հատնի է դառնում Մուշեղին: Հաջողվում է պարզել նաև, որ հայերի ստեղծած ապատեղեկատվության մթնոլորտի պատճառով արաբները ռազմերթն իրականացնում են՝ հաշվի չառնելով անվտանգության տարրական պահանջները: Մուշեղի

ձեռնարկած *հակահետախուզական* միջոցառումների արդյունքում արաբական զորամասը նույնիսկ մոտավոր պատկերացում չուներ ապստամբների թվաքանակի, առավել ևս՝ սպառազինության մասին:

Միևնույն ժամանակ, հայկական զորամասերը տեղեկանում են իրենց դեմ հանդես գալու համար Դվինում նախապատրաստվող մեծաթիվ հեծելազորի մասին:

Հետախուզական ճկուն համակարգը հայկական կողմին հնարավորություն էր տալիս միշտ ***մեկ քայլ առաջ լինել*** *մեծաթիվ հակառակորդից և ձեռքում պահել նախաձեռնությունը:*

Նախապատրաստական բոլոր միջոցառումներն իրականացնելուց հետո հայկական ջոկատն *անմիջական շփման* մեջ է մտնում հակառակորդի հետ: Արաբների «ամրացված ճամբարին» հասնելով՝ հայերին հայտնի է դառնում, որ հակառակորդի հրամանատարները մի քանի լուրջ մարտավարական սխալներ են գործել: Մասնավորապես, նրանք զորամասը տեղաբաշխել էին Խարս գյուղի այգիներում:

Տեղանքը հակառակորդը սխալ էր ընտրել: Հարցն այն է, որ եթե արաբներին անգամ հաջողվեր զինվել և հեծնել իրենցից բավականին հեռու գտնվող ձիերին, ապա, միևնույն է, բերքատու (հիմնականում ոչ բարձր) ծառերի ճյուղերը նրանց թույլ չէին տալու ազատորեն գործել, ու հեծելազորը չէր ունենա մարտավարական այն առավելությունները, որն ունենում է բաց դաշտում ճակատամարտելիս: Բացի այդ, գիշերային *պահակային ծառայություն* չունեցող զորամասի համար այգիների քարե պարիսպ հիշեցնող ցանկապատերը չէին կատարելու ամրությունների այն դերը, ինչի հույսն ունեին արաբները:

Այժմ Մուշեղին մտահոգում էր ոչ այնքան հաղթանակը, որում նա վստահ էր, որքան սպասվող մարտում իր ջոկատի կորուստները հնարավորինս նվազեցնելը: Հաշվի են առնվում բոլոր մանրուքները: Որոշվում է.

- *գրոհը սկսել գիշերը,* որպեսզի հարձակումը հակառակորդի համար անսպասելի լինի,
- հարձակումն իրականացնել *ինքնուրույն գործող ստորաբաժանումներով,* որպեսզի մթության պայմաններում հակառակորդն առավելագույնս ապակողմնորոշվի,
- գրոհելիս ձգտել, որ ապակողմնորոշված հակառակորդը *խուճապի մատնվի* և զրկվի կազմակերպված պաշտպանություն կազմակերպելու հնարավորությունից,
- հակառակորդի հեծյալ մարտիկներին *հոգեբանորեն ճնշելու նպատակով* առաջին հարվածն այնպես հասցնել, որ նրանք հարկադրված լինեն մարտնչելու իրենց համար անսովոր պայմաններում՝ հետևակի կազմում:

Ճակատամարտը

Թեև հայկական զորախումբը փոքրաթիվ չէր՝ 260 մարտիկ (200 հոգանոց արաբական զորամասի դեմ), բայց անհամեմատ ավելի վատ էր սպառազինված, իսկ հիմնական մասը չուներ *պաշտպանական զենքեր:* Մուշեղը գիտակցում էր, որ հաղթանակի հասնելու ամենակարճ և համեմատաբար անկորուստ տարբերակը շտապ գործնական քայլեր իրականացնելն է: Նա սրընթաց ռազմերթով ջոկատը դուրս է բերում արաբական զորամասին ընդառաջ և արաբների հետախուզության համար անտեսանելի մնալով՝ որոշակի հեռավորությունից շարունակում հետևել նրանց շարժմանը:

Այգիների ցանկապատերի վրա Մուշեղ Մամիկոնյանի ուշադրությունը առանձնակի է սևեռվում: Հարցն այն է, որ քարերը շարված էին առանց շաղախի: Հնարամիտ զորավարը կռահում է, որ դրանք հնարավոր կլինի հեշտությամբ քանդել, իսկ քանի որ արաբները դրանց մոտ՝ որոշակի տեղերում էին կենտրոնացրել ձիերին, ապա որոշվում է, որ նպատակահարմար կլինի այդ տեղերից սկսել գրոհը (տե՛ս սխեման):

Հարձակումը սկսվում է՝ նախօրոք առանձնացված մարտիկների ուժերով այգիների քարե ցանկապատերը քանդելով: Քարերը դղրդյունով թափվում են և դիպչելով արաբների ձիերին՝ խրտնեցնում նրանց: Ձիերը ոտնատակ են անում աղմուկից արթնացած, սակայն մթության մեջ կողմնորոշվել չկարողա-



Խարսի ճակատամարտը 774թ.

ցող արաբ զինվորներին: Նրանց մի մասը զոհվում է ձիերի սմբակների տակ՝ դեռևս նախքան մարտի սկսվելը: Բացված անցումներով մի քանի կողմերից ներս խուժող ապստամբներին ընդամենը մնում էր հաղթական ավարտին հասցնել արաբական զորագնդի ջախջախումը:

Այսպիսով, Խարս գյուղի այգիներում արաբական զորամասի ջախջախումը Մուշեղ Մամիկոնյանի մարտավարական տաղանդի վկայությունն է: Այն ռազմական խորամանկության եզակի օրինակ է և *հատուկ պայմաններում* մարտի վարման ուշագրավ հնարքներ է պարունակում: Պատահական չէ, որ մարտադաշտից ծողոպրած հակառակորդի սակավաթիվ զինվորները ոչինչ չեն կարողանում իրենց հետ տանել: Հարուստ ռազմավարով իր շուրջը հավաքված ապստամբներին զինելով՝ Մուշեղ զորավարը հաղթական վերադառնում է Արտագերս:

ԲԱԳԱՎԱՆԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

774Թ.

Ապստամբության արձագանքները ժողովրդի մեջ, Մուշեղ Մամիկոնյանի համախոհների և կողմնակիցների թվական աճն ու արաբների պարտությունները մեծ իրարանցում էին առաջացրել Դվինում: Արաբները հրաժարվում էին հավատալ, որ հեծյալ զորամասն ընդամենը մի քանի րոպեում ոչնչացրած ապստամբները քանակով գրեթե հավասար էին նրանց, իսկ սպառազինությամբ զգալիորեն զիջում էին:

Մարտավարությունը

Արաբներն այնքան էին ահաբեկված, որ որոշում են էլ ավելի մեծացնել ապստամբությունը ճնշելու համար նախատեսվող զորամասի թվաքանակը, բացի այդ՝ Հասան իբն-Քահթաբա ոստիկանի հրամանով նախապատրաստական աշխատանքներն արագացվում են: Արտագերսի դեմ արշավանքի է հանվում չորս հազարանոց մի հեծյալ զորամաս, որի հրամանատարն էր Աբու Նաջիբ (Ապունճիպ) զորավարը: Ըստ արաբների մտահղացման՝ հեծելազորը մարտավարական առավելություն պետք է ունենար հիմնականում հետևակայիններից բաղկացած և մասամբ անփորձ ապստամբների նկատմամբ:

> **Պատմական տեղեկանք.** «Իսմայելի զորավար Մահմետին ամեն կողմից տագնապալի [բողոքներ] ստացավ և Դվին քաղաքի զորքը հավաքելով՝ տվեց մի զորագլխի ձեռքը, որի անունն էր Ապունճիպ, սպանվածների արյան վրեժը լուծելու: Զորավարը վերցրեց մոտավորապես 4000 ընտիր հեծյալներ, ուշադիր անցավ արքունի պողոտայով և հասավ Բագրևանդ քաղաքի Բագավան գյուղը»:
>
> ***Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ***

Դեպի արևմուտք շարժվելով՝ արաբները կանգ են առնում Բագրևանդ գավառի Բագավան գյուղում: Պատմիչը հատուկ նշում է, որ Խարսի մոտ կրած ծանր պարտությունից դասեր քաղելով՝ արաբական զորամասը ռազմերթն իրականացրել է «արքունի պողոտայով»՝ «ուշադիր» զննելով շրջակայքը: Հատկանշական է, որ բավականին բարեկարգված արքունական ճանապարհը՝ պողոտան, դարեր շարունակ ռազմավարական նշանակություն է ունեցել: Պողոտայի երկայնքով երթին խոչընդոտող մեծ բնական արգելքներ չկային, ուստի տեղանքի պատճառով զգուշավորության պատճառներ չկային:

Հակառակորդը մեծաթիվ էր, ուներ իր ժամանակի համար լավագույն սպառազինություն և առաջխաղացման ընթացքում իրականացնում էր անվտանգության աննախադեպ միջոցառումներ: Նրա դեմ պետք էր գործել նույնպիսի զգուշավորությամբ: Սա նոր՝ դժվարին, խնդիրների առջև է կանգնեցնում Մուշեղ Մամիկոնյանին, որը, սակայն, շարունակում է գործել հանկարծակի հարվածների մարտավարությամբ:

Ամեն դեպքում չէր կարելի թույլ տալ, որ արաբները նախահարձակ լինեն: Պետք էր մարտ պարտադրել նրանց համար ***անսպասելի*** *վայրում և* ***անսպասելի*** *ժամանակ:*

Հայկական զորախումբը շարժվում և հասնում է արաբներին այն ժամանակ, երբ երկարատև ռազմերթից հետո հոգնած հակառակորդի զինվորները սկսել էին տեղաբաշխվել տեղանքում: Ստեղծվում է *բարդ իրավիճակ,* որում կողմնորոշվելու համար մի կողմից պետք էր մարտական փորձ ունենալ, մյուս կողմից՝ զորավարական տաղանդ:

Չէր կարելի շտապել, քանի որ հարձակումը վաղաժամ սկսելու դեպքում հակառակորդի զինվորները հանած չէին լինի իրենց զրահները: Զենքը ձեռքին զինվորը, որքան էլ հոգնած լիներ, սկզբից ևեթ պատրաստ էր լինելու մարտին:

Չէր կարելի ուշացնել հարվածը, քանի որ հակառակորդի զինվորները կհասցնեին հանգստանալ և թարմ ուժերով կմասնակցեին գրոհի անդրադարձմանը: Քանակապես հայերին գերազանցող արաբներն այդ դեպքում կկարողանային ուժերի մի մասով կաշկանդող գործողություններ վարելով՝ ժամանակ շահել հիմնական ուժերի հանդերձավորման և մարտակարգ ձևավորելու համար:

Այս ամենը նկատի ունենալով՝ Մուշեղը որոշում է հարձակումը սկսել հակառակորդի տեղաբաշխումն ավարտելուց անմիջապես հետո: Մարտավարական իրավիճակը բարենպաստ էր, այդպիսի հնարավորություն մեր զորախմբին կարող էր չընձեռվել, սակայն հիմնական ուժերը դեռ ճանապարհին էին:

Ճակատամարտը

Որպեսզի հարձակման եզակի հարմար պահը ձեռքից բաց չթողնի և գրոհը հնարավորինս անսպասելի լինի, Մուշեղն այլևս չի սպասում իր մնացած ուժերին: Մարտադաշտի եզրին գաղտնի մոտեցած և իրենց ղեկավարի հետ հակառակորդին հետևող ընդամենը 200 մարտիկներից բաղկացած առաջապահ ջոկատով Մուշեղը գրոհում է արաբական զորամասերի վրա (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ԱՌԱՋԱՊԱՀ ԶՈՐԱՄԱՍԻ ԳՐՈՀԸ

Պատմական տեղեկանք. «Այստեղ նրանց վրա հասավ Մուշեղը ու նրա հետ 200 մարդ: Մարտնչեցին իրար դեմ, Տիրոջից արագ *օգնություն հասավ* Մուշեղի գնդին, և բազում հարվածներ հասցնելով՝ սատակեցրին Իսմայելի զորքերին»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Արդեն իսկ հանգստի տրամադրված հակառակորդի զինվորները, հանկարծակիի գալով, մի պահ ապակողմնորոշվում են: Մարտադաշտ շտապող զորախումբը ուշանում է, և արաբները կարողանում են կասեցնել հանկարծահաս գրոհը: Ինչպես և պետք էր սպասել, մարտի ընթացքում արաբները, օգտագործելով իրենց քանակական ճնշող գերազանցությունը, ուժերի մի մասով գրոհն անդրադարձնելուն զուգընթաց փորձում են մյուս ստորաբաժանումները շարել մարտակարգով: Սակայն մինչ այդ մարտադաշտ են հասնում հայկական հիմնական ուժերը, որոնց գրոհն անդրադարձնել արաբներին չի հաջողվում:

Կենտրոնի ստորաբաժանման գրոհը հաջող էր. արաբները չեն կարողանում համախմբվել հրամանատարական կետի շուրջը (տե՛ս սխեմա 2): Շարունակվող մարտի ընթացքում մարտակարգ ձևավորել չկարողանալով՝ նրանք դիմում են փախուստի: Հավանաբար, հրամանատարական վրանի մոտ տեղի ունեցած բախման ժամանակ էլ սպանվում է Աբու Նաջիբը, թեև հնարավոր է, որ դա տեղի ունեցած լինի արաբների նահանջի (հետապնդման) ընթացքում:

Սխեմա 2.

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Մտահղացումը

Եթե արաբներին հաջողվեր մարտի ընթացքում մարտակարգ ձևավորել և միասնական ճակատով դուրս գալ հայերի դեմ, ճակատամարտը մեզ համար անխուսափելիորեն պարտությամբ էր ավարտվելու: Սակայն պարզվում է, որ Մուշեղ Մամիկոնյանը մարտավարական իրավիճակի այդպիսի զարգացումը ևս կանխատեսել էր: Նա ուժերն այնպես էր շարել, որ գլխավոր հարվածը հասցնող ուժերը գրոհում էին Աբու Նաջիբի վրանի ուղղությամբ:

Զորավարի ընդունած որոշման տրամաբանությունը ճիշտ ըմբռնելու համար, թերևս, որոշ բացատրություններ տալու կարիք կա:

Հարցն այն է, որ դարեր շարունակ բոլոր երկրների բանակներում ռազմերթերի ժամանակ հրամանատարի վրանն էր կատարում յուրօրինակ շտաբի դերը: Որպեսզի միասնական մարտակարգ կազմել չկարողացող հակառակորդն ի վիճակի չլինի նաև համախմբվել հրամանատարական վրանի մոտ, առաջին հարվածի թիրախ էր դարձվել արաբների հրամանատարական վրանը:

Հետապնդումը

Հակառակորդի մնացորդներին հայկական զորախումբը հալածում է մինչև Արուճ ավանը, որտեղ վրա հասնելով՝ նոր ճակատամարտ են տալիս արաբներին և այս անգամ ևս հարուստ ավարով վերադառնում Արտագերս (տե՛ս սխեմա 2):

> **Պատմական տեղեկանք.** «Շատերից միայն քչերը որպես փախստական հասան Դվին քաղաքը: Ապա նրանց ընդառաջ ելան համազգի տղամարդիկ ու կանայք ու ճչոցով, հողը գլուխներին թափելով՝ իրենց ճակատին էին խփում, օձիքը պատառոտում, և նրանց ողբն ու կոծը լցրել էին լայնալիստ քաղաքի ամեն փողոցները: Մեծ ահ ընկավ սառակինոսների (արաբների) գնդի վրա, և համարձակություն չունեին քաղաքից դուրս գալու, այլ ապավինել էին քաղաքի ամրություններին»:
>
> ***Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ***

Արաբական զորամասի մնացորդները, Դվին հասնելով, խուճապ են առաջացնում իրենց դիմավորելու դուրս եկածների շրջանում: Վերջիններս այնպես էին ահաբեկված, որ այլ ելք չունենալով, փակվում են Դվինում՝ ապավինելով նրա հզոր պարիսպներին:

Մուշեղի հաղթանակները ոտքի են հանում ամբողջ Հայաստանը: Ազատագրական շարժմանն է միանում նաև սպարապետ Սմբատ Բագրատունին: Նախարարաց ժողով է հրավիրվում՝ ապստամբության հարցը քննելու համար:

Պատմական տեղեկանք. «Իսկ Հայաստանի ամենայն նախարարները ի մի վայր հավաքվելով՝ իրար երդում տվին և ուխտի դաշինք դրին՝ միասին ապրելու և մեռնելու: Այսպես բոլորը միախուռն հավաքված՝ *5000 մարդ դարձան...*»:

Ղևոնդ, Հայոց պատմություն, գլ. ԼԴ

Նախարարաց ժողովը որոշում է ապստամբություն բարձրացնել Աբբասյանների դեմ՝ ուխտ դնելով կռվել ու մեռնել միասին: Օտար նվաճողների դեմ միասնական ճակատ ստեղծելու գործում վճռական նշանակություն էին ունեցել Մուշեղ Մամիկոնյանի հաղթանակները, հատկապես վերջինը:

Ապստամբության գաղափարն այնքան է ոգևորում մարդկանց, որ լուրեր են տարածվում, թե խալիֆայության վախճանը հասել է:

Բագավանի ճակատամարտը, նրան հաջորդած *հետապնդման գործողությունը* և, վերջապես, *Արուճի մոտ հակառակորդի մնացորդների ջախջախումը* վկայում են մեր ռազմարվեստի մեծագույն բարեփոխիչներից մեկի՝ Մուշեղ Մամիկոնյանի զորավարական անվիճելի տաղանդի և օտար նվաճողներին հայրենի հողից քշելու վճռականությամբ պայքարի ելած նրա մարտիկների՝ դժվարություններին դիմակայելու պատրաստակամության մասին:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ 849-855ԹԹ.

Աբբասյանների խալիֆայությունը սկսել էր քայքայվել: Միայն Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի օրոք (786-809թթ.) Արմինիայում մեկ ու կես տասնյակից ավելի կառավարիչ է փոխվել: Արաբ պատմիչ Բալաձարիի խոսքերով. *«Դրանցից հետո Արմինիան սկսեցին կառավարել այնպիսի անձինք, որոնք **զիջողաբար էին վերաբերվում** նրա բնակիչներին և բավարարվում էին ամենաանշան (չափի) հարկերով»:*

Այսպես շարունակվում է մինչև 840-ական թթ. վերջերը, երբ քաղաքական իրադրությունը փոխվում է: Ջաֆար ալ-Մութավաքիլ խալիֆան (847-861թթ.) իր գահակալության առաջին տարիներին, լարելով բոլոր ուժերը, փորձում է հպատակ երկրներում վերականգնել թուլացած իշխանության երբեմնի հզորությունը:

Հայաստանը հպատակեցնելու, երկրի առավել աչքի ընկնող ու ակտիվ գործիչներին վերացնելու և կրկնապատիկ ավելացված հարկերը հավաքելու հանձնարարականով 849թ. մեծաթիվ զորքով Հայաստան է ուղարկվում Աբուսեթ զորապետը: Նրա ուշադրության կենտրոնում պետք է լինեին հատկապես Հայաստանի իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին և Վասպուրականի գահերեց իշխան Աշոտ Արծրունին, որոնք, սպարապետ Սմբատ Բագրատունու հետ միասին, այդ ժամանակ Հայաստանի ամենաազդեցիկ և հեղինակավոր ռազմական ու քաղաքական գործիչներն էին:

Արյունահեղությունից և ավերածություններից խուսափելու համար իշխանաց իշխանը հայ մեծամեծերից կազմված պատգամավորություն է ուղարկում արաբ զորավարին ընդառաջ: Բանակցությունները տեղի են ունենում սահմանագլխին: Հայկական կողմը խոստանում է վճարել պահանջվող հարկերը՝ պայմանով, որ արաբներն անմիջապես հեռանան Հայաստանի սահմանից:

Հայ նախարարների համախմբվածությունից վախենալով՝ Աբուսեթը վերցնում է հարկերը և վերադառնում Բաղդադ, սակայն նախքան վերադառնալը՝ արաբ հարկահանը խորամանկորեն Հայաստանում է թողնում զորքի հիմնական մասը, որը նա հանձնել էր հարկերի վերակացու Ալա-Ծովափիին (Ալա-Սավաֆի): Աղձնիքը և Արզնը զավթած Մուսա իբն-Զուրարիին (որը գլխավորելու էր հարկերի վերակացությունը) և առաջինին հանձնարարվում է ասպատակել Վասպուրականը, իսկ երկրորդին՝ հարկեր հավաքելու համար ուղևորվել Տարոն:

ԱՐՔՈՒՔԻ ՔԱԿԱՏԱՄԱՐՏԸ
850Թ.

Վասպուրական ներխուժելով՝ Ալա-Ծովափիի զորախմբերը սկսում են ասպատակել Աղբակ և Անձևացյաց գավառները, բայց նրանց հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր Արծրունիների ոստան Հադամակերտի դեմ: Հարկահանությունն ավելի շուտ նման էր զանգվածային կողոպուտի և բնակչության ահաբեկման գործողության:

Մարտահրավերը

Բնականաբար, անօրինությունները չէին կարող չառաջացնել հայերի դժգոհությունը: Արաբների վայրագությունների մասին տեղեկանալով՝ Աշոտ Արծրունին նամակով դիմում է արաբ զորավարին, որպեսզի նա վերջ տա իր չարագործություններին ու սպասի, մինչև ինքը հավաքի պահանջված հարկերն ու հանձնի նրան: Սակայն արաբ զորավարը չի բարեհաճում պատասխանել գահերեց իշխանի նամակին, և շարունակում է ասպատակել երկրամասը:

> **Պատմական տեղեկանք.** «Նա (Ալա-Ծովափին) արհամարհեց իր մոտ առաքվածներին, խելքը չկտրեց ըստ արժանվույն պատասխանել և շարունակեց նույն ձևով շրջել Վասպուրական աշխարհի բոլոր կողմերը: Ապա հասավ Արճուճ գյուղը, մնաց այնտեղ և դիտակներ[1] թողեց բլուրների գագաթներին»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Ալա-Ծովափիի ավազակախմբերի նորանոր ասպատակությունները բացահայտ մարտահրավեր էին: Հայ իշխանը չի հաշտվում արաբների հանդուգն պահվածքին և տեսնելով, որ արաբների հետ հնարավոր չէ «լեզու գտնել», նրանց զսպելու համար համարձակորեն զենքի է դիմում:

---

[1] Դիտակներ - դիտորդներ:

Մարտավարությունը

Նախկին ապստամբությունների ժամանակ արաբական զորամասերի պարտությունների փորձը արաբ զորավարին հարկադրում է տեղաշարժերի ընթացքում զգուշավոր լինել: Նրանց հայտնի էր, որ մեծաթիվ արաբական զորքերի դեմ պայքարում հայոց ռազմարվեստն էական առաջընթաց է ապրել:

Հայ զորավարները կիրառում էին միջնադարի անկանոն ռազմարվեստի համակարգում կիրառվող ***բոլոր*** *հնարքները:*

Դրանցում առանցքային էին հակառակորդի համար անսպասելի և հանկարծակի գործողությունները:

Հայկական ուժերի անակնկալներից խուսափելու համար արաբ զորավարը դիտակետեր էր տեղադրել շրջակա բլուրների վրա: Այս հնարքով Աշոտ Արծրունին զրկում էր հակառակորդին անսպասելի մոտենալու և գրոհելու հնարավորությունից: Իր զորամասի կորուստները նվազագույնի հասցնելու և հակառակորդի նկատմամբ վճռական հաղթանակ տանելու համար հայ իշխանը պետք է նաև այլ միջոցների դիմեր:

Մտահղացումը

Աշոտ իշխանն անչափ հնարամիտ լուծում է գտնում: Նա իր և իրեն միացած մի խումբ հայ նախարարների փոքրաթիվ զորամասերը բաժանում է երեք մասի, որոնք շարժման, մարտադաշտին մոտենալու և հակառակորդի վրա գրոհելու համար ինքնուրույն երթուղիներ են ստանում:

Հատկանշական է, որ ռազմարվեստի հարուստ ավանդույթները շարունակող զորավարը հաջողությամբ կիրառում է դեռևս Հայոց ծորի ճակատամարտի նկարագրությունից հայտնի՝ *մարտից առաջ ընդհանուր հրամանատարի կողմից զորաթևերի հրամանատարների տեղակալների* նշանակումը:

> **Պատմական տեղեկանք.** «(Աշոտ Արծրունին) յուրաքանչյուր տոհմից վերցրեց ազատազորքի բազմությունը և զինավառված, այրուձիի ընտիր հեծյալներով հարձակվեց նրա (արաբ զորավարի) վրա:
>
> *Դետքն*[1] այլազգիների զորքին իմաց տվեց, նրանք բորբոքեցին պատերազմ հայերի դեմ, և ընդհարվեցին միմյանց: (Աշոտը) զորքը բաժանեց երեք մասի: Առաջին զորագունդը տվեց Գուրգենի և նրա օգնական Վահան Հավնունու ձեռքը: Երկրորդ զորագունդը հանձնեց Գուրգեն Ապուպելճի ձեռքը: Սրան օգնական էր Վահան Արծրունին: Իսկ երրորդ գունդը իշխանը վերցրեց իր ձեռքը: Ինքը նաև պատերազմ հարդարողն էր»:
>
> ***Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

---

[1] Դետք - դիտակետում գտնվող դիտորդների խումբ:

Աշոտ Արծրունին, բացի ընդհանուր հրամանատարությունից, իր վրա էր վերցրել նաև զորասյուներից մեկի հրամանատարությունը:

Ճակատամարտը

Հավատարիմ մնալով անկանոն ռազմարվեստի պահանջներին՝ Աշոտ իշխանը հարձակումը սկսում է այգաբացին: Հայ զորավարն այս քայլով առաջին հերթին ի՛ր մարտիկներին է ձգտում ցույց տալ, որ նույնիսկ գիշերային պահակություն սահմանելով՝ արաբական զորքի հրամանատարն ամբողջությամբ անխոցելի չի դարձրել իր զորամասերը:

Նկատի ունենալով, որ իր զորամասերի առաջխաղացումը կարող է նկատվել հակառակորդի ամրացված ճամբարի շուրջը կարգված պահակակետերի կողմից, և, ամեն դեպքում, հնարավոր չի լինի լիակատար հանկարծակիության հասնել, Աշոտը զինվորներին հրամայում է հարձակման սկզբից հակառակորդին ընդառաջ վազել մեծ արագությամբ:

*Արծրունյաց զորասյուները **երեք կողմից** մխրճվում են արաբական զորքի դասավորության մեջ (տե՛ս սխեման):*

Արաբական զորքի շուրջը տեղակայված դիտակետերը նկատում են հայկական զորամասերի առաջխաղացումը և այդ մասին տեղեկացնում հրամանատարությանը, սակայն սրընթաց հարձակումը կազմակերպված կերպով անդրադարձնել չի հաջողվում: Թեև նախազգուշական միջոցառումների արդյունքում Ալա-Ցովափիի համար հարձակումը հանկարծակի չէր, սակայն սրընթաց առաջխաղացման շնորհիվ Վասպուրականի պաշտպանները հասնում են իրենց նպատակին: Թեև արաբ զինվորների մեծ մասը հասցրել էր զինվել և պատրաստ էր դիմակայելու գրոհի, սակայն քանի որ հրամանատարները չէին հասցրել միասնական մարտակարգ ձևավորել, նրանց պաշտպանությունը չէր կազմակերպվում: Բացի այդ, ինքնուրույն գործող զորասյուներով գրոհի պայմաններում արաբական զորամասերը հարկադրված էին գործել հայկական կողմի առաջադրած «սցենարով»:



Արծունի ճակատամարտը 850թ.

Հաղթանակը

Պատմական տեղեկանք. «Ապա քաջաբար հարձակվեցին, արիագոչ ձայներով դիմեցին թշնամիների վրա: (Մարտն) սկսվեց այգաբացին և ընդամենը մեկ ժամում (Աշոտը) հաղթանակ տարավ և փախուստի մատնեց Ալայի զորքի բազմությանը: Այստեղ, իրարանցումի մեջ սպանվեց նաև Ալայի եղբայրը: Անհնարին չափով արյուն հեղվեց... Իսկ ինքը՝ Ալան փրկվեց և սակավաթիվ անձանց հետ ճողոպրեց Բերկրիի կողմերը: Հայոց զորքից սպանեցին քչերին՝ մի քանիսին աննշաններից և վիրավորեցին Գուրգեն իշխանին»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ

Սրընթաց գրոհով Աշոտ Արծրունին հակառակորդին դժվարին իրադրության մեջ է դնում: Մարտական իրավիճակի արագ փոփոխության պայմաններում նրանք չեն կարողանում *համարժեք քայլեր ձեռնարկել* հայկական կողմից գործողություններին դիմագրավելու համար:

Միևնույն ժամանակ, երեք կողմից սկսված գրոհը արաբներին հնարավորություն չի տալիս ճիշտ կողմնորոշվել՝ հայկական ուժերի *գլխավոր հարվածը* որոշելու համար: Այնքան մեծ էր հակառակորդին ջախջախելու գործում աչքի ընկնելու ձգտումը, որ Աշոտի գլխավորած կենտրոնական զորասյան թևերում գործող երկու զորաթևերի գրոհը բնավ նման չէր աջակցող հարվածների: Ընդ որում, պատմիչը ճակատամարտում աչքի ընկածների մեջ նշում է նույնիսկ ոչ թե Աշոտ Արծրունուն, որն այս ճակատամարտով ապացուցել է լավագույն հայ զորավարներից մեկը կոչվելու իրավունքը, այլ նրա եղբորը՝ Գուրգենին և Վահան Հավնունուն: Հատկանշական է, որ ճակատամարտի ելքը վճռվել է զորաթևերում:

> **Պատմական տեղեկանք.** «Քաջությամբ էին կռվում (Աշոտ) իշխանի եղբայր Գուրգենը և Վահան Հավնունին, որոնք վաստակեցին *հաղթողի անուն:* Նրանք սրի քաշեցին թշնամի կողմին, ամբողջ հովիտը լցրեցին կոտորվածների դիակներով»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Կենտրոնի զորասյան հրամանատարությունն իր վրա վերցնելով՝ Արծրունի գահերեց իշխանը ձգտում էր այս տեղամասի վրա կենտրոնացնել հակառակորդի ուշադրությունը և ուժեղ զորաթևերին հնարավորություն տալ աքցանի մեջ առնել արաբների զորաթևերը: Այսպիսով, հատող հարվածներով հակառակորդի մարտակարգը ոչ միայն մասնատվելու էր, այլև նրա հիմնական ուժերի համար շրջանցման իրական վտանգ էր ստեղծվելու:

Թերևս, դա է պատճառը, որ ճակատամարտը շատ արագ է ավարտվում: Համոզվելով, որ հնարավոր չի լինելու բեկում մտցնել ճակատամարտում, Ալան նահանջի հրաման է տալիս: Արաբական զորամասերի նահանջը խուճապահար փախուստի է վերածվում, որի ընթացքում խոցելի դարձած հակառակորդին հարվածներ հասցնելով՝ Աշոտ իշխանի քաջերը կարողանում են վերջնականապես ջախջախել նրան:

Այսպիսով, Արճուճի ճակատամարտը մեկ անգամ ևս վկայում է մեր ռազմարվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

ՄՈՒՇԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
851Թ.

ԱՌԱՆՁԻՆ ՄՈՏԵՆԱԼ, ԲԱՅՑ ՄԻԱՍԻՆ՝ ԿՈՎԵԼ

Ալա-Ցովափիի դեմ տարած հաղթանակը դեռևս չէր լուծել հիմնական խնդիրը՝ արաբական հրոսակախմբերից Հայաստանի ազատագրումը: Տակավին անպատիժ Տարոնով «շրջում» էր Մուսա իբն-Զուրարին, որի ենթակայության տակ էին արաբական հիմնական ուժերը:

Ալայի զորքի ծանր պարտությունը Մուսա իբն-Զուրարիին հարկադրում էր էլ ավելի զգուշավոր լինել: Արաբ զորապետը գտնում էր, որ միայն դիտակետեր նշանակելն անբավարար է սրընթաց գրոհող հայկական այրուձիու հարձակումներին դիմակայելու համար: Միաժամանակ մի քանի ուղղություններից սպասվող գրոհների հավանականությունը նրան ստիպում էր զորքի մեծ մասն անընդհատ մարտական պատրաստ վիճակում պահել: Պահակային ծառայությանն էին ներգրավվել ամբողջ զորամասեր, որոնք ամեն պահ սպասում էին հարձակման:

Հակառակորդի մտահղացումը

Արաբ զորավարը պատրաստվում է հայկական հարձակումներին դիմակայելուն: Քանի որ փորձը ցույց էր տալիս, որ հայկական զորամասերը կարող են գործել ամենաանսպասելի ուղղություններից, ապա նա հարկադրված փաստացի շրջանաձև պաշտպանություն է կազմակերպում:

> **Պատմական տեղեկանք.** «Նույն այդ ժամանակ մեծ պատերազմ էր Բագարատի և Մուսեի միջև: Մուսեն զորք գումարեց՝ արքունի հարկերը հավաքելու պատրվակով և մտավ Տարոն երկիրը, որպեսզի պատերազմի Բագարատի դեմ: Հավաքելով իր զորքի ամբողջ բազմությունը՝ եկավ բանակեց Հայոց իշխանի ձմեռոցի մոտ: Ապա զորակարգ ընդունեց, ճակատ հարդարեց և ներսից փակեց ամբողջ դաշտաձև հովիտը: Զինավառվեցին և ամեն տեսակ պատրաստություններ տեսան հայոց զորքի դեմ»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Արաբական զորամասերի աննախադեպ զգուշավոր պահվածքը երկակի ազդեցություն է ունենում: Թվում է, թե այս ձևով բացառվում էր հայկական ուժերի անսպասելի գործողությունների հավանականությունը, սակայն կային նաև մի շարք թերություններ.

- ավելորդ լարվածության մեջ պահվող արաբական զորամասերի մեծ մասի զինվորներն առաջխաղացումից ընդամենը մի քանի օր անց այնպես էին հոգնել, որ ուժերը վերականգնելու համար անհրաժեշտ հանգստի կարիք էին զգում,
- Մուսան հակված էր Արճուճի ճակատամարտում կրած պարտության իրական պատճառ համարել Ալայի գոռոզամտությունը և կատարվածն ընկալում էր որպես պատահականություն,
- Արճուճում տարած հաղթանակի կերտման գործում Աշոտ Արծրունու զորավարական տաղանդի և հայ մարտիկների հերոսական ոգու դերի թերագնահատումը մարտավարական կոպիտ սխալ էր,
- թերագնահատվում էր հայոց ռազմարվեստի հարուստ զինանոցը:

Ճակատամարտի նախապատրաստումը

Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին, նախքան ռազմական գործողությունները սկսելը, ուժերի համախմբման նպատակով անհրաժեշտ քայլերի է դիմում: Գիտակցելով, որ միայն իր տրամադրության տակ Տարոնում

գտնվող ուժերն անբավարար են, նա օգնության է կանչում քեռորդուն՝ Աշոտ Արծրունուն: Վերջինս անմիջապես համաձայնություն է տալիս միանալու ընդհանուր ուժերին և ոչ պակաս եռանդով սկսում համախմբել Վասպուրականի նախարարական ուժերը:

> **Պատմական տեղեկանք.** «Երբ Հայոց իշխանը տեսավ, որ արաբների զորքը գալիս է պատրաստությամբ, իսկ իրենք սակավաթիվ են, փութապես աղերսագիր ուղարկեց քաջարի Աշոտ իշխանին, որպեսզի, եթե հնար լինի, անձամբ զորքով ու զենքով արագ օգնության հասնի իրեն...»:
> ***Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Ազատագրական պայքարի միասնական ճակատի ձևավորումը անմիջապես տալիս է իր դրական արդյունքները:

Հայոց իշխանաց իշխանի կոչին արձագանքելով՝ Արծրունյաց գահերեց իշխանին միացած նախարարների անունները Թովմա Արծրունին մեկ առ մեկ թվարկում է:

> **Պատմական տեղեկանք.** «Փութապես, առանց հապաղելու յուրաքանչյուրն այնտեղ հասավ իր զորքով՝ իշխան Աշոտը և իր եղբայրներ Գուրգենն ու Գրիգորն իրենց զորագնդերով, Արծրունյաց տոհմից նաև Վահանը, Վասակը, Մուշեղը, Ապուպելջը, Գուրգենը, Վասակը, Ապուջափրը, Մուշեղը, Ապումայան, Վասակը, Վահանը, Համազասպը, Գրիգորի որդի Վասակը, Ապումգդեմը, Մեհրուժանը, Գրիգորը: Բոլոր այս 16 այրերը իրենց զորքով Արծրունյաց տոհմից էին: Իսկ Բագրատունյաց տոհմից՝ Թոռնիկի որդին իր զորքով, Ամատունյաց տոհմից՝ Շապուհն իր ութ ազգականներով ու իրենց զորքով, Գնունյաց տոհմից՝ Հազրի որդի Գրիգորն իր վեց ազգականներով և իրենց զորքով, Ընտրունյաց տոհմից՝ Արտավազդը՝ 7 ազգականներով ու իրենց զորքով, նաև Վասպուրականի իշխանի նախարարներից ուրիշներ՝ Սմբատ Ապահունին, Գրիգոր Քաջբերունին, Վահան Հավնունին, Դավիթ սեպուհը, Գազրիկ(յան) Ապուհարազը, Թոդորոս Վարազխը, Խոսրով Վահևունին, Խոսրով Ակեացին, Վարդան Գաբայեղենը, Սմբատ Մարացյանը, ինչ-որ Սահակ Սեպուհ, Պատրիկ Անձևացին, Գևորգ Հարմացին, Դավիթ զորապետը և շատերն ազատ տներից: Յուրաքանչյուրն իր զորքով շարժվեց այստեղ»:
> ***Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո համոզվելով, որ նախարարների մեծ մասը մոտակա մի քանի օրերի ընթացքում պատրաստ է զորամասերով միանալու ապստամբությանը, Բագարատը ձեռնամուխ է լինում հակառակորդի ջախջախման նախապատրաստման աշխատանքներին: Թեև ապստամբների բոլոր ուժերը միավորելուց հետո էլ հակառակորդը մեծա-

թիվ էր, սակայն նրա քանակական գերազանցությունն արդեն այնքան ճնշող չէր, որ հարկադրեր հրաժարվել բացահայտ առճակատման մտքից: Որոշվում է վճռական ճակատամարտ տալ: Սակայն այս ընթացքում արաբական բանակը հասցնում է մոտենալ և բանակ դնել Բագարատ իշխանի ձմեռանոցի՝ Մուշի մոտակայքում: Իշխանաց իշխանի ենթակայության տակ գտնվող ուժերի և Արծրունյաց գահերեց իշխանի գլխավորությամբ օգնության շտապող զորամասերի հաղորդակցության ուղիները վտանգվում են:

Հապաղելու դեպքում նախաձեռնությունը կարող էր անցնել արաբներին, և Բագարատ Բագրատունին ընդունում է համարձակ, բայց իրատեսական որոշում. հակառակորդի վրա գրոհել այն ժամանակ, երբ Վասպուրականից օգնության եկող ուժերը մարտադաշտին բավականին մոտ կլինեն, սակայն դեռևս տեղ հասած չեն լինի:

Ճակատամարտը

Բագարատ Բագրատունին մարտը սկսում է այրուձիու զորամասերի սրընթաց գրոհով (տե՛ս սխեմա 1): Մուսան մարտական գործողությունների համար պատրաստ պահվող զորամասերը հասցնում է շարել մարտակարգով: Օգտա-

Սխեմա 1.



Մուշի ճակատամարտ 851թ.

գործելով իրենց քանակական գերազանցությունը՝ արաբները կարողանում են կասեցնել հայկական զորամասերի գրոհը: Առաջին հաջողությունից ոգևորված Մուսան իր ամբողջ պահեստազորը նետում է հակագրոհի:

Հայկական զորամասերի համար ստեղծված դժվարին իրավիճակում, մեկ բռունցք դառնալով, հերոսության օրինակներ էին ցույց տալիս բոլորը՝ հրամանատարից մինչև շարքային զինվորը: Նրանց շարքերում չեն նկատվում խուճապային տրամադրություններ, թեև, մանավանդ աջ (համապատասխանաբար, արաբների՝ ձախ) թևում, հակառակորդը որոշ հաջողության էր հասել (տե՛ս սխեմա 1):

> **Պատմական տեղեկանք.** «Զորքերը կռվում էին արդեն միմյանց դեմ, հնչում էին փողերը, ծածանվում դրոշները, գոռում գոչում էին վահանավորները ու նիզակավորները, այրուձին այս ու այն կողմ էր նետվում, ախոյանները հարձակվում էին, կապարճակիրները նետեր էին տեղում»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Արաբ զորավարը, թերևս, իրեն արդեն հաղթող էր համարում, երբ կատարվում է անհնարինը. արաբական մարտակարգի աջ թևի հեծելազորի թիկունքում հայտնվում են Աշոտ Արծրունու առաջապահ զորամասերը, իսկ ընդամենը մի քանի րոպե անց՝ Վասպուրականի ամբողջ զորքը:

> **Պատմական տեղեկանք.** «Միանգամից, հախուռն ու հանդուգն հարձակմամբ դիմեցին այլազգիների վրա, միմյանց ընդհարվեցին և յուրաքանչյուր այր գետին գլորեց իր ախոյանին: Աշոտ իշխանն աչքերը վեր բարձրացրեց և տեսավ, ինչ-որ մեկը հարվածեց իր զորականներին: Նա գոչեց առյուծաբար և հարձակվեց ընտիր այրուձիի վրա, ջարդեց նրա աջ թևը, ապա հարձակվեց ձախի վրա: Բոլորին սրի ճարակ դարձրին: Խիզախեցին, որպես կտրիճներ, ձայնեցին ինչպես արծիվներ ու առյուծի կորյուններ և վրա հասան ու պատառոտեցին որսը: Հույժ հանդուգն հարձակման հետևանքով ավելի շատ սպանեցին ձիերի սմբակների տակ դիաթավալ անելով, քան սրով:
>
> Թշնամիների կողմից չգտնվեց մեկը, որ ի զորու լիներ ընդդիմակայել նրանց»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Աշոտ Արծրունու զորամասերի վճռական գրոհով նախ ջախջախվում է արաբական բանակի աջ թևը, որը շարունակվող մարտի ընթացքում այդպես էլ չի կարողանում վերախմբավորվել ու լայն ճակատով հասցվող թևային հարվածին դիմակայելու համար միասնական մարտաշար ձևավորել (տե՛ս սխեմա 2): Քանի որ կենտրոնում՝ Բագարատ Բագրատունու անմիջական հրամանատա-

Սխեմա 2.



Մուշի ճակատամարտ 851թ.

Սխեմա 3.



Մուշի ճակատամարտ 851թ.

ությամբ գործող զորաթևի պաշտպանությունը համեմատաբար կայուն էր, Աշոտ իշխանն իր երկրորդ հարվածն ուղղում է ոչ թե արաբների մարտակարգի կենտրոնին, այլ օգնության է շտապում ծանր դրության մեջ ընկած հայոց աջ թևին (տե՛ս սխեմա 3):

Կարճատև դիմադրությունից հետո արաբական բանակի ձախ թևը ևս երերում է: Խուճապը տարածվում է նրանց կենտրոնի զորամասերում, որոնք սկսում են անկանոն նահանջել դեպի մարտադաշտի եզրի անտառը: Բնականաբար, անտառում մարտակարգը վերականգնել չի հաջողվում, և արաբների նահանջը շարունակվում է մինչև Բաղեշ: Նրանք պատսպարվում են ամրոցի հաստ պատերի հետևում:

Հաղթանակը

Հաղթանակից ոգևորված հայկական զորամասերը պաշարում են և պատրաստվում Բաղեշի գրոհին, երբ պաշարումը դադարեցնելու խնդրանքով Բագարատին է դիմում իր քույրը:

> **Պատմական տեղեկանք.** «(Հայ) իշխանները հետապնդեցին նրանց, ովքեր փախել ընկել էին (Բաղեշի) ամրոցը: Ապա պաշարեցին քաղաքը ու ամրոցը, մինչև որ այնտեղից դուրս եկավ հետիոտն ու հեծեծող մի տիկին և (խնդրեց) բավականանալ կատարած քաջությամբ, որով աստված օժտել էր Աշոտին: Համոզեց ու պաշարումից ազատ արձակեցին նրանց, որովհետև Բագարատի քույրն էր:
>
> Հայոց զորքը հաջողությամբ ավարտեց պատերազմը և վերադարձավ մեծ հաղթությամբ»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ***

Մուշի ճակատամարտում հայկական զորքը տարավ արաբական տիրապետության դեմ երկդարյա պայքարի *ամենամեծ հաղթանակներից մեկը:* ***Միևնույն ժամանակ, այս մարտը*** *ռազմարվեստի* ***կատարելագործման*** *հաջողությամբ պսակված* ***փորձ է:***

Համաշխարհային ռազմարվեստում առաջին անգամ «ԱՌԱՆՁԻՆ ՄՈՏԵՆԱԼ, ՄԻԱՍԻՆ՝ ԿՌՎԵԼ» սկզբունքի կիրառումով Բագարատ Բագրատունին այնպիսի անլուծելի մարտավարական խնդրի առջև է կանգնեցնում հակառակորդի բանակի հրամանատարին, որի լուծումը նա չէր կարողանալու գտնել:

Տեղեկանք. Հին և միջին դարերում ամբողջ աշխարհում ընդունված էր նախքան վճռական ճակատամարտի դուրս գալը միավորել բոլոր ուժերը: Այս ձգտումը պարզ բացատրություն ուներ՝ հեռահաղորդակցության միջոցների անկատարության պայմաններում, հաճախ ոչ թե դժվար, այլ ուղղակի անհնար էր լինում իրարից զգալի հեռավորությունների վրա գործող և նույնիսկ տեսողական կապի պահպանման հնարավորությունից զրկված զորամասերի փոխգործողությունները կազմակերպել:

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչպիսի համարձակություն էր պահանջվում հայ զորավարից այս կարգի նորարարություն կիրառելու համար, նշենք, որ «առանձին շարժվել, միասին՝ կռվել» սկզբունքը Մուշի ճակատամարտից հետո կիրառվել է *ավելի քան հնը դար* անց՝ 1768-1774թթ. Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: 1770թ. հուլիսին Լարգա գետի մոտ ռուսական 20 հազարանոց բանակը՝ ռազմարվեստի տաղանդավոր բարեփոխիչ Պ.Ռումյանցևի գլխավորությամբ, մի քանի ուղղություններից գրոհում է թուրքական 100 հազարանոց բանակի վրա և պարտության մատնում: Նույնիսկ 18-րդ դարի պայմաններում այս սկզբունքի կիրառումն այնքան անսովոր էր, որ ահռելի բանակ ունենալով հանդերձ՝ թուրքական կողմը ոչինչ չի կարողանում ձեռնարկել:

Եվս մեկ դար անց՝ 1870-1871թթ. Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ նույն սկզբունքով Սեդանի մոտ պարտություն է կրում ֆրանսիական բանակը:

Մեր օրերում այս սկզբունքը լայն կիրառություն ունի:

ՄՈՒՇԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԽՈՒԹԵՅԻ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

852Թ. ՀՈՒՆՎԱՐ

Արճուճի և Մուշի ճակատամարտերում տարած հաղթանակները ոգևորություն են առաջացնում և ավելացնում հայ զորավարների ու մարտիկների եռանդը: Իրական է դառնում երկիրն արաբական տիրապետությունից ազատելու հեռանկարը:

Յուսուֆի արշավանքը

Մութավաքիլ խալիֆան նոր զորքով Ատրպատականից Հայաստան է ուղարկում Աբուսեթին, սակայն ճանապարհին արաբ զորավարը մահանում է: Զորքն արշավանքը շարունակում է նրա որդի Յուսուֆի գլխավորությամբ (851թ.): Յուսուֆին հանձնարարվում է ամեն գնով պատժել ապստամբության ղեկավարներին: Նա առաջին հարվածը հասցնում է Վասպուրականի ուղղությամբ:

Հակառակորդի գերակշիռ ուժերի ճնշման տակ Աշոտ իշխանը քաշվում է Մարդաստան գավառի կողմերը, որտեղից կարողանում է դիվանագիտական ճանապարհով Վասպուրականն ազատել ավերվելու հեռանկարից:

Յուսուֆը շարժվում է դեպի Բզնունյաց գավառ, որտեղ կանգ է առնում Խլաթում: Այստեղ նա խաբեությամբ ձերբակալում է Բագարատ Բագրատունուն՝ իր Աշոտ և Դավիթ որդիների հետ: Ձերբակալվածներն ուղարկվում են Բաղդադ: Արաբ զորապետի անպատիվ արարքը դժկամությամբ են արձանագրում նույնիսկ արաբ հեղինակները:

Դիմադրության կազմակերպումը

Յուսուֆն իր բանակով ասպատակում է Տուրուբերանի և Աղձնիքի շրջանները: Աշնանային արշավանքի ժամանակ համեմատաբար անվնաս էին մնացել Սանասուն գավառի (Սասունի) լեռնային որոշ շրջաններ, որոնց դեմ իրականացվելիք արշավանքն արաբ զորավարը որոշել էր հետաձգել մինչև հաջորդ տարվա գարուն:

Վրա հասած ձմեռն ու ցուրտ եղանակները Յուսուֆին մյուս ուղղություններում ևս հնարավորություն չեն տալիս ավելի ծավալվելու, և նա ձմեռելու նպատակով անցնում է Մուշ: Ձմռան ամիսները թշնամին անցկացնում է նախապատրաստական աշխատանքներ կատարելով, որոնց համար անխնա շահագործվում էին ասպատակության ընթացքում վերցված գերիները և Մուշի բնակչությունը:

Յուսուֆի նախապատրաստությունները չեն վրիպում Սասունի լեռնականների ուշադրությունից:

Խութի գյուղացիները Մուշից փախած գերիներից թարմ տեղեկություններ էին ստանում հակառակորդի գործողությունների ու մտադրությունների մասին, ինչպես նաև գիտեին Յուսուֆի զորքերի բոլոր *հիմնական* տեղաշարժերի վերաբերյալ: Կարծելով, թե խիստ ցրտաշունչ ու ձյունառատ ձմռանը ապստամբներն ակտիվ գործողությունների ընդունակ չեն լինի, Յուսուֆը, ավազակային հարձակումներով բնակչությանն էլ ավելի ահաբեկելու նպատակով, դաշտավայրային շրջաններում ասպատակումների համար զորամասեր է ուղարկում:

Ինքնավստահ արաբ զորավարի ընչաքաղցությամբ բացատրվող այս քայլը մարտավարական առումով սխալ էր, որի պատճառը հայկական ուժերի թերագնահատումն էր: Ըստ նրա, Բագարատ Բագրատունու ձերբակալումից և նախարարների հիմնական մասի՝ իրենց ձմեռոցները քաշվելուց հետո ապստամբական ուժերը միավորելու ընդունակ առաջնորդ չէր մնացել:

Հաղթարշավը

Նկատելով հակառակորդի թույլ տված սխալները՝ խութեցիները «զորահավաք» են կազմակերպում, զինվում և շրջակայքի հայ նախարարների ուղարկած զորամասերի հետ համատեղ՝ ձնահյուսի նման լեռներից սլանում դեպի դաշտավայր ու չնայած հունվարյան սառնամանիքներին՝ հարձակվում Մուշի վրա (տե՛ս քարտեզը):

Նրանց առաջնորդում էր հնարամիտ ու քաջ առաջնորդ Հովնանը: Արտակարգ ֆիզիկական ուժի տեր հսկայի մասին դեռևս կենդանության օրոք լեգենդներ էին պատմվում: Այս ասքերը նրա մահից հետո աստիճանաբար միաձուլվում են հայ ժողովրդի «Սասնա ծռեր» հերոսավեպին: Խութեցի Հովնանից բացի, Մուշը գրոհողներին գլխավորում էին նաև Բագարատ Բագրատունու որդիները՝ աքսորավայրից փախչելով ապստամբներին միացած Աշոտ և Դավիթ իշխանները:

> **Պատմական տեղեկանք.** «Պաշարեցին Մուշ քաղաքը, (արաբական) զորքը մատնեցին սրի, արգելանոցից հանեցին Վասպուրականի պատանդներին, արձակեցին գերիներին և բաժանեցին իրենց մեջ ավարը»:
>
> *Թովմա Արծրունի,*
> *Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ*

Կարճատև պաշարումից հետո ապստամբները ներխուժում են Մուշ: Փողոցային մարտերում ապստամբները կոտրում են արաբական կայազորի դիմադրությունը և ջախջախում Յուսուֆի գլխավորությամբ Մուշում գտնվող արաբական զորամասերը: Արաբ զորավարը հայտնվում է անելանելի իրավիճակում: Գուկանքի մոտ մեկ և կես դար առաջ արաբների կրած ծանր պարտության մասին տեղյակ լինելով՝ նա կարծում էր, որ այն ժամանակվա արաբական զորամասի հրամանատարի պես կարող էր փրկության հույս ունենալ՝ Մուշի եկեղեցիներից մեկում պատսպարվելով: Իր կյանքը փրկելու համար Յուսուֆը թաքնվում է Սբ. Փրկիչ եկեղեցու գմբեթի տակ:

Պատմական տեղեկանք. «Բայց ինքը՝ կարծեցյալ մարգպանը, փախավ ընկավ մեծ եկեղեցին, որ հանուն Փրկչի մեծ ծախսերով՝ 300 հազար դահեկանով կառուցել էր Բագարատ իշխանը: Եվ այն ժամանակ նա սարսափից դողահար թաքնվեց գմբեթում: Մեկնազենները շրջապատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը և ինչ-որ մեկը աշտեով հարվածեց Յուսուփի թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով: Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Բ, գլ. Զ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 851Թ.



ԱՐՅԱՆ ԼՃԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
852Թ.

*«**ՔԱՐԱՅԱՆ ՈՒ ԿԱՐԾՐԱՅԱՆ,** ԻՆՉՊԵՍ ԲԼՐԱՉԵՎ ՎԵՄԸ,*
*ԵՎ **ԴԱՐՉԱՆ** ԵՐԿԱԹԻ ՁՈՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՄԱՏՉԵԼԻ»*

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

Խութեցիների հաջողությունները ոգևորում են մյուս գավառների բնակչությանը: Ամենուրեք ոտքի ելնելով՝ ժողովուրդը դուրս է վռնդում արաբական զավթիչներին իր երկրի սահմաններից:

Յուսուֆի սպանությունը նոր ահազանգ է դառնում արաբական իշխանությունների համար:

Պատմական տեղեկանք. «Այնժամ թագավորն (Մութավաքիլ խալիֆան) արձակեց հրովարտակներ և ուղարկեց արագագնաց սուրհանդակներ իր տերության բոլոր կողմերը՝ Ասորեստանի և Բաբելոնի, Թուրքեստանի և Խուժաստանի, մարերի, ելիմացիների ու եգիպտացիների հեռաբնակ վայրերը, Արաբիայի ներքին կողմերը, մինչև Սակաստանի սահմանները... Եվ ամենքը թագավորի հրամանով բոլոր կողմերից գումարեցին այրուձի՝ սպառազեն այլ հորինվածով հանդերձ և անհապաղ, արագությամբ եկան ժամադրված տեղը»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ա

Ներխուժումը

Հայաստան ուղարկվելու համար նախատեսված զորաբանակի հրամանատար է նշանակվում թուրք վարձկանների հրամանատար Բուղա ալ-Շարաբին:

Զորապետի ընտրությունը պատահական չէր: Բուղան աչքի էր ընկնում իր *դաժանությամբ,* որի համար էլ ստացել էր իր մականունը (Բուղա՝ թարգմանաբար նշանակում է ցուլ): Նրան տվել էին հսկայական զորք և հանձնարարել ապստամբությունը ճնշել հնարավորինս անողոք ձևերով:

852թ. ամռանը Բուղայի բանակը ներխուժում է Հայաստան:

Բուղայի զորամասերի դաժանություններից առաջինը տուժում է Խութի հայությունը, որտեղ նրա ձեռքն են ընկնում Սասունի հերոսամարտերի ղեկավարներ Խութեցի Հովնանը, Աշոտ և Դավիթ Բագրատունիները: Բոլորն էլ աքսորվում են Արաբիա և տանջամահ արվում: 852թ. աշնանը Սասունի տասնյակ բնակավայրեր ավերվում և ամայացվում են, իսկ դրանց բնակչությունը սրի է քաշվում կամ տարվում գերության:

Գործի դնելով իր խորամանկությունների ամբողջ զինանոցը՝ Բուղան Աղբակում ձերբակալում է Բագարատ Բագրատունուց հետո ազատագրական շարժման փաստացի ղեկավար դարձած Աշոտ Արծրունուն, որի փոխարեն պայքարը գլխավորում է կրտսեր եղբայրը՝ Արճուճի ճակատամարտի հերոս Գուրգենը: Նա կարողանում է իր շուրջը համախմբել Գնունի, Գազրիկյան, Ամատունի, Վարաժնունի, Ընտրունի, Ակեացի, Վահևունի և Անձևացի նախարարությունների 900 մարտիկներից բաղկացած ուժերը: Այս ուժերով Գուրգեն Արծրունին ամրանում է Կորճայք աշխարհի Որսիրանք գավառի Թվա (Թով) գյուղի մոտակա լեռներում, որից ներքև տարածվում էր Արյան լիճ դաշտավայրը (տե՛ս քարտեզը):

Պատմական տեղեկանք. «Բանակեցին Թով գյուղի ետևում, լեռան վրա, նրա հետևում, որ կոչվում է Արյան լիճ, քանզի այնտեղ կա մի մեծ լիճ, մոտիկ այն տեղին, որը Վասպուրականի մեր քաջ իշխանների զորքի արիությունների ու ճակատամարտերի ասպարեզն էր: Այստեղ էր հավաքվել գաղթականների մեծաթիվ բազմություն՝ Աղբակ, Զարեհավան և Ակե գավառներից, Աղզո լեռնակողմերից, Առնո ոտնից, Ջողա լեռան և ավելի այն կողմերից: Անհուն բազմությունը պատել էր լեռան շուրջը, ինչպես մարախը և ծովի ավազն անթիվ: Ապավինել էին քաջ զորավար Գուրգենին և նրա հետ եղած հայոց զորքին, իբրև մեծ ու ապահով ամրոցի»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ա

Մտահղացումը

Հայոց զորքի դրությունը ծանր էր: Նրանց էին ապավինել շրջակա գյուղերի բազմաթիվ բնակիչներ, որոնք ակամայից կաշկանդում էին ապստամբների գործողությունները: Մարտական գործողություններ վարելու հետ միասին, նրանք պետք է պաշտպանեին նաև անզեն ու անպաշտպան հազարավոր հայրենակիցների:

Գուրգենը հայտնվել էր ծայրահեղ անբարենպաստ իրավիճակում, քանի որ արագ զորաշարժերի, սրընթաց գրոհների ու հակառակորդին հանկարծակիի բերող հարվածների մարտավարությանը կարող էր դիմել միայն իրեն ապավինած բնակչությանը միայնակ թողնելով: Սակայն այդ տարբերակը հայ իշխանի համար բացառվում էր, քանի որ տասնյակ բնակավայրեր ամայացնելով առաջ շարժվող հակառակորդը դժվար թե նրանց կենդանի թողներ:

Բարդ իրավիճակում հայտնված Գուրգենը որոշում է օգտագործել տեղանքը: Նա ուժերը տեղաբաշխում է այնպիսի վայրում, որի ամեն մի քարն ու թուփը ծանոթ էր ինչպես իրեն, այնպես էլ իր մարտիկների մեծ մասին:

Հակառակորդը ապստամբներից թվով *մոտ քսան անգամ* ավելի էր, ուստի նույնիսկ ամենալավատեսներն անհնարին էին համարում ճակատամարտում հաղթանակի հասնելու հավանականությունը:

Գիտակցելով, որ ապստամբների դրությունը ծանր է, Բուղան, իր սովորության համաձայն, թակարդներ էր լարում նրանց շուրջը: Մասնավորապես, նա մեկը մյուսի հետևից Գուրգենին բանակցելու առաջարկներ է ուղարկում: Առաջարկներն ընդունելու հարցի քննարկման համար Գուրգենը ապստամբության ղեկավարների խորհրդակցություն է հրավիրում:

Ժողովականները մերժում են բանակցությունների առաջարկը և պատրաստակամություն հայտնում պայքարը շարունակել մինչև հաղթական

ավարտը: Զինակիցների հաստատակամությունն ուրախացնում է Գուրգենին, միևնույն ժամանակ նա մտահոգված էր, որ մարտում անհաջողության դեպքում չի կարողանա ուժերը հարվածի տակից հանել և անվտանգ տեղ նահանջել:

Հայրենակիցների կյանքն ավելի բարձր գնահատելով՝ Գուրգեն իշխանն, այնուամենայնիվ, որոշում է գնալ բանակցությունների: Հայոց դարավոր ազատագրական պայքարի աննկուն առաջնորդներից մեկի համբավը վայելող իշխանն այս քայլով ցույց է տալիս ուրիշների համար պատասխանատվություն կրելու իր ունակությունը: Նա հրամանատարությունը հանձնում է Մուշի ճակատամարտի հերոսներից մեկի՝ Ապուպելճ Արծրունու եղբորը՝ Մուշեղին, և գնում բանակցությունների:

Ճակատամարտը

Ճանապարհի կեսին Գուրգենին ուղեկցող կոչնակները նկատում են, որ արաբական զորքն արդեն մարտակարգ է ընդունել: Ակնհայտ է դառնում, որ հակառակորդը բանակցություններ վարելու մտադրություն չունի: Հայ իշխանին բանակցության կանչելով՝ արաբները մտադիր էին ձերբակալել նրան և օգտվելով ապստամբների շրջանում սպասվող խուճապից՝ վճռական գրոհով ջախջախել վերջիններիս:

852թ. ամռան տապի պայմաններում, կեսօրին Արծրունի իշխանը հարկադրված է լինում իր ուժերը ևս շարել մարտակարգով:

> **Պատմական տեղեկանք.** «Ապա յուրաքանչյուր զորական համարձակորեն դիմեց զենքի և հեծնելով ընտիր երիվարներ, մոտեցան իրար, շարվեցին միևնույն տեղում, իրար կպան, ծուլվեցին, ինչպես մեկ մարդ, քարացան ու կարծրացան, ինչպես բլրաձև վեմը և դարձան երկաթի զորությանն անմատչելի: Եվ ինչպես ադամանդե պարիսպ, իրենց անձերը տվեցին գաղթականների մեծաթիվ բազմության համար, իբրև քաջ հովիվ, հանձն առան մեռնել հոտի համար»:
>
> ***Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Դ***

Հայոց մարտակարգը բաժանված էր երկու մասի: Հավանաբար, Մուշեղ Արծրունու գլխավորությամբ գործող ձախ թևում միայն հետևակային ստորաբաժանումներ էին: Աջ թևում կենտրոնացվել էր հեծելազորը՝ Ապումկդեմ Արծրունու գլխավորությամբ: Նկատի ունենալով, որ ձախ թևը թույլ է և հավանական համարելով, որ հակառակորդը հակագրոհներն այս թևում կձեռնարկի, հետևակայիններին ոգևորելու համար Գուրգենը դիրք է զբաղեցնում իր շարած մարտակարգի ձախ թևում:

Բարձունքից հակառակորդի վրա գրոհելով՝ հայ զինվորները մինչև ուշ երեկո խիզախորեն ջարդ են տալիս արաբներին, որոնց բոլոր հակագրոհներն ապարդյուն էին: Ճակատամարտի հաջող ընտրված վայրը, ճիշտ սկզբունքով շարված մարտակարգը և հայրենիքն օտար տիրապետությունից ազատելու համար պայքարի ելած մարտիկների հաստատակամությունը տալիս են սպասված արդյունքը:

> **Պատմական տեղեկանք.** «Կարգեցին, հորինեցին ճակատ... Խիտ շարքերով, հանդուգն հարձակմամբ դիմեցին առաջ, բախվեցին (արաբների) զորագնդին, ճեղքեցին (նրանց) ճակատը ու ետ դարձրին այլազգիներին: Գոչում էին վիշապաձայն, պատառոտում առյուծաբար, խոցում, ինչպես վարազը, և մատնում էին մահվան ու պարտության: Յուրաքանչյուր տղամարդ գետին էր գցում իր ախոյանին և նետվում մյուսի ետևից: Բազմակուտակ նիզակների սաստիկ բախումից, զենքերի փայլից, սրերի շողշողալուց և լարված աղեղների սուլոցից կայծակ էր դուրս ցայտում, ինչպես ամպի որոտից, և թվում էր, թե լեռն այրվում է հրից»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Դ***

Արաբական բանակը խուճապահար փախչում է մարտադաշտից:

Հաղթանակը

Ընդամենը մեկ զորամասի չափ ուժերից արաբների կրած պարտությունը ճիշտ ընկալելու համար նշենք, որ նրանց զոհերը կրկնակի ավելի էին, քան Գուրգեն իշխանի գլխավորությամբ մարտադաշտ ելած ամբողջ հայկական զորքը:

Եթե դրան ավելացնենք նաև հակառակորդի վիրավորներին ու գերի ընկածներին, ապա պատկերն ամբողջական կլինի:

Չնայած հայկական կողմն էլ մեծաթիվ կորուստներ էր ունեցել, սակայն Գուրգեն Արծրունին, գնահատելով մարտավարական իրավիճակը, որոշում է հետապնդում իրականացնել:

Եզրակացություն

Արյան լճի մոտ տեղի ունեցած ճակատամարտը հայ ժողովրդի 849-855թթ. ազատագրական պայքարի ընթացքում տարած փառավոր դրվագներից է: Այն ևս մեկ անգամ վկայեց, որ նույնիսկ փոքրաթիվ ուժերը հնարամտորեն օգտագործելով՝ կարելի է հասնել բարձր արդյունքների:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 852-854ԹԹ.

ՔԹԻՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
854Թ.

Այան լճի ճակատամարտում կրած պարտությունից հետո էլ Հայաստանում գտնվող արաբական զորքերը, քանակապես գերազանցելով ապստամբների ուժերին, շարունակում էին ասպատակությունները: Արաբները շարժվում են հյուսիս, իսկ 853թ. կեսերին անցնում Վրաստան ու գրավում Տփղիսը (տե՛ս նախորդ ակնարկի քարտեզը):

853թ. ամռան վերջերին Բուղան զորքը շարժում է դեպի հյուսիս՝ Կովկասյան նախալեռների շրջանում բնակվող ցեղերի՝ *ծանարների* դեմ: Կովկասի լեռնականները միավորվում և համառ դիմակայության ընթացքում ծանր պարտության են մատնում Բուղայի հրոսակախմբերին: Այս արշավանքից ևս գլխիկոր վերադարձող զորապետը կանգ է առնում, սակայն անմիջապես զորքը նոր արշավանքի նախապատրաստում:

Ծանարներից կրած պարտությունների լուրը ոգևորություն է առաջացնում Հայաստանում, և Բուղայի ավազակախմբերի ավերածություններից զերծ մնացած գավառները ևս ոտքի են կանգնում:

Արաբական տիրապետության դեմ պայքարի դրոշակակրի դերը ստանձնում է Արցախի հայությունը՝ զորավար Եսայի Ապումուսեի ղեկավարությամբ:

Հիմնական իրադարձությունները ծավալվում են Քթիշ (Գտիչ) ամրոցում:

Ամրոցի պաշտպանությունը և արտագրոհը

Պատմական տեղեկանք. Ապա հավաքեց (Ապումուսեն) երկրի ամբողջ բնակչությանը՝ կանանց, երեխաներին»: Արցախի բնակավայրերից հավաքվում են ռամիկների, շինականների բազմությունը, սակավաթիվ զորականների զորախմբերը «լեռան վրա՝ Քթիշ անվանված ամրոցում, ըստ այնմ՝ նաև մթերապաշար»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ

Ապումուսեն գիտակցում էր, որ ժամանակն արաբների օգտին է աշխատում: Ամեն գնով պետք էր թույլ չտալ, որպեսզի հակառակորդն անարգել ուժերը միավորի ամրոցի պատերի տակ: Որոշվում է չբավարարվել պաշտպանության ամրացման աշխատանքներով և արաբների զգոնությունը փորձելու նպատակով արտագրոհներ իրականացնել:

Նախքան Քթիշի գրավմանն անցնելն արաբները կարգի են բերում իրենց զորամասերը՝ համալրման միջոցով յուրաքանչյուր զորամասի քանակը հասցնելով հինգ հարյուրի: Սակայն դա էլ չի օգնում: Հայ զորականները ոչ միայն կասեցնում են նրանց գրոհն, այլև դուրս գալով ամրոցից՝ գրոհում արաբների վրա և հետապնդում մինչև լեռան ստորոտը:

Պատմական տեղեկանք. «Ելան մարտի և պատերազմեցին. ըստ որում սաստկացավ կռիվը, հախուռն հարձակմամբ դիմեցին միմյանց վրա: Արքունի զորքը ջարդվեց մեծամեծ հարվածներից, փախան իրենց բանակը և մտան այն տները, որ շինել էին: Իսկ Ապումուսեի լեռնային զորքը հետամտեց փախստականներին, իջեցրեց լեռան վրայից և վերադարձավ սպանվածների իրերը վերցնելու: Ապա գնացին իրենց բանակատեղը մեծ հաղթության, ուրախանալով անտրտում խնդությամբ»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ

«Վճռական» գրոհը

Հերթական անհաջողությունից հետո արաբները որոշում են նոր գրոհը ձեռնարկել միայն բոլոր ուժերը միավորելուց հետո: Հատկանշական է, որ հավանական համարելով հայկական ուժերի համարձակ հակագրոհները՝ արաբները նախօրոք հազար հոգանոց հեծյալ զորամաս են սպառազինում և տեղաբաշխում մարտակարգի պահեստազորում: Հեծյալ զորամասին խնդիր էր դրվում պատրաստ լինել հակահարվածելու արցախցիների՝ հակագրոհի անցած ուժերի թևին:

Ուժերն ի մի բերելուց հետո Բուղան սկսում է վճռական գրոհը (տե՛ս սխեման):



Քիշի արտագրոհը 853-854թթ.

Պատմական տեղեկանք. «Այնժամ հրաման տվեցին ամբողջ զորքերին ելնել պատերազմի: Եվ ահա աղաղակ, փողեր, քնարներ, անհամար զորքը սպառազինվեց զենքով, սրերով և ամեն տեսակ պատրաստությամբ, ու քիչ մնաց հիմքից տապալվեր լեռը: Զորքը բարձրացավ մինչև լեռան գլուխը, նրա հետ նաև բազում դրոշներ՝ ձիերին նստած 1000 ընտրյալ քաջ տղամարդկանց (ձեռքին): Եվ գրեթե ոչ մի տեղ, աշխարհի չորս կողմերում ոչ մի թագավորի մոտ չէր երևացել այդպիսի ահավոր տեսքով ու սպառազինությամբ զորք՝ սաստիկ որոտումով և ճայթյունով, զենքերի փայլատակումով և ինչով այն ժամանակ զինվել, զարդարվել ու հանդերձավորվել էր արաբացոց զորքը: Եվ գունդ առ գունդ, փութապես ելան մեկը մյուսի ետևից և ամեն ոք, որ տեսնում էր, մեծ երկյուղով ներս էր մտնում (տուն)»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ

Գիտակցելով, որ այս գրոհի անդրադարձումը երկու կողմերի համար էլ առաջին հերթին բարոյահոգեբանական նշանակություն է ունենալու, Ապումուսեն զգուշավորություն է հանդես բերում: Հայ իշխանը որոշում է ձեռնպահ մնալ ակտիվ հակահարձակողական գործողությունների մարտավարությունից, և հակառակորդին հյուծել ամուր պաշտպանությամբ:

Առավոտյան արաբները սկսում են հարձակումը: Բարձունքին ամրացած հայ զինյալները համառորեն դիմադրում են ու հասնում իրենց նպատակին. արաբների գրոհը սկսում է խեղդվել: Նկատելով, որ հակառակորդը մտադիր է նահանջել, Ապումուսեն արագորեն վերախմբավորում է ուժերը և, հակառակորդին ուշքի գալ չթողնելով՝ հարմար պահը ձեռքից բաց չթողնելու համար, *այնուամենայնիվ,* որոշում հակագրոհի անցնել:

Պատմական տեղեկանք. «Դարձան իբրև երկաթե մի մեծ բլուր կամ ադամանդյա վեմ և իրար շուրջ խռնվելով՝ կպան միմյանց, ինչպես մեկ մարդ... մնացին անշարժ, առաջ չընկան մեկ մեկուց: Եվ մինչ (արաբները) կարծում էին, թե մատնվեցին իրենց ձեռքը, սակայն նրանք աղոթում էին և Աստծուն կանչում իրենց օգնության: Ապա դիմեցին նրանց (արաբների) վրա՝ չորս մասով՝ Քրիստոսի խաչի նմանությամբ: Հարվածեցին ճակատից, ճեղքեցին մարտաշարքերը և նրանց դարձրին դեպի զառիվայր, իջեցրին լեռան վրայից: (Թշնամին) կրեց մեծամեծ հարվածներ, ինչպես քամուց հարդն է քշվում, կամ ծուխը՝ մրրիկից, և այդպես կորան գնացին...»:

Թովմա Արծրունի,
Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ

Ուշագրավ է, որ փոքր ուժերով իրականացվող հակագրոհին մեծ թափ հաղորդելու համար Ապումուսեն զորամասերը շարում է *սեպաձև*: Ավելին, նա չի

բավարարվում միայն մարտակարգի առաջին գիծը ամրապնդելով: Ակնկալելով հակառակորդի հակագրոհների հավանականությունը՝ ճեղքող հարվածի իրականացման համար ընտրվում է մեծաթիվ պահեստազոր, որը տեղաբաշխվում է կենտրոնի զորաթևի թիկունքում (տե՛ս սխեման):

Թովմա Արծրունու վկայությունից կարելի է եզրակացնել, որ պահեստազորը շարված է եղել շարասյունաձև դասավորությամբ՝ *նախամարտական կարգով:* Կանխատեսելով, որ հակառակորդի հավանական հակագրոհները հասցվելու են թևերից մեկին, Եսայի Ապումուսեն պահեստազորն այնպիսի դասավորությամբ էր շարել, որ վերախմբավորումների վրա ավելորդ ժամանակ չծախսվի: Իսկ եթե արաբները հակագրոհի չդիմեին, ապա կենտրոնում գտնվող պահեստազորն անընդհատ կհամալրեր ճեղքող զորամասերը և հակառակորդը կջախջախվեր հատող հարվածով:

Եսայի Ապումուսեն փայլում է նաև հակառակորդին հասցվելիք հարվածի տեղամասի ընտրության հարցում, երբ մեկ հարվածով միանգամից լուծում է մի քանի խնդիր: Հակագրոհն այնպիսի հաշվարկով էր հասցվում, որ արաբները հարկադրված լինեն նահանջել դեպի զառիվայրը, իսկ նրանց հեծելազորն ի վիճակի չլինի նահանջող ուժերին օգնության հասնել այդ տարածքով: Միայն այս կերպ կարելի է բացատրել այն փաստը, որ մարտի սկզբում հեծյալ զորամասի մասին նշող պատմիչը մարտում նրանց մասնակցության մասին չի խոսում:

Գրոհի ենթարկված արաբական զորամասերը սկսում են նահանջել դեպի զառիթափը: Օգնություն ստանալու հնարավորությունից զրկված լինելով՝ նրանք արագ խուճապի են մատնվում և փախչում: Այս հաղթանակը հսկայական նշանակություն է ունենում Քթիշի պաշտպաններին ոգևորելու գործում, իսկ արաբական զորքի բարոյահոգեբանական վիճակն այնքան է վատանում, որ ձեռնարկվող նորանոր հարձակումներն ավարտվում են խայտառակ պարտություններով: Սակայն չնայած անհաջողություններին՝ կատաղած Բուղան, հաշվի չնստելով մեծաթիվ կորուստների հետ, չի դադարեցնում ամրոցի գրոհները:

Հաղթանակը

Ամրոցը գրավել ձգտող անհաջողակ զորապետի արտասովոր համառությունը և նրա ապարդյուն ջանքերին դիմակայող հայորդիների էլ ավելի համառ պաշտպանությունը եզակի են միջնադարի համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ: Բավական է նշել, որ *մեկ ամբողջ տարի* շարունակվող պաշարման ընթացքում արաբները Քթիշի դեմ ձեռնարկում են *քսանութ գրոհ*, բայց ամեն անգամ ջախջախվում ու մեծ կորուստներ կրելով՝ հետ են շպրտվում:

Ստեղծվում է անելանելի իրավիճակ: Արաբական բանակն այնքան մեծաթիվ էր, որ ապստամբները չէին կարող դուրս գալ բաց դաշտ և վերջնականապես ջախջախել նրան: Միևնույն ժամանակ, հայ զինյալների դիմադրությունն այնքան ամուր էր, որ բազում անհաջող փորձերից հետո Բուղան ևս համոզվում է իր մտադրությունների անիրականանալիության մեջ: Չկարողանալով ռազմական միջոցներով հաղթանակի հասնել՝ Բուղան իր անունը վերջնականապես չվարկաբեկելու համար Ապումուսեին առաջարկում է դիմադրությունը դադարեցնել և բանակցել: Հակառակորդի նենգափոխությունների մասին քաջատեղյակ հայ իշխանը հրաժարվում է ընդունել առաջարկը և հայտարարում, որ դիմադրությունը կդադարեցնի միայն խալիֆայության արքունիքից գրավոր հավաստիացումների դեպքում:

Ամրոցի պատերի տակ ծվարած թշնամու բանակի կարգապահությունն անգործության պայմաններում սկսել էր թուլանալ, և այլ ելք չունենալով՝ Բուղան ընդունում է հայ իշխանի պայմաններն ու միջնորդության խնդրանքով դիմում արքունիք: Սա 849-855թթ. ազատագրական պայքարի ամենամեծ հաղթանակներից մեկն է:

> **Պատմական տեղեկանք.** «Սրանց պատերազմը երկարեց մոտ մեկ տարի, և ոչ մի ճակատամարտում Ապումուսեն երեսը չդարձրեց Բուղայից: Եվ ինչպես պատմվում է, նրանց պատերազմների թիվը հասավ 28-ի, և արքունի զորքը ջարդվեց այսքան կռիվներ մղելուց»:
>
> ***Թովմա Արծրունի,***
> ***Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ժ***

Այսպիսով, հայ ժողովրդի համար դժվարին իրադրությունում Արցախ աշխարհի քաջերն առանց վարանելու վերցնում են Վասպուրականում սկսված ապստամբության դրոշը և ուժերի գերլարումով այն տանում մինչև պայքարի հաղթական ավարտը: Նրանց հերոսական մաքառումների հետևանքով՝ արքունիքի հրամանը չկատարած վարձկան թուրք զորավարը 855թ. Հայաստանից հետ է կանչվում:

ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պավլիկյան շարժումը վաղ միջնադարի Հայաստանի ամենահզոր ազատագրական և կրոնա-սոցիալական շարժումն է: Այն սկզբնավորվել է Արևմտյան Հայաստանում և տարածվել երկրի մյուս շրջաններում, Բյուզանդիայում, Բալկաններում, Կիևյան Ռուսիայում և եվրոպական մի շարք երկրներում:

Պավլիկյան շարժումը մեծ վերելք է ապրում 7-րդ դարի կեսերից: Շարժման ծավալումից անհանգստացած Բյուզանդական կայսրության իշխանությունները դաժան հետապնդում են սկսում: Հալածանքների պայմաններում պավլիկյաններն աստիճանաբար ստեղծում են սեփական ռազմաքաղաքական կառույցը: Մասնավորապես, շարժման մասնակիցներն ունեին իրենց մշտական զինված ուժերը՝ սպարապետի գլխավորությամբ: Վերջինս պավլիկյան համայնքում երկրորդ դեմքն էր համայնապետից հետո[1]:

654թ. շարժման առաջնորդ է դառնում Կոստանդին Հայը (մոտ 630-681թթ.), որը ծնվել է Բարձր Հայքի Մանանաղի գավառում: Նա հաստատվում է Փոքր Հայքի Առաջին Հայք գավառի Կիբոսա (Կիբոսսա) ամրոցում:

> **Պատմական տեղեկանք.** «Կոստանդին կայսեր թագավորության ժամանակ Հայաստանի... Մանանաղի անունը կրող գյուղում, հանդես եկավ Կոստանդին անունով մի հայ... որն իրեն Սիլվանոս վերանվանեց: Այս Կոստանդինը, որ և Սալոանուս[2] էլ էր կոչվում, Մանանաղին թողնելով, եկավ հաստատվեց Կոլոնիայի մոտ գտնվող Կիբոսսա բերդում»:
>
> ***Պետրոս Սիկիլիացի, Պիտանի պատմություն***

Սկզբնական շրջանում բյուզանդական իշխանությունները հնարավորություն չունեին զբաղվելու պավլիկյանների «հարցով»:

---

[1] Կապված IXդ. ակտիվ ռազմական գործողությունների հետ՝ սպարապետները (Կարապետը, Խրիսոխիրը) ստանձնեցին ղեկավար դերը:

[2] Պավլիկյանների հանդեպ ատելությամբ լցված պատմիչը Սիլվանոսի փոխարեն գրում է Սալոանուս, որը բառախաղ է, քանի որ հունարեն *սալոս* նշանակում է «հիմար, խելագար», իսկ *անուս*՝ «անխելք, անմիտ»:

ՄԱՎՐՈՊՈՏԱՄՈՆԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
843Թ.

Ռազմական քաղաքականությունը

9-րդ դարի սկզբից իրադրությունը սկսում է փոխվել: Բյուզանդական կայսրությունը նոր արշավանքներ է ձեռնարկում պավլիկյանների դեմ, ինչը վերջիններիս ստիպում է դաշնակցել արաբների հետ: Խալիֆայության քայքայումը դադարեցնելու համար բավարար ներուժ չունեցող արաբները պատրաստ էին այս քայլին և փոխում են իրենց վերաբերմունքը պավլիկյանների հանդեպ: Մանավանդ որ աղանդապետ Սերգիոս (Սարգիս)-Տյուքիկոսի օրոք (801-835թթ.) շարժումը վերելք էր ապրել:

Կայսրությունում պավլիկյանների հալածանքները նոր թափ են ստանում Թեոփիլոս կայսեր (829-842թթ.) և, հատկապես, նրա կնոջ՝ Թեոդորա Մամիկոնյանի (842-856թթ.) գահակալման տարիներին: Բյուզանդացիներին հաջողվում է գլուխ բերել Սերգիոսի սպանությունը, որին հետևում են նրա մի շարք աշակերտների հետապնդումները: Համախմբելով բոլոր ուժերը՝ Թեոդորան որոշում է մեկընդմիշտ լուծել հզոր ուժ դարձող պավլիկյանների հարցը: Այդ նպատակով նա իր գահակալման առաջին իսկ տարում (843թ.) հզոր արշավանք է ձեռնարկում:

Արշավանքի իրականացման ժամանակը պատահական չէր ընտրված: Պավլիկյանների շարքերում վերսկսվել էին գաղափարական վեճերը, որոնք թուլացնում էին շարժումը: Շարժման ղեկավարների մի մասը գտնում էր, որ առանց կրոնական հիմնավորման անհնար է դիմակայել հզոր հակառակորդին, իսկ մյուս թևը պնդում էր, որ բյուզանդացիների բռնություններին արժանի պատասխան տալու համար պետք է մի կողմ թողնել կրոնական *անպտուղ* բանավեճերը և շարժումը վերջնականապես վերափոխել *ազատագրականի:*

Բյուզանդական արշավանքը

Կայսրուհին սխալվում էր՝ կարծելով, թե Սերգիոսի պես տաղանդավոր առաջնորդի սպանվելուց հետո շարժումը կործանման եզրին է հայտնվել: Արտաքին վտանգը համախմբում է պավլիկյաններին, և Սերգիոսի աշակերտներն արագ կարողանում են վերացնել ներքին պառակտումը: Բյուզանդական բանակի արշավանքի նախօրյակին պավլիկյանները միասնական ճակատ են կազմում:

Գլխավոր խնդիրը լուծված համարելով՝ պավլիկյանները միանում են Մելիտինեի արաբ ամիրա Օմար իբն-Աբդուլլա ալ-Ակթայի ձեռնարկած արշավանքին և մի շարք կանխող հարվածներով մարտավարական առումով բարենպաստ դիրքեր գրավում:

*Այս միջոցառումներն **անչափ կարևոր էին,** քանի որ հնարավորություն էին տալիս խուսափել մեկ հարվածով ջախջախված լինելու հեռանկարից:*

Բյուզանդական բանակը քանակական հսկայական առավելություն ուներ պավլիկյանների զորամասերի նկատմամբ, և Թեոդորան հույս ուներ, որ հնարավոր կլինի մեկ հարվածով «գործն» ավարտել:

40 հազարանոց բանակի հրամանատար է նշանակվում կայսրուհու քաղաքականության իրականացման եռանդուն պաշտպաններից մեկը՝ Լոգոթետ Թեոկտիստը: Բյուզանդական բանակը կենտրոնանում է Փոքր Հայքի սահմանամերձ շրջաններում և մտնում երկրամասի սահմանները: Քանի որ բյուզանդական կողմը քանակական առավելություն ուներ, ուժերի միավորումը հնարավորություն էր տալիս միասնական բռունցք ստեղծել և հզոր հարվածներ հասցնել: Սակայն, հապաղելով, բյուզանդական բանակը նախաձեռնությունն ամբողջությամբ հանձնում է հակառակորդին, որն այդ ընթացքում անգործ չէր:

Սև ջուրը

Պավլիկյաններն իրենց ուժերն արագ միավորում են արաբների հետ: Որպեսզի հակառակորդը չկարողանա իրականացնել իր մտահղացումը՝ դաշնակիցների զորքը ընդառաջ է շարժվում բյուզանդացիներին և նրանց «դիմավորում» Փոքր Հայքի սահմանագլխում: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Կեսարիայից հյուսիս՝ Մավրոպոտամոն վայրում:

> **Աշխարհագրական տեղեկանք.** «Խորհրդանշական է, որ Ալիս գետի ավազանին պատկանող և Կեսարիայի հյուսիսային կողմերով հոսող Մավրոպոտամոնը հայերենով բառացի թարգմանվում է Սև ջուր»:
>
> ***Ն.Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Վարդ Մամիկոնյան***

Արքունիքից ստացած հրամանի համաձայն՝ բյուզանդական բանակի առաջխաղացումն (տե՛ս քարտեզը) ուղեկցվում էր վայրագություններով, որի պատճառով տեղական բնակչությունը միանշանակորեն բացասական վերաբերմունք ուներ բյուզանդացիների նկատմամբ: Այս հանգամանքը որոշակիո-

րեն նպաստում էր պավլիկյաններին, որոնց գործողություններում ազատագրական պայքարի տարրերը գերիշխող էին:

Ճակատամարտի սկզբից ևեթ մարտավարական իրավիճակը նպաստավոր էր դաշնակիցների համար: Մարտը սկսվում է նրանց գրոհով: Բյուզանդացիներին «ուշքի գալու» համար ժամանակ չտալու նպատակով հայ-արաբական զորքերը նորանոր գրոհներ էին ձեռնարկում: Դրանով ստեղծվում է բարդ մարտավարական իրավիճակ:

Դաշնակիցների զորամասերը կարողանում են իրականացնել բյուզանդական զորամասերին իրար սեղմելու միջոցով նրանց գործողությունները կաշկանդելու մտահղացումը: Միայն քանակական գերազանցության շնորհիվ է բյուզանդացիներին հաջողվում կասեցնել հակառակորդի իրար հաջորդող մի քանի գրոհները: Մարտը համառ բնույթ է ստանում, որի պատճառով երկու կողմերի զոհերը մեծաթիվ էին:

*Բավական երկարատև ճակատամարտը **երկու կողմերի համար էլ** հավասարապես հյուծիչ էր և ավարտվում է իրիկնադեմին:*

Բյուզանդական բանակը ծանր պարտություն է կրում և նահանջում: Փախուստով փրկվում է նաև բյուզանդական բանակի հրամանատարը: Դաշնակիցները մեծ թվով գերիներ են վերցնում:

Թեև հաղթանակը պավլիկյաններին չազատեց բյուզանդական զորքերի՝ նորանոր սպառնալից գործողություններից, սակայն վկայեց անհավասար պայքարում ազատագրական պայքարը շարունակելու և, ավելին, հաղթական ավարտի հասցնելու նրանց հաստատակամության մասին:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 843Թ. ԵՎ ՄԱՎՐՈՊՈՏԱՄՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

ՍԱՄՈՍԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
859Թ.

Սավրոպոտամոնի ճակատամարտում կրած պարտությունը մոռացության տալու համար Թեոդորա կայսրուհին պավլիկյանների դեմ պայքարի համար կենտրոնացնում է Բյուզանդիայի ռազմական գրեթե ամբողջ ներուժը: Միայն այդ գնով է նրան հաջողվում թեկուզ ինչ-որ «հաջողություններ» արձանագրել հակամարտությունում:

Պավլիկյան շարժման վերափոխման ավարտը

Ազատագրական պայքարը նոր վերելք է ապրում տաղանդավոր ռազմական գործիչ, բյուզանդական բանակի նախկին զինվորական Կարապետի[1] առաջնորդության տարիներին (845-863թթ.):

> **Պատմական տեղեկանք.** «Անատոլիկոն բանակաթեմի զորավարի մոտ ծառայում էր Կարբեաս անունով մեկը, որ պրոտոմանդատորի աստիճանն ուներ և դավանում էր ու պաշտում պավլիկյանների հավատքը: Սա, լսելով, որ իր հայրը ցցահան է արվել, այդ բանը գերագույն դժբախտություն համարեց, և գործերը կարգի բերելով, իր հինգ հազար աղանդակիցների հետ փախավ Մելիտենեի այն ժամանակվա ամիրա Ամերի (Օմար իբն-Աբդալլահ ալ-Ակթա) մոտ, այնտեղից էլ՝ խալիֆայի, որի կողմից նա փառավոր ընդունելության արժանացավ...
>
> (Պավլիկյաններն) այնքան բազմացան, որ սկսեցին իրենց համար քաղաքներ կառուցել՝ այսպես կոչված Արգաուսը և Ամարան: Երբ այս անգամ այնտեղ սկսեցին հոսել նույն փորձանքը դավանողների նոր բազմություններ, մի այլ քաղաքի կառուցման սկիզբը դրեցին, որը կոչեցին Տեֆրիկե»:
>
> ***Թեոփանեսի Շարունակող, ժամանակագրություն, Գիրք Դ, Գլուխ 16***

Որպես փորձված զինվորական՝ Կարապետը գիտակցում էր, որ շարժումը պետք է կենտրոն ունենա: Այս նկատառումներով նա 855թ. Փոքր Հայքի և Բարձր Հայքի սահմանին հիմնում է Տևրիկ (Տեֆրիկե) ամրացված քաղաքը: Տևրիկի ռազմավարական կարևոր դիրքը խոսում է Կարապետի մեծ փորձառության մասին: Նույն թվականին Կարապետը՝ Տարսոնի և Հայաստանի սահմանային շրջանների կառավարիչ Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի[2] հետ համատեղ արշավանք է ձեռնարկում Բյուզանդիայի սահմանային շրջանների դեմ, որով հակառակորդն էլ ավելի անբարենպաստ իրավիճակում է հայտնվում:

Այսպիսով, Բյուզանդիայի «արևելյան» քաղաքականությունը կատարյալ ձախողման եզրին էր, երբ մորն իշխանությունից հեռացնելուց հետո գահին հաստատված Միքայել Գ-ն ևս որոշում է շարունակել նախկին քաղաքականությունը: Երիտասարդ կայսրը գտնում էր, որ Արաբական խալիֆայության թուլացման պայմաններում կարելի է ակտիվ նվաճողական քաղաքականություն վարել արևելքում:

---

[1] Բյուզանդական պատմիչների «թեթև ձեռքով» շարժման այս առաջնորդի անունը ևս առավել հայտնի է աղավաղված Կարբեաս կամ Կարպեաս ձևով:

[2] Այս գործչին հայ պատմիչները հիշում են որպես «Ալի Արմանի» կամ «Ալի որդի Վահեի (Յահյեի)» ձևերով:

859թ. արշավանքը

Շուրջ երեք տարի տևած նախապատրաստական աշխատանքներից հետո 859թ. նոր արշավանք է սկսվում պավլիկյանների դեմ (տե՛ս քարտեզը): Բյուզանդական արքունիքը արշավանքին մեծ նշանակություն էր տալիս՝ հույս ունենալով, որ արշավանքի արդյունքում պավլիկյան շարժումը հնարավոր կլինի վերջնականապես ճնշել: Արշավանքին արժանի «շուք» հաղորդելու համար զորքը գլխավորում է անձամբ Միքայել կայսրը:

Ուժերն անհավասար էին, և պավլիկյանները փոքր մարտերով հակառակորդին ներքաշում են իրենց տիրույթների խորքը: Առաջին հաջողություններից ոգևորված բյուզանդացիները պաշարում են անառիկ ամրոց հանդիսացող Սամոսատը, ուր ամրացել էին պավլիկյանները: Ամրոցի գրավմանը մեծ կարևորություն էր տրվում, քանի որ հաջողության դեպքում վերջ կտրվեր շրջանառվող լուրերին, թե պավլիկյան շարժումն արմատախիլ անելն անհնար է:

Բյուզանդական բանակը հզոր պատնեշ է ստեղծում Սամոսատում պաշարված պավլիկյանների գլխավոր ուժերի և նրանց դաշնակից արաբական զորամասերի միջև: Ակնհայտ էր, որ եթե դաշնակիցները համատեղ ուժերով բավականին կայուն դիմադրություն էին ցույց տալիս, ապա, մասնատված լինելով, նրանք թույլ էին բյուզանդացիներից:

> **Պատմական տեղեկանք.** «(Վարդաս Մամիկոնյանը) աղվամազը դեռ նոր բուսնող Միքայելի[1] հետ ամբողջ զորքով պատերազմի գնաց իսմայելացիների և արդեն հիշված Ամերի դեմ: Ոտք դնելով թշնամու տարածքը՝ պաշարում են Սամոսատ կոչվող անառիկագույն քաղաքը: Այստեղ նրանք համոզվեցին, որ գործ ունեն ոչ թե Թեոդորայի, այլ շատ խորամանկ մարդկանց հետ»:
>
> *Թեոփանեսի Շարունակող, ժամանակագրություն, Գիրք Դ, Գլուխ 23*

Սամոսատի պաշտպանությունը

Սամոսատի պաշարմանը հաջորդած երկու օրերին բյուզանդական զորամասերը զբաղված էին արտաքին աշխարհի հետ Սամոսատի կապը կտրելու աշխատանքներով: Ընդ որում, նրանց հաջողվում է ավարտել նախանշված աշխատանքների մի մասը, այդ պատճառով բյուզանդական զորամասերի զգո-

---

[1] Միքայել Գ-ի անչափահաս լինելու պատճառով փաստական իշխանությունը գտնվում էր կայսեր մորեղբոր՝ Վարդաս Մամիկոնյանի ձեռքում:

նությունն ընկնում է: Թեև այս մասին տեղեկություններն անորոշ են, սակայն պետք է կարծել, որ պաշարողական միջոցառումներն այդ դարաշրջանի համար բնորոշ աշխատանքներ էին (դեպի ամրոց տանող ճանապարհները (արահետները) փակվում էին, կարևոր տեղամասերում փոսեր էին փորվում կամ անհրաժեշտության դեպքում *հակապատնեշներ* կառուցվում և այլն):

Սամոսատում էր պատսպարվել շրջակա գյուղերի բնակչությունը, ինչպես նաև բյուզանդացիների առաջխաղացմանը խոչընդոտելու համար դժվարին մարտեր վարելով նահանջող պավլիկյանների զորամասերը: Այդ մասին իմացող բյուզանդացիները վստահ էին, որ նրանց սննդի պաշարն անբավարար է լինելու և սովահարության մատնված պավլիկյանները հարկադրված են լինելու դադարեցնել դիմադրությունը:

Գերագնահատելով իրենց ուժերը՝ բյուզանդացիները չէին սպասում, որ պավլիկյանները համարձակություն կունենան արտագրոհի դիմելու և մատնվել էին անհոգության ու զանց առել նախազգուշական միջոցները: Պաշարմանը հաջորդած երկու օրերի ընթացքում Սամոսատի պաշտպանները նկատում են, որ բյուզանդական բանակի հրամանատարությունն աչքաթող է արել մարտավարական առումով մի շարք կարևոր կետերի պաշտպանությունը, իսկ ժամերգությունների ընթացքում պահակակետերում բավարար քանակությամբ զինվորներ չեն թողնվում:

Արտագրոհը

Պաշարման երրորդ օրը ամրոցի դարպասները բացվում են: Սակայն ի զարմանս Սամոսատի պաշտպաններից միայն դիմադրությունը դադարեցնելու սպասող բյուզանդական բանակի հրամանատարների ու զինվորների՝ Կարապետի մարտիկները դուրս էին եկել ոչ թե *գերի հանձնվելու*, այլ *հաղթանակ կերտելու:*

> **Պատմական տեղեկանք.** «Պաշարման երրորդ օրն էր, շաբաթվա օրերի առաջինն ու գլխավորը[1], (բյուզանդացիները) պետք է կատարեին սուրբ հաղորդության խորհրդի արարողությունն ու հաղորդվեին, բայց այդ բանն անում էին առանց առնելու նախազգուշական միջոցները, կամ էլ անփորձ լինելով՝ բանի տեղ չէին դնում քաղաքում պաշարվածներին, ենթադրելով, որ նրանցից և ոչ ոք չի հանդգնի ձեռք բարձրացնել հռոմայեցիների[2] կայսեր վրա: Ահա աստվածային խորհրդին հաղորդվելու պահին թշնամիները քաղաքի ամեն տեղից զենքերով

[1] Կիրակի:
[2] Բյուզանդացիների:

դուրս թռան: *Հնարավոր չէր տեսնել մի հռոմայեցու, որ փախուստի չէր դիմում:* Ինքը՝ Միքայելը, հազիվ ձի նստելով, առանց մարտ տալու փախուստի դիմեց և մի կերպ փրկվեց, տեղում թողնելով և վրանները, և սպասարկող անձնակազմը: Ասում են, թե այնտեղ աչքի ընկավ նաև նախապես հիշատակված Կարբեասը՝ Տեֆրիկեի կառուցողը: Նա կոտորեց ոչ միայն բազում հասարակ զինվորների, նա գերի վերցրեց մեծամեծ զորավարների՝ Ցանգոտուբոս Աբեսալոմին, Սիոն պալատինոսին և այլ, շուրջ հարյուր փոխզորավարների ու տուրմարխների: Հիշյալ զորավարները պատերազմից հետո բանտ նետվեցին»:

Թեոփանեսի Շարունակող, ժամանակագրություն, Գիրք Դ, Գլուխ 23

Արտագրոհը, որը անկանոն ռազմարվեստի դասական օրինակ է, պսակվում է հաջողությամբ: Սկսվում է շանթահար եղած և միասնական ճակատ կազմել չկարողացող բյուզանդացիների ջարդը: Վերջիններս մարտադաշտում թողնելով արշավանքի առաջին փուլում վերցված ամբողջ ռազմավարը և զինվել չհասցրած զինվորների զենքերը՝ խուճապահար փախչում են (տե՛ս քարտեզը): Հաղթողները գերում են բյուզանդական բանակի շուրջ հարյուր բարձրաստիճան զինվորականների:

Ահաբեկված Միքայել կայսրը Սամոսատի տակ կրած ծանր պարտությունից հետո հաշտության բանակցություններ է սկսում պավլիկյանների և նրանց դաշնակից արաբների հետ, որը պետք է դիվանագիտորեն ձևակերպեր համարձակության և անձնազոհության խորհրդանիշ դարձած հաղթանակի արդյունքները: Հետևաբար, այս հաղթանակը պավլիկյանների առաջին հաջողությունն էր, որը Կոստանդնուպոլսի արքունիքին հարկադրում էր իրական զիջումների գնալ:

ՄԻՔԱՅԵԼ Գ-Ի ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ՍԱՄՈՍԱՏ ԵՎ ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՐՎԱԾԸ 859Թ.



ԽՐԻՍՈՒԽԻՐԻ[1] ԵՎ ԿԱԼԼԻՍՏՈՍԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ԴԵՊԻ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ

870Թ.

Պավլիկյանների տիրույթների նվաճումն անձամբ գլխավորող կայսրերը և նրանց պալատական-զինվորական աստիճանավորները չէին էլ փորձում հասկանալ մեծաթիվ բանակի «քրոնիկական» դարձող պարտությունների իրական պատճառները: Նրանք հրաժարվում էին հավատալ, որ «անհնազանդ աղանդավորները»՝ հայրենի երկրի մի մասում (Փոքր Հայքում) անկախ ապրելու իրավունքի համար պայքարի դրոշ պարզած հայ ժողովուրդն ու, օտար նվաճողներից պաշտպանվելով, հայերի բնական դաշնակից դարձած այլազգիներն են:

Դավանաբանական հարցերը *նվաճումների գաղափարական հենքը* դարձնելով՝ բյուզանդացիները, հաճախ, իրենք էին պավլիկյաններին հարկադրում ազատագրական պայքարը հարստացնել կրոնական երանգներով: Պավլիկյանների հաղթանակները պայմանավորված էին բյուզանդական կողմի վերը նշված թերացումներով:

Բացի այդ, խիստ կարևոր է, որ պավլիկյան շարժումը ձեռք է բերում ***ազատագրական պայքարին*** *բնորոշ գծեր: Թերևս դրանով են բացատրվում նրանց այս փուլի հաղթանակները:*

Կարապետի մահից (863թ.) հետո շարժման գլուխ է կանգնում նրա զարմիկն ու փեսան՝ տաղանդավոր զորավար և պայքարի անխոնջ կազմակերպիչ Խրիսոխիրը, որը ևս բյուզանդական բանակի նախկին զինծառայող էր և ունեցել էր սպաթարի աստիճան: Նրա օրոք շարժման հզորությունը հասնում է գագաթնակետին:

Խրիսոխիրը քայլեր է ձեռնարկում ուժերը համախմբելու ուղղությամբ՝ ընդհուպ մինչև իր իշխանությանը պետության բնորոշ տարրեր հաղորդելը:

Չնայած Բյուզանդիայի կողմից շարունակաբար մեծացող ճնշմանը, պավլիկյանները մեկ տասնամյակ շարունակ կարևոր հաջողությունների են հասնում՝ ավելի տարածվելով ու հզորանալով:

Հակապավլիկյան պայքարի այնպիսի ջատագովներ, ինչպիսիք են բյուզանդական պատմիչները, ակամա գովերգում են «աղանդապետներին»:

---

[1] *Խրիսոխիր* անունը հունարենից կարելի է թարգմանել որպես *Ոսկեձեռք:*

Պատմական տեղեկանք. «Այն ժամանակները Տեֆրիկեի առաջնորդը, որին Խրիսոխիր էին անվանում, *իրեն քաջ ու խոհեմ մարդ համարելով,* դաժան փորձությունների էր ենթարկում հռոմայեցիների երկիրն ու մարդկանց»:

Թեոփանեսի Շարունակող, ժամանակագրություն, Գիրք Ե, 37

869թ. արշավանքը

Արևելքում երկարաձգվող պատերազմն ավարտելու նպատակով Բյուզանդիայում Հայկական (Մակեդոնական) դինաստիայի հիմնադիր Բարսեղ Ա-ն (Վասիլ, 867-886թթ.) 869թ. ի մի է բերում կայսրության զինված ուժերի հիմնական մասը և արշավանք սկսում դեպի Միջագետք՝ թուլացած Արաբական խալիֆայության դեմ: *Դժվար է գերագնահատել այս արշավանքի դերը արաբների ռազմական հզորությունը վերջնականապես կոտրելու գործում:* Արաբներին ծանրագույն հարված է հասցվում:

Բարսեղը վստահ լինելով, որ միայնակ մնացած պավլիկյաններին պարտության մատնելն առանձին դժվարություն չի ներկայացնելու, 869թ. վերջին - 870թ. սկզբին հարձակումը շարունակում է Փոքր Հայքի ուղղությամբ:

Ճիշտ որոշում ընդունելու համար Խրիսոխիրը պետք է միաժամանակ սառնասիրտ զորավար և քաղաքական-վարչական բնագավառի հմուտ կազմակերպիչ լիներ: Ի պատիվ «ինքնուս» զորավարի պետք է ասել, որ նա *մեծ խնամքով* էր նախապատրաստվել պատերազմին, ու բյուզանդացիները չեն կարողանում միջագետքյան հաղթարշավը կրկնել Փոքր Հայքում:

Հավատարիմ մնալով ***հայոց ռազմարվեստում բազմիցս կիրառված*** *նահանջի ռազմավարության և արդեն իսկ արմատավորված* ***անկանոն մարտավարության*** *սկզբունքներին՝ Խրիսոխիրը Տիգրան Բ Մեծի ռազմավարությանը բնորոշ հնարքներով խուսափում է հակառակորդի հետ վճռական ճակատամարտից, ամրանում անառիկ Տևրիկում և, ի վերջո,* ***փայլուն հաղթանակ*** *տանում:*

Նահանջն առաջին անակնկալն էր, քանի որ բյուզանդացիները «սովորել» էին յուրաքանչյուր թիզ հող գրավելու համար պավլիկյանների հետ դժվարին պայքար վարելուն և նույնպիսի դիմադրության ակնկալիքով էլ սկսել էին արշավանքը: Պավլիկյանների «անգործությունը» տեսնելով՝ Բարսեղը որոշում է, որ նրանց դիմադրելու կամքը կոտրված է և մեծացնում է զորքի առաջխաղացման արագությունը: Դիմադրության չհանդիպելով՝ բյուզանդական բանակը շարժվում է առաջ:

Պատմական տեղեկանք. «(Խրիսոխիրը) չհամարձակվեց բացահայտ դիմադրել իր վրա արշավող քաջ զորքին, դիմադրել խիզախ ու խոհեմ կայսրին: Նա նահանջեց՝ մտադիր լինելով պաշտպանել ու ամրացնել իր քաղաքը (Տևրիկը) միայն: Կայսրը *ոչ մի* խոչընդոտի չհանդիպելով, *ասպատակեց, գրավեց, ու հրկիզեց* Խրիսոխիրին ենթակա *բոլոր* շրջանները և ավանները, ձեռք բերեց անհամար ավար ու գերիներ»:

Թեոփանեսի Շարունակող, ժամանակագրություն, Գիրք Ե, 37

Բյուզանդական պատմիչները մեծ ոգևորությամբ են խոսում այս փուլում կայսեր ունեցած «հաջողությունների» մասին՝ փառաբանելով նրա մեծագործությունները: Սակայն որքան էլ նրանք ձգտել են կոծկել արշավանքի ընթացքում իրականացվող դաժանությունները, ամբողջությամբ չեն հասել իրենց նպատակին:

Պատմական տեղեկանք. «(Բարսեղը) հարձակվեց հենց Տեֆրիկե քաղաքի վրա, փորձեց նետաձգությամբ ու ոչ երկարատև պաշարմամբ գրավել այն: Բայց ավելի երկարատև պաշարման մտքից նա հրաժարվեց, որովհետև համոզվեց, որ դժվար է քաղաքը գրավել- պարիսպներն ամուր էին, պաշտպանվող բարբարոսները անթիվ, ապա նաև առատ պարենով ապահովված: *Այդ բոլորից բացի իր մեծաքանակ զորքը կարճ ժամանակվա ընթացքում* ***շրջանն ամբողջությամբ ամայացրել էր*** *և ողջ պարենը գրեթե սպառել:* (Բարսեղը) *ավերակ դարձրեց* Տեֆրիկեի շուրջը գտնվող Աբարա, Սպաթե և մի քանի այլ ամրոցներ և... վերադարձավ»:

Թեոփանեսի Շարունակող, ժամանակագրություն, Գիրք Ե, 37:

«Կայսրը նրանց (պավլիկյանների) դեմ արշավեց երկու անգամ: Առաջին անգամ նա *համայն շրջանները գերեվարությամբ ու հրկիզմամբ* ***ամայացրեց,*** այնուհետև որոշ ժամանակ պատերազմ մղեց Տեֆրիկեի դեմ: *Անհաջողության մատնվելով՝* նա վերադարձավ մայրաքաղաք»:

Հովսեփ Գենեսիոս, Թագավորություններ, Գիրք Դ

Բյուզանդացիներին հաջողվում է պաշարել Տևրիկը, և դրանով էլ սկսվում են նրանց անհաջողությունները: Պարզվում է, որ իր գոյության ընդամենը մեկ և կես տասնամյակների ընթացքում քաղաքը մեծ և բարգավաճ բնակավայր է դարձել: Բյուզանդական բանակի արշավանքների կրկնվելու մեծ հավանականությամբ պայմանավորված՝ անառիկ ամրոցի շինարարության սկզբից ևեթ հոգ էր տարվել *շրջակայքի մեծաթիվ բնակչությունը պատսպարելու* և նրանց համար *մթերքի բավարար պաշարներ ամբարելու* հնարավորության մասին: Համոզվելով, որ ամրացված քաղաքը գրոհով գրավել չի հաջողվելու, իսկ «արշավող քաջ զորքի» ասպատակություններից հետո շրջակայքն *ամբողջությամբ* ամայացվել է, կայսրը վերադառնում է մայրաքաղաք:

870թ. պատասխան արշավանքը

Մարտավարական իրավիճակը նպաստավոր էր պավլիկյանների համար, քանի որ Տևրիկի անհաջող պաշարումից հետո բյուզանդական բանակում անխուսափելիորեն կրկին հոգեբանական անկում էր լինելու: Խրիսոխիրը շտապում է օգտվել առիթից: Բյուզանդացիների հեռանալուց անմիջապես հետո նա վերախմբավորում է իր զորքերն ու հակահարձակման անցնելով՝ կրնկակոխ հետապնդում հակառակորդին: Կարճ ժամանակում նրան հաջողվում է ազատել նվաճված տարածքները:

Շարունակելով առաջխաղացումը՝ պավլիկյանները Խրիսոխիրի և Կալլիստոսի գլխավորությամբ ներխուժում են Բյուզանդիայի արևելյան շրջաններն ու հաղթականորեն սլանում դեպի Փոքր Ասիայի խորքերը:

> **Տեղեկանք.** *Կալլիստոսը* պավլիկյան շարժման աչքի ընկնող ռազմական գործիչներից մեկն էր: Ցավոք, նրա մասին տեղեկությունները ծայրահեղ աղքատիկ են: Կալլիստոսը, կարծես, մնացել է շարժման տաղանդավոր առաջնորդների՝ Կարապետի և Խրիսոխիրի ստվերում, թեև երկար ժամանակ (860-870-ական թթ.) հանդես էր գալիս *«երկրորդ առաջնորդի»* դերում: Հատկանշական է, որ շարժման «երկրորդ առաջնորդը» ևս *հոգևորական չէ:*
>
> Կալլիստոսի գործունեությունից, մասնավորապես, հայտնի է, որ նա 870թ. հաղթարշավի կազմակերպիչներից և իրականացնողներից մեկն էր:

Արշավանքին են միանում նաև մի քանի ամիս առաջ Բարսեղից ծանր հարված ստացած արաբական զորամասերը: 870թ. հաղթարշավն իրականացնողների շարքերում տեսնում ենք Կարապետի օրոք հակաբյուզանդական դաշինքի առաջնորդներից մեկի՝ հայազգի Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի որդուն՝ Մուհամմեդ իբն-Ալի իբն-Յահյա ալ-Արմանիին:

Բյուզանդական բանակի նահանջը շուտով վերածվում է փախուստի: Արշավանքի առաջացրած խուճապը համակում է նույնիսկ Կոստանդնուպոլսի բնակչությանը: Հմտորեն օգտվելով ստեղծված իրադրությունից՝ Խրիսոխիրն էլ ավելի է մեծացնում ռազմական գործողությունների ընդգրկումը. զորքերի առջև խնդիր է դրվում արշավանքը շարունակել դեպի Նիկոմեդիա և Նիկիա:

> **Պատմական տեղեկանք.** «(Խրիսոխիրը)՝ Կարապետի և Կալլիստոսի հետ, ինչպես սրա հայրը[1], (հունադավան) քրիստոնյաների գլխին բազում փորձանքներ բերեց, *հասավ մինչև Նիկոմեդիա և Նիկիա,* դեռ ավելին, *ավարառեց Թրակեսիոն բանակաթեմը,* հասավ մինչև Հովան Աստվածաբանի թեմը»:
>
> ***Հովսեփ Գենեսիոս, Թագավորություններ, Գիրք Դ***

---

[1] Բնագրից պարզ չէ, թե ում հոր մասին է խոսքը՝ Խրիսոխիրի՞, թե՞ Կալլիստոսի:

Հաղթանակը

Արշավանքը հասնում է բարձրակետին: Պավլիկյանների զորքերը Բյուզանդիայի մայրաքաղաքից ընդամենը 100կմ հեռավորության վրա էին, իսկ հակառակորդի զորամասերը շարունակում էին անկանոն նահանջը: Ծայր արևմուտքում պավլիկյանները գրավում են Եփեսոսը՝ դուրս գալով էգեյան ծովի ափ, սակայն պետք էր ժամանակին կանգ առնել:

Ոչ մի հակառակորդ չէր կարող հաշվի չնստել *տաղանդի* և *հաշվենկատության* այսպիսի *վառ* դրսևորման հետ, և արշավանքից *հաղթականորեն* վերադարձող Խրիսոխիրին է հասնում Բարսեղ կայսեր ուղերձը: Այն փաստում էր բյուզանդական կողմի հարգանքն ու ճանաչումը: Մարտադաշտում պարտություն կրած կայսրը, այլ ելք չունենալով, հանկարծ դառնում է «խաղաղասեր և իսկապես ողորմած» ու «ոսկի, արծաթ և հանդերձներ» խոստանալով՝ փորձում է կաշառել պավլիկյանների առաջնորդին:

> **Պատմական տեղեկանք.** «Կայսրը, *լինելով խաղաղասեր և իսկապես ողորմած,* Խրիսոխիրին նամակ է գրում՝ հաշտություն կնքելու կոչով, համաձայն ասույթի. «Շնորհել միմեանց որպէս եւ Աստուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ», բավարարվել ձեռք բերածով, *ստանալ իրենից ոսկի, արծաթ և հանդերձներ,* վերջ տալ քրիստոնյաների գերեվարությունն ու կոտորածը: Սակայն լկտին և անհավատը (խոսքը դարձյալ Խրիսոխիրի մասին է) չընդառաջեց խաղաղարար խոսքերին և կայսրին պատասխանեց այսպես. «Ո՜վ կայսր, եթե կամենում ես մեզ հետ հաշտություն կնքել, հրաժարվի՛ր Արևելքի վրա ունեցած քո իշխանությունից և տիրի՛ր Արևմուտքի վրա, ահա այդ դեպքում կխաղաղվենք քեզ հետ, հակառակ դեպքում կջանանք քեզ գահընկեց անել»: Կայսեր համար պարզ դարձավ, թե ինչ անմիտի հետ գործ ունի, դրա համար լռեց, այլևս նրան պատասխան նամակ չգրեց»:
>
> ***Հովսեփ Գենեսիոս, Թագավորություններ, Գիրք Դ***

Որքան էլ կողմնակալ լինի, բյուզանդական պատմիչը ընդհանուր գծերով կարողացել է նկարագրել բանակցությունների էությունը: Դրանք ևս մեկ անգամ վկայում են, որ պավլիկյան շարժումը վերջնականապես վերածվել էր անկախության պատերազմի:

Շարժման և նրա տաղանդավոր զորավարին բնութագրելու համար հսկայական նշանակություն ունի այն փաստը, որ Խրիսոխիրը ոչ միայն չի ընդունում կայսեր առաջարկը, այլև նրան է ներկայացնում իր համարձակ պահանջները: Խրիսոխիրի խոսքը համարձակ և ինքնավստահ *քաղաքական գործչի* պատասխան է:

Այսպիսով, պավլիկյան շարժումը կարևոր տեղ է զբաղեցնում հայոց ռազմարվեստի պատմության մեջ: Հայոց պատմության մեջ պավլիկյանների կարևոր ***առաքելություններից մեկն էլ*** *այն էր, որ նրանք կասեցրեցին վերելք ապրող Բյուզանդական կայսրության առաջխաղացումը դեպի արևելք: Դրանով նրանք անուղղակիորեն նպաստեցին նույն ժամանակաշրջանում արաբական տիրապետությունը թոթափող Մեծ Հայքի ինքնիշխանության կայացմանը:*

ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ 870Թ.

ՌԱՁՄԱՐՎԵՍՏԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱՇԱՇՐՋԱՆՈՒՄ
860-870-ԱԿԱՆ ԹԹ.

Թուլացած ու անկում ապրող Արաբական խալիֆայությունն ի վիճակի չէր կանխել Հայաստանի անկախացման ընթացքը:

Քաղաքական ասպարեզ ելած Աշոտ Բագրատունու օրոք Հայաստանը *հաստատուն քայլերով* ընթանում էր լիակատար անկախության վերականգնման ճանապարհով: Նախ, 859թ. Հայաստանի ոստիկան նշանակված Ալի իբն-Յահյա ալ-Արմանիի միջնորդությամբ Աշոտ իշխանը, որն արդեն իսկ երկրի սպարապետն էր, խալիֆայի կողմից Հայաստանի, Վիրքի և Աղվանքի իշխանաց իշխան է ճանաչվում: 860-ական թվականներից հարաբերական խաղաղության պայմաններում սկսվում է պետականության ամրապնդման գործընթացը:

> **Պատմական տեղեկանք.** «(Աշոտ Բագրատունին) նախքան թագավորության (վերականգնումը) երեսնամյա ժամանակով իշխան և իշխանաց իշխան կոչվեց Հայոց և Վրաց, շրջակայքի բոլոր ազգերին էլ հաղթող ճանաչվեց, պայծառացրեց սուրբ եկեղեցու միաբանությունները, զարդարեց Հայաստանի եկեղեցիները. քանզի այր էր քաղցրատես, խոնարհ և անարատ, ապրեց անբասիր կյանքով, չանօրինացավ բնության աշխարհային օրենքներից և իր անբիծ վարքով ըստ ամենայնի հաճո էր Աստծուն»:
>
> ***Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Բ***

> «Նա իր հոգու վրա ազդում էր բարվոք կերպով՝ բոլորի հետ հաստատելով սերտ սեր: Թշնամիների դեմ հակառակություն կամ կռիվ չէր մղում, այլ բարի խոսքերի օգնությամբ նրանց բերում էր ճիշտ ուղղության ու իր կողմը...
>
> Այդպիսով նա եղավ առաջինն ու ավելի պատվականը, քան Հայոց բոլոր նախարարությունները, և բոլորը դաշինք էին կնքում նրա՝ որպես բուն թագավորական ժառանգի հետ»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 135-137***

Հայաստանից վերջին արաբ ոստիկանի վտարմանը (874թ.) հաջորդած տասնամյակը Հայոց իշխանապետության համընդհանուր ճանաչման ժամանակաշրջանն էր:

Բանակաշինությունը

Քայքայվող խալիֆայության «ավերակների» վրա ձևավորվում էին անկախ կամ կիսանկախ պետական կազմավորումներ, որոնք պայքար էին վարում իրենց տիրույթներն ընդարձակելու համար: Այդ պատճառով երկրի փաստական կառավարումը ստանձնելու մտադրություն ունեցող Աշոտ իշխանի առաջին ձեռնարկումներից մեկն է դառնում կանոնավոր զինված ուժերի ստեղծումը: Պետության վերականգնման գործընթացը կանոնավոր բանակի ստեղծումով սկսելով՝ Աշոտ Բագրատունին իր ժամանակակիցներին, մեկ անգամ ևս ցույց է տալիս *պետության հարատևումն ապահովելու գործոնների ստեղծման* կարևորությունը:

Իշխանաց իշխանի անսպառ եռանդի լրացուցիչ ապացույց է այն փաստը, որ իր ժամանակի համար բավականին մեծ համարվող 40 հազարանոց կանոնավոր բանակի վերստեղծման գործընթացը տևում է ընդամենը մի քանի տարի:

Հայոց բանակի առաջին սպարապետ է նշանակվում Աշոտ Բագրատունու եղբայր Աբասը:

Պատմական տեղեկանք. «Հայոց մեծ սպարապետությունը Աշոտը տալիս է իր եղբայր Աբասին, որը քաջազուն, թիկնավետ, զորեղ, վայելչակազմ, պատերազմի մեջ կորովի ու ճարպիկ տղամարդ էր: Աջակցելով իր եղբայր Աշոտին՝ բոլորին հնազանդեցնում է ու գցում նրա լծի տակ: Շատ տեղերում բազմիցս արիություն ցուցաբերելով՝ նա շատերի աչքում հռչակավոր ու հոյակապ էր երևում»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 139



Նիզակի ծայր՝ հեծյալին ձիուց գցելու համար նախատեսված կեռերով

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՁԱՀԱՊԻ ՁՈՐՔԵՐԻ ԴԵՄ
863Թ.

Ընդամենը *մեկ տարի* էր անցել Աշոտ Բագրատունու իշխանաց իշխան դառնալուց, երբ Հայաստանը ենթարկվում է լուրջ փորձության: Հայաստան է ներխուժում արաբ իշխանավոր Սևադայի որդի Ձահապի (Շահապի) հսկայական բանակը (տե՛ս քարտեզը):

Պատմական տեղեկանք. «Այս նույն տարում (863թ.) Սևադայի որդի Շահապը ամբոխասաստ զորքով գալիս է մեր Հայոց երկրի վրա՝ ցանկանալով ավերել ու գերեվարել»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Բ

Ներխուժումը

Չնայած պասիվ գործողություններին և ռազմերթի ոչ մեծ արագությանը՝ արաբական զորաբանակը կարողանում է հասնել երկրի կենտրոնական շրջաններ և Արշարունիք գավառում ամրանում Երասխ (Արաքս) գետի աջ ափից քիչ հեռու՝ Քառասունք կոչվող վայրում:

Մտահղացումը

Տեղանքի ընտրությունը պատահական չէր: Արաբական ճամբարը մի կողմից պաշտպանված էր բնական արգելք հանդիսացող Երասխ գետով, որը Հայկական լեռնաշխարհի ամենաջրառատ գետերից է, մյուս կողմից՝ ճակատամարտելու համար նպաստավոր հարթ դաշտն էր, որի հակառակ կողմում հայկական զորքերի տեղաշարժին հետևելու համար բավականին լավ տեսադաշտ էր բացվում: Սակայն հակառակորդի նախազգուշական միջոցառումները չէին կարող կանգնեցնել Աբաս սպարապետին:

Ճակատամարտը

Երիտասարդ, ռազմական մեծ փորձ չունեցող Աբասը արագորեն վերլուծելով իրադրությունը՝ կարողանում է բոլոր ուժերի գերագույն լարումով հասցվող հարվածով հակառակորդին գլխովին ջախջախել: Այս մտահղացումն իրականացնելը *դյուրին չէր լինելու,* սակայն միայն այդ կերպ էր կարելի կասեցնել արաբական հրոսակախմբի արշավանքը: Զորամասերին առաջադրանք է տրվում միասնական հզոր գրոհով հանկարծակիի բերել հակառակորդին: Հարձակման թափն առավելագույնի հասցնելու համար որոշվում է պահեստում զորամասեր չթողնել և առաջին գրոհն իրականացնել ամբողջ զորքի համատեղ ուժերով (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.



Քառասունքի ճակատամարտը 863թ.

Մարտի համարձակ մտահղացումը երիտասարդ սպարապետի օժտվածության վկայությունն է:

Պատմական տեղեկանք. «Գալիս են Արշարունիք գավառը, հարավային կողմից իջնում է Երասխի ափը, այնտեղ, որն այժմ Քառասունք են անվանում: Իսկ Հայոց սպարապետ մանկահասակ Աբասը, Աստծուն ապավինած, քառասուն հազար մարդկանցով, Հայոց ամբողջ զորությամբ, քաջարի և մենամարտող այրերով գալիս հարձակվում է նրանց վրա, նրանց բանակն ամբողջությամբ ցիր ու ցան անում, այս ու այն կողմ սփռում, ամենքին (առհասարակ) գետավեժ ու սրախողխող անում»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Բ

Համարձակ գրոհը տալիս է սպասված արդյունքը՝ ճակատամարտի սկզբից ևեթ հայոց բանակը կարողանում է իր կամքը թելադրել հակառակորդին: Մարտավարության ամենախիստ պահանջներին համապատասխանող հաջող գրոհի հետևանքով հակառակորդի գործողությունները կաշկանդվում են: Ջահապի զորամասերը սեղմվում են գետին և զրկվում հեծյալ զորամասերով հակագրոհելու հնարավորությունից:

Բարենպաստ իրավիճակում Աբասը հնարավորություն է ստանում սկսել մարտի մտահղացման երկրորդ փուլը: Շարունակելով հարձակումը՝ հայոց

բանակը հակառակորդի մարտակարգի մի քանի «երերացող» տեղամասերում *ճեղքող հարվածներ է հասցնում:* Քառասունքի ճակատամարտի այս դրվագը հիշեցնում է Ձիրավի ճակատամարտում Մուշեղ Մամիկոնյանի իրականացրած հարվածը:

Գետին սեղմված, ճեղքող հարվածների հետևանքով մասնատված և միասնական հրամանատարություն չունեցող հակառակորդը սկսում է նահանջել: Սակայն առաջին հաջողությունը Աբաս Բագրատունու մարտի մտահղացման փոքր մասն էր միայն:

Հաղթանակը

Երասխն անցնող արաբական զորամասերին *ծանր փորձություն* էր սպասվում. մերձամարտի բռնված զորամասերից բացի, ակտիվ գործողություններին ներգրավվում է նաև գետափին դիրքավորված թեթևազեն հետևակը: Այս փուլում Քառասունքի ճակատամարտը, ընդհանուր առմամբ, հիշեցնում է 450թ. Խաղխաղի իրադարձությունները և վկայում մեր ռազմարվեստի տարրերի ժառանգման մասին (տե՛ս սխեմա 2):

Սխեմա 2.



Քառասունքի ճակատամարտը 863թ.

Հայտնի է, որ բանակաշինության գործընթացի սկզբից ևեթ Բագրատունի եղբայրները շեշտը դրել էին *այրուձիու և լայնալիճ աղեղնավոր հետևակի* զորամասերի ստեղծման վրա: Հետևաբար, մարտին մասնակցում էին երկու տեսակ աղեղներով (միջին և լայնալիճ) զինված զորամասեր, որոնց սպարապետը շարել էր երկու գծով: Դա հնարավորություն է տալիս վերականգնել բանակի *եռագիծ մարտակարգը,* որը միջնադարյան մեր ռազմարվեստում *նորարարական էր:*

Մարտակարգի առաջին գիծը կազմում էին *ծանրազեն հետևակն ու ընտիր այրուձին:* Մերձամարտ վարող զորամասերի թիկունքում, ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա էր գործում մարտակարգի երկրորդ գիծը: Այստեղ դիրքավորված էին *միջին աղեղնավորները, տեգաձիգները և պարսատիկավորները:* Հավանաբար երկրորդ և երրորդ գծերի միջև հեռավորությունը ևս ընդամենը մի քանի քայլ էր կազմում: Այս գծում էին լայնալիճ աղեղներով զինված զորամասերը (տե՛ս մարտակարգի սխեմատիկ պատկերը):



ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՐԳԸ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԾԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՍԿԶԲԻՆ (863Թ.)

Գետն անցնող հակառակորդին հետապնդելիս՝ միաժամանակյա ***եռագիծ խոցում*** *հասցնելու հնարքը միջին դարերի համաշխարհային ռազմարվեստում ակնառու իրադարձություն է:*

Թերևս, այդ է պատճառը, որ ճակատամարտի նկարագրության մեջ պատմիչն առանցքային տեղ է հատկացնում իր իսկ պատկերավոր արտահայտու-

թյամբ՝ նահանջող հակառակորդին *«գետավեժ անելու»* գործողությանը: Հակառակորդի զորամասերի վրա այսպիսի մեծ խոցող ազդեցության հետևանքով Երասխի գետանցման ընթացքում նա մեծաթիվ զոհեր է տալիս, որի պատճառով գետի մյուս ափին ևս չի կարողանում միասնական մարտաշար ձևավորել: Խուճապի մատնված գետանցող արաբ զինվորների փախուստը շարունակվում է ընդհուպ մինչև սահմանին հասնելը:

Պատմական տեղեկանք. «Իսկ Շահապը *քսանվեց մարդկանցով* մազապուրծ և ամոթահար փախչում գնում է»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Բ

Ճակատամարտում իրեն փայլուն է դրսևորում Աբաս սպարապետը: Բաց դաշտում հակառակորդի գլխավոր ուժերի դեմ ամբողջ ճակատով միաժամանակյա գրոհ իրականացնելով, ճակատային գործողություններին հատող հարվածներն ավելացնելով և հակառակորդին ջախջախելուց հետո նրա ուժերը գետում ոչնչացնելով՝ երիտասարդ զորավարը հրաժարվում է անկանոն մարտավարության կաղապարներից: Այս առումով, պատահական չէ, որ Աբաս Բագրատունին կրկնում է Վահան Մամիկոնյանի բարեփոխումներին նախորդած շրջանի (370-450-ական թթ.) զորավարների (Մուշեղ և Վարդան Մամիկոնյանների) մարտավարական հնարքները: Հետապնդման ընթացքում եռագիծ խոցման կիրառումով սպարապետը հանդես է գալիս նաև որպես ռազմարվեստի բարեփոխիչ:

ՁԱՀԱՊԻ ԶՈՐՔԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ 863 Թ.

ՀԱՅ ՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Բազմաշնորհ քաղաքական գործիչ և դիվանագետ Աշոտ Բագրատունին հարաբերական խաղաղության պայմաններում ձեռնամուխ է լինում պետական կառույցների վերականգնմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացմանը:

Հեռատեսություն հանդես բերելով՝ Աշոտ Բագրատունին հատուկ ուշադրություն է դարձնում հետախուզական համակարգի նորացմանը: Դա վկայում է, որ նա ամբողջ խորությամբ էր գիտակցում վերակերտվող հայկական պետության համար այս ծառայության կենսական կարևորությունը:

Ռազմավարությունը

Պարտավի քաղաքապետ Մուհամմեդ Եմենիկը կամենում է Արմինիայի ոստիկան դառնալ: Աշոտ Բագրատունին որոշում է «հետախուզել» խալիֆայության իշխանությունների զիջումների պատրաստ լինելու աստիճանը: Հայ իշխանների գլուխն անցած՝ նա մերժում է քաղաքապետի հավակնությունները: Ոստիկանի պաշտոնը զբաղեցնելու համար գալիս է Ահմադ իբն Խալիդը, որը տարիներ առաջ վարել էր այդ պաշտոնը:

Թվում է, թե արաբ աստիճանավորների մեջ մեծ տարբերություն չկար, *սակայն* ***նոր ոստիկանի Հայաստան մտնելու*** *առաջին իսկ օրվանից* ***պարզ է դառնում, թե ինչու էր Աշոտ Բագրատունին հատկապես այդ թեկնածությունը պաշտպանում:***

Ընդունված կարգի համաձայն՝ հայ և արաբ իշխանները գնում են Բաղեշից Դատվան եկող Ահմադ իբն Խալիդին ընդառաջ: Նրանց մեջ էին նույնիսկ Մուհամմեդ Եմենիկի պատվիրակները: Բնականաբար, դիմավորողների խմբում պետք է լիներ նաև իշխանաց իշխանը, սակայն, հարկ չհամարելով անձամբ ներկայանալ, նա իր փոխարեն ուղարկել էր կրտսեր եղբորը՝ Շապուհին:

Այդ քայլը քողարկված մարտահրավեր էր արաբ իշխանավորին, որն անհապաղ քայլեր է ձեռնարկում «ըմբոստացած» հայ իշխանին պատժելու համար:

Դատվանի դավադրությունը

Ահմեդ ոստիկանի, Մուհամմեդ Եմենիկի պատվիրակների, Մանազկերտը զավթած կայսիկների[1] ամիրա Աբու-լ-Վարդի և արաբ մյուս իշխանավորների գաղտնի խորհրդակցություն է հրավիրվում Դատվանում (տե՛ս քարտեզը): Խորհրդակցության մասնակիցները որոշում են դավադրություն կազմակերպել և քաղաքական ասպարեզից հեռացնել ինչպես Աշոտ Բագրատունուն, այնպես էլ նրա շուրջ համախմբված և երկիրը դեպի անկախություն տանող մի շարք այլ հայ իշխանների:

Սակայն դավադրության մասնակիցները գիտեին, որ շրջահայաց Հայոց իշխանին թակարդը գցելը դյուրին գործ չէ: Հարցն այն է, որ արաբների «դժգոհության» դրսևորումներ ակնկալելով՝ նա Աղվանքում գտնվող արաբների ուժերը

---

[1] Արաբական մի ցեղ:

հուսալիորեն մեկուսացրել էր Արմինիա նահանգի կենտրոնական շրջաններում տեղակայված զորամասերից:

Արաբները կկարողանային ռազմական գործողություններ սկսել միայն ուժերը միավորելուց հետո, և արաբ ոստիկանն այդ խնդիրն իրականացնելու ուղիներ է փնտրում: Խորհրդակցության մասնակիցները, կարծես թե, գտնում են Աղվանքում տեղակայված զորամասերը Հայաստան բերելու հիմնավոր պատրվակը. *Մումամմեդ Եմենիկի «խռովությունը»:*

> **Պատմական տեղեկանք.** «(Ահմադը) թուղթ գրեց Յամանկիկին, թե՝ «Երբ կմտնեմ Դվին քաղաք, կպահանջեմ բերել արքունի հարկերը, և Հայոց իշխանները, կասկած չեն տանի, կգան ինձ մոտ: Դու իմ դեմ կռվելու պատրվակով զորք գումարիր ու ելիր իմ դեմ պատերազմի. միասին կջարդենք նրանց և կզրկենք Հայոց իշխանությունից»»:
>
> ***Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. ԺԹ***

Պարտավի քաղաքապետը պետք է սպասեր, մինչև Ահմադ իբն Խալիդը հաստատվեր Դվինում, ապա, իբր հերթական ոստիկանից դժգոհ լինելով, Աղվանքում տեղակայված արաբական զորամասերը խռովություն էին բարձրացնելու և շարժվելու էին դեպի Դվին: Դավադրության կազմակերպիչները գտնում էին, որ քաղաքապետի զինված բողոքի լուրը Աշոտ Բագրատունուն կասկածելի չի թվա, և նա, երկիրն ավերածություններից զերծ պահելու նպատակով, կշտապի միանալ ոստիկանի արաբական զորքին: Դվինում էլ իշխանաց իշխանը կձերբակալվեր, իսկ այդ ընթացքում տեղ հասած ուժերի հետ համատեղ հնարավոր կլիներ ջախջախել նաև հայոց բանակը և վերջ տալ հայերի ինքնիշխանությանը:

Մտահոգացումը

Դատվանում Ահմադի կազմակերպած նախապատրաստական աշխատանքները չնկատելն անհնար էր, և այստեղ գտնվող հայ նախարարները, թեև դավադրությունից անտեղյակ էին, սակայն տարբեր պատրվակներով շտապում են հեռանալ իրենց տիրույթները: Հայոց իշխանաց իշխանին «թակարդը» գցելու մտքով տարված արաբ ոստիկանին այդ իրողությունն առանձնապես չի մտահոգում: Նա նամակ է գրում Մուհամմեդին և տեղեկացնում նախատեսվող դավադրության մասին: Բացի այդ, իրեն հավատարիմ ուժերն ի մի բերելու նպատակով, նա իր հետ Դվին է բերում Աբու-լ-Վարդի զորքերը: Սակայն Աշոտ Բագրատունին այն գործիչներից չէր, որին հաղթելը դյուրին գործ լիներ: Նրա հետախույզները հուսալիորեն հսկում էին Հայաստանի բոլոր ճանապարհներն ու կամուրջները:

Պատմական տեղեկանք. «Իսկ իմաստությամբ լցված Աշոտը չմնաց անհոգ ու աներկյուղ, այլ հրամայեց լավ հսկել կամուրջների, անբնակ տեղերի, ձորերի ու կիրճերի մուտքերը... Դա ազդեցություն գործեց, և կատարվեց ինչ որ պետք էր: Ձերբակալեցին լրտեսներին, հանեցին թղթերը, իսկ մարդկանց պահեցին հսկողության մեջ, ոչ ոքի չհայտնեցին կատարվածի մասին»:

Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դ պր. Գ, գլ. ԺԹ

Հայոց** հետախուզական ծառայության **համակարգված գործողությունների շնորհիվ ոստիկանի Պարտավ ուղարկած նամակը ոչ միայն տեղ չի հասնում, այլև շուտով դրվում է Աշոտ Բագրատունու սեղանին:

Աշոտ Բագրատունին տեղեկություն է ստանում, թե դավադրության հաջողության վերաբերյալ տարակուսանք չունենալով՝ Ահմադն աստիճանաբար ավելի ինքնավստահ էր դարձել:

Աբաս սպարապետը հրաման է ստանում զորքերն աննկատ մոտեցնել Դվինին (տե՛ս քարտեզը): Գործողությունների առաջին փուլը հաջողությամբ է իրականացվում:

*Ուշագրավ փաստ. սպարապետն արաբական իշխանություններից **աննկատ** ի մի է բերում բանակը և այն մոտեցնում մայրաքաղաքին:*

Ցավոք, պատմիչների հաղորդած տեղեկությունները բավարար չեն բացահայտելու միջնադարի պայմաններում բացառիկ *քողարկման* գործողության մանրամասները:

Պատմական տեղեկանք. «Բայց իշխանաց իշխան Աշոտը չհանդուրժեց և կամեցավ վերջ տալ նրա չար մտահղացումներին: Մի օր, մինչ զորապետը (ոստիկանը) հղփացել ու զեխացել էր այնքան շքեղությունից ու մեծարանքներից, Աշոտ իշխանը կորովի տղամարդուն՝ Հայոց սպարապետ Աբասին, որն իր եղբայրն էր, հրաման տվեց զինավառվել, լինել կազմ ու կուռ, պատրաստ ու զորքի, զենքերի, զարդերի ամբողջ կարելությամբ, ինչպես վայել է քաջ տղամարդկանց, պատրաստել նաև ձիերը և ի դերև հանել Ահմադի չար մտադրությունները: Եվ այն ժամին, երբ բարի լույսի գնացողները կամենում էին մտնել (Ահմեդի) մոտ, սա հույս ուներ, որ մեծ իշխանը (նույնպես) կմտնի իր մոտ: Այնժամ մեծ սպարապետը վահանավոր ու նիզակավոր զորագնդով ամուր շրջափակեց նրա վրանը, ապա մտավ ու մատուցեց այն թուղթը, որ նենգությամբ գրել էր (Եմենիկին) Ահմադը»:

Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց տան, Դպր. Գ, գլ. Ի

Հաղթանակը

Գործողության երկրորդ փուլն իրականացնելու համար մեծ հմտություն էր պետք ունենալ: Հարցն այն է, որ նախատեսվում էր մի քանի տեղամասերում միաժամանակյա գործողություններին ներգրավել հազարավոր մարդկանց:

Հեռահաղորդակցության միջնադարյան միջոցների պայմաններում մեր բանակի զորամասերի փոխգործողությունների կազմակերպումն ***արտակարգ դժվարին խնդիր էր:***

Այնուամենայնիվ, որոշվում է իրականացնել համարձակ ծրագիրը, և երբ ոստիկանն իր շքեղ վրանում պատիվներ էր ընդունում՝ սպասելով նաև Աշոտ Բագրատունուն, վերջինիս փոխարեն ներս է մտնում Աբաս սպարապետը և նրան պարզում Մուհամմեդին հասցեագրված նամակը:

Բնականաբար, Ահմադը բացատրություններ չէր կարող տալ, և դավադիր ոստիկանն ինքն է հայտնվում իր իսկ լարած թակարդում: Աբաս Բագրատունու հանդուգն արարքը շանթահար է անում արաբական «ճամբարի» ղեկավարներին:

Օգտվելով արաբների շրջանում ստեղծված անորոշությունից՝ հայկական զորամասերն արագորեն հսկողության տակ են առնում երկրի կարևոր կետերն ու հանգույցները: Ոստիկանի և Կայսիկ ամիրայի զորքերը, առանց հրամանատարների մնալով, չեն կարողանում նույնիսկ ձևական դիմադրություն ցույց տալ ու զինաթափ են արվում:

Աշոտ Բագրատունու որդի Շապուհն իր զորամասով, *նժույգի փոխարեն ջորու վրա* նստեցրած, մինչև Միջագետքի սահմանն է տանում անհաջողակ ոստիկանին և ազատ արձակում:

Պատեհ պահ էր արաբ իշխանավորներին Հայաստանից վերջնականապես վտարելու համար: Երկրի անկախացման տվյալ փուլում արաբ ամիրաներին չհակադրվելու նպատակով Աշոտ Բագրատունին խստորեն չի պատժում արաբ ամիրա Աբու-լ-Վարդին: Նրանից չեզոքության խոստումներ ստանալով՝ իշխանաց իշխանն ազատ է արձակում արաբական զինաթափված զորքերը:

Հաջողության զարգացումը

Արաբ ոստիկանի գլխավորությամբ նախապատրաստվող դավադրության բացահայտումը, նրա և Աբու-լ-Վարդի զորքերի զինաթափումն ու ոստիկանի վտարումը պատմական նշանակություն ունեցող հաղթանակ էին:

Թվում է, թե Աշոտ Բագրատունին կարող էր բավարարվել շուրջ երկու տասնամյակ տևած լարված պայքարում ձեռք բերածով, սակայն խորաթափանց իշխանաց իշխանն այն գործիչներից էր, ովքեր կարողանում էին հաշվարկել իրենց և թշնամիների բոլոր քայլերը:

Կայծակնային հարվածաշարը

Իշխանաց իշխանն անցնում է նոր բազմաքայլ գործողության իրականացմանը: Ծրագրի երկրորդ մասի նպատակն էր արաբական կենտրոնախույս ամիրայությունների հպատակեցումը: Իրականացվում է *կայծակնային* հարվածների մի ամբողջ շարք:

Նախ, իր իշխանությունը երկրի հյուսիսային շրջաններում ամրապնդելու նպատակով Վրաց կյուրապաղատի որդի Գուարամի միջոցով Աշոտ Բագրատունին ձերբակալել է տալիս Տփղիսի արաբ ամիրային: Այս քայլը վկայում է, որ որպես իշխանաց իշխան նրա ուշադրության կենտրոնում էին նաև Վիրքն ու Աղվանքը, որոնք նախատեսվում էր վերածել արաբների դեմ հակամարտության թիկունքային բազայի:

Առաջին գործը հաջողությամբ ավարտելով՝ Աշոտը բանակով արշավում է դեպի հարավ՝ Բերկրին զավթած արաբ ամիրայի դեմ: Նոր «թիրախի» ընտրությունը ևս պատահական չէր. Բերկրին Հայաստանի կենտրոնական և հարավային շրջանները կապող կարևոր հանգույց էր: Հայկական բանակն առանց մեծ ջանքերի հնազանդեցնում է Բերկրիի ամիրայությունը: Հաղթանակը կարևոր նշանակություն ուներ հարավային հաղթարշավի հաջողության զարգացման համար:

Հայոց բանակի հաջորդ հարվածն ուղղվում է Խլաթը զավթած ոչ մեծ ամիրայության դեմ: Ինչպես և պետք էր սպասել, «հնազանդեցման քաղաքականությունն» այստեղ ևս լուրջ դիմադրության չի հանդիպում:

Խլաթի ազատագրումով բանակը վերահսկողություն է հաստատում Միջագետքի և Ասորիքի հետ Հայաստանի հարավարևմտյան հաղորդակցության ուղու վրա: Աբու-լ-Վարդի համար ամենաանսպասելի հարավային ուղղությունից հարձակումը սկսելով՝ բանակը ռազմավարական կարևոր առավելություն է ստանում: Արաբ ամիրան չէր կարող ճակատամարտի դուրս գալ անհամեմատ ավելի հզոր հայկական բանակի դեմ և իր զորքերով փակվում է Մանազկերտում: Այստեղ էլ կնքվում է սպասված հաշտությունը: Աբու-լ-Վարդը նույնպես ճանաչում է Աշոտ Բագրատունու գերիշխանությունը:

Տեղեկանք. «Ինչպես երևում է Սևանի 874թ. արձանագրությունից, Աշոտ Բագրատունին հայ նախարարների կողմից ճանաչված էր թագավոր Հայոց, իսկ Գառնիի 879թ. արձանագրության մեջ նրա տիկինը՝ Կատրանիդեն, կոչվում է Հայոց թագուհի»:

ՀԺՊ, հատ. III, էջ 22

Այսպիսով, շուրջ երկու տարի տևած բազմաքայլ գործողության արդյունքում երկրի մեծագույն մասը վերստին միավորվում է միասնական հայկական իշխանության ներքո:

ԱՀՄԱԴ ԻԲՆ ԽԱԼԻԴԻ ԱՐՇԱՔՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՄԻՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ 870-ԱԿԱՆ ԹԹ.



ԴՈՂՍԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
894Թ.

885թ. օգոստոսի 26-ին Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցու հոգևոր օրհնությամբ գահակալեց Աշոտ Բագրատունին: Թագադրումը տեղի է ունենում Արշարունիք գավառի Բագարան բերդաքաղաքում, որը դառնում է Հայոց պետության թագավորանիստը: Աշոտ Ա-ի գահակալության տարիները համեմատաբար խաղաղ էին: Արքան զբաղված էր իր տիրույթների անվտանգության ապահովման խնդիրներով: Մասնավորապես, հայտնի է 887թ. սկսված հյուսիսային արշավանքը, երբ մեր բանակը հասնում է մինչև Կովկաս գլխավոր լեռնաշղթա և հնազանդեցնում լեռնական ցեղերին:

Պատմական տեղեկանք. «(Աշոտ Բագրատունին) գրեթե բոլոր թագավորություններից ավելի հզոր ու խոհեմ էր համարվում: Եվ նոր տրված թագավորության մեջ նա այդպես *բարձրացնում էր Թորգոմյան ազգը:* Եվ ապա ձեռք գցելով հյուսիսային կողմերի՝ մեծ Կովկասի ծոր-ծորների վրա, հովիտներում ու երկայնագոգ ձորերում բնակված ազգե-րին իրեն է ենթարկում... բոլորին դարձնում է օրինավոր ու հնազանդ, և նրանց համար առաջնորդներ ու իշխաններ է կարգում»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 143

Անուրանալի է Աշոտ Ա-ի ավանդը Բագրատունյաց թագավորության հիմքերը դնելու գործում, որը շարունակեցին նրա որդի Սմբատ Ա (890-914թթ.) և թոռ Աշոտ Բ Երկաթ (914-929թթ.) թագավորները:

Ռազմական քաղաքականությունը

Սմբատ Ա-ն գահակալության սկզբում հարթում է Հայոց աշխարհին համակած անհանգստություններն ու շարունակելով հոր արտաքին քաղաքականությունը՝ նորոգում բարեկամական հարաբերությունները բյուզանդական կայսեր հետ: Նա հատուկ դեսպանություն է ուղարկում Կոստանդնուպոլիս՝ բազում նվերներով, ինչը պսակվում է հայ-բյուզանդական առևտրական համաձայնագրի կնքումով: Լևոն Զ Իմաստասեր կայսրն իր հերթին մեծամեծ ընծաներ է ուղարկում Սմբատին: Ստեփանոս Ասողիկը Լևոն Զ-ի այդ քայլը բացատրում է նրա *հայկական ծագումով*:

Պատմական տեղեկանք. «(Լևոն Զ-ն) էր այր խաղաղասեր և բարեխորհուրդ ամբողջ երկրի համար, նվիրատվությամբ առատաձեռն, բաշխելու մեջ հոռոմների նման ռիշտ[1] չէր, որովհետև հոռոմները սովոր չեն առատաձեռնության և նրանց լեզվում նույնիսկ առատ բառը գոյություն չունի. բայց նա հայի զավակ էր և նույնիսկ հայից էլ առավել առատաձեռն»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն,
Հանդես Գ, Գլուխ Գ

Երկու հայկական թագավորական ընտանիքների՝ Բագրատունիների և Բյուզանդիայում հաստատված Մակեդոնական հարստության մերձեցումը անհանգստացնում է Ատրպատականի Սաջյան ամիրա Ափշինին: Խալիֆայության

[1] Գծուծ, ժլատ:

ձևական գերիշխանությունը ճանաչող Հայաստանն առևտրական համաձայնագրի կնքման ժամանակ հանդես էր եկել որպես տարածաշրջանային գերտերությանը հավասար կողմ, իսկ Սմբատը ստացել էր կայսերավայել պատիվներ, և Ափշինը մտահոգված էր հայ-բյուզանդական ռազմական դաշինքի ձևավորման հեռանկարով:

Սաջյանների զորությունը Հայաստանի դեմ ուղղելու միտումով խալիֆան Ափշինին ճանաչում է Ատրպատականի և Արմինիայի ոստիկան:

Նոր «անարյուն» հաղթանակ

Բագրատունիների հետախուզական ծառայությունը շարունակում է փայլուն գործել:

Սմբատ արքան դեռևս հոր՝ Աշոտ Ա-ի ժամանակ ստեղծված հետախուզական ծառայության միջոցով ժամանակին տեղեկանում է Ափշինի նախապատրաստվող ներխուժման մասին: Մասնավորապես, հայտնի է դառնում, որ Ափշինը մտադիր է Բագրատունիների տիրույթները ներխուժել ոչ թե ավանդական ուղղությամբ՝ Հեր և Զարևանդ գավառների կողմից, այլ՝ Փայտակարանով (տե՛ս քարտեզ 1):

*Հետախուզական ծառայության **արդյունավետ** աշխատանքի մասին է վկայում այն փաստը, որ Սմբատը տեղեկանում է ոչ միայն հակառակորդի արշավանքի, այլև **նույնիսկ** նրա մտադրությունների մասին:*

> **Պատմական տեղեկանք.** «Սմբատ արքան, իսկույն *զգալով* Ափշինի չարամիտ խարդավանքը, անմիջապես ոտքի է հանում նախարարներից հավաքված մեծ զորքը՝ բաղկացած կտրիճ, լավ կռվող ու զինավարժ մարդկանցից, մոտավորապես երեսուն հազար, և ինքը նրան ընդառաջ էր գնում մինչև Ռոտոկքի գավառը, որ գտնվում էր Ատրպատականին մոտիկ: Եվ մինչև թշնամիների զորքին հասնելն ու մոտենալը սուրհանդակի միջոցով Ափշինին լուր է առաքում...»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 163***

Վճռական գործողությունների դիմելով՝ Հայոց արքան 30 հազարանոց այրուձիու գլուխն անցած գնում է Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի Ռոտ-ի-Բաղա գավառը և ճամբար դնում Ատրպատականի սահմանից քիչ հեռու:

Ստեղծվում է ուշագրավ իրավիճակ. իր իսկ ձեռնարկած արշավանքի սկզբից ևեթ արաբ ամիրան ***զրկվել էր*** *ոչ միայն ռազմավարական, այլև մարտավարական նախաձեռնությունից:*

Հայաստանի սահմանին հասած Ափշինը չէր կարող չնկատել, որ պատերազմին նախապատրաստվելիս մեր բանակն իրականացրել է բացառիկ միջոցառումներ: Ավելին, ակնհայտ էր, որ արաբների մտադրությունները հայտնի են հայկական կողմին, և գրեթե բացառվում էին անսպասելի գործողություններով կորցրածը վերականգնելու հնարավորությունները:

Հոր արժանի հաջորդը լինելով՝ Սմբատ Ա արքան հաշվարկել էր բոլոր տարբերակները: Հայոց այրուձիու կենտրոնացումը և սրընթաց արշավը պատահական չէին: Հայոց բանակը պատրաստ էր անդրադարձելու ներխուժումը, սակայն դա չէր նշանակում, թե պետք է ամեն գնով ընդհարման դրդել հակառակորդին: Եթե կար խնդիրն անարյուն հարթելու հնարավորություն, ապա անհրաժեշտ էր փորձել այն կյանքի կոչել, և Հայոց արքան սուրհանդակի միջոցով հայտնում է, որ հայ-բյուզանդական համաձայնագիրը ոչ միայն ուղղված չէ խալիֆայության դեմ, այլև առևտրական կապերի աշխուժացման նպատակ ունենալով՝ կարող է նպաստել նաև Միջագետքի և Իրանի տարանցիկ առևտրին:

Ափշինը հայտնվում է ծայրահեղ անբարենպաստ իրադրությունում, քանի որ Սմբատ Ա-ի ռազմական (սահմանագլխին կենտրոնացված բանակը) և դիվանագիտական (համաձայնագրի հակաարաբական ուղղվածություն չունենալու) փաստարկները միանգամայն հիմնավոր էին:

> **Պատմական տեղեկանք.** «Իսկ երբ Ափշինը խոսքը այսպիսի հաճելի ոճով լսեց և տեսավ, որ ընտրյալ մարդիկ սպառազինված եկել հասել են դռների մոտ, այնուհետև նա իր չար խոսքերը փոխարինում է սիրո պատգամավորությամբ»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 163***

Այլ ելք չունենալով՝ արաբ ամիրան վերադառնում է Ատրպատական՝ *կարծես «մոռանալով»,* որ իրեն նշանակել էին Արմինիայի ոստիկան:

Հաջողության զարգացումը

Սմբատը շտապում է օգտագործել պատեհ առիթը և միավորված բանակի հարվածն ուղղում կենտրոնական իշխանությունների նկատմամբ անհնազանդություն դրսևորող Դվինի արաբ ամիրայի դեմ: Կարճատև պաշարումից հետո քաղաքը գրավվում է (892թ.) (տե՛ս քարտեզ 1):

Պատմական տեղեկանք. «Սմբատ արքան ետ է դառնում, գնում է Դվին մայրաքաղաքը: Եվ... նրանց չտեսավ իրենց հնազանդեցված ու իր ծառայության տակ ընկած... (Այդ պատճառով) ուժգնորեն պաշարում է նրանց... Պատերազմ հրահրողները, քաղաքի գլխավոր ոստիկաններն ու հրամանատարները՝ Մահմեդ և Ումայի անունով եղբայրները գիշերով դուրս գալով (քաղաքից)՝ փախչում են: Այդ մասին իմանալով ու հետապնդելով՝ զորքը նրանց ձերբակալում ու բերում է արքայի մոտ... այնուհետև քաղաքացիներին իսկապես նվաճելով, իրեն ենթարկելով ու ձեռք բերելով՝ բոլորին գցում է իր ազդեցության տակ: Նա հոգ էր տանում նրանց մասին և ոմանց հաճելի խոսքերով, ոմանց ունեցվածք տալով՝ գրավում է իր կողմը»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 163-165

Ռազմադիվանագիտական անհաջողությունից հետո Ափշինը չի համարձակվում միջամտել Հայաստանի «ներքին» հարցերին:

Եթե նույնիսկ արաբներին Դվինից վտարելուց հետո Ափշինը չէր համարձակվել ակտիվ գործողությունների դիմել, ապա անհանգստանալու առիթ չկար, և Հայոց արքան արձակում է նախարարական զորամասերը:

Ներխուժումը

Հայոց արքային վիճակված չէր երկար վայելել իր գործունեության արդյունքները. Դվինի գրավումից մի քանի ամիս անց (893թ.) երկրաշարժից քաղաքն ավերվում է: Նահատակվում են հազարավոր մարդիկ, որոնք մնում են ավերված պարիսպների և շենքերի փլատակների տակ:

Օգտվելով նրանից, որ Սմբատ Ա-ն զբաղված էր երկրաշարժի հետևանքները վերացնելով, Ափշինը ներխուժում է Հայաստան (տե՛ս քարտեզ 2): Չնայած երկրում տիրող անորոշությանը, ամիրան ռազմերթի սկզբում արտակարգ նախազգուշական միջոցառումներ է իրականացնում: Թերևս այդ էր պատճառը, որ նրա բանակը հանկարծակի է հայտնվում Նախիջևանում, գրավում այն և արշավում դեպի կիսավեր Դվին:

Պատմական տեղեկանք. «Սմբատ արքան չգիտեր այդ (Ափշինի արշավանքի) մասին, երբ ոստիկանը գալիս հասնում է մինչև Նախիջևան: Սմբատը թեև լսում է բոթը ու աշխատում հապճեպ իր մոտ հավաքել զորքը, սակայն չէր հասցնում մյուս անգամվա պես շտապ դուրս գալ նրա առաջ, մինչև որ Ափշինը եկավ հասավ Դվին քաղաքը»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 171

Հանկարծակի հարձակումով հակառակորդը ներխուժել էր երկրի կենտրոնական շրջաններ, այդ պատճառով արքան զորաժողովը կատարում է կենտրոնական շրջաններից որոշ հեռավորության վրա: Նա որոշում է բանակը կենտրոնացնել Արագածի հարավային ստորոտում գտնվող Վժան գյուղում: Տեղանքի ընտրությունը պատահական չէր: Սմբատը միանգամից մի քանի հարց էր լուծում.

- հակառակորդի հարձակման շարունակվելու դեպքում հայկական բանակը կկարողանար նահանջել հյուսիս՝ դեպի հարավ շարժվող զորամասերին ընդառաջ,
- միավորվելուց հետո, լեռան լանջերին նպաստավոր բնագծեր զբաղեցնելով, կարելի էր վճռական ճակատամարտի դուրս գալ և, տեղանքն օգտագործելով, ջախջախել Ափշինի զորքերը:

Պատմական տեղեկանք. «Իսկ արքան ապավինում էր ապահով վայրերին ու բոլոր կողմերը հրովարտակներ էր տարածում, և Հայոց նախարարները մեծ զորքով անմիջապես խմբով գալիս ու կուտակվում են:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 171

Արքան Գեորգ կաթողիկոսին ուղարկում է Ափշինի մոտ՝ հաշտության բանակցություններ վարելու: Վերջինս պահանջում է, որ Սմբատն անձամբ ներկայանա բանակցությունների: Արքան չի ընդունում առաջարկը, իսկ Ափշինը կալանավորում է կաթողիկոսին:

Պատմական տեղեկանք. «Իսկ երբ խորագետ ու խոհեմ մարդը (Սմբատ Ա արքան) չի համաձայնվում նախարարների սադրանքով գնալ նրա (Ափշինի) մոտ, կաթողիկոսը վերադառնում գնում է ոստիկանի մոտ: Թեպետև շատերը շատ անգամ աղաչում էին նրան՝ չգնալ չարաբարո հեթանոսի մոտ, սակայն նա ետ չկանգնեց՝ որպես թե չդրժելու (ոստիկանի) հետ կնքած դաշինքը: Իսկ ոստիկանը, իմանալով, որ կաթողիկոսի պատգամավորությամբ Սմբատը չի եկել, հրամայում է բռնել կաթողիկոսին, շղթայել ու երկաթյա ձեռնակապեր դնել»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 171

Ճակատամարտը

Կաթողիկոսի նկատմամբ այսպիսի վերաբերմունքի պատճառով զայրույթի ալիք է բարձրանում ամբողջ երկրում:

*Հարցն այն էր, որ **հոգևորական** լինելով՝ կաթողիկոսը հանդես էր գալիս որպես **բանագնաց** և կրկնակի **անձեռնմխելիություն** պետք է ունենար:*

Գրաված բնակավայրերում սկսած բռնություններով Ափշինն իր դեմ է հանում բոլորին: Այդուհանդերձ, չգիտակցելով իրադրության ամբողջ լրջությունը և ձգտելով «արդյունքներ» քաղել առաջին հաջողություններից՝ նա որոշում է վճռական ճակատամարտ տալու նպատակով շարժվել Սմբատ Բ-ի գլխավորած բանակի դեմ:

Ատրպատականի ոստիկանի զորքը ներխուժում է Արագածոտն գավառ: Անփառունակ արշավանքի երկրորդ մասը սկսելուց հետո Ափշինը գիտակցում է, որ ընկել է թակարդը: Դեպի հյուսիս շարժվելով՝ նրա զորքը հայտնվել էր Արագածի ստորոտում և առաջխաղացումը շարունակելու դեպքում լինելու էր «վերընթաց գրոհողի» դերում: Չհամարձակվելով շարունակել ռազմերթը՝ Ափշինը որոշում է Դողս (Դողք) գյուղից քիչ հեռու ամրացված ճամբար ստեղծել: Սմբատ արքան բանակի գլխավոր ուժերը միավորում է հյուսիսային նահանգների զորամասերի հետ և Վժանից շարժվում թշնամուն ընդառաջ: Այժմ արդեն մեր բանակն էր իր կամքը թելադրում հակառակորդին:

> **Պատմական տեղեկանք.** «Իսկ ինքը (Ափշինը) շարժվում գնում է Սմբատ արքայի վրա, և նրա բանակը մոտենալով տեղավորվում է Դողս գյուղի մոտ: Երեք օրից հետո նա կազմում է գունդ ու գումարտակ և կռվի է ելնում արքայի դեմ: Այնտեղ քաջ սուսերավորներն ու լայնալիճ աղեղնավորները շատ մեծ վախ ու կոտորած են հասցնում իսմայելցիների գնդին: Եվ այրը հարվածելով թշնամուն՝ նրան գետին է գցում ու փռում դաշտի վրա, իսկ մնացածներին փախցնելով ու ցրելով՝ գցում են օտարների բանակի շուրջը և նրանք հազիվ էին կարողանում պահել ու պաշտպանել իրենց տեղերն ու կացարանները»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 171-173***

Տեղեկանալով մեր բանակի առաջխաղացման մասին՝ Ափշինն ուղղակի հարկադրված զորքը դուրս է բերում ամրացված ճամբարից և շարում մարտակարգով (տե՛ս քարտեզ 2): Ճակատամարտի սկզբից ևեթ պարզ է դառնում, թե նահանջելով Սմբատն ինչու էր ամրացել Արագածոտնում: Հայոց բանակը, տեղանքն օգտագործելով, «վերևից» է գրոհում հակառակորդի վրա:

Մարտի սկզբից ևեթ Ափշինը մի շարք հնարքների է դիմում, սակայն ոչ մի

կերպ չի կարողանում փոխհատուցել անբարենպաստ տեղանքի պատճառով հայկական կողմին զիջած մարտավարական նախաձեռնությունը: Ոստիկանի ձեռնարկած կատաղի հակագրոհներն էին պատճառը, որ ճակատամարտը համառ էր, իսկ զոհերը երկու կողմերից էլ՝ մեծաթիվ: Արագորեն սպառելով բոլոր հնարավորությունները՝ Ափշինը հարկադրված նահանջի հրաման է տալիս: Ճակատամարտն ավարտվում է մեր բանակի հաղթանակով:

Սկսվում է Ափշինի նահանջող զորքերի հետապնդումը, որի ընթացքում այրուձիու հարվածների տակ ընկած հակառակորդը մեծաթիվ զոհեր է տալիս: Նահանջող զորամասերը հասցնում են ամրանալ ճամբարում, սակայն հետապնդման ուղարկված զորամասերը շրջափակում են հակառակորդին: Տակավին պահպանելով զորքի մեծ մասը՝ ոստիկանը հայտնվում է ծանր իրավիճակում, որը ոչ մի լավ բան չէր խոստանում: Այլ ելք չունենալով՝ նա դիմում է Հայոց արքային և բանակցություններ խնդրում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 892Թ.

Քարտեզ 1.

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈԾՈՂՈՒՅՈՒՆՆԵԸ 894Թ.

Քարտեզ 2.

ԱՇՈՏ Բ-Ի ԳԱՇԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

914-929թթ. պետության ղեկավարումը ստանձնում է Աշոտ Բ Բագրատունին: Նրա օրոք Հայաստանը վերջնականապես ազատվում է Արաբական խալիֆայության ոտնձգություններից: Արտասովոր ֆիզիկական ուժով հայտնի ու կորովի զինվորականի փառք վաստակած արքան, ով ճակատամարտերը վարում էր և՛ որպես թագավոր, և՛ որպես զորավար, երախտապարտ սերունդների հիշողության մեջ մնացել է Աշոտ Երկաթ պատվանունով:

«Այս Աշոտը, որն իր քաջակորով արիության համար Երկաթ կոչվեց... Իսմայելական զորքերին հալածեց մեր աշխարհից, իսկ մարտերում զորաց (զորավարների) կարիքը չէր զգում, այլ ինքն անձամբ էր վարում պատերազմը»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Զ

Դեպի Հայաստան կատարվող հերթական արշավանքի ժամանակ Ատրպատականի ամիրայի բանակում սկսված համաճարակին զոհ գնացած Ափշինին 901թ. փոխարինում է եղբայրը՝ Յուսուֆը: Նորանշանակ ամիրան Հայաստանի հանդեպ վարվող քաղաքականության հարցում եղբորից ավելի կոշտ դիրքորոշում ուներ: Վաղ հասակում բազմափորձ զորավար դարձած և մեր ռազմարվեստը բարեփոխել փորձող արքայազն (հետագայում՝ արքա) Աշոտի գործունեության ժամանակաշրջանը համընկնում է Ատրպատականում Յուսուֆի կառավարման տարիներին:

Ռազմավարությունը

Իր ենթակայության տակ գտնվող բոլոր ուժերը Յուսուֆը ծառայեցնում է Հայաստանի նվաճման ծրագրին, որի պատճառով ժամանակավորապես գերազանցության է հասնում հայկական կողմի նկատմամբ: Աշոտ Երկաթը հարկադրված հրաժարվում է Աբաս սպարապետի կիրառած մարտավարական համակարգից և վերադառնում անկանոն ռազմարվեստին:

Պատմական տեղեկանք. «Պարիսպներով, պահակներով ու ապրուստի միջոցներով ամրացնելով ամրոցները՝ ինքն ընկնում էր թշնամիների հետևից, որտեղ էլ որ իսմայելյան ասպատակներն ու ավազակները գտնվեին: Եվ իր հարազատ եղբայր Աբասի հետ ամենուրեք և ամեն ինչով աներկյուղաբար գրեթե Եղիական պատերազմ[1] էր մղում հակառակորդների դեմ: Եվ ապա իր միտքը ղեկավար դարձնելով՝ նայում էր առ Աստված»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 245

Հետագա հաղթանակների համար անհրաժեշտ հիմքեր ստեղծելու համար արքան կատարում է միջին դարերում հայտնի բոլոր միջոցառումները: Մասնավորապես, ամրոցների պարիսպները նորոգվում են, դրանցում տեղակայվում

[1] Խոսքը Իլիական կամ Տրոյական պատերազմի մասին է:

են կայազորներ, արքայի գլխավորությամբ մարտական գործողություններ վարող զորագնդերի մատակարարման համար պարեն է պաշարվում և այլն:

Մարտավարությունը

Արքան որոշում է Հայաստան ներխուժած և ամրությունների զգալի մասը գրաված Ատրպատականի զորքերի քանակական գերազանցությանը հակադրել *անսպասելի հարվածների* մարտավարությունը: Մտահղացումն իրականացնելու համար պետք էր գործողություններ վարող զորամասերն ազատել երթերի արագությունը սահմանափակող դանդաղաշարժ գումակից: Ամրոցներում պարենի բավարար պաշարներ ստեղծելով՝ արքան լուծում է այդ խնդիրը:

Կարճատև (հիմնականում մի քանի օր տևող) սրընթաց հաղթարշավներից հետո զորքերը պաշարները լրացնելու համար վերադառնում էին մոտակա ամրոց: Եթե չէր հաջողվում առաջադրանքն իրականացնել նախատեսված ժամանակում, ապա անհրաժեշտության դեպքում ամրոցների կայազորներն էին սնունդը զորքերին հասցնում: Այդ դեպքում ևս մարտական զորամասերը չէին շեղվում իրենց «գործից»:

Առաջին հաղթանակները

Նախապատրաստական միջոցառումներն ավարտելով՝ արքան ձեռնամուխ է լինում *բազմաքայլ* ռազմավարական գործողությունների իրականացմանը: Այժմ արդեն պետք էր այնպիսի արագությամբ գործել, որ հակառակորդը չհասցներ հակաքայլեր ձեռնարկել: Մեծ նշանակություն էր ունենալու առաջին հարվածի ճիշտ ընտրությունը: Որոշվում է «սկսել» Բագրևանդ գավառում տեղակայված հակառակորդի կայազորների ոչնչացումից (տե՛ս քարտեզը):

Բագրևանդը գտնվում էր երկրի գրեթե կենտրոնում: Կարևորելով գավառի պաշտպանությունը՝ Յուսուֆն այստեղ մեծաթիվ ուժեր էր կենտրոնացրել: Բագրևանդի զորամասերը ոչ միայն պետք է հսկողության տակ առնեին գավառի կարևոր ամրությունները, այլև, անհրաժեշտության դեպքում, օգնության հասնեին շրջակայքում տեղակայված կայազորներին: Կարևոր էր նաև այն, որ հակառակորդն այդ պահին հայկական կողմից վճռական գործողություններ չէր սպասում, և որքան էլ մեծ լինեին նրա ուժերը, անսպասելի հարձակումով հնարավոր էր լինելու կաթվածահար անել նրա զորքերն ու տոնել հաղթանակը:

Պատմական տեղեկանք. «Հարձակվելով իսմայելական զորքի վրա, որ նստում էր Բագրավանդ գավառում, նրանց *բոլորին* սրո ճարակ էր տալիս: Բռնելով նրանց գլխավոր երեցին՝ հրամայում է տիկ հանել և կախել ամրոցի պարսպից, որպեսզի տեսնեն բոլորը և ահաբեկվեն: Իսկ ինքը գնալով Շիրակ գավառը և հարձակվելով այն զորքի վրա, որ բուն էր դրել, տեղավորվել այնտեղ, նրանց ևս սրի է քաշում, իսկ մնացածներին հալածում է»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 245

Հարձակման ընթացքում լիովին օգտագործվում է անսպասելիության գործոնը, և պատահական չէ, որ հակառակորդը ոչ միայն *չի կարողանում* կազմակերպված դիմադրություն ցույց տալ, այլև՝ չի հասցնում փախչել:

Աշոտը հրամայում է Բագրևանդում տեղակայված զորքերի հրամանատարի պարտականությունները կատարող մահմեդական հոգևորականին տիկ հանել: Արքան այդ կերպ է պատասխանում Յուսուֆին, որը դրժելով իր գրավոր խոստումը՝ հրամայել էր բանակցությունների եկած Սմբատ Ա-ին դաժանորեն սպանել, իսկ գլխատված մարմինն ի ցույց դրել Դվինում (914թ.):

Մինչ հակառակորդ ճամբարում խուճապ և անորոշություն էր տիրում, արքան որոշում է ամրապնդել հաջողությունները: Հայոց զորքերը, սննդամթերքի կարիք չունենալով, նախօրոք պատրաստված ճանապարհներով մեծ արագությամբ համարձակ ռազմերթ են կատարում դեպի Շիրակ (տե՛ս քարտեզը): Ինչպես և պետք էր սպասել, հայկական զորամասերը այստեղ էլ համառ դիմադրության չեն հանդիպում: Աստիճանաբար պետության քաղաքական կենտրոնի վերածվող գավառը ևս ազատագրվում է:

Պատմական տեղեկանք. «Այնտեղից (Շիրակից) վերադառնալով՝ *օդասլացի նման* նա (Աշոտ Երկաթը) չվում գնում է Գուգարքի կողմերը և գրավելով այն ու իր տերության ամրոցները՝ գցում է իր հպատակության տակ»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 245

Տփղիսի արշավանքը

Հաջորդ հարվածը հասցվում է Գուգարքի ուղղությամբ (տե՛ս քարտեզը): Ինչպես Աշոտի բոլոր արշավանքները, այնպես էլ Գուգարքի ազատագրական հաղթարշավը մի քանի նպատակ էին հետապնդում և կոչված էին ոչ միայն վերահաստատել արքայի իշխանությունն այս շրջաններում, այլև պայմաններ նախապատրաստել ռազմավարական ծրագրի մյուս մասի համար:

Զորավար արքայի գործողությունները համապատասխանում էին արագորեն փոփոխվող մարտավարական իրավիճակին: Դրանց նպատակն էր առավե-

լագույն արդյունավետությամբ օգտագործել փոքրաթիվ ուժերը: Այդ նկատառումներով էլ Շիրակում ու Գուգարքում թագավորական իշխանության վերահաստատումից հետո *հյուսիսային հաղթարշավը* չի դադարեցվում, քանի որ Բագրատունիների հյուսիսային տիրույթներից միայն Վիրքն էր մնում արաբների իշխանության ներքո:

> **Պատմական տեղեկանք.** «Այնտեղից (Գուգարքից) հանկարծակի մեծ արագությամբ (Աշոտ Երկաթը) հասնում է հագարացիների զորքի վրա, որ գտնվում էր Վրաստանի մայրաքաղաք Տփղիսում: Եվ այնտեղ ոմանց սրո ճարակ էր տալիս, իսկ *պատվական մարդկանցից ոմանց* բռնելով՝ շղթայակապ պահում էր բանտում, որպեսզի գրավաթափ անելով՝ նրանց փոխանակեր այն քրիստոնյաների հետ, որոնք բռնված էին չար ոստիկանի ձեռքով»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 247***

Աշոտ Երկաթը սրընթաց երթով զորքերը հասցնում է Տփղիս, որտեղ *անսպասելի* գրոհով հարկադրում է արաբական կայազորին զենքը վայր դնել: Այս անգամ էլ Վիրքում արաբական ներկայության վերացման գործն է կարճ ժամանակում ավարտին հասցվում:

Բնութագրական է, որ Հայոց արքան մարտիկներին հրամայում է մարտադաշտից դուրս բռնություններ չգործել: Հատուկ ուշադրություն էր դարձվում «պատվական մարդկանց», այսինքն՝ աստիճանավորներին չսպանելուն: Պատմիչը վկայում է, որ արքայի այս քայլը ևս հեռահար նպատակներ ուներ: Նա ցանկանում էր այդ գերիներին փոխանակել գերության մեջ գտնվող «քրիստոնյաների» հետ:

Նոր հաղթանակներ

> **Պատմական տեղեկանք.** «Եվ ապա վերցնելով շատ առ ու ավար՝ նա (Աշոտ Երկաթը) այնտեղից (Վիրքից) վերադառնում է դեպի Տաշիրքի գավառը: Եվ լսելով, որ իսմայելյան զորքը թաքնվել, նստել ու դադար է առել Աղստևի ապահով ու խոր ձորերում, նա այնուհետև իր զորքից ընտրելով մոտավորապես երկու հարյուր մարդ, գնում հարձակվում է հագարացու զորքի վրա, մեծ կռիվ տալիս, նրանց բոլորին սրի քաշում և առ ու ավարով վերադառնում իր բանակը: Եվ իսկույն չվում-գնում է իրեն միշտ սիրելի իշխան Գուրգենի մոտ, և այնտեղ միասին խելացիորեն հոգալով բոլորի կարիքները՝ նա անցնում-գնում է Արշարունյաց ամրոցների կողմերը: Այնուհետև այն ապականողները այլևս չհարձակվեցին նրա տիրույթների վրա»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 247***

Աշոտ Բ-ի ռազմարվեստի տիպիկ օրինակ են հայկական զորքերի արագացված ռազմերթը Տփղիսից դեպի Տաշիր, Աղստևի հովտում արաբական զորագնդի վրա իրականացված հանկարծակի հարձակումը և հաղթական ճակատամարտից անմիջապես հետո Արշարունիք անցնելու մտահղացումը (տե՛ս քարտեզը):

Աղստևի հովտում տեղաբաշխված արաբական զորագնդի ջախջախումը նկարագրող պատմիչը նշում է, որ անսպասելի գրոհին մասնակցել են միայն լավագույն մարտիկները: Զորագնդի մյուս մասին հանձնարարվել էր հսկել գումակը և Տփղիսում գերված արաբներին: Առանց այն էլ փոքր զորագնդի մասնատումը համարձակ քայլ էր, ինչն անվախ արքայի մարտավարությունն ուսումնասիրելու համար բավականաչափ նյութ է տալիս:

Փոքր զորամասերով հանկարծակի և հանդուգն հարվածներ հասցնելը դառնում է Աշոտ Երկաթի «ամենասիրված» մարտավարական հնարքներից մեկը:

Արծրունիների և Սյունիների հաղթանակները (ակտիվ պաշտպանություն)

Աշոտ Երկաթի հաղթանակները մեծ ոգևորություն են առաջացնում երկրում: Իրենց կալվածքները քաշված և, մեծաթիվ հակառակորդի դեմ առճակատումից խուսափելով, խուլ պաշտպանության անցած իշխաններն ակտիվացնում են իրենց գործողությունները: Արքայի կայծակնային հարվածներին ոչինչ հակադրել չկարողացող Սաջյան ամիրայի զորամասերի դեմ պայքարին է միանում Գագիկ Արծրունին: Վերջինս նվաճողների համար անսպասելի էր, քանի որ Յուսուֆը, խրախուսելով կենտրոնախույս ուժերին, 908թ. թագ էր ուղարկել Արծրունի իշխանին և նրան Վասպուրականի թագավոր ճանաչել:

Պատմական տեղեկանք. «Գագիկ թագավորը իր վայելչատես ու բարեպաշտ եղբոր՝ Գուրգենի հետ քիչ տագնապ ու նեղություն չէր պատճառել թշնամիներին, որոնք Յուսուֆի հրամանով Ատրպատականի կողմերում *ավազակախմբեր* էին կազմել: Եվ այսպես առնական քաջություն ցուցաբերելով՝ զորավարական և իշխանական գնդի հետ միասին հագարացիներից շատերին նրանք թավալգլոր էին անում: Ոչ թե մեկ անգամ, այլ *բազմիցս* ու հաճախակի այս բանն էին անում Կորդվաց, Ռոտկաց ու Ատրպատական աշխարհների ստորոտներում... Ոստիկանի կողմից քիչ աղմուկ ու աղաղակ չէր պաշարում նաև Սիսական տերերին ու ցեղերին, որոնք ամրանալով խոր ձորերում, հեղեղատներում ու քարանձավների ամրոցներում... բազում արշավասույր հարձակումներ էին հասցնում թշնամիներին և գուժ ուղարկելով՝ արյունահեղություն էին առաջացնում»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 247

Կարճ ժամանակում Արծրունիների կազմակերպած պայքարն այնքան մեծ ընդգրկում է ստանում, որ, թերևս, չէր զիջում Աշոտ Երկաթի գլխավորությամբ վարվող մարտական գործողություններին: Նրանց հաջողվում է մարտական գործողությունները տեղափոխել Ատրպատականի սահմանային շրջանները, որով Յուսուֆին հարկադրում են անցնել պաշտպանական գործողությունների: Ի վերջո, Գագիկ և Գուրգեն Արծրունիների գլխավորած զորամասերը հակառակորդից ազատագրում են գրեթե ամբողջ Վասպուրականն ու Կորդվաց աշխարհը (տե՛ս քարտեզը):

Սյունիքում պայքարը գլխավորում են Սմբատ և Սահակ իշխանները, որոնք վերադարձել էին Վասպուրականից ու Գուգարքից: Տեղեկություններ են պահպանվել, որ նրանք իրենց գործողությունները համաձայնեցնում էին Աշոտ Երկաթի հետ, այսինքն՝ գործում էին միասնական ռազմավարական ծրագրի շրջանակներում:

> **Պատմական տեղեկանք.** «Եվ կարճ ժամանակվա ընթացքում նա (Աշոտ Երկաթը) կարողանում է առհասարակ գրավել ու նվաճել իր հոր տերության բոլոր այն ամրոցները, որոնք խլել էր ոստիկանը: Իսկ այնտեղ եթե սարակինոսներից (արաբներ - հեղ.) պահակներ էր գտնում, սրով սպանում էր»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 245***

Իշխանների կենտրոնախույս նկրտումները հաղթահարելով՝ Աշոտ Երկաթը կարողանում է երկիրը միավորել իր թագավորության մեջ:

*Հայոց զորագնդերի **հաղթանակների արդյունքում** ստեղծված իրողության արձանագրման կարևոր վկայություն էր այն, որ **Աշոտ Երկաթ** արքայի զորագնդերից պարտություններ կրող Ատրպատականի ամիրան, ի վերջո, որոշում է նրան թագ ուղարկել:*

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 910-ԱԿԱՆ ԹԹ.

ՀԱՂԹԱՄԱՐՏԸ ԲՇԻՐԻ ԶՈՐԱԳՆԴԻ ԴԵՄ ՄԱՅԱՅ ԳԱՎԱՌՈՒՄ

924Թ.

Աշոտ Բ Երկաթի հաղթանակները հսկայական արձագանք են ունենում ամբողջ տարածաշրջանում: Հզորացող հարևանի հետ հարաբերություններն աշխուժացնելու քայլեր է ձեռնարկում Բյուզանդիան, որը, Արաբական խալիֆայության թուլացման քաղաքականություն վարելով, նպաստում էր ռազմական հաջողություններ ունեցող թագավորության հզորացմանը:

Պատմական տեղեկանք. «Կայսրը նրան (Աշոտ Բ-ին) գրեթե իրեն հավասար էր ցույց տալիս և մեծարում թագավորական հանդիսություններով»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 287

Իրադրությունը բարենպաստ էր նաև արևելքում, որտեղ սրվել էին Յուսուֆի և Բաղդադի խալիֆայի հակասությունները: Յուսուֆը այդ հակամարտությունում պարտություն է կրում և 919թ. գերվում ու բանտ է նետվում, որտեղ անցկացնում է չորս տարի: Հակամարտությունում հաջողության հասած խալիֆան Աշոտ Բ-ի հետ հարաբերությունները լավացնելու նպատակով ոչ միայն թագ է ուղարկում նրան և ճանաչում նրա գերագույն իրավունքը մյուս թագավորների նկատմամբ, այլև շնորհում է «շահնշահ», այսինքն՝ արքայից արքա տիտղոսը:

Պատմական տեղեկանք. «Ամիրապետի (խալիֆայի) կողմից Յուսուֆի փոխարեն (նոր) ոստիկան է հաստատվում: Նա էլ Յուսուֆից առավել նույն կարգով խաղաղության ու միաբանության դաշինք է կնքում Աշոտի հետ՝ նրան անվանում Շահնշահ»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 317

Ներխուժումը

Թվում էր՝ երկարատև պատերազմից հետո Հայոց թագավորության բնականոն զարգացման բավարար նախապայմաններ էին ստեղծվել, սակայն իրադրությունը շուտով փոխվում է: Յուսուֆն ազատվում է կալանքից, վերադառնում Ատրպատական ու վերսկսում Հայաստանը նվաճելու իր քաղաքականությունը: Առաջին հարվածն ուղղվում է Հայաստանի հարավային շրջանների (Վասպուրական, Կորդուք) և Աղվանքի դեմ: Երկարատև պատերազմների հետևանքով Ատրպատականի դատարկված գանձարանի համար միջոցներ հայթայթելու նպատակով Յուսուֆը որոշում է շարունակել ռազմական գործողությունները: Այդ հանձնարարությամբ Հայաստան ուղարկված Նասր ալ-Սուբուքի (Նսըր ալ-Սուբուքի) ոստիկանը հասնում է մինչև Դվին (տե՛ս քարտեզը):

Դվին քաղաքի ավելի քան քառասուն մեծամեծներից կազմված պատվիրակությունն ընդառաջ է դուրս գալիս ոստիկանին ու տեղեկացնում քաղաքն առանց դիմադրության նրան հանձնելու մտադրության մասին: Նասրը հրամայում է իրեն հպատակություն հայտնող պատվիրակության բոլոր անդամներին կալանավորել:

Նասրը չի խնայում նույնիսկ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին, որը նրա հետ բանակցություններ էր սկսել: Գրավոր համաձայնություն տալով՝ ոստիկանը դրժում է իր խոստումը, հետապնդում կաթողիկոսին և կողոպտում Այրիվանքը: Շուտով հարվածն ուղղվում է Բյուրականի բերդի վրա: Չնայած

բնակիչների և վանականների համառ դիմադրությանը՝ Նասրը գրավում և ավերում է բերդն ու շրջակա գյուղերը:

Նասրը չի կարողանում շարունակել իր ավերիչ արշավանքը, քանի որ հետ է կանչվում Ատրպատական՝ այնտեղ ծագած ապստամբությունը ճնշելու համար: Իր փոխարեն Դվինում Բշիր (Բշըր) զորավարին թողնելով՝ Նասրը վերադառնում է Ատրպատական:

Ռազմավարությունը

Յուսուֆի պես, Նասրը ևս Բշիրին խրախուսելու համար նրան է փոխանցում Հայաստանի ոստիկանի պաշտոնը: Զորապետն իրեն պարտավորված էր զգալու և ձգտելու էր «արդարացնել» բարձր վստահությունը:

Նոր ոստիկանն անմիջապես սկսում է գործել: Բշիրը որոշում է ուժերը կենտրոնացնել Աշոտ Երկաթին «չեզոքացնելու» համար: Հարցն այն է, որ Դվինի անցուդարձին մոտիկից հետևելու նպատակով Հայոց թագավորը *ռազմահենադաշտի* էր վերածել Այրարատ նահանգի արևելյան՝ Մազազ գավառը: Միայն իրեն բնորոշ եռանդով նա ձեռնամուխ էր եղել ամրոցների վերանորոգման աշխատանքներին՝ *կրկնելով* մի քանի տարի առաջ Ատրպատականի զորքերը երկրից դուրս քշելու իր ռազմավարությունը: Ամրաշինական աշխատանքների վերակացու էր կարգվել բազմափորձ զինվորական և արքայի հավատարիմ զորավար Գևորգ Մարզպետունին:

> **Պատմական տեղեկանք.** «Բշըրը հեծյալ մեծ զորք է հավաքում և դուրս է գալիս գեղամաշեն Մազազ գավառի կողմերը՝ վրեժխնդիր լինելու Շահան կոչվող շահի (Աշոտ Երկաթի) իրենց չհնազանդվելու համար: Եվ քանի որ նա տեղավորվել էր Սևան կղզու անմատչելի ամրոցում, և Բշըրը, որ փնտրում էր նրան, չհասավ, այնուհետև մտածում էր ձեռք գցել այդ գավառները և մնացած քիչ մարդկանց էլ գերել, կողոպտել ու սրի ճարակ տալ»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 355***

Բնականաբար, ոստիկանին հայտնի է դառնում, որ Աշոտ Երկաթը լեռնային դժվարամատչելի տեղանքում պատսպարվելու փոխարեն դիրքավորվել է Սևանա լճի ափամերձ շրջաններում և ամրաշինական աշխատանքներ է իրականացնում: Բշիրը որոշում է, որ արքան սխալ է թույլ տվել ու շտապում է օգտագործել «բացառիկ» հնարավորությունը: Զանց առնելով նախազգուշական բոլոր միջոցառումները՝ նա իր հրամանատարության տակ Դվինում թողնված հեծելազորը հանում է «արշավանքի» ու զորքերը Հրազդան գետի հովտով շարժում է դեպի Մազազ գավառը:

Մարտավարությունը

Ի զարմանս Բշիրի՝ Աշոտը չի էլ փորձում հեռանալ երկրի կենտրոնական շրջաններից և նախօրոք մշակված ծրագրի համաձայն՝ փակվում է Սևանա կղզու ամրոցում: Ջրային արգելքը հաղթահարելու միջոցներ չունեցող ոստիկանը նախ որոշում է ավերել Սևանի առափնյա բնակավայրերն ու «բավարար» հիմքեր ստեղծել վճռական մարտի համար: Նա զորամասեր է ուղարկում ամբողջ գավառն ասպատակելու համար (տե՛ս քարտեզը):

> **Պատմական տեղեկանք.** «Սակայն այդպես էլ նրան (Բշրրին) չհաջողվեց (իրագործել) իր չարամիտ ու նենգ մտադրությունը, քանի որ Շահան կոչված շահի պատվավոր մարդկանցից Գևորգ անունով մեկը ելել ու շրջում էր այն գավառներում՝ թշնամի ավազակներից *ամրացնելու երկրի սակավամասն բարեկարգությունը:* Իսկ Բշրրը, երբ անսպասելիորեն դուրս է գալիս նրա դեմ, Գևորգը իսկույն սարսափահար է լինում, որովհետև նրա հետ քսանից ավելի մարդ չկար, իսկ Բշրրինը մոտավորապես հազար մարդ էր»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 355***

Փոքրաթիվ ստորաբաժանումով ամրոցներում ստուգայցեր իրականացնելուց վերադարձող Գևորգ իշխանը հանկարծ հանդիպում է Բշիրի գլխավորությամբ շրջակայքն ասպատակող հեծյալ հազարյակին: Իրավիճակը ծայրահեղ անբարենպաստ էր, քանի որ հակառակորդը մեծ գերազանցություն ուներ: Սակայն Գևորգ իշխանն այն մարդկանցից չէր, որոնք շուտ հուսահատության գիրկն են ընկնում:

Հակառակորդը բավականին հեռու էր, և կասկածից վեր էր, որ ընտիր մարտիկներից կազմված ջոկատն, անհրաժեշտության դեպքում նահանջելով, հեռանալու հնարավորություն ուներ: Այդ պատճառով իշխան Գևորգ Մարզպետունին հետախուզում է կազմակերպում և ուշադիր *դիտում* հակառակորդի երթային կարգը: Հաջողվում է պարզել, որ Բշիրն անփութորեն է կազմակերպել ռազմերթը, իսկ հայկական կողմից դիմադրության չսպասող զորամասի զինվորներն ակնհայտորեն հոգնած են:

Հակառակորդը ***պատրաստ չէր*** *ճակատամարտի, հետևաբար,* ***անբարենպաստ տեղանքում*** *հասցված* ***հարվածը*** *արդյունավետ կլիներ:*

Ճակատամարտը և հաղթանակը

Այս *սկզբունքային նշանակություն* ունեցող ճակատամարտի կարևորությունը գիտակցող իշխանն առանց ավելորդ երկմտանքի հարմար դիրքեր է ընտրում և պատրաստվում վճռական գրոհի: Գևորգ Մարզպետունին ճշտում է ջոկատի *գրեթե բոլոր մարտիկների* առաջադրանքները, որպեսզի մերձամարտ վարելուն զուգընթաց՝ նրանք ձգտեին հակառակորդի շարքերում խուճապ առաջացնել:

> **Պատմական տեղեկանք.** «Տիրոջ վրա հույս դնելով՝ (Գևորգը) *սպասում էր* նրանց հաղթելու հույսով: Եվ ապա քաջապնդված ու սրտապնդված՝ (նա) ձի է հեծնում և արիաբար գրոհելով նրանց դեմ՝ շատերին թավալգլոր անում: Թեպետև իրենց մարդկանցից քչերը նույնպես սրահարվելով թշնամիների կողմից սպանվում էին, սակայն մոլոր ու խաբված իսմայելացիները նրանց առաջ փախուստի էին մատնվում»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 355***

Գևորգ իշխանի կազմակերպած հանդուգն հարձակումն անակնկալ էր ինչպես Բշիրի, այնպես էլ նրա ամբողջ զորագնդի համար: Մոտ տարածությունից անսպասելի գրոհելով՝ հայկական կողմը նախաձեռնություն է ստանում, որը հաջողվում է պահպանել մարտի ընթացքում: Բշիրի ապշահար զինվորներին «թավալգլոր» անելով՝ հայ քաջերը մի քանի կողմից մխրճվում են նրանց անկանոն դասավորության մեջ:

Հակառակորդի մարտիկների մի մասը *չէր հասկանում,* թե, այնուամենայնիվ, ինչ են անում զորագնդի մեջ մխրճված երկու տասնյակ *հայ զինվորները:* «Մոլոր ու խաբված իսմայելացիները», կարծես, կաթվածահար էին եղել ու կորցրել դիմադրելու կարողությունը:

Շուտով այդ թմբիրն անցնում է, և կատարվում է զարմանալին: Անորոշությունը հաղթահարելով՝ Բշիրի զինվորները ոչ թե խտացնում են իրենց շարքերը և հակագրոհի անցնում, այլ սկսում են նահանջել: Գևորգ իշխանը *խելամտորեն* հրաժարվում է արաբներին հետապնդելու մտքից, քանի որ նրանց փախուստի մատնելուց հետո հաղթանակած իշխանի կողքին ընդամենը *մի քանի* մարտիկ էր մնացել:

Մարտադաշտից ճողոպրող Բշիրը մոլեգնել էր: Նա ստիպված էր խոստովանել, որ ընդամենը երկու տասնյակ քաջերի «խենթության» արդյունքում իր զորագունդը կրել է պարտություն: Սակայն այդ անելը դյուրին չէր: Մարտադաշտում ապաշնորհությունն ի ցույց դրած «զորապետը» պարտությունն ընդունելու *համարձակություն չի ունենում* և մեկ անգամ ևս ցույց է տալիս իր *թուլությունը:*

Բշիրը հրամայում է ճանապարհին հանդիպողներին սպանել և, նրանց գլուխները կտրելով, իր հետ տանում է Դվին:

Պատմական տեղեկանք. «Իսկ նրանք (մարտադաշտից փախչող Բշիրի զինվորները) անարգել մոլեգնությամբ, իրենց պատելով խավար ստվերների մառախուղով, ում որ գտնում էին ճանապարհի վրա, սրի էին քաշում՝ հեզ ու անպարտելի քահանաներին, երկրագործներին, խաշնարածներին, ճանապարհորդներին և անգամ՝ անմեղներին: Եվ այդպես անմեղներին մեղապարտ դարձնելով ու կտրելով նրանց գլուխները՝ նա առնում տանում էր իր հետ Դվին քաղաքը սնապարծ փախուստով՝ (ասելով), թե իբր այդ հաղթանակը ինքն է տարել քաջագործությամբ ու մեծ կռվով. նա իր հետ տարել էր ավելի քան քսան *անտեղի կտրած* գլուխներ»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 355-357

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 922-924ԹԹ.

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ
925Թ.

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԱՅԻՆ «ԾՈՎԱՄԱՐՏԸ»

Պարտությունից հետո Բշիր ոստիկանը զգուշավոր էր դարձել: Հայկական կողմից ցանկացած անակնկալի սպասելով՝ նա, առանց ավելորդ շտապողականության, ուժերը կենտրոնացնում է Դվինում: Ոստիկանն *իրավացիորեն* գտնում էր, որ ո՛չ Աշոտ Երկաթը և ո՛չ էլ Գևորգ Մարզպետունին նախաձեռնությունն առանց համառ դիմադրության չեն զիջի, որի համար պատրաստվում էր երկարատև մարտական գործողությունների: Կուտակվում է պարենի ու սպառազինության մեծ պաշար:

Արշավանքի նախապատրաստումը

Սպասվելիք արշավանքի նախապատրաստման գործում ցուցաբերվող բծախնդրությունը վկայում է, որ Բշիրը մեծ սպասելիքներ ուներ գարնանը սկսվելիք գործողություններից: Ավարտելով նախապատրաստական միջոցառումները՝ Բշիրը զորքը շարժում է հյուսիս: Երկրորդ արշավանքի ռազմավարական նպատակները կռահելը ևս դժվար չէ:

> **Պատմական տեղեկանք.** «Եվ շատ օրեր դար ու դադար առնելով ու դարձյալ հանելով առաջինից *ավելի մեծ զորք* և նրանց զինելով ասպազեն ու առնազեն զենքերով՝ նա շարժվում գնում է ծովակի ափը, Սևան կղզու ամրոցի դիմաց, որպեսզի թերևս *հանկարծակի* Շահան շահ կոչվող (Աշոտ Երկաթի) վրա հարձակվելով՝ կարողանա գցել մահվան թակարդը կամ շղթայակապ անել»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 357***

Թեև նախապատրաստական աշխատանքներն ավարտված էին, սակայն Բշիրը, *անվտանգության նկատառումներով,* ռազմերթը սկսելու հրահանգներ չէր տալիս: Զորքը վերջին պահին է միայն տեղեկացվում Դվինից դուրս գալու որոշման մասին և անմիջապես դուրս է բերվում արշավանքի: Այնպես որ, պատմիչը չի մեղանչում իրականության դեմ, երբ շեշտում է, թե Բշիրը որոշել էր «հանկարծակի» հարձակվել Աշոտ Բ-ի հետ Սևանա կղզու ամրոցում գտնվող զորագնդի վրա:

Բշիրի զորքերը արագ հասնում են Սևանա լճի հյուսիսարևմտյան ափ: Ոստիկանը բանակ է դնում Սևանա կղզու դիմաց և պատրաստվում գրոհին:

Արտագրոհի նախապատրաստումը

Ամրոցում հետևազորի ընդամենը մի քանի հարյուրյակ ունեցող Աշոտ Երկաթը հայտնվում է դժվարին իրավիճակում: Խնդիրը ոչ միայն հակառակորդի մեծաթվությունն էր, այլև կղզում գտնվող հայկական զորամասի կազմը: Ուժերի մեծ մասը կազմում էին թեթևազեն նետաձիգների ստորաբաժանումները, որոնք մերձամարտի սպառազինություն չունեին: Ճիշտ է, նրանց մեջ էին նաև մեր փառապանծ լայնալիճ աղեղնավորները, սակայն նրանք ևս թեթևազեն էին: Հետևաբար, եթե ամրոցի պատերի վրայից հակառակորդին խոցելու համար բավարար ուժեր կային, ապա արտագրոհներ իրականացնելու հնարավորությունը մեծ չէր և պաշտպանությանն ակտիվություն հաղորդելու հնարավորությունը չնչին էր:

Այդ ***թվացյալ*** *իրողությունը գիտակցելով էլ Բշիրը շտապում էր:*

Նա իրականացնում է միջին դարերում այս կարգի մարտական գործողությունների ապահովման համար անհրաժեշտ մի քանի միջոցառում: Մասնավորապես, ոչ մեծ ստորաբաժանումներ է ուղարկում այն ուղղությունները փակելու համար, որոնցով Հայոց արքան կարող էր սուրհանդակներ ուղարկել և օգնական ուժեր կանչել:

Մտահղացումը

Աշոտ Երկաթը բազմիցս ապացուցել էր անելանելի թվացող իրավիճակներում համարձակ որոշում կայացնելու իր կարողությունը: Որոշվում է զինվորներին նավակների վրա նստեցնելով շարժվել դեպի հակառակորդի բանակատեղին և ափին չհասած հանկարծակի նետահարում սկսելով՝ ծանրազեններին ափ իջեցնել և ավարտել հակառակորդի ջախջախումը (տե՛ս սխեմա 1): Առաջխաղացման սկզբում հակառակորդի մոտ կասկածներ չառաջացնելու նպատակով շահնշահը մարտիկներին հրամայում է թիկնոցներով ծածկել զենքերն ու զրահները:

Սխեմա 1.



Սևանի ճակատամարտը 925թ. (շարված մարտակարգը և մարտի մտահղացումը)

«Առանց մերձամարտի արտագրոհ իրականացնելու» *բանաձևը անսովոր մեկնաբանություն է ստանում. Աշոտը* ***ցամաքային*** *զորամասով հակառակորդի* ***ցամաքային*** *զորքերի վրա գրոհելու համար ընտրում է* ***ծովամարտի*** *տարբերակը:*

Պատմական տեղեկանք. «Իսկ նա (Աշոտ Երկաթը), երբ տեսավ, որ այն մեծ ուժը եկել հասել է դռներին, շուտափույթ պատրաստում է տասնմեկ նավ, նրանց վրա բարձրացնում յոթանասուն ազնվական մարդու և *լայնալիճ աղեղներով* զինված իր ծառաներին, որոնք քաջակորով ու նետաձգության մեջ հմուտ մարդիկ էին և *գրեթե մազից էլ չէին վրիպում:* Ապա ինքն էլ նրանց հետ նավ է բարձրանում, և նրանք գնում են թշնամիների դեմ *ծովամարտ* տալու»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,
Հայոց պատմություն, էջ 357

Սակայն ծովամարտ վարելու համար էլ բավարար միջոցներ չկան: Մասնավորապես, անձնակազմը կղզուց ափ հասցնելու համար պիտանի ընդամենը տասնմեկ ձկնորսանավակ կար: Այդ նավակների բեռնատարողությունն էլ հիմք է վերցվում հարձակմանը ներգրավվող ուժերն ընտրելիս:

Ուժերի տեղաբաշխումը նավակների վրա



Աշոտ Երկաթ արքայի խաչը

Անսովոր մարտն իրականացնելու համար Աշոտ Երկաթը նույնպիսի անսովոր որոշումներ է ընդունում: Մասնավորապես, մարտիկների ընտրությունը սկսվում է երկրորդ փուլում մերձամարտ վարելու համար նախատեսված «յոթանասուն ազնվականներից»: Այս ստորաբաժանումն էր ընդհարման հիմնական ծանրությունը կրելու, այդ պատճառով *գլխավոր հարվածային ուժի* ընտրությունից մարտի կազմակերպումը սկսելը կշռադատված որոշում էր:

Նետաձիգների ընտրությունը ևս պետք է հիմնավորված լիներ, քանի որ լայնալիճ աղեղը *հզոր և հե-*

ռահար զենք էր, սակայն այդ աղեղների արագաձգությունը համեմատաբար *փոքր* էր, իսկ նրանց մեծ չափերն անհարմարություններ էին առաջացնում: Հետևաբար, նավակների վրա լայնալիճ աղեղնավորներից բացի պետք է միջին նետաձիգներ էլ լինեին՝ նետերի արձակման մեծ խտություն ապահովելու միջոցով հակառակորդին մեծ կորուստներ պատճառելու համար:

Գրոհի մարտակարգը

Լեռնային երկրում ապրող ժողովրդի ռազմարվեստում ծովային մարտավարության փորձը հարուստ չէր, և պետք է որ ընտրության առանձնապես մեծ հնարավորություն չլիներ: Այդուհանդերձ, գրոհը սկսելու պահին ձևավորվելիք մարտակարգից (գրոհի սկզբում նավակների դասավորությունից) շատ բան էր կախված լինելու:

Որոշվում է մերձամարտի ժամանակ միասնական բռունցք ստեղծելու նպատակով ծանրազեններին «դիրքավորել» կենտրոնին մոտ գտնվող նավակներում: Այդ դեպքում թևերում գործող նետաձիգները կկարողանային առավել արդյունավետորեն խոցել հակառակորդին: Նրանց թևային հարվածները Բշիրին կզրկեին ուժերը թևերում կենտրոնացնելու և ափ իջած հայ քաջերին աքցանի մեջ առնելու հնարավորությունից: Զարմանալի է թվում, սակայն նետաձիգներին թևերում պահելով՝ շահնշահը ոչ միայն լայնացնում էր մարտակարգի ճակատը, այլև հնարավորություն էր ստանում լճում նետաձիգների նավակներով թևանցում հիշեցնող զորաշարժ իրականացնել:

Թվում է, թե մարտի նախապատրաստման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումներն արդեն իսկ իրականացված էին: Լճում տեղանքի անհարթություններ չկային, գարնանային մեղմ եղանակին կլիմայական պայմաններն օգտագործել հնարավոր չէր, չկար ստորաբաժանումների մի մասը քողարկելու և դարան կամ ծուղակ կազմակերպելու հնարավորություն և այլն: Սակայն Աշոտը փայլուն կերպով օգտագործում է օրվա ժամանակը:

Որոշվում է նավակները դեպի ափ շարժել արևելքից, որպեսզի առավոտյան ծագող արևը կուրացնի արաբա-ատրպատականյան զորքին և հնարավորություն չտա նշանառու նետաձգությամբ խոչընդոտել հայ աղեղնավորներին: Մինչև վերջին պահը իր մտահղացումը չբացահայտելու և հակառակորդին ապակողմնորոշած պահելու նպատակով Աշոտ Երկաթն էլ է տեղ գրավում նավակներից մեկի վրա՝ իր հետ վերցնելով արքայական դրոշը: Դրանով Բշիրի մոտ պատրանք էր ստեղծվելու, թե շահնշահը շքախմբի ուղեկցությամբ գալիս է գերի հանձնվելու:

Ճակատամարտը

Առաջին փուլը (տե՛ս սխեմա 2)

Սխեմա 2.



Սևանի ճակատամարտը 925թ.

Ափին մոտեցող նավակների վրա կասկածելի ոչինչ չտեսնելով՝ Բշիրի զինվորները «խայծը կուլ են տալիս» և կարծում, թե անելանելի իրավիճակում հայտնված հակառակորդը, իրենց զորքի մեծաթվությունը տեսնելով, դադարեցրել է դիմադրությունն ու ներկայանում է ոստիկանին: Նրանք թողնում են ճամբարի ամրացման աշխատանքներն ու հիմնականում անզեն դուրս գալիս լճափ՝ Աշոտ Երկաթին գերելու *երկար սպասված* արարողությանն ականատես լինելու համար: Իրարից ոչ մեծ հեռավորության վրա ափին մոտեցող նավերին մոտ լինելու նպատակով նրանք աստիճանաբար խմբվում են ոչ մեծ տեղամասում:

Անսպասելի, ափից ոչ մեծ հեռավորության վրա, նավակները դադարեցնում են առաջխաղացումը, և հայ նետաձիգները, թիկնոցների տակից աղեղները հանելով, սկսում են մոտ տարածությունից նետահարել լճափին խմբված բազմությանը:

> **Պատմական տեղեկանք.** «Եվ հաջողությամբ նետեր արձակելով՝ նրանք թշնամիներից ոմանց միաչքանի են դարձնում, իսկ շատերին էլ խիստ խոցելով ու վիրավորելով սպանում են: Եվ այդպես նրանք *կտրում ու հեռացնում են* թշնամիների բազմության ռազմաճակատը և թշնամին նրանց առաջ փախուստի է դիմում»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն***

Երկրորդ փուլը (տե՛ս սխեմա 3)

Սխեմա 3.



Սևանի ճակատամարտը 925թ.

Մինչ ծանրազեն հետևակը տեղափոխող նավակները կհասնեին ափին՝ աղեղնավորները երկու կողմից հարվածի տակ են առնում հակառակորդի մարտիկների ամենախիտ հատվածը՝ կենտրոնը: Դրանով միանգամից երկու խնդիր էր լուծվում.

- առաջին հարվածը հասցվում էր այն տեղամասում, որտեղ հակառակորդի զոհերի հավանականությունն ամենամեծն էր: Հետևաբար, այդտեղ էր նրանց շրջանում խուճապ առաջացնելու «բանալին»,
- ոչ մեծ հատվածում կենտրոնացած հակառակորդի բազմությունը երկու մասի բաժանելով տարածք էր ազատվում ծանրազենների ափ իջնելու համար:

Երրորդ փուլը (տե՛ս սխեմա 4)

Սխեմա 4.



Սևանի ճակատամարտը 925թ.

Մինչ Բշիրի զինվորները աջ ու ձախ էին վազում, ափ իջած հայ ծանրազեն հետևակայինները սկսում են ոչնչացնել նետաձգությունից ազատվել փորձողներին: Այդ ընթացքում, ափ իջածներին չխոչընդոտելու նպատակով, հայ նետաձիգները նետաձգության թիրախ են դարձնում հակառակորդի նոսրացած կենտրոնից փախած և թևերում խմբվածներին: Այս փուլում մարտը վերածվում է դասական իմաստով ճակատամարտի: Կենտրոնում գրոհը շարունակելու գործը ստանձնում է ծանրազեն հետևակը:

Բշիրն արշավանքի էր հանել հիմնականում հեծյալ զորամասեր, որոնց զինվորների համար մարտավարական արտակարգ անբարենպաստ իրավիճակ էր ստեղծվել: Անսպասելի հարվածի ենթարկվելով՝ նրանց մի մասը վա-

զում էր դեպի տակավին կիսակառույց ճամբարի ներսում թողնված զենքերը, իսկ մյուս մասը՝ դեպի ճամբարից դուրս՝ արոտավայրում արածող ձիերը: Ստեղծված խառնաշփոթությունը ձեռնտու էր հայ ծանրազեններին, որոնք հակառակորդից բազում անգամ փոքրաթիվ լինելով՝ կարողանում են ավարտել կենտրոնի ճեղքումը:

Հաղթանակը

Փոփոխվող իրավիճակում արագ կողմնորոշվելով՝ Աշոտ Երկաթն ափ է հանում նետաձիգներին: Միջին նետաձիգներին հրամայվում է աջակցել ծանրազեններին, իսկ լայնալիճ աղեղնավորներին՝ հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնել հնարավորինս մեծ հեռավորության վրա: Այդ դեպքում ափից որոշակի հեռավորության վրա էլ Բշիրը չէր կարողանա ի մի բերել խուճապահար այս ու այն կողմ վազող իր զինվորներին ու մարտակարգ ձևավորել: Հետևաբար, լայնալիճ աղեղնավորների գործողությունների նպատակն էր՝ հակառակորդին զրկել հակահարձակման անցնելու հնարավորությունից:

Հաջողություններից ոգևորված հայ մարտիկները, ափ իջնելով, մարտը նոր թափով են շարունակում ու հասցնում հաղթական ավարտի: Մարտադաշտում հարուստ ավար թողնելով՝ ոստիկանի զորքը սկսում է փախչել այն ճանապարհով, որով եկել էր (տե՛ս հաջորդ ակնարկի քարտեզը):

Այսպիսով, Սևանա լճի ճակատամարտը մեր ռազմարվեստի գագաթներից մեկը հանդիսացող հաղթանակներից է, որը *մտահղացման առումով* արժանի է համաշխարհային ռազմարվեստի ամենաուշագրավ մարտերից մեկը կոչվելու:

ԲՇԻՐԻ ԶՈՐՔԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ ՔԵՂԱ ԱՄՐՈՑԻ ՄՈՏ

925Թ.

Դեպի Սևան կատարված երկրորդ արշավանքից ևս Բշիրը գլխիկոր է վերադառնում: Նա չի կարող բացատրություն գտնել ընդամենը մի քանի ամսում մեկը մյուսից անպատվաբեր երկու պարտություններն «արդարացնելու» համար: Ընդորում, առաջին մարտում նրա հակառակորդը Գևորգ Մարզպետունին էր եղել, իսկ երկրորդում՝ Աշոտ Երկաթը: Հետևաբար, Բշիրն ուղղակի հարկադրված էր տարբեր զորավարներից կրած պարտությունների պատճառն իր մեջ փնտրել:

«Հաղթանակների» որոնումը

Պատեհ թիրախի «որոնումները» շուտով տալիս են սպասված արդյունքը, երբ արաբա-ատրպատականյան զորքը հասնում է Քեղա (Գեղա, Գեղայո) ամրոցին: Տեղեկանալով, որ շահնշահի կողմնակիցներն այստեղ են ամրացել, Բշիրը որոշում է, որ առանձնապես բարձր ու հաստ պատեր չունեցող ամրոցի գրավումը բարդ գործ չի լինելու և հրամայում է անմիջապես պատրաստվել՝ գրավելու ամրոցը:

> **Պատմական տեղեկանք.** «Իսկ այն Բշըրը *ամաչելով* ձգտում էր դրա (Սևանա լճի ճակատամարտի) փոխարեն վրեժ լուծել: Եվ նա ուղիղ գնում է դեպի Գեղայո ամրոցը, որպեսզի թերևս *հանկարծակի հարձակվելով*՝ կարողանա նրան (Աշոտ Երկաթին) վնասել»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 357***

Գտնված «ելքը»

Ոստիկանը ձգտում էր անսպասելի հարձակումով տիրանալ ամրոցին: Հանկարծակի հարձակումով ամրոցը գրավելու մտահղացումն ընդհանուր առմամբ համապատասխանում էր ստեղծված իրավիճակին:

Մինչդեռ Քեղա ամրոցի գրոհն այդքան էլ անսպասելի չէր նրա պաշտպանների համար: Նրանք հասցրել էին փակել դարպասները և դիրքեր զբաղեցնել ամրոցի պատերին: Հետևաբար, ոստիկանը չէր կարողացել ամբողջությամբ օգտագործել *հանկարծակիության գործոնը*, որին նա այդքան ձգտում էր:

> **Պատմական տեղեկանք.** «Այնտեղ էլ նա (Բշիրը) տալիս է իր գլխին, քանի որ այն Գևորգը, որի խիզախ կռվի մասին նախապես պատմեցինք, այդ պահին հանդիպեց նրան այն ամրոցում»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 357***

Բշիրի համար տհաճ անակնկալների շարքը ավարտվում է ևս մեկ նորությամբ. ամրոցում էր գտնվում տաղանդավոր զորավար Գևորգ Մարզպետունին, որն անմիջապես ստանձնում է պաշտպանվողների հրամանատարությունը:

Պաշտպանության սկիզբը

Մազազում կրած պարտության վրեժն առնելու մոլուցքը պատում է Բշիրին: Ոստիկանը կորցնում է *ընդհանուր առմամբ բարդ* իրավիճակը գնահատելու կարողությունը և հրամայում գրոհը սկսել այնտեղից, որտեղ այդ պահին գտնվում էին դեռևս երթային կարգով շարված զորամասերը (տե՛ս քարտեզը):

> **Պատմական տեղեկանք.** «Եվ երբ նա (Գևորգ Մարզպետունին) տեսավ, որ *ամբոխը հասել է ամրոցի դռների մոտ,* զինվում է զենքերով, զարդերով, տիգավոր նիզակներով և իր հետ վերցնելով նաև մի քանի այլ մարդկանց՝ ամրոցից դուրս է գալիս թշնամիների դեմ»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 357***

Ճանապարհով շարժվող առաջին զորամասերը ամրոցի դարպասի մոտ էին, երբ նրանց է հասնում Բշիրի հրամանը: Գրոհի համար նպաստավոր բնագծեր զբաղեցնելու ժամանակ չունենալով՝ նրանք այդ ուղղությունից էլ գրոհում են ամրոցը:

Դարպասի երկու կողմերի աշտարակներից ամրոցի պաշտպանները սկսում են նետահարել գրոհող հակառակորդի զինվորներին:

Արտագրոհը

Համոզվելով, որ հակառակորդը մյուս ուղղություններում պահեստազոր չունի և իր ուշադրությունը կենտրոնացրել է դարպասի գրավման վրա՝ հայ իշխանն արագորեն վերախմբավորում է իր փոքրաթիվ ուժերը և արտագրոհի անցնում: Հատկանշական է, որ տաղանդավոր զորավարը հակահարվածը կենտրոնացնում է ոչ թե ամրոցը գրավելու հուսահատ փորձերը շարունակող զորամասերի վրա, այլ Բշիրի հրամանատարական դիտակետի:

> **Պատմական տեղեկանք.** «Եվ ապա մենակ կռվելով ամբողջ զորքի դեմ՝ նա (Գևորգ Մարզպետունին) նախ սրով ջարդուփշուր է անում Բշրի երիվարը, այնպես որ նա հազիվ մի այլ ձի հեծնելով փախչում է: Եվ ապա մյուս մարտակիցները ևս աջակցելով Գևորգին՝ թշնամիներից շատերին գետին էին փռում և մնացածներին փախուստի մատնում: Եվ նրանք շատերի նկատմամբ վարվում են առավել սաստկությամբ՝ ասելով, թե «Դավիթն ավելի կտրիճ է, քան գեթացիները»: Իսկ թշնամիները խմբովին *այդպիսի անարգանքով* գնացին մտան Դվին քաղաքը և սպառնալիքներով ջանում էին վրեժ լուծել ամրոցի բնակիչներից»:
>
> ***Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,***
> ***Հայոց պատմություն, էջ 357***

Համարձակ գրոհը լիակատար հաջողությամբ է պսակվել: Արտագրոհն իրականացնողներին նույնիսկ հաջողվում է մոտենալ Բշիրին, որը մեծ դժվարությամբ է կարողանում փախչել ու ազատվել հետապնդումից: Ինչպես և սպասվում էր, հրամանատարական կետի մոտ սկսված մարտը խուճապ է առաջացնում ամրոցի գրոհը շարունակող զինվորների շրջանում, որոնք ևս միանում են իրենց փախչող զորավարին:

Հերթական անհաջողությանը մատնված ոստիկանի զորքը լիակատար ջախջախումից խուսափում է ամրոցի պաշտպանների փոքրաթվության պատճառով: Բշիրն այս անգամ էլ է կարողանում փախչել ու փրկել կյանքը: Այլ ելք չունենալով՝ նա ապաստանում է Դվինում:

Նոր *պարտություն* կրած ոստիկանը հերթական անգամ որոշում է «վրեժ լուծել»: Բնականաբար, արագորեն և առանց մեծ դժվարության «պարզվում» են Քեղա ամրոցում կրած պարտության «իրական» մեղավորները: Այս պարտության համար էլ «մեղավոր» են ճանաչվում Դվինի բնակիչները: Սակայն Բշիրի և մյուս «ոստիկանների»՝ Հայաստանում տեղակայված զորքերի օրերը հաշվված էին:

Եզրակացություն

Քեղա ամրոցում Գևորգ Մարզպետունու տարած հաղթանակի նշանակությունը մեծ էր Հայաստանից ատրպատականյան զորքերը դուրս քշելու գործում, քանի որ այն օտար նվաճողների դեմ միասնական ճակատի ձևավորման վերջին խթանը հանդիսացավ:

ՈՒԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 925Թ.

Գեղարքունիք
Սևանա լիճ
Գեղամա լեռներ
Գավառ
Ամանոս
Սևան
Գոգարան
Գոգարան գավառ
Գոգարան գավառ
Գոգարան գավառ

ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Աշոտ Երկաթը հիմքեր է ստեղծում պետության ռազմական հզորացման, ինչպես նաև տնտեսական ու մշակութային բարգավաճման համար:

Հայ ժողովուրդը սկսում է բարեկարգել պատերազմների թատերաբեմի վերածված երկիրը, որը հիմնականում ավարտվում է Աշոտ Երկաթի եղբոր՝ Աբաս Բագրատունու (929-953թթ.) գահակալման տարիներին: Թեև պատմիչները խաղաղ շինարարության այս տարիների մասին կցկտուր տեղեկություններ են հաղորդում, այդուհանդերձ, հայտնի է, որ իրադրությունը նպաստում էր զարգացման ուղին բռնած թագավորության հզորացմանը:

Ռազմական քաղաքականությունը

Արաբական խալիֆայության ավերակների վրա գոյացող պետություններն ու խալիֆաներից տարբեր աստիճանի կախման մեջ գտնվող ամիրայությունները, հաճախակի կրկնվող պատերազմներում թուլանալով, չէին կարողանում դիմակայել հզորացող Բյուզանդիայի ճնշմանը: Ստեղծվում է ուշագրավ իրադրություն, երբ արաբներին ու բյուզանդացիներին ձեռնտու էր Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանումը: Եղբորից շահնշահի տիտղոսը ստացած Աբասի գահակալման առաջին տարիներին այդ իրողությունը նպաստում է Հայոց պետության և նրանից կախյալ այլ պետական կազմավորումների հզորացմանը:

Արքան անչափ կարևոր ժամանակ է շահում պետության ռազմական համակարգի վերափոխման համար: Աշոտ Երկաթը, Հայոց պետության զինված ուժերի անմիջական ղեկավարությունը ստանձնելով, բարձր նշաձող էր սահմանել իր հաջորդների համար:

Ներխուժումը

Աբաս արքայի զորավարական հմտությունները դրսևորվեցին 938թ., երբ ջախջախվեց Հայաստան ներխուժած հյուսիսային հարևանի՝ Աբխազիայի թագավորության բանակը: Վեճի առիթը Կարինի կաթողիկե եկեղեցու օծումն էր: Հզորացած Աբխազիայի թագավոր Բերը եկեղեցու օծման հարցը ցանկանում է առիթ դարձնել՝ Հայաստանի ներքին գործերին միջամտելու համար:

> **Պատմական տեղեկանք.** «(Բերը) դեսպան է ուղարկում Հայոց թագավորի մոտ՝ պահանջելով չօծել (Կարինի կաթողիկե) եկեղեցին ըստ սուրբ Գրիգորի ուղղադավան հավատի, այլ ասում է, թե ինքը կգա և կկատարի այդ քաղկեդոնական օրենքներով»:
>
> ***Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ է***

Բերը դեսպանների միջոցով Աբաս արքային հաղորդում է եկեղեցին քաղկեդոնական տաճարի վերածելու իր ցանկության մասին: Հարևան պետության թագավորի հանդգնությունն անցնում էր բոլոր սահմանները, և Հայոց արքան մերժում է առաջարկը: Սակայն գիտակցելով, որ հարևանների ընդհարումից և փոխադարձ թուլացումից թշնամիներն են օգտվելու, Հայոց արքան հորդորում է Բերին ձեռնպահ մնալ առճակատումից:

Պատմական տեղեկանք. «Մի օր բազմախուռն բանակներով և բյուրավոր զորքերով, ամբարտավանությամբ Բելի օրինակով, Ափխազիայի իշխան Բերը Սամարացիների աշխարհից, որը Կովկասյան լեռներից այն կողմ է, դուրս գալով՝ շարժվում գալիս է անթիվ բազմությամբ, հասնում է Կուր կոչվող գետի ափը՝ ցանկանալով անապատացնել մեր Հայոց աշխարհը:

Աբաս թագավորը, երբ լսում է նրա պահանջը, հայոց այրուձիից մի գումարտակ է կազմում, (արագորեն) հասնում է Կուր գետի ափին ու բանակ դնում Բերի բանակի դեմ»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ է

Բերը հրաժարվում է երկու հարևան պետությունների միջև ծագած արհեստական կնճիռը հարթելու բոլոր տարբերակներից և զորքերը մոտեցնում Աբասի տիրույթներին:

Արքան որոշում է բոլոր ուժերի զորահավաք չհայտարարել: Ի մի բերելով միայն հեծյալ զորամասերից բաղկացած զորքը՝ արքան անձամբ է այն առաջնորդում Կուրի հովիտ, որտեղ մինչ այդ հասել, սակայն պետական սահմանն անցնել չհամարձակվելով, ամրացված ճամբար էր ստեղծել Բերը: Հակառակորդի անվճռականությունն արդեն իսկ կանխորոշում էր նրա անխուսափելի պարտությունը:

Հնագույն խաչվառեր

Ճակատամարտը

Աբասը զորամասերին հրամայում է չանցնել գետը:

Տարօրինակ է, սակայն Բերը չի օգտագործում արշավանքն անկորուստ ավարտելու և նահանջելու եզակի հնարավորությունը: Մի քանի օր երկմտելուց հետո նա անցնում է «վճռական» գործողությունների: Աբխազական բանակն անցնում է Կուրը և հայկական ճամբարից ոչ մեծ հեռավորության վրա սկսում մարտակարգ ձևավորել (տե՛ս սխեմա 1):

Սխեմա 1.



Աբխազական զորքերի ջախջախումը Կուր գետի ափին (938Թ.)

Պատմական տեղեկանք. «Եվ օրերից մեկում ափխազաց ասպատակները անցնում են Կուր գետն ու հասնում Հայոց բանակի մոտերքը, շփոթության աղաղակները հասնում են թագավորին: Նա հրամայում է շուտափույթ երիվարը իր մոտ բերել, ասպազենն ու զենքերը անձամբ ինքն է հագնում, երկսայրի սուսերը ձեռքն է առնում և հարձակվում ասպատակների վրա, նրանց հետևից հասնում է գետի մեջտեղը, քաջի հզոր ձեռքով հարվածներ հասցնում, երիվարներից կիսախեղդ ցած է գցում, որոնց համար հուղարկավոր ջուրն է դառնում: Իսկ ինքը ափ դուրս գալով, ահեղ ձայնով Աստծուն օգնական է կանչում և իր անունն է տալիս, դրանից ահաբեկված հյուսիսային ազգը փախուստի է դիմում»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ է

Հայոց արքայի հետ սահմանին հասած հայկական զորքը աչալրջորեն հետևում էր մարտական իրավիճակի փոփոխությանն ու, ժամանակին ճամբարից դուրս գալով, առանց ավելորդ իրարանցման շարվում է մարտադաշտի հակառակ եզրին:

Հատկանշական է, որ միայն հեծյալ զորամասերից բաղկացած հայոց զորքն ավելի շուտ է շարվում մարտակարգով, քան հակառակորդը, որի հետևակային զորամասերի գետանցումը ինչ-ինչ պատճառներով ձգձգվում է:

Հայոց այրուձին նախահարձակ գրոհով կարճ ժամանակում խախտում է հակառակորդի մարտական դասավորությունը:

Նախաձեռնությունը կորցրած աբխազական բանակը ճակատամարտի սկզբից ևեթ կորցնում է միասնական ղեկավարումը և մարտի ոչ մի փուլում չի կարողանում շատ թե քիչ կազմակերպված դիմադրություն ցույց տալ: Մարտի ընթացքի վրա կարևոր ազդեցություն է ունենում արդեն ոչ երիտասարդ Աբասի սպառազինվելն ու մարտադաշտում իր զինվորների կողքին հայտնվելը:

Հաղթանակը

Հակառակորդին իր կամքը թելադրելով՝ հայ մարտիկները աբխազական զորամասերը սեղմում են գետին: Դժվարին իրավիճակում հայտնված հակառակորդի զորամասերը ցաքուցրիվ անելու նպատակով Աբասը մարտի է նետում առաջին գրոհին չմասնակցած բոլոր զորամասերը: Ամբողջ ճակատով իրականացվող հզոր գրոհով հնարավոր է լինում հակառակորդի բոլոր զորաթևերը հետ մղել Կուրի աջ ափից: Լողալով գետն անցնելիս էլ սկսվում է Բերի զորքերի ջախջախումը (տե՛ս սխեմա 2):

Հայկական զորամասերը կրնկակոխ հետապնդում են Կուրի ձախ ափ ելնող հակառակորդի զորամասերին, որոնց նոր փորձություն էր սպասվում: Աբաս արքան ևս մեկ անգամ մտնում է մարտի մեջ և գետանցումն իրականացնող զորամասերին առաջնորդում դեպի հակառակորդի ճամբարը: Այս քայլը նոր ոգևորություն է առաջ բերում հայ զինվորների շրջանում և վերջնական հուսալքության հասցնում աբխազաց զորքերին: Սկսվում է անկանոն նահանջ, որը շատ շուտով վերածվում է խուճապահար փախուստի: Մարտակարգը վերականգնելու ժամանակավրեպ փորձերից հետո Բերը ևս որոշում է հետևել իր զինվորներին, սակայն նրանց մեծ մասի պես մարտադաշտից ոչ հեռու գերվում է:

Սխեմա 2.



Աբխազական զորքերի ջախջախումը Կուր գետի ափին (938թ.)

Պատմական տեղեկանք. «Հայոց զորքերը քաջապինդ զորությամբ հետապնդելով՝ նրանց բոլորին սրո ճարակ են դարձնում ու ամբողջ բանակը առնում, նաև ամբարտավան Բերին ձերբակալում և բերում հասցնում են Կարին քաղաքը: Թագավորը ասում է նրան. «Լավ նայի՛ր այդ գեղեցկաշեն եկեղեցուն, քանի որ այլևս չես տեսնելու», և հրամայում է փորել նրա աչքերը: Նրա խավարած պատկերը յուր ազգի մարդիկ արծաթով գնեցին, Հայաստանի հետ երդմամբ խաղաղության դաշինք հաստատեցին, որ այլևս նրանց միջև պատերազմ չլինի»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ է

Աբասը հրամայում է գերված Բերին բերել Կարին, որի նորակառույց եկեղեցու մոտ աբխազաց արքան կուրացվում է:

Աբաս արքան պահանջում է, որպեսզի կուրացված Բերին ազատելու դիմաց աբխազական պետության ավագանին «Հայաստանի հետ երդմամբ խաղաղության դաշինք հաստատի»: Ծանր դրության մեջ հայտնված աբխազները ոչ միայն ընդունում են առաջադրված պահանջները, այլև հսկայական փրկագին վճարում Բերի համար:

Այսպիսով, Կուրի ափին մեր հեծելազորի տարած հաղթանակի գլխավոր արդյունքը ոչ միայն մարտավարական էր (հակառակորդի բանակի ջախջախում), այլև ռազմավարական (գերված արքան հաղթաթուղթ դարձավ խաղաղության երկարաժամկետ երաշխիքներ պահանջելիս):

ԾՈՒՄԲԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ
998Թ.

ՄԵԾ ՁՈՐԱՎԱՐԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԸ

990թ. Անիի գահին է բազմում Բագրատունիների տոհմի տաղանդավոր պետական և ռազմական գործիչներից մեկը՝ Գագիկ Ա Մեծը (990-1020թթ.): Նրա օրոք Հայոց պետությունը տնտեսական վերելք է ապրում, իսկ բանակը՝ հզորանում:

Պատմական տեղեկանք. «Տիրեց նա (Գագիկ Ա) բազմաթիվ ամրոցների և գավառների... իր եղբորից (Սմբատ Բ Տիեզերակալից (977-990թթ.) առավել շատ. և չեղավ մեկը, որը սարսափ ազդեր ամբողջ Հայաստան աշխարհում, մինչև իմ այս հիշատակի խոսքերը շարադրելու ժամանակները: Որովհետև էր այր իմաստուն, պատերազմելու մեջ վարժ և հմուտ, բաշխելու մեջ առատաձեռն»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ Լ

Հայաստանի հարևան մահմեդական պետություններից պաշտպանվելու համար Գագիկ արքան հզոր դաշինք է ստեղծում, որը հնարավորություն էր տալիս պահպանել խաղաղությունը: Դաշինքն առաջին «փորձությունն» անցնում է 990թ., երբ Տայքի Դավիթ իշխանը (Դավիթ կյուրապաղատ, 966-1000թթ.) գրավում է Մանազկերտ քաղաքը: Քաղաքի ազատագրումից հետո մահմեդական բնակչությունն արտաքսվում է: Մանազկերտը կրկին հայերի ձեռքում էր:

Ատրպատականի Մամլան ամիրան, հարևան ամիրայություններից աջակցություն ստանալով, զորաժողով է կատարում և շարժվում դեպի Ծաղկոտն գավառը:

Ի զարմանս Մամլանի, նրա զորքերի դեմ են դուրս գալիս Գագիկ Ա Մեծի, Կարսի Աբաս թագավորի (984-1029թթ.), Դավիթ իշխանի և Վրաց Բագարատ թագավորի միացյալ զորքերը:

Մամլանն այնպիսի դժվարին իրավիճակում է հայտնվում, որ հեռանում է Հայաստանից:

Գագիկ Ա թագավորը
Գագկաշեն Սբ. Գրիգոր Լուսավորիչ տաճարի մանրակերտով

Արշավանքը

Հայկական կողմը շարունակում էր հաղթարշավը: 997թ. Դավիթ իշխանի զորքերը հասնում են Խլաթ և այն ազատագրելու անհաջող փորձ են անում: Մամլանը որոշում է օգտվել հակառակորդի անհաջողությունից ու նոր զորահավաք է կազմակերպում: Արշավանքին ներգրավվում են շրջակա բոլոր ամիրայությունների ամենամարտունակ ուժերը, իսկ ռազմավարական նպատակ է դրվում ոչ թե առանձին շրջանների, այլ ամբողջ Հայոց և Վրաց թագավորությունների նվաճումը:

Մամլանի ենթակայության տակ միավորվում է իր ժամանակի համար խոշոր բանակ, որն ամիրային հնարավորություն էր տալիս ռազմավարական ծրագիրն իրատեսական համարել: Դավիթ իշխանի անհաջողություն կրած բանակն ի վիճակի չէր միայնակ դիմայակել աննախադեպ արշավանքին: Նա օգնություն է խնդրում Գագիկ Ա-ից և Վրաց Գուրգեն Բագրատունուց, որոնք առանց հապաղելու միանում են համատեղ պայքարին: Հատկանշական է, որ շահնշահի հրամանով դաշնակիցներին է միանում ոչ միայն մարզպան Աշոտի գլխավորած մարզպանական գունդը, այլև Կարսի Աբաս թագավորի ամբողջ բանակը:

> **Պատմական տեղեկանք.** Ատրպատականի ամիրա «Մամլանը դարձյալ զորահավաք է անում Դավիթ կյուրապաղատի դեմ պատերազմի դուրս գալու համար: Իր մոտ է համախմբում Պարսկաստանի և Մարաստանի բոլոր զորքերի բազմությունը, Խորասանի ամիրայի և այլ խուժադուժ ցեղերի օգնությամբ մտածում է տիրել Հայաստանին ու Վրաստանին...
>
> Իսկ Դավիթ կյուրապաղատը ոչ թե ինքն է գնում նրանց դեմ պատերազմելու, քանզի ծերացել էր և իր օրերն էլ հաշված էին, այլ բանբեր է ուղարկում Հայոց արքա Գագիկի և Վրաց թագավոր Գուրգենի մոտ»:
>
> ***Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ***

Ակնկալելով, որ Մամլանն իր առաջին թիրախը Բագրևանդը կդարձնի, Դավթի զորքերը շտապում են նրա առաջխաղացման այս ուղղությունը փակելու, սակայն ատրպատականյան զորքերը շարժվում են դեպի Ապահունիք: Շուտով տեղ են հասնում օգնության ուղարկված զորքերը, և դաշնակիցների միավորված բանակն ամրանում է Ապահունիքի Ծումբ (Ծմբո) գյուղի մոտի բարձունքին՝ հակառակորդի ճամբարից ոչ հեռու:

> **Պատմական տեղեկանք.** «Գագիկը Հայոց զորքից առանձնացնում է վեց հազար ամենաընտիր և զինավառ մի գունդ, հանձնում է... իշխանաց իշխան Վահրամի և նրա որդի Սմբատ մագիստրոսի ձեռքը, ապա նաև Աշոտ մարզպանի և Վանանդի թագավոր Աբասի զորքն էլ գումարում: Վրաց թագավոր Գուրգենը նույնպես իր այրուձիից վեց հազար

ընտրյալներ է տալիս... և միասին շարժվում են դեպի Ապահունյաց գավառը. բանակ են դնում մի ամրակուռ և բարձրավանդակ տեղ. Ծմբո գյուղի մոտակայքում, Մամլանի բանակին դեմ հանդիման»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ

«Գիշերապահ» զորամասերի մարտը

Հաջորդ օրն առավոտյան ամիրան պատրաստվում է վճռական ճակատամարտի. նա զորագնդերն առաջ է բերում ու շարում *նախամարտական կարգով* (տե՛ս սխեմա 1): Մամլանը կարծում էր, թե «սադրիչ» գործողությունները բավարար են մարտը հրահրելու համար: Ըստ նրա մտահղացման՝ ճամբարից դուրս գալու և միասնական մարտակարգ ձևավորելու ժամանակ հայկական զորագնդերն ընկնելու էին իր մեծաթիվ բանակի ջախջախիչ հարվածների տակ: Սակայն շուտով պարզ է դառնում, որ ոչ մեծ բարձունքին ամրացածները չեն էլ պատրաստվում թողնել իրենց նպաստավոր դիրքերն ու մտադիր են օգտագործել տեղանքը:

Մի քանի ժամ ապարդյուն սպասելով՝ Մամլանը զորքերը վերադարձնում է ճամբար: Նույնը կրկնվում է նաև երկրորդ ու հաջորդած մի քանի օրերին: Մար-

Սխեմա 1.



Մարտական գործողությունները Ծումբի ճակատամարտի նախօրյակին

Անի մայրաքաղաքի բերդապարիսպները

տադաշտ դուրս եկող զորամասերն ամեն անգամ «ձեռնունայն» վերադառնում էին: Հայկական կողմն անդրդվելի էր, որով հակառակորդը երկիմաստ իրավիճակում էր հայտնվել:

Ապարդյուն է անցնում նաև ոչ մեծ ուժերով իրականացվող գրոհներով մարտ «հրահրելու» հնարքը: Բլրամերձ դաշտավայրն իջնելուց ամեն կերպ խուսափող հայկական կողմը, գլխավոր ուժերի անվտանգությունն ապահովելու համար առանձնացված ոչ մեծ «գիշերապահ» ստորաբաժանումների ուժերով պաշտպանվելով, չէր ենթարկվում սադրանքներին: Ավելին, առաջապահ զորագնդի դեր կատարող յոթ հարյուր հոգանոց զորագունդը՝ իրենց ֆիզիկական ուժով աչքի ընկնող Մեսխունի Կարմրակելան եղբայրների գլխավորությամբ, ուշագրավ գիշերային մարտ է տալիս հակառակորդի հազար հոգանոց զորամասին:

Մարտը խուճապային տրամադրություններ է առաջ բերում հակառակորդի շարքերում: Մարտավարական իրավիճակի անբարենպաստ զարգացումները կանխելու համար Մամլանը պետք է արտակարգ միջոցառումներ իրականացներ: Նկատենք, որ հարուստ ռազմավարի խոստումներով Հայաստան ներխուժած, սակայն անգործության մատնված բանակն աստիճանաբար անկառավարելի զանգվածի էր վերածվում:

Ճակատամարտը

Համոզվելով, որ գիտակցված մարտավարություն է բանեցվում և որ ժամանակի կորուստն իր դեմ է գործում, Մամլանը հերթական անգամ վաղ առավոտյան զորքը ճամբարից դուրս բերելով՝ շարում է մարտակարգով: Նա այս անգամ զորքերը շարժում է առաջ և մոտեցնում բլրալանջին (տե՛ս սխեմա 2):

Սխեմա 2.



Ծումբի ճակատամարտը 998թ.

Պատմական տեղեկանք. «Պարսկական զորքը, երբ հասկացավ, որ նրանք (հայ-վրացական զորքերը) չեն ցանկանում առաջինը իջնել իրենց մոտ և սկսել պատերազմը... այդ ժամանակ *Արեգի ամսի հենց ամսամուտին, երեքշաբթի օրը,* վաղ լուսաբացին ճակատամարտի են պատրաստվում բազմաշերտ հորինվածքով, դելմաստանյան վահանափակոցներով կարգավորում-հարմարեցնում են ամբողջ դաշտի երեսով մեկ՝ լայնածավալ հարձակման անցնելու համար. գալիս մոտենում են Հայոց և Վրաց բանակատեղի բլրալանջին...»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ

Թագակիր հրամանատարի բացակայության պայմաններում հայ-վրացական զորագնդերի հրամանատարների շրջանում ճակատամարտը սկսելու հարցում հակասություններ են ծագում: Խնդիրը հետևյալն էր. միացյալ բանակում իր կարգավիճակով ամենաբարձրը Հայոց արքայի զորագունդն էր, սակայն այն մեծաթիվ չէր, իսկ սպարապետ Վահրամ Պահլավունին առաջին անգամ էր դաշնակից ուժերի հրամանատարի դերում հանդես գալիս: Մեծաթիվ հակառակորդի դեմ պայքարում տեղանքն առավելագույնս օգտագործելու նրա ձգտումը զինակիցների մի մասն անփորձության վկայություն էր համարում: Մասնավորապես, *նախօրյակի հաջողությունից*

ոգևորված վրաց զորագնդի հրամկազմն առաջարկում էր անմիջապես գրոհել ստորոտին հասած հակառակորդի վրա: Նրանք հաշվի չէին առնում, որ այդ դեպքում կարճատև մերձամարտից հետո կեղծ նահանջով Ատրպատականի ամիրայի զորքերը կարող էին իրենց ուժերը դաշտավայրի կենտրոն դուրս բերել և ջախջախել:

Բարձունքին մարտակարգով շարված դաշնակիցների ու դանդաղորեն բլուրն ի վեր բարձրացող թշնամու միջև մերձամարտի հետաձգումը բացասական ազդեցություն էր ունենում վերջիններիս վրա: Բլուրն ի վեր մագլցող զորամասերի մարտակարգն աստիճանաբար խախտվում էր, և դժվար է ասել, թե ինչ տեսքով կկարողանային հասնել ամրացված ճամբարին, բայց այդ վճռական պահին վրացական զորագնդի զինվորների համբերությունը սպառվում է, և Վահրամ Պահլավունուց հրամանի չսպասելով՝ նրանք նետվում են մերձամարտի (տե՛ս սխեմա 2):

> **Պատմական տեղեկանք.** «Ապա ձայն են տալիս (Հայոց բանակին) ճակատամարտի պատրաստվել, առաջ անցնել և մոտենալ կռվի ասպարեզին ու հանդիսարանին: Բայց... (նրանք) *մնացին իրենց տեղը բանակած.* միայն սակավաթիվ մարտիկներ իջնում էին այնտեղ նրանց հետ մենամարտելու»:
>
> ***Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ***

Հակագրոհն անբավարար էր կազմակերպված, որի պատճառով փոքրաթիվ զորագունդը չի կարողանում ճեղքել հակառակորդի մարտակարգը, թեև «վերևից» հարվածելով՝ հաջողվում է իրարանցում առաջացնել հակառակորդի շարքերում: Հակառակորդն արագորեն հաղթահարում է անսպասելի գրոհի հետևանքները և հակահարձակման անցնում:

Վրացական զորագունդը նահանջում է, սակայն «հետապնդումը» նոր՝ անսպասելի փորձության է վերածվում Մամլանի համար: Մարտակարգի կենտրոնի զորամասերի զինվորների մի մասը դուրս է գալիս շարքից և սկսում մարտում ընկած վրացի զինվորների *դիակապտությունը:* Հակագրոհի հետևանքով խարխլված կենտրոնի զորաշարը վերջնականապես խախտվում է:

> **Պատմական տեղեկանք.** «Այնժամ պարսկաստանցիները (իմա՝ Ատրպատականի ամիրայի զորախումբը) թողնում են ճակատամարտի պատրաստվածությունը, պատերազմի կարգավորությունն ու *ռազմական կառուցվածքը լքում* և յուրաքանչյուր ոք ձիու գլուխը բաց թողած՝ *դիմում են թալանի ու հափշտակության,* որպես մեռելոց դիակների կամ փախուստի մատնվածների կողոպտիչներ»:
>
> ***Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ***

Հատող գրոհները

Վահրամ Պահլավունին շտապում է օգտվել մարտավարական բարենպաստ իրավիճակից ու հատող հարվածներ հասցնելու նպատակով բոլոր ուժերը նետում վճռական հարձակման: Հարձակման թափն ուժեղացնելու նպատակով սպարապետը հրամայում է հարվածները հասցնել գրոհող զորասյուների ամենախոցելի տեղամասերում՝ *կցատեղերում* կամ *միջտարածություններում* և առանձնապես ուշադրություն չդարձնել միասնական ճակատի ձևավորման վրա: Այսպիսով, հարվածները հասցվում են իրարից որոշակի հեռավորության վրա, և ճակատամարտը ստանում է մի քանի տեղամասերում ընթացող միաժամանակյա մարտերի տեսք:

> **Պատմական տեղեկանք.** «Իսկ Հայոց և վրաց զորքերը... *առյուծաբար մռնչալով* հարձակվում էին պարսկական (Ատրպատականի ամիրայի) բանակի անտառախիտ բազմության վրա: Այնտեղ *Հայոց զորքերը կայծակնային արագությամբ* շահատակում էին աջ ու ձախ, խուռներամ մեծ խմբով հասնում էին բուռն ու խորը խոցոտում, դաժանորեն սուսերահար անում և խուժադուժ դարձնելով, ծանրորեն հարվածում... Տայոց քաջ մարտիկներն ամենուրեք, ուր պատահում էին այդ փախստականներին, բոլորին դիաթավալ ոտնակոխ էին անում»:
>
> ***Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ***

Հայկական զորագնդերը մի քանի տեղամասերում մխրճվում են հակառակորդի մարտակարգի մեջ (տե՛ս սխեմա 3): Հարձակման կենտրոնում Կարսի թագավորության բանակն էր, նրանից աջ՝ սպարապետի գլխավորած հեծյալ զորագունդը, իսկ Դավիթ իշխանի զորամասերը բաժանված էին երկու մասի. հետևազորն ու հեծելազորի մի մասը կենտրոնացած էին ձախ թևում, իսկ հեծելազորի մյուս մասը աջից աջակցում էր սպարապետի հեծելագնդին: Այսպիսով, հասցվում էր երեք (եթե Տայքի հեծելազորը աջ թևում ինքնուրույն էր գործում՝ չորս) հարված:

Հարվածող զորագնդերից ամենամեծաթիվը կենտրոնինն էր, որտեղ գործում էր Կարսի թագավորության ամբողջ բանակը, սակայն առավել հաջող ընթացք է ստանում սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորած զորամասերի հարվածը: Հետևաբար, մարտի սկզբում վրացական զորագնդի գրոհի անդրադարձմանը չմասնակցած ամիրայի զորքերի ձախ թևն ինչ-որ պատճառով առավել խոցելի էր դարձել, թեև մարտակարգը չէր խախտվել: Բացառված չէ, որ Մամլանը կենտրոնն ուժեղացնելու համար օգտագործել էր ոչ միայն պահեստազորը, այլև ձախ թևի որոշ զորամասեր:

Սխեմա 3.



Ծումբի ճակատամարտը 998թ.

Հաղթանակը

Հակառակորդի ուժեղացված կենտրոնը կարողանում է կասեցնել Վանանդի զորքերի հարվածը: Թևերում հաջող գործողություններ վարող զորամասերը կենտրոնի պասիվության պատճառով հարկադրված էին լինելու դադարեցնել առաջխաղացումը: Այդ պատճառով սպարապետը որոշում է նահանջից հետո պահեստազորի դերը ստանձնած վրացական զորագունդն ուղարկել ոչ թե աջ թևում հաջողությունը զարգացնելու, այլ կենտրոնում դանդաղող գրոհին աջակցելու:

Մեծաթիվ հակառակորդը կատաղի դիմադրություն է ցույց տալիս, սակայն համալրում ստացած կենտրոնի զորաթևը ևս կարողանում է սասանել ամիրայի զորաշարը: Կենտրոնում և աջ թևում իրականացված ճեղքումների հետևանքով ստեղծվում է բարդ, սակայն ընդհանուր առմամբ բարենպաստ մարտավարական իրավիճակ: Այս տեղամասերում իր հիմնական ուժերը գամած հակառակորդը չի կարողանում կասեցնել նաև ձախ թևում ակտիվ գործողությունների անցած Տայքի զորագնդի առաջխաղացումը և սկսում է նահանջել:

Մամլանն ի վիճակի չի լինում վերականգնել իր փախչող զորամասերի մարտակարգը, իսկ Վահրամ Պահլավունին եռանդուն հետապնդում է իրականացնում մինչև Արճեշ:

Պատմական տեղեկանք. «Այս ամենը ձևով հար և նման էր ինչպես հրդեհը անտառում բորբոքվելուն, կամ որպես ահեղասլաց արծիվը թռչունների երամը խուճապահար անելուն: Այլև պետք էր այնտեղ լինել տեսնելու համար արյան վտակները առվակներ ու հորդահոս գետեր դարձած, դիակները թավալված, մեռածներն ու կիսամեռները միմյանց վրա թափված կուտակված: Այնժամ պապանձված և սարսափահար Մամլանն ու մնացած պարսիկները շտապում են փախչել, հեռանալ: Բայց նրանց հետապնդող Հայոց ու Վրաց մարտիկները, հասնելով սաստիկ կերպով հարվածում էին, սրի և սուսերի բերանն առած կոտորում էին մինչև արևամուտ ու հալածում մինչև Արճեշ քաղաքի դռները»:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Հանդես Գ, Գլուխ ԽԱ

Այսպիսով, հայ-վրացական զորքերը Ծումբի ճակատամարտում ծանր պարտության են մատնում Ատրպատականի Մամլան ամիրայի բանակը: Հայոց և Վրաց թագավորությունները վերացնելու նպատակով արշավանքը սկսած ամիրան ոչ միայն պարտություն է կրում ու հրաժարվում հայկական հողերն ասպատակելու մտքից, այլև շուտով հարկադրված է լինում ճանաչել Գագիկ Ա Մեծի գերիշխանությունը:

Հայոց ռազմարվեստի երկնակամարում հայտնվում է բոլոր ժամանակների ամենավառ հետքը թողած գործիչներից մեկը՝ Վահրամ Պահլավունին, որը հետագայում վարելու էր սպարապետի պաշտոնը:

Պահլավունիների զինանշանը Կեչառիսից

Հապավումներ

ՀԺՊՔ - Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Եր., 1981:
ՀԺՊ - Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Եր., 1984:
ԺԿ I - Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի I կոնվենցիա:
ԺԿ III - Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի III կոնվենցիա:
ԺԿԼ I - Ժնևի 1949 թվականի կոնվենցիաների I լրացուցիչ արձանագրություն (1977թ.):

Գրականություն

Ադոնց Ն., Երկեր, Դ, Երևան, 2009:

Այվազյան Ա., Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N 2 (18), 2006, էջ 22-44:

Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, Եր., 1987:

Դանիելյան Է.Լ., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000:

Դեմոյան Հ., Հայկական զինանշաններ, դրոշներ, պետական պարգևներ, Եր., 2008:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Թարգմ. և ծանոթ. Ե. Տեր-Մինասյանի, Եր., 1989:

Եփեսոսի Հովհան եպիսկոպոսի եկեղեցական պատմություն, Գիրք II, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 8:

Թեոփանեսի Շարունակող, Թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հր. Բարթիկյանի: - Բյուզանդական աղբյուրներ, հ. 5, Եր., 1990:

Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Եր., 1978:

Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաները և դրանց լրացուցիչ արձանագրությունները, ԿՄԽԿ հրատ., Եր., 1999:

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Եր., 1981:

Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հատ. I-III, Եր., 1971-1984:

Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, Եր., 1978:

Հայրենիք և ծառայություն, Ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպաների և ենթասպաների հասարակական-պետական պատրաստության համար, Եր., 2001:

ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, մաս II, Եր., 1999:

Հարությունյան Գ., Հոգևոր անվտանգությունը որպես ազգային անվտանգության բաղադրամաս, «ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ», հատուկ թողարկում, #2(4), էջ 29, Երևան, 2005:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Գ.Բ. Թոսունյանի, Եր., 1996:

Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Եր., 1982:

Ղևոնդ, Պատմություն (Աշխարհաբար թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի), Եր., 1982:

Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

Մանանդյան Հ., Երկեր, հատ. Բ., Եր., 1978:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հր. Բարթիկյանի, Եր., 1973:

Մարտիկյան Ս., Խաղխաղի ճակատամարտի նշանակությունը ռազմարվեստի պատմության մեջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր., 2000:

Մարտիկյան Ս., Վահան Մամիկոնյանը՝ հայոց մարտավարության բարեփոխիչ, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2003:

Մելիք-Բախշյան Ստ. Տ., Հայաստանը VII-IX դարերում, Եր., 1968, էջ 27-369:

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991:

Յուզբաշյան Կ.Ն., Հայ-վրացական ապստամբությունը Սասանյան իշխանության դեմ (482-484թթ.), Պատմա-բանասիրական հանդես, թիվ 1, 1985:

Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական: Աշխատ.՝ է. Մ. Բաղդասարյանի, Եր., 1995:

Պրոկոպիոս Կեսարացի, Թարգմ. բնագրից, առաջաբան և ծան. Հր. Բարթիկյանի, - Բյուզանդական աղբյուրներ, հ. Ա, Եր., 1967:

Սարգսյան Ս.Վ., Հայ ռազմական արվեստի պատմությունից, Եր., 1969, էջ 182-218:

Սեբէոս, Պատմութիւն, Եր., 1979:

Սմբատայ սպարապետի տարեգիրք, Վենետիկ-Ս. Ղազար, 1956:

Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ.Հ. Վարդանյանի, Եր., 2000:

Վահան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Եր., 1989:

Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Թարգմ. Ստ. Մալխասյանցի, Եր., 1968:

Փաւստոս Բուզանդացի, Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս (չորրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1933:

Военное искусство рабовладельческого и феодального общества, М. 1953.

Давид Э., Принципы права вооруженных конфликтов, М., 2000.

Диль Ш., Основные проблемы византийской истории. Перев. с франц. и пред. Б.Т. Горвянова. М., 1947.

Лещинский Л.М., Военное искусство во второй половине XVIII века. М., 1951.

Конрад Н. И., Сунь-Цзы. Трактат о военном искусстве. М.-Л., 1950.

Плутарх. Сравнительные жизнеописания. В трех томах. Т. 2, М., 1963.

Разин Е.А., История военного искусства, Т. I, М., 1955.

Розен В. И., Император Василий Болгаробойца. Санкт-Петербург: 1883.

Эрнест Р. Дюпюи и Тревор Н. Дюпюи. Всемирная история войн. Книга первая; 3500 год до Р. Х. 1400 год до Р. Х., Санкт-Петербург, 1997.

Хачатрян В.Н., Вопросы военного искусства в книге Егише “О Вардане и войне армянской”, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1, 1992:

Энциклопедический словарь. Издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, т. XXVII С.-Петербург, 1899.

Christensen A., L’Iran sous les Sassanides, 2nd ed. Kopenhagen, 1944.

Shahbazi A. Sh., “Army? Pre-Islamic Iran,” Encyclopaedia Iranica, Vol. II, London and New York, 1987.

Ռազմական տերմինների բառարան

Ա

ԱԳՐԵՍԻԱ, մեկ կամ մի քանի երկրների զինված հարձակում այլ երկրի կամ երկրների վրա նվաճողական նպատակներով:

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, ագրեսորի կողմից պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջության խախտման մտադրությունների ձախողմանն ուղղված զինված ուժերի գործողությունների համալիր:

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԿԱՆԽՈՒՄ, պետության կողմից ոչ ռազմական ներազդման միջոցառումների հետ միասին զինված ուժերի կիրառմամբ ագրեսորի կողմից զինված հարձակման դադարեցումն է:

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ, օտարերկրյա պետության դեմ ճնշված և կախյալ ժողովուրդների ու երկրների զինված պայքարը պետական ինքնիշխանության, ազատ և ինքնուրույն տնտեսական և մշակութային զարգացման համար:

ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ, հրամանատարի (պետի) կողմից հաստատված պայմանական նշաններ՝ ոչ մեծ տարածությունների վրա ենթականերին կարճ կարգադրություններ, հրամաններ և այլ տեղեկություններ հաղորդելու և ստանալու համար:

ԱԿԱՆ (պատմ.), պարսպի (պատի) տակ փորվող անցք՝ գաղտնի կամ բռնի ներս խուժելու համար:

ԱԿԱՆԱՏ, զանազան տիպի պաշտպանական կառույցների ու զրահավոր աշտարակների պատերի մեջ բացված անցք՝ նետաձգության կամ հակառակորդին այլ կերպ խոցելու համար:

ԱԿԻՆԱԿ (ՆՐԱՆ), հատուկ սահմանափակիչով սկյութական երկար դաշույն (կամ կարճ թուր): Հայտնի է Ք.ա. VIIդ. կեսերից: Հայտնի են երկու տեսակի շեղբերով Ա. եռանկյունաձև մի քանի հատվածներով (բնորոշ է արևմտահիրանական շեղբերի համար) և սահուն միավորվող զուգահեռ սայրերով, կողով կամ շեղանկյունաձև կտրվածքով: Ակինակները լայն տարածում էին գտել մեր տարածաշրջանի ժողովուրդների մոտ, որտեղ ուղղակի զենք լինելուց բացի հանդիսանում էին նաև զորականների, զինվորական ազնվականությանը պատկանելու խորհրդանիշ:

ԱԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, պատերազմող կողմերից մեկի կողմից պաշտպանական գործողությունների վարում, ոչ միայն տարածքը պահելու, այլև հիմնականում հակառակորդի խոշոր ուժերը հյուծելու և արյունաքամ անելու նպատակով:

ԱՂԵՂ, սովորաբար 30-250մ (լայնալիճ աղեղով՝ կրկնակի ավելի) հեռավորության վրա նետեր արձակելու համար նախատեսված ձեռքի նետող զենք: Արդյունավետ խոցման հեռավորությունը կազմում էր մինչև 200 մետր:

ԱՂԵՂՆԱԶԵՆ, կատարելագործված աղեղ՝ նետ, քար և այլն նետելու համար:

ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, մարտական տեխնիկայի կիրառման արդյունավետությունը բարձրացնելու, զորքերի հուսալի կառավարումը ապահովելու և զորքերը հակառակորդի խոցման միջոցներից պաշտպանելու համար նախատեսված ինժեներական կառույցներ:

ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ռազմա-ճարտարապետական գիտություն տեղանքը ռազմական կառույցներով ամրացնելու մասին:

ԱՄՐԱՑՎԱԾ ՃԱՄԲԱՐ, զորքերը կենտրոնացնելու (տեղաբաշխելու) և հակառակորդի հավանական հարձակումն անդրադարձնելու համար նախատեսված տեղանքի հատված: Տարբեր խնդիրներ կատարելու համար ելակետ է հանդիսանում: Առաջին դաշտային ամրաշինական կառույցներից է:

ԱՄՐՈՑ, արհեստական կերպով ամրացված դիրք կամ ռազմական կառույց թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար:

ԱՄՐՈՑԱՅԻՆ ԹՈՒՄԲ, բարձր հողային լիցք ամրոցում, սովորաբար՝ առջևում փորված փոսով:

ԱՅՐՈՒՁԻ, Հայոց հեծելազորը հին և միջին դարերում: Պեղածո նյութերն ու սեպագիր արձանագրությունները հավաստում են, որ Ք.ա. I հազարամյակում Հայկական լեռնաշխարհի բնակիչները պատերազմներում օգտագործում էին ինչպես մարտակառքեր, այնպես էլ Ա.: Ըստ Քսենոփոնի, Երվանդունիներն ունեին 8 հազարանոց Ա.: Հայոց Ա. ավելի մեծացվեց և կանոնավորվեց Արտաշեսյանների օրոք:

Հայոց Ա-ի կորիզը Հին աշխարհում հռչակված ծանրազեն զրահավոր հեծելազորն էր, որի համար ընտրվում էին առավել մարմնեղ և ուժեղ ձիեր: Հեծելամարտիկները կրում էին ծանր հանդերձանք, մետաղե թիթեղներով պատած կամ մետաղե զրահներ (սաղավարտ, վզնոց, օղազրահ, ուսակալ, սրունքակալ, լանջապանակ, սռնապան, կրծքակալ ևն): Գլխավոր զենքը երկար նիզակն էր: Զրահավոր Ա. հայկական բանակի գլխավոր հարվածային ուժն էր, որը գրոհում էր սեպաձև խիտ շարքերով:

Թեթևազեն Ա., որի համար ընտրվում էին համեմատաբար փոքրամարմին, արագավազ և դիմացկուն նժույգներ, դյուրաշարժության համար չէր զրահավորվում: Հեծյալի հիմնական զենքը նետ ու աղեղն էր: Թեթևազեն Ա. կատարում էր բանակի մարտակարգի թևերն ու թիկունքը պաշտպանելու, գլխավոր ուժերի ծավալմանը սպասարկելու, ցրված ուժերը կենտրոնացնելու, հակառակորդին հետապնդելու, հետախուզելու և այլ պարտականություններ: Հարձակվում էր ցրիվ շարքերով:

Հայոց Ա. կարևոր դեր էր կատարում պարթևա-հռոմեական մրցակցությունում. նրա անցումը մեկի կամ մյուսի կողմը հաճախ ունենում էր վճռական նշանակություն: Հռոմը մարտունակ հեծելազոր չուներ: Այդ պատճառով ահեղ հեծելազորատեր Պարթևստանի դեմ մղվող պատերազմներում ձգտում էր շահել Հայաստանի դաշնակցությունը: Արշակունիների ժամանակ Ա., մասնավորապես ծանրազենը, համալրվում էր ազնվատոհմիկներով՝ ազատներով, որոնց դաստիարակության մասն էր կազմում ձիավարժությունը:

Պատերազմի ժամանակ ցածր խավերից նույնպես ստեղծվում էր առանձին հեծելագունդ, որը կոչվում էր «ռամիկ Ա»: Ա-ի գերագույն հրամանատարը կոչվում էր «ասպետ», որը միաժամանակ «թագադիր» կամ «թագակապ» իշխան էր: Այդ պաշտոնը Բագրատունիների տոհմի մենաշնորհն էր: Արշակունիները Ա. խիստ մեծացրեցին հատկապես III-IVդդ., երբ Հայաստանի անկախությանն սպառնաց Սասանյան Պարսկաստանը: Տրդատ Գ Մեծի օրոք Հայոց Ա. 70 հազարից անցնում էր, իսկ Արշակ Բ-ն և Պապը այն հասցրին 12 բյուրի (120 հազարի): Արշակունիների օրոք Ա. կազմվում էր նախարարական և արքայական հեծելագնդերից: Զորանամակը հավաստում է, որ 86 նախարարություններ ներկայացնում էին 84 հազար ձիավոր մարտիկ, իսկ արքայականը կազմում էր 40 հազար: Ա-ի զինվորական աստիճանների, հրահանգների, կանոնադրությունների, զինանշանների, դրոշների մասին պահպանվել են կցկտուր տեղեկություններ: Աղբյուրներում հիշատակվում են «բյուրավորք», «հազարավորք», «գումապետք», «հարդարիք մարտի», «աղեղնադրոշք», «ասպարախաղք» կամ «ասպախաղք», «դրոշակակիրք», «վառնունիք», «ճակատամուղք» ստորաբաժանումների անուններ:

Արշակունիների անկումից հետո հայկական Ա-ի թիվը նվազեց: Մարզպանական Հայաստանում (V-VIIդդ.), ըստ Սեբեոսի և Հովհան Մամիկոնյանի, Ա. 30 հազարից չէր անցնում: Հայաստանի կախվածությունը Սասանյան Պարսկաստանից հիմնականում արտահայտվում էր Ա. նրան տրամադրելով: Պարսկական իշխանությունը աշխարհագիր կատարելիս հաշվառում էր նաև հեծելազորայիններին և նրանց թվի համեմատ ռոճիկ վճարում: Այդպես էր վարվում նաև Բյուզանդիան: 529-ին հատուկ հրովարտակով Հուստինիանոս կայսրը Հայաստանի Բյուզանդական մասում արգելեց նախարարներին հեծյալ ուժեր ունենալ: Այս վիճակը տևեց մինչև արաբական նվաճումները (VIIդ. կես):

Արաբները շարունակեցին հայ հեծյալ ուժերի գրանցման և նրանց ռոճիկ վճարելու պարսկական կարգը: 652-ի հայ-արաբական պատմագրի համաձայն, Հայաստանը կարող էր պահել 15 հազարանոց Ա., որի ռոճիկը (տարեկան 100 հազար արծաթ) վճարելու էին արաբները: Այս կարգը պահպանվեց մինչև Աբդուլլահ խալիֆը (750-775թթ.): Բագրատունիների օրոք նույն-

պես հեծելազորային ծառայությունը գերազանցապես կատարում էին ազատները: Օտար զավթիչների հարատև սպառնալիքները Բագրատունիներին մղում էին մշտական հեծյալ բանակի հզորացմանը: Գագիկ Ա-ի ժամանակ (990-1020թթ.) արքունական զորագնդերում հաշվվում էր 55 հազար, իսկ իշխանականներում՝ 45 հազար զինվոր:

ԱՆԿԱՆՈՆ (ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ) ԶՈՐՔԵՐ, միասնական, մշտական կազմ չունեցող կամ կանոնավոր զորքերից համալրման և ծառայությունը տանելու կարգով տարբերվող զորքեր:

ԱՇԽԱՐՀԱԶՈՐ, կամավորական հիմունքներով խաղաղ բնակչությունից կազմավորված ռազմական ստորաբաժանում:

ԱՇԽԱՐՀԱԶՈՐԱՅԻՆ, աշխարհազորային ստորաբաժանումներում կամավոր ծառայող անձ:

ԱՇԽԱՐՀԱՎԱՆԴ ՀԱՆԳՈՒՅՑ, գլխի վրա, գարգմանակի (արծվի) հետևից կրելու համար: Բառի կազմությունը պարզ չէ: Հայտնի է միայն, որ վերջին վանկը հնդեվրոպական մի շարք լեզուներում (պարսկերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն) մեր օրերում էլ որպես հագուստի զարդ կիրառվող *«բանդ»* կամ *«բանտ»* բառն է, որը նշանակում է հանգույց, կապ: Համարում են, թե դա մի ժապավեն է եղել, որ գլխի հետևը բանտի նման կապում էին և երկու ծայրերը կախ ձգում, ինչպես որ երևում է Տիգրան Բ Մեծի դրամների վրա:

ԱՇՏԱՐԱԿ, շրջանաձև՝ քառակողմ կամ բազմակողմ բարձր ու նեղ կառուցվածք ամրոցի պարիսպների վրա՝ հակառակորդին դիտելու և նրա դեմ կռվելու համար:

ԱՇՏԵ, երկար կոթով նիզակ՝ ձեռքով հարվածելու կամ նետելու համար: Ա-ի կոթունը պատրաստված է փայտից, ծայրը՝ հնում բրոնզից, միջնադարում՝ երկաթից: Հայկական բանակում եղել է աշտեավորների հատուկ զորամաս: Ա. առաջին անգամ հիշատակում է Մովսես Խորենացին, որն այն նույնացնում է մկունդի հետ:

ԱՊԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ, իրենց երկրներում քաղաքական, ազգային ազատագրական, կրոնական, գիտական և այլ գործունեության համար հետապնդվող օտարերկրյա քաղաքացիներին իր տարածքում մուտքի և բնակության թույլտվություն տալու պետության իրավունքը:

ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, հակառակորդին մոլորեցնելու նպատակով սեփական զորքերի, նրանց խմբավորման, կազմի, սպառազինության, մարտունակության, ռազմական գործողությունների մասին կանխամտածված կեղծ լուրեր տարածելու քողարկման հնարք:

ԱՊԻԶԱԿ ԿԱՄ ԱՊԵԶԱԿ, կրծքի զարդ: Կիրառել է միայն Փավստոս Բուզանդը և միայն Մանուել Մամիկոնյանին ուղարկված պատիվները թվարկելիս: Առաջարկվող մյուս բացատրությունները (գինդ, օղ և այլն) բավարար հիմնավորում չունեն:

ԱԶԱԿՑՈՂ ՀԱՐՎԱԾ, գլխավոր հարվածի ուղղությունից մեկ այլ ուղղությամբ ուժերի և միջոցների մի մասով հասցվող հարված: Հիմնականում իրականացվում է հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածի ուղղությունից շեղելու, նրա ուժերի և միջոցների մի մասը կաշկանդելու և ուժերով ու միջոցներով զորաշարժը բացառելու նպատակով:

ԱՌԱՋԱՊԱՀ, գլխավոր ուժերի առջևից մարտական գործողություններ վարող զորամաս, ավանգարդ:

ԱՌԱՋԱՊԱՀ ԶՈԿԱՏ, մարտի ժամանակ ինքնուրույն առաջադրանքներ կատարող ուժեղացված ստորաբաժանում: Մարտակարգի տարր է: Հարձակման ժամանակ ապահովում է գլխավոր ուժերի կազմակերպված մարտի մեջ մտնելը (մարտակարգի ծավալվելը): Պաշտպանությունում գործում է ապահովման գոտում: Ա.Զ. կարող է առանձնացվել նաև ռազմերթի ժամանակ՝ մարտի մեջ մտնելու մտադրության դեպքում (հատկապես հանդիպական մարտի դեպքում):

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ (ՌԱԶՄԵՐԹԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ), երթային պահպանության օրգան, որն ուղարկվում է գլխավոր ուժերի անխափան տեղաշարժը ապահովելու, պահպանվող զորքերի մոտ հակառակորդի հետախուզության ներթափանցումը, նրանց վրա հանկարծակի հարձակումը կանխելու և բացազատվելու ու մարտի մեջ մտնելու նպաստավոր պայմաններ ստեղծելու առաջադրանքով:

ԱՍՊԱՏԱԿ, հեծյալ զորամաս, որ պատերազմի ժամանակ և հաղթությունից հետո ուղարկվում էր թշնամու երկիրը՝ գերի և ավար բերելու:

ԱՍՊԱՐ, պաշտպանական սպառազինություն, որը կռվողները կրում էին թևի վրա՝ հակառակորդի հարվածներից և նետերից պաշտպանվելու համար, վահան:

ԱՎԱԶԱԿ, խաղաղ բնակչության վրա հարձակվելու նպատակով զինված խմբերի (հրոսակախմբերի) անդամ:

ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ, խաղաղ բնակչության կամ կազմակերպությունների վրա հարձակվելու նպատակով զինված խմբերի (հրոսակախմբերի) ստեղծում, ինչպես նաև նմանատիպ խմբերում և գործողություններում մասնակից լինելը:

ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցվող կանոնների և վարվելակարգի նորմեր:

ԱՎԱՐ (ՌԱԶՄԱՎԱՐ), հակառակորդից զավթած, նրա կողմից մարտադաշտում լքված կամ հանձնվելու դեպքում հանձնած, զենք, ռազմական հանդերձանք, տրանսպորտի միջոցներ (ձիեր, մեքենաներ ևն), ռազմական տեխնիկա և այլ նյութական արժեքներ: Ողջ Ա. համարվում է հաղթող կողմի սեփականությունը և օգտագործվում է ինչպես ռազմական, այնպես էլ այլ նպատակներով (որպես պարգև նվիրել մարտում աչքի ընկած հրամանատարներին և մարտիկներին):

ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑ, զորքերի առաջխաղացմանը խոչընդոտող կառույց, հարմարանք և ավերածություններ (փլուզումներ): Ստեղծվում են հակառակորդին կորուստներ պատճառելու, նրա տեղաշարժը և գործողությունները դժվարացնելու, զորաշարժը կաշկանդելու կամ սեփական զորքերի համար առավել նպաստավոր ուղղություններով նրան շարժվել հարկադրելու նպատակով:

ԱՐՇԱՎԱՆՔ, հարձակողական ռազմական գործողությունների տեսակ: Ներխուժում հակառակորդի կողմից վերահսկվող տարածք՝ առավել նպաստավոր պայմաններում պատերազմ վարելու ակնկալիքով, ինչպես նաև ավարառության կամ ասպատակության նպատակով:

ԱՐՏԱԳՐՈՀ, անակնկալ հարձակում հակառակորդի վրա՝ դիրքից, ամրությունից դուրս նետվելով:

Բ

ԲԱԲԱՆ, պաշարողական մարտական գործիք՝ ամրությունների վրա քարեր նետելու կամ ուղղակի հարվածներ հասցնելու համար:

ԲԱԼԻՍՏԱ, գետնամերձ հրաձգության համար նախատեսված հին նետող մեքենա: Գործարկվել է հյուսված թելերի (ջլերի, պարանների, մազերի ևն) ճկունության շնորհիվ: Նախատեսված էր ամրոցների պատերը կործանելու և պաշտպաններին խոցելու համար: Կիրառվել են մինչև 500 կգ զանգվածով քարեր, սրածայր գերաններ, ծանր նետեր ևն: Նետման հեռավորությունը՝ 200-1000 մ:

ԲԱՆԱԳՆԱՑ, հակառակորդի հետ բանակցություններ վարելու լիազորություններով օժտված հակամարտող որևէ կողմ ներկայացնող անձ: Բ. օգտվում է անձեռնմխելիության իրավունքից, տարբերանշանը՝ սպիտակ դրոշ:

ԲԱՆԱԿ, որևէ պետության զինված ուժերի ամբողջությունը:

ԲԱՆԱԿԱՏԵՂ, զորքերի կայան, կենտրոնացման շրջան:

ԲԱՐՁ, ունի նույն իմաստը, ինչ *գահը,* ավելին, հաճախ *գահը* արտահայտվում է Բ. բառով: Այն հավանաբար խորհրդանշում էր գահի վրա դրվող բարձը, իբրև փափկության (առանց խոչընդոտների և անփորձանք իշխելու) խորհրդանիշ:

Բ**ԱՐՈՅԱԼՔՈՒՄ**, բարոյական քայքայում, բարոյականության, կարգապահության, ոգու անկում: Բ. զարգացման խթանիչներ կարող են հանդիսանալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են պատերազմի անբարենպաստ ընթացքը, անձնակազմի մեծ կորուստները և հոգնածությունը, անբավարար նյութական ապահովվածությունը, հակառակորդի քարոզչական ներգործությունը:

ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ, անհատի, կոլեկտիվի որակական գնահատական, որը կոլեկտիվում բնութագրում է հոգեբանական գործոնների ուղղվածությունը և դինամիկան, միջանձնային հարաբերությունները: Բնութագրում է բանակի հոգեկան և բարոյական ոգու ներուժը:

ԲԵՐԴ, մշտական շրջանաձև պաշտպանության համար կառուցված ամրություն, որը լայն տարածում է ստացել միջնադարում, ամրոց:

ԲՆԱԳԻԾ, պաշտպանական ամրությունների և ելման դիրքերի գիծը:

ԲՌՆԱԿ, շեղբավոր սառը զենքի մաս, կազմված է բռնակից, խաչարդից, երախակալից ևն:

Գ

ԳԱՀ, պարսկերենով բառացի նշանակում է նստելու տեղ, բազմոց, աթոռ և այլն: Պատմիչներն այդ բառն օգտագործում են նշանակելու համար այն տեղը, որ նախարարները գրավում էին թագավորի սեղանի շուրջը խնջույքների ժամանակ (սահմանված էր Գահնամակ կոչվող հատուկ փաստաթղթով): Տարբեր պատճառներով թագավորը կարող էր զրկել նախարարին Գ-ից կամ այն իջեցնել: Նույն կերպ կարող էր բարձրացվել Գ-ը: Գ-ով սահմանված կարգը խստիվ պահպանվում էր, իսկ նախարարները նախանձախնդիր էին իրենց գահերի պահպանման կամ բարձրացման հարցերում: Եղիշեն, երբ բերում է ուխտապահ նախարարների ցուցակը, որոնք Վարդանի հետ միացան քրիստոնեությունը պաշտպանելու համար, չնայելով, որ Վարդանն իր պաշտելի հերոսն է, որ նա առաջնորդն է այս ապստամբության գործում, որ նա բոլոր հայ զորքերի սպարապետն է, այնուամենայնիվ, նախարարների ցուցակում նրա անունը դնում է երրորդ տեղում՝ առաջին երկու տեղում նշանակելով Արծրունյաց և Խորխոռունյաց իշխաններին, որովհետև նրանք Գ-ով ավագ էին: Ստեփանոս Օրբելյանը պատմում է, թե Սյունյաց Անդովկ իշխանը պարսից արքունիքում վիրավորանք կրելով, որ Շապուհը նրան տասնչորսերորդ Գ-ը տվեց հայ նախարարների շարքում, դառնացած կերակրի ձեռք չտվեց, և երբ Շապուհը պատերազմի գնաց, նա իր զորքերով վրեժխնդրության համար ավերեց նրա ապարանքը, ավար առավ նրա գանձերը և հեռացավ հույների մոտ:

ԳԱՂՏՆԻՔ, հրապարակման համար չնախատեսված տեղեկություն:

ԳԱՅԼԱՓՈՍ, երբեմն հատակին սրածայր ցցերով հատած կոնի տեսքով փոս: Հակահետևակային արգելափակոցի տեսակ:

ԳԱՐԳԱՄԱԿ, ծագումն ու ճիշտ նշանակությունը հայտնի չեն: Բառարանները բացատրում են իբրև սաղավարտի (խույրի) վրայի զարդ: Կարող է կիրառվել Գ-ով գլխանոցն ու սաղավարտը մեկ բառով նկարագրելու համար: Գ-ը ոսկուց կամ արծաթից շինված արծիվ էր, որ գլխի (սաղավարտի) վրա կրում էին իբրև գլխի պատիվ:

ԳԵՏԱՆՑՈՒՄ, զորքերի կողմից ջրային արգելքի հաղթահարումը:

ԳԵՏԱՆՑՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ, ջրային արգելքը հաղթահարելու տեղամաս:

ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ, գլխավորապես զորքերի (ուժերի) թվաքանակի, նրանց հանդերձանքի և ապահովման, բարոյական վիճակի, մարտական գործողություններ վարելու արվեստով մարտում և օպերացիայի ժամանակ հակառակորդի նկատմամբ ունեցած առավելությունը:

ԳԵՐԻ, պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած և ազատությունից զրկված մարդ:

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐՎԱԾ, դիմադրող հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելու և օպերացիայում (մարտում) տրված առաջադրանքը կատարելու նպատակով ընտրված ուղղությամբ (շրջանում) զորքերի (ուժերի) հարձակողական գործողություններ:

ԳԼԽԱՎՈՐ ՈՒԺԵՐ, օպերացիայում (մարտում) գլխավոր խնդիրներ կատարելու համար նախատեսված միավորման (զորամասի) հիմնական ուժերի և միջոցների խմբավորում:

ԳՐՈՀ, ուժերի գերլարումով վճռական հարձակում հակառակորդի վրա առավելագույն արագությամբ: Այն հարձակման առավել վճռական պահն է և վարվում է բարձր տեմպով՝ գրո-

հողների ուժերի լրիվ լարմամբ: Գ-ի հաջողությունը մեծապես ապահովվում է համառությամբ, գրոհողների գործողությունների հանդգնությամբ, հարվածի անսպասելիությամբ, զորաշարժի սրընթացությամբ, կրակի (խոցման) և շարժման անընդհատ զուգակցմամբ: Ըստ գործողությունների ժամանակի Գ. լինում է ցերեկային և գիշերային, իսկ ըստ վարման ուղղություններ՝ ճակատային, թևային, ինչպես նաև թիկունքից: Գ-ն սկսվում է ելման դիրքերից կամ Գ-ի անցնելու բնագծից՝ կախված Գ-ի անցնելու եղանակներից:

ԳՐՈՀԵԼ, հակառակորդի ամրացված շրջանների, դիրքերի, հզոր պաշտպանական կառույցների (ամրոցների) ուժերի գերլարումով սրընթաց գրավումը:

ԳՐՈՀԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ, պաշտպանվող զորքերի կողմից իրականացվող մարտական գործողություններ, որոնք վարվում են գրոհող հակառակորդին կանգնեցնելու, նրան առավելագույն կորուստներ հասցնելու և պաշտպանության ճեղքումը թույլ չտալու նպատակով:

ԳՈՒՄԱԿ, նյութական միջոցները տեղափոխող, պահպանող և մատակարարող ծիաքարշ ստորաբաժանումների հավաքական անվանումը:

ԳՈՒՄԱՐՏԱԿ, զորքի ստորաբաժանում, որը բաղկացած է մի քանի վաշտերից:

ԳՈՒՆԴ, (պատմ.) ինքնուրույն մարտական գործողություններ վարող զորական միավոր: Միջնադարյան հայ պատմիչները ինքնուրույն գործողություններ վարող ցանկացած զորամաս, անկախ մեծությունից, կարող էին կոչել Գ. կամ զորագունդ: Այն հաճախ ընդամենը ցույց էր տալիս, որ մարտին (ռազմերթին կամ այլ կարգի գործողությանը) չի մասնակցում ամբողջ բանակը:

ԳՈՒՐԶ, հին հարվածային սառը զենք: Կարճ փայտյա բռնակի վրա նստեցված քարե կամ մետաղյա (առանձին դեպքերում՝ սուր ծայրերով) գլխիկ է:

Դ

ԴԱՇԻՆՔ, համատեղ քաղաքական, տնտեսական, ռազմական կամ այլ գործունեություն կատարելու նպատակով ստեղծվող պետությունների ժամանակավոր միություն:

ՌԱԶՄԱԿԱՆ Դ., կոալիցիոն պատերազմ վարելու նպատակով ստեղծվող պետությունների ժամանակավոր ռազմաքաղաքական միություն:

ԴԱՇՈՒՅՆ, կարճ (մինչև 0,3 մ երկարությամբ) ուղիղ կամ կեռ, մեկ կամ երկու սայրով և բռնակով ծակող-կտրող սառը զենք: Կրվում էր պատյանում:

ԴԱՍԱԼԻՔ, զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ լքող կամ էլ ծառայությունից խույս տալու նպատակով զինվորական ծառայությունից խուսափող զինծառայող:

ԴԱՍԱԼՔՈՒԹՅՈՒՆ, զինծառայողի կողմից զորամասի կամ ծառայության վայրի ինքնակամ լքում կամ էլ զինվորական ծառայության չներկայանալը՝ ծառայությունից խույս տալու նպատակով:

ԴԱՍԱԿ, զորական միավոր (ստորաբաժանում) վաշտի կազմում՝ բաղկացած մի քանի ջոկերից:

ԴԱՎԱՃԱՆ, միտումնավոր հակառակորդի կողմը անցած և նրան հանձնված զինծառայող: Նման անձինք յուրայինների կողմից բռնվելիս, որպես կանոն, դատապարտվում են որպես ազգի (Հայրենիքի) Դ.: Հնում Դ-երը պարզապես հրապարակայնորեն մահապատժի էին ենթարկվում:

ԴԱՐԱՆ, թաքնվելու, պահվելու տեղ հակառակորդի վրա հանկարծակի հարձակվելու կամ հեռվից խոցելու համար:

ԴԵՏՔ, պաշտպանության ու հետախուզության համար զորքից առաջ ուղարկվող փոքր ջոկատ:

ԴԻԱԿՊՏՈՒԹՅՈՒՆ, զինծառայողների կողմից մարտի դաշտում սեփական, դաշնակից կամ հակառակորդի զոհվածների կամ վիրավորների, ինչպես նաև քաղաքացիական անձանց (խաղաղ բնակչության) իրերի բացահայտ կամ գաղտնի հափշտակում: Դ. է համարվում նաև մարտի դաշտից դուրս հանվող վիրավորների իրերի հափշտակումը:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ, պատերազմող կողմերի դիվանագիտական միջոցների օգտագործումը հակամարտությունը վարելիս իրենց համար նպաստավոր միջազգային իրադրություն ստեղծելու նպատակով:

ԴԻՏԱԿԵՏ (ԴԿ), մարտակարգի այն տարրն է, որտեղից կատարում են հակառակորդի և տեղանքի հետախուզում, հակառակորդի և մեր զորքերի գործողությունների դիտարկում: ԴԿ-ը կարող է լինել. 1) հրամանատարական (ՀԴԿ). 2) օժանդակ (կողային ԴԿ և առաջնային ԴԿ):

ԴԻՏԱՐԿՈՒՄ, ստորաբաժանումների կողմից հակառակորդի գործողություններին հետևելու միջոցով իրականացվող հետախուզություն վարելու հիմնական միջոցն է:

ԴԻՏՈՐԴ, նշանակվում է հակառակորդին և տեղանքը հետախուզելու, ինչպես նաև բոլոր մարտատեսակներում, տեղաշարժվելիս և տեղում տեղաբաշխվելիս յուրային ստորաբաժանումների ու հարևանների գործողություններն ու դրությունը դիտարկելու համար:

ԴԻՐՔ, մարտ վարելու համար նախատեսված ամրաշինական կառույց կամ այդ նպատակով նախապատրաստված (կարող է լինել նաև չնախապատրաստված, սակայն զորքով զբաղեցված) տեղանքի հատված: Ժամանակակից մարտում Դ. ունենում են ամենափոքր ստորաբաժանումները կամ կրակային (խոցման) միջոցները, օրինակ՝ ջոկի Դ., կրակային Դ. և այլն:

Ե

ԵՌԱԺԱՆԻ, երեք ատամ՝ սուր ծայր ունեցող մարտական գործիք:

ԵՐԹ (ՌԱԶՄԵՐԹ), զորքերի (զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների) կազմակերպված տեղաշարժը ճանապարհներով կամ երթային ուղիներով նշված շրջան, բնագիծ դուրս գալու համար՝ պահպանելով մարտունակությունը:

ԵՐԹԱՅԻՆ ԿԱՐԳ (ԵՐԹԱԿԱՐԳ), զորքերի դասավորվածությունը ռազմերթ կատարելու համար: Ե. կազմված է պահպանության շարասյունից, գլխավոր ուժերից և տեխնիկական ապահովման ու թիկունքի ստորաբաժանումներից:

ԵՐԹԱՐՇԱՎ, զորքերի (զորամիավորումների, զորամասերի, ստորաբաժանումների) կազմակերպված տեղաշարժը ճանապարհներով կամ երթային ուղիներով նշված շրջան, բնագիծ դուրս գալու համար՝ պահպանելով մարտունակությունը:

Զ

ԶԱՎԹԵԼ, զենքի ուժով տիրել, նվաճել:

ԶԵՆՔ, հարձակողական կամ պաշտպանողական ռազմական գործիքների ամբողջություն: Լայն հասկացողությամբ կոչվում են զինված պայքարում հակառակորդին հաղթելու և ոչնչացնելու համար օգտագործվող բոլոր հարմարանքներն ու միջոցները:

ԻՆՔՆԱՇԵՆ Զ., անհատի կամ մի խումբ անձանց կողմից տնայնագործական եղանակներով (զենք արտադրելու համար չնախատեսված սարքավորումների և նյութերի կիրառմամբ) պատրաստված զենք:

ՀՐԿԻԶՈՂ Զ., հակառակորդի վրա անմիջականորեն հրկիզող նյութերով ազդող և դրանցով հրդեհներ առաջացնող զենք: Ներառում է զինամթերքը (հրահեղուկ խառնուրդը) և նշանակետին հասցնելու միջոցը:

ՃԱՆԿՄԱՆ Զ., թիակավոր և առագաստային նավատորմերում ճանկումով հակառակորդի նավը գրավելու ժամանակ օգտագործվող սառը կամ հրածգային զենք:

ՆԵՏՈՂ Զ., հին և միջին դարերում հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և պաշտպանական կառույցներն ավերելու նպատակով կիրառվող ռազմական մեքենաներ: Նետող մեքենաների կառուցվածքը հիմնված է ոլորված և ձգված թելքերի (ջլեր, մազեր ևն) էներգիայի օգտագործման վրա: Նետող մեքենաները հայտնի էին դեռ Հին Արևելքում (Ասորեստանում, Հնդ-

կաստանում ևն), Հին Հունաստանում և, հատկապես, Հին Հռոմում, որտեղ այդ մեքենաները բաժանվում էին բալիստների և կատապուլտների: V դարում Բյուզանդիայում սկսեցին կիրառել նետող մեքենաների նոր տեսակ ֆրանդիբոլը:

ՍԱՌԸ Զ., ձեռնամարտի զենք: Պայմանականորեն դասակարգվում է. ըստ կառուցվածքի՝ շեղբավոր (դաշույն, թուր, սուր, սուսեր, դանակ, սվին ևն), կոթավոր (սակր, գեղարդ, նիզակ, տեգ ևն) և հարվածային (գուրզ, տապար ևն): Ըստ խոցման՝ ծակող, հատող, ծակող-հատող, ծակող-կտրող, հարվածող-հատող և հարվածող-փշրող: Ս.Զ. հայտնի է հնուց և մինչև այժմ էլ նրա որոշ նմուշներ օգտագործվում են զորքերում (դաշույն, դանակ, սվին, սուսեր):

ԶԻՆԱԴԱԴԱՐ, ռազմական գործողությունները պատերազմող կողմերի միջև ժամանակավորապես դադարեցնելու փոխադարձ համաձայնություն: Լինում է ընդհանուր (կնքում են գլխավոր հրամանատարները) և տեղական (կնքում են տեղական հրամանատարները գլխավոր հրամանատարի լիազորությամբ): Ընդհանուր Զ-ի դեպքում պատերազմական գործողությունները դադարեցվում են պատերազմի ողջ թատերաբեմում (հարցերի լայն շրջանակներ ընդգրկելու հետևանքով հաճախ վեր է ածվում հաշտության պայմանագրի), մասնակի Զ-ի դեպքում՝ որոշակի հատվածում:

ԶԻՆԱԽԱՂԵՐ, պատանիների, երիտասարդների և զինվորականների մրցություններ:

ՊԱՏԱՆԵԿԱՆ Զ. (բերդախաղեր, լախտախաղեր, մկնդախաղեր, ճիպոտներով թրակռիվ, դաշույնակռիվ ևն) ունեցել են ռազմասպորտային բնույթ: Խաղակիցներին իրավունք էր վերապահված հարվածել հակառակորդին, բայց, դարերով մշակված կանոնների համաձայն, խեղումներ չառաջացնել:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Զ-ի (սուսերախաղեր, նիզակախաղեր, պարանախաղեր, ավելի ուշ՝ հրազենով նշանառություն ևն) մեծ մասը կատարվում էր ձիավարությամբ: Օգտագործվում էին նաև իսկական զենք ու զրահ (սուր, նետ ու աղեղ, հրազեն, սաղավարտ, վահան, դիմակալ, լանջապանակ ևն): Զ-ին, որպես ռազմական վարժությունների, պետական կարևոր նշանակություն էր տրվում: Թագավորները և իշխանները խրախուսելու համար պարգևատրում էին երիտասարդներին:

ԶԻՆԱՄԹԵՐՔ, սպառազինության բաղկացուցիչ մասը, որը նախատեսված է նշանակետը անմիջապես խոցելու կամ զորքերի գործողություններն ապահովելու համար:

ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ, գործող իշխանությունների դեմ քաղաքական իշխանությունը զավթելու նպատակով զենքը ձեռքին որոշակի սոցիալական խմբերի բացահայտ գործողություններ:

ԶԻՆՎՈՐ, զինված ուժերի շարքային անձնակազմի կրտսեր զինվորական կոչում: Հին Հայաստանում կոչել են զենուվոր, զինավոր, զինակիր:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, օրենքներով, զինվորական կանոնադրություններով և հրամանատարների հրամաններով սահմանված կարգ ու կանոնի ճշգրիտ պահպանումն է բոլոր զինծառայողների կողմից:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏԻՎ, զինվորի ներքին բարոյական հատկությունը, որը բնութագրում է նրա վարքը, վերաբերմունքը կոլեկտիվի, զինվորական պարտքը կատարելու հանդեպ: Զ.Պ. բարձրագույն ցուցանիշը՝ Հայրենիքը զինված պաշտպանելու ժամանակ մարտի դաշտում ցուցաբերած քաջությունն է:

ԶՈՐԱԲԱՆԱԿ, մի քանի զորքերի միավորում, որը գտնվում է մեկ գլխավոր հրամանատարի հրամանատարության տակ և գործում է ռազմաճակատի մի հատվածում:

ԶՈՐԱԹԵՎ (ԹԵՎ), 1) կռվող զորքի աջ, ձախ թևը, մարտակարգի կենտրոնը կամ առանձնացված պահեստազորը: 2) Զորքերի մարտական դասավորվածության՝ զորասյան կամ շարքի աջակողմյան կամ ձախակողմյան մասը:

ԶՈՐԱԽԱՂ, զորային միավորման առավելագույնս պատերազմական իրավիճակին մոտեցված մարտավարական պարապմունք: Զ. զինախաղերի ընթացքում յուրացված հնարքների համալիր կիրառումն է:

ԶՈՐԱԽՈՒՄԲ, զորքի մաս, առանձին զորական խումբ:

ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐ, զինված ուժերում բարձր հրամանատարական կամ շտաբային պաշտոն զբաղեցնող զինվորական պետ:

ԶՈՐԱՄԱՍ, հաստատագրված հաստիքներով պահվող զինված ուժերի ինքնուրույն մարտական և վարչատնտեսական միավոր: Ներառում է բոլոր գնդերը, գնդերի կազմի մեջ չմտնող առանձին գումարտակները, գումարտակների և գնդերի կազմի մեջ չմտնող առանձին վաշտերը:

ԶՈՐԱՆԱՄԱԿ, Հին Հայաստանի ռազմական ուժերի քանակի և դասակարգման մասին պետական վավերագիր կամ ուրույն հրովարտակ: Գործադրվել է Հայաստանում մինչև Արշակունի արքայատան անկումը (IVդ. վերջ – Vդ. սկիզբ): Կազմվել է քառաբաժին բոլորակ աղյուսակի ձևով՝ ըստ Մեծ Հայքի չորս կուսակալ զորավարությունների (Հյուսիսային, Հարավային, Արևելյան և Արևմտյան դռներ): Յուրաքանչյուր բաժնում դասվել են 21 կամ 22 նախարարություն՝ նշելով նրանցից յուրաքանչյուրի զորաքանակը: Ըստ մեզ հասած Զ-ի, Արշակունիների օրոք Հայոց զորքի ընդհանուր թվակազմը եղել է 124 հազար մարտիկ, որոնցից 84 հազարը կազմել են նախարարական կամ սեպուհական, 40 հազարը՝ արքունի (ոստանիկ) և մարդպետական գնդերը: Արտաքին վտանգի ժամանակ նախարարներն իրենց զինվորական ուժերը գումարել են Զ-ով սահմանված զորաթևում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հայոց արքայի կամ սպարապետի հրամանով օգնել այս կամ այն զորաթևին:

ԶՈՐԱՇԱՐԺ, մարտի կարևորագույն բաղադրիչներից է: Զ-ի էությունը ուժերի ու միջոցների անհրաժեշտ խմբավորում ստեղծելու նպատակներով մարտի ընթացքում զորքերի կազմակերպված, ծածուկ և արագ տեղաշարժն է, ինչպես նաև հարվածներն ու կրակը տեղափոխելը կամ վերանշանառելը (կենտրոնացնելը, բաշխելը) հակառակորդին առավել արդյունավետությամբ խոցելու համար: Պաշտպանությունում Զ-ը կիրառվում է հակառակորդի հարվածի (կրակի) տակից դուրս գալու և հակագրոհի անցնելու բնագիծ դուրս գալու համար: Ուժերով և միջոցներով Զ. տեսակներից են թևանցումը, շրջանցումը, նահանջը:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, շարժական պաշտպանություն: Պաշտպանության տեսակ, որի նպատակն է հակառակորդին վնասներ պատճառել, ժամանակ շահել և տարածքային կորուստների հաշվին պահպանել սեփական ուժերը:

ԶՈՐԱՎԱՐ, պատերազմի ժամանակ պետության զինված ուժերը կամ խոշոր զինվորական կազմավորումներ ղեկավարող և ռազմական գործողությունների ընթացքում մեծ հաջողությունների հասած ռազմական գործիչ կամ զորահրամանատար: Զ. են համարվում այն անձինք, ովքեր աչքի են ընկնում ռազմական տաղանդով, ստեղծագործական մտածելակերպով, ռազմական գործողությունների զարգացումը կանխատեսելու ունակությամբ, ամուր կամքով և վճռականությամբ, մարտական փորձով, հեղինակությամբ, կազմակերպչական բարձր հատկանիշներով:

ԶՈՐԱՏԵՍ (ՍՏՈՒԳԱՏԵՍ), 1) հրամանատարության կողմից զորքերի պաշտոնական ստուգում՝ շքերթի, զորահանդեսի ժամանակ: 2) Ավագ հրամանատարների կողմից զորքերը ստուգելու ձև, նրանց համալրվածությունը, շարային պատրաստականությունը և մարտական ներդաշնակվածությունը, սպառազինության, համազգեստի և հանդերձանքի առկայությունը և վիճակը ևն ստուգելու նպատակով:

ԶՈՐԱՏԵՍԱԿ, զինված ուժերի բաղկացուցիչ մաս՝ նախատեսված որոշակի միջավայրում մարտական գործողություններ վարելու համար:

ԶՈՐՔԵՐ, ըստ պատկանելության կամ նշանակության զորամասերի, միավորումների և այլ մշտական կամ ժամանակավոր ռազմական կազմավորումների ընդհանրական անվանումը:

ԶՈՐՔԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄ, զորքերի տեղափոխումը թիկունքից մարտական գործողությունների շրջան նոր խմբավորումներ կազմելու կամ գործող խմբավորումները ուժեղացնելու նպատակով:

ԶՈՐՔԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, տրված խնդիրները կատարելու համար զորքերի ծավալումը (տեղաբաշխումը):

ԶՈՐՔԵՐԻ (ՈՒԺԵՐԻ) ԴՈՒՐՍ ԳԱԼԸ (ՀԱՆՈՒՄԸ) ՀԱՐՎԱԾԻ ՏԱԿԻՑ, մարտունակությունը պահպանելու նպատակով զորքերի կողմից դիրքերի, շրջանների, տեղաբաշխման վայրերի արագ և ծածուկ փոխումը:

ԶՈՐՔԵՐԻ (ՈՒԺԵՐԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, զինված ուժերի, ռազմական կազմավորումների կառուցվածքը, որը ապահովում է նրանց նպատակահարմար կազմը, զորատեսակների և զինատեսակների առավել նպատակահարմար հարաբերակցությունը, բարձր մարտական պատրաստվածությունը և հաջող մարտական գործողություններ վարելու ունակությունը:

ԶՈՐՔԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, նշված շրջաններում զորամասերի, զորամիավորումների և միավորումների հավաքը և տեղաբաշխումը:

ԶՈՐՔԵՐԻ (ՈՒԺԵՐԻ) ՂԵԿԱՎԱՐՈՒՄ, հրամանատարության, հրամանատարների և շտաբների գործունեությունը զորքերը մշտական մարտական պատրաստվածության մեջ պահելու, օպերացիաները (մարտական գործողությունները) պատրաստելու և տրված խնդիրները կատարելիս զորքերը կառավարելու համար:

ԶՈՐՔԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ), խաղաղ ժամանակ զորամասերի տեղավորումը դրանց համար հատկացված վայրերում:

ԶՐԱՀ, պաշտպանական հանդերձանք: Բաղկացած էր զանազան մասերից (լանջապանակ, թիկնապանակ, ուսակալ, դիմակալ, զանգապան, սռնապան, բազկապան ևն): Հայկական լեռնաշխարհում գտնված հնագույն զրահները (Փարվանա լճի մոտ՝ Ք.ա. III հազարամյակ, Լճաշեն, Արթիկ՝ Ք.ա. XIII-XIդդ., Դիլիջան՝ Ք.ա. VIII-VIIդդ. ևն) բաղկացած են կաշվից կամ հյուսվածքից պատրաստված շապկից՝ վրան բրոնզե կոճակներ, ճարմանդներ կամ թիթեղներ: Բրոնզի դարում բրոնզե լայն գոտիները ևս զրահի դեր էին կատարում: Ավելի ուշ առաջ են գալիս շերտավոր զրահները, որոնց թեփուկանման թերթիկները գործված շապկի վրա կարված կամ հետը հյուսված են: Միջնադարյան Հայաստանում սրանց զուգահեռ գոյություն են ունեցել նաև ամբողջական (ճոշ, ճոշան), թիթեղյա՝ առանձին մասերից բաղկացած (Դվին, VIII-XIդդ.) և թաղիքե զրահներ: Գործածվել են նաև մետաղալարից հյուսված զրահները (վերտ, վիրտ) և օղազրահները: Ձիերի խոցելի մասերը ևս պատվել են զրահով: Ձիու՝ բրոնզե բուսանախշերով ընդելուզված երկաթե դիմակալ է գտնվել Սևանա լճի առափնյա ծանծաղ մասում:

Թ

ԹԻՐԱԽ, իրական նշանակետերի հայտնաբերումը և խոցումը ուսուցանելու, հետախուզության և խոցման արդյունավետությունը գնահատելու, ինչպես նաև խոցման արդյունքները համեմատելու համար նախատեսված նմանակող նշանակետ:

ԹՐԱԴԱՇՈՒՅՆ, թրի նման, բայց ուղիղ ու լայն երկսայր շեղբով սառը զենք (տե՛ս ակինակ):

ԹՈՒՐ, կտրող զենք: Բաղկացած է գոգավոր ուռուցիկ կողմից սուր, ներծկված կողմից բութ շեղբից, դաստապանից (երախակալ, բռնակ, կոթ) և կռվանից (շեղբը դաստապանից բաժանող խաչաձև մաս), ունի սուր ծայր: Դաստապանը երբեմն ունենում է 1-3 աղեղնակ: Թ. երկարությունը՝ 80-90, լայնությունը 3-3,5 սմ է: Հարմարավետությունը որոշվում է շեղբի այնպիսի կորությամբ և ծանրության կենտրոնով, որի դեպքում փոքրանում է կտրելու անկյունը և մեծանում հարվածի ուժը: Միայն կտրող արևելյան Թ-ի շեղբի թեքությունը հասնում է 10, իսկ ծակելու համար հարմարեցված եվրոպականինը՝ 1 սմ: Կրում են պատյանի մեջ, որը լինում է փայտե, մետաղե, փղոսկրե, հաճախ՝ կաշեպատ, թավշապատ, զարդարված ոսկյա, արծաթյա (երբեմն՝ թանկագին քարերից) վերադիր զարդերով և փորագիր նախշերով: Ենթադրվում է, որ Թ. միջնադարյան Հայաստանում եղել է հեծելազորի հիմնական զենքը: Պատմիչները երբեմն Թ. նույնացրել են սրի հետ:

ԹԵՎ (ԶՈՐԱԹԵՎ), շարքի աջ (ձախ) կողմը: Զորքերի մարտակարգի աջ (ձախ) կողմը: Թ. սովորաբար համարվում է մարտակարգի առավել խոցելի տեղը:

ԹԵՎԱՅԻՆ ՀԱՐՎԱԾ, հարված հակառակորդի մարտակարգի թևին՝ հետագայում նրա գլխավոր խմբավորման թիկունք դուրս գալու նպատակով:

ԹԵՎԱՆՑՈՂ ՋՈԿԱՏ, հակառակորդին թիկունքից հարվածներ հասցնելու, նրա տեղաբաշխման խորքում կարևոր օբյեկտներ զավթելու և պահելու նպատակով, նրան թևանցելու համար ստեղծված հատուկ կազմավորում:

ԹԵՎԱՆՑՈՒՄ, հարվածի համար հակառակորդի թև դուրս գալու նպատակով ստորաբաժանումների կողմից կատարվող զորաշարժն է:

Ժ

ԺԱՄԱՊԱՀ, հանձնարարված կետը (պահակակետը, օբյեկտը) պահպանող զինված պահակ, զինվորական պահակ:

Ի

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, նպատակն է ստորաբաժանումների համար ստեղծել ժամանակին և քողարկված ձևով դրանց առաջխաղացման, ծավալման և զորաշարժի, անձնակազմի, սպառազինության ու տեխնիկայի պաշտպանությունը բարձրացնելու բոլոր խոցամիջոցներից, ինչպես նաև հակառակորդին կորուստներ պատճառելու և նրա գործողությունները դժվարացնելու պայմաններ: Ինժեներական ապահովումը ներառում է ինժեներական հետախուզությունը, ամրաշինական կառույցները, քողարկման ինժեներական միջոցառումները, ինժեներական արգելափակոցների տեղադրումը, արգելափակոցներում և փլվածքներում անցումներ բացելը, արգելքների վրայով անցուղիներ սարքավորելը, անցատեղերի տեղադրումն ու պահպանումը, ջրի հայթայթումն ու մաքրումը և ջրապահովման կետերի սարքավորումը:

ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ, կառուցվում են տեղանքի ինժեներական կառուցապատման ժամանակ: Ի.Կ. են ամրաշինական կառույցները, ռազմական ճանապարհները, կամուրջները և կեղծ շինությունները:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՋՈԿԱՏ(ՆԵՐ), օտարերկրյա պետության և գաղութատիրության դեմ ճնշված և կախյալ ժողովուրդների կողմից ազգային, կրոնական կամ լեզվային հատկանիշներով կազմավորված զինված խմբավորումներ՝ ինքնորոշման, պետական ինքնիշխանության, ազատ և ինքնուրույն տնտեսական և մշակութային զարգացման համար:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ, մարտական գործողությունների պատրաստման և անցկացման վրա ազդող գործոնների և պայմանների ուսումնասիրում և վերլուծում:

Լ

ԼԵԳԵՈՆ, 1) Հին Հռոմի բանակի հիմնական կազմակերպչական և մարտավարական միավորը: Մինչև Ք.ա. VIդ. ամբողջ հռոմեական բանակի անվանումը: Ք.ա. IVդ. երկրորդ կեսից L. կազմված էր 10 մանիպուլներից և 10 թուրմերից, Ք.ա. IIIդ. առաջին կեսից՝ 30 մանիպուլներից և 10 թուրմերից: Այդ ողջ ընթացքում L-ի կազմը անփոփոխ էր՝ 4500 մարդ (այդ թվում 300 հեծյալ): Ք.ա. IIդ. վերջից L. կազմված էր 10 կոհորտաներից: Նրա կազմում մտնում էին նաև պարսպակործան և նետող մեքենաները և գումակը: Iդ. L-ի կազմը հասավ 6-7 հազարի (այդ թվում 800 հեծյալ):

ԼՈՔ, Հին հունական (նաև՝ մակեդոնական) բանակում նվազագույն կազմակերպչական միավորի անվանումը: Թվակազմը՝ 12-16 մարդ: Փաղանգը շարելիս L. կազմում էր մեկ շարասյուն:

ԼՐՏԵՍ, օտար պետության կամ կազմակերպության (նրանց գործակիցներին) հանձնելու նպատակով պետական կամ ռազմական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև երկրի անվտանգությանը ի վնաս օգտագործվող այլ տվյալներ հափշտակող, գողություն կամ հայթայթում կատարող անձ:

ԼՐՏԵՍՈՒԹՅՈՒՆ, պետական կամ ռազմական գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև երկրի անվտանգությանն ի վնաս օգտագործվող այլ տվյալների հափշտակում, գողություն կամ հայթայթում օտար պետության կամ կազմակերպության (նրանց գործակիցներին) հանձնելու նպատակով:

Խ

ԽԱՂԱՂ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, պատերազմող կողմերի զինված ուժերին չպատկանող և մարտական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող անձինք:

ԽԱՆԴԱԿ, պարիսպների շուրջը փորված խրամ՝ պաշտպանության համար:

ԽԱՉԱՐԴ, շեղբավոր սառը զենքի երախակալի (բռնակի) մաս, որը նախատեսված է ձեռքի մատերը հարվածից պաշտպանելու համար:

ԽԹԱՆՆԵՐ, հեծյալի կոշիկի կրունկներին ամրացվող մետաղական հարմարանք ձին ղեկավարելու համար:

ԽԻՏ (ԽՏԱՑՎԱԾ) ՇԱՐՔ (ԽԻՏ ՄԱՐՏԱԿԱՐԳ), շարք, որտեղ զինծառայողները տողաններում տեղավորված են ճակատով, կողք կողքի՝ մեկը մյուսի արմունկից ձեռքի թաթի լայնության վրա:

ԽՈՂԽՈՂԵԼ, սառը զենքով խոցելով՝ խոցոտելով սպանել, մահացու խոցել, խոցոտել:

ԽՈՅ, հին պաշարողական զենք, որը կիրառվում էր ամրոցների դարպասները ջարդելու և պատերում և աշտարակներում անցքեր բացելու համար:

ԽՈՑԵԼ, զենքով կամ ծակող գործիքով վերք հասցնել:

ԽՈՑՈՒՄ, զինված պայքարի տարբեր ուժերով և միջոցներով ազդեցություն հակառակորդի վրա, որի արդյունքում նա ամբողջությամբ կամ մասնակի կորցնում է մարտունակությունը:

ԽՈՒՃԱՊ, առանձին մարդու, մարդկանց խմբի կամ զանգվածների հոգեբանական վիճակ, որն առաջանում է իրական կամ թվացյալ վտանգի դեպքում և բնութագրվում է հույզերի ուժեղ խառնաշփոթով, իրավիճակը սթափ և ճիշտ գնահատելու ունակության կորստով:

Ծ

ԾԱՆԾԱՂՈՒՏ, գետի սակավաջուր հատված, որտեղից կարելի է գետը հաղթահարել հատակով:

ԾԱՎԱԼՎԱԾ ՇԱՐՔ (ԾԱՎԱԼՎԱԾ (ԲԱՑԱՁԱՏՎԱԾ) ՄԱՐՏԱԿԱՐԳ), զորասյուներով զորքերի (զինծառայողների, ստորաբաժանումների, զորամասերի) դասավորվածությունը համատեղ գործողություններ կամ տեղաշարժ կատարելու համար: Ծ.Շ. կարող է լինել խիտ կամ բացազատված:

ԾԱՎԱԼՄԱՆ ԲՆԱԳԻԾ, տեղանքի պայմանական բնագիծ, որտեղից ստորաբաժանումները, զորամասերը և զորամիավորումները երթային կամ նախամարտական կարգից վերադասավորվում են մարտակարգի:

ԾԱՎԱԼՈՒՄԸ ՄԱՐՏԱԿԱՐԳԻ, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների երթային կամ նախամարտական կարգից վերադասավորումը մարտակարգի:

ԾԱՎԱԼՈՒՄԸ ՆԱԽԱՄԱՐՏԱԿԱՐԳԻ, ստորաբաժանումների, զորամասերի և զորամիավորումների երթային զորասյուների հաջորդաբար տարաբաժանումը զորասյուների՝ արագ մարտակարգի ծավալվելու նպատակով:

Կ

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ (ՄԱՐՏԻԿ), սեփական ցանկությամբ զինվորական ծառայության անցած անձ:

ԿԱՅԱԶՈՐ, քաղաքում, բերդում կամ պաշտպանական շրջանում մշտական կամ ժամանակավորապես տեղավորված զորք:

ԿԱՆԽՈՂ ՀԱՐՎԱԾ, պատերազմի ժամանակ հակառակորդին նախօրոք հասցված հարված, նախքան նրա ակտիվ գործողություններ սկսելը: Հասցվում է հակառակորդին հանկարծակիի բերելու, նրան մեծ կորուստներ պատճառելու և նախաձեռնությունը նրա ձեռքից խլելու նպատակով:

ԿԱՊԱՐՃ, նետերը և նետվող կարճ նիզակները կրելու պատյան:

ԿԱՏԱՊՈՒԼՏ, 1) հյուսված թելերի (ջլերի, պարանների, մազերի ևն) ճկունության շնորհիվ գործարկվող պաշարողական ռազմական գործիք՝ ամրությունների վրա մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գագաթնահար հետագծով մինչև 500 կգ զանգվածով քարեր կամ գնդեր նետելու համար: Կիրառվել է մինչև XVդ.:

ԿԱՐԳ, որևէ ամբողջություն կազմող մասերի կամ միավորների հաջորդականությունն ու ընդհանուր դասավորությունը (օրինակ՝ զորքերի մարտական (նախամարտական, երթային) Կ.):

ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆ, տարածք, որի վրա տեղաբաշխվում են զորքերը: Կ.Շ-ում զորքերը տեղաբաշխվում են ապակենտրոնացված, այնպես, որպեսզի արագ մարտի մեջ մտնեն կամ էլ դուրս գան զբաղեցրած շրջանից: Միջնադարում Կ.Շ.-ը հրամանատարական վրանը շրջապատող տարածքն էր:

ԿՈՂԱՅԻՆ ԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ, երթի ժամանակ զորքերը պաշտպանող օրգան (խումբ): Մեկ կամ երկու թևերի ուղղությամբ ուղարկվում է առաջնային ջոկատից (առաջապահ ուժերից) կամ էլ անմիջապես գլխավոր ուժերի կողմից: Կ.Ե.Ու-ի նպատակն է թույլ չտալ հակառակորդի հանկարծակի հարձակումը գլխավոր ուժերի վրա, ինչպես նաև նրա հետախուզության ներթափանցումը պահպանվող զորասյան մոտ և գլխավոր ուժերի համար արագ բացազատվելու և մարտի մեջ մտնելու պայմաններ ստեղծելը:

ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ, առանձնացող, լավ երևացող և տեղանքում ճանաչվող առարկա կամ տեղանքի ռելիեֆ, որը զորքերի կողմից օգտագործվում է իրենց դիրքը և նշանակետերի տեղաբաշխումը, շարժման ուղղությունը որոշելու, նպատականշման, ստորաբաժանումները մարտում ղեկավարելու համար:

Հ

ՀԱԶԱՐԱՊԵՏ, հազար զինվորից բաղկացած զորական միավորի պետ՝ հրամանատար:

ՀԱԿԱԳՐՈՀ, պաշտպանվող կողմի հանդիպական գրոհը հակառակորդի հարձակումը հետ մղելու կամ հակահարձակման անցնելու համար, գրոհի դեմ ձեռնարկվող գրոհ: Հ-ն անցկացվում է բարենպաստ պայմաններում՝ պաշտպանության մեջ սեպված հակառակորդին ոչնչացնելու կամ պաշտպանության համար բնագծեր նվաճելու նպատակով:

ՀԱԿԱՀԱՐՁԱԿՈՒՄ, հակառակորդի հարձակողական գործողություններին պատասխան հարձակում:

ՀԱԿԱՊԱՏՆԵՇ (փորված արգելափոսի հողով սարքված և քարերով ամրացված ոչ բարձր (հիմնականում մինչև 2մ) պատ), ամրաշինական կառույց, որն ամրոցը պաշարող բանակը կառուցում էր ամրոցից ձեռնարկվող հավանական արտագրոհներին դիմակայելու համար: Արտագրոհի դեպքում ամրոցի պաշտպանները ստիպված էին լինում հաղթահարել պատի վրա կանգնած զորամասերի դիմադրությունը, այսինքն՝ պաշարողի և պաշարվածի դերերը փոխվում էին:

ՀԱԿԱՌԱԿՈՐԴ, 1) ախոյան: 2) Պատերազմում պետությանը (պետությունների դաշինքի) ընդդիմադիր կռվող պետության (պետությունների դաշինքի) զորքերի ընդհանուր անվանումը:

ՀԱՂԹԱՀԱՆԴԵՍ, հաղթանակին նվիրված հանդես, հաղթանակի տոնակատարություն:

ՀԱՄԱԼՐՈՒՄ, զորքերը ուժեղացնելու նպատակով ստացվող ուժեր և միջոցներ:

ՀԱՆԴԻՊԱԿԱՆ ՄԱՐՏ, հարձակողական մարտի տարատեսակներից է: Դա հարձակում է այն հակառակորդի վրա, որը նույնպես ձգտում է իր խնդիրները լուծել հարձակմամբ: Նպա-

տակն է կարճ ժամկետներում հարձակվող հակառակորդի ջախջախումը, նախաձեռնության խլումը և հետագա գործողությունների համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

ՀԱՆԿԱՐԾԱԿԻՈՒԹՅՈՒՆ, ռազմարվեստի սկզբունքներից մեկը, հակառակորդի համար անակնկալ գործողություններ, որոնք հնարավորություն են տալիս նրան անակնկալի բերել և հաջողության հասնել մարտում, օպերացիայում, իսկ որոշ դեպքերում՝ նաև պատերազմում:

ՀԱՐՁԱԿՄԱՆ ԽԱՓԱՆՈՒՄ, հակառակորդի վրա գործողությունների ամբողջություն, որոնց արդյունքում նա հարկադրված է լինում դադարեցնել հարձակողական գործողությունները կամ էլ հրաժարվում էր տվյալ ուղղությամբ նախատեսված նպատակներին ձգտելուց:

ՀԱՐՁԱԿՈՒՄ, համազորային մարտի հիմնական տեսակներից է: Հ. նպատակն է՝ արագընթաց առաջխաղացումով ներթափանցել հակառակորդի մարտակարգի խորքը, ոչնչացնել և գերի վերցնել նրա կենդանի ուժը, գրավել տեղանքի նախատեսված շրջանները (բնագծերը): Հ. կարելի է վարել պաշտպանվող, հարձակվող, նահանջող հակառակորդի վրա: Հարձակվող հակառակորդի վրա Հ. են *հանդիպական մարտով*, նահանջող հակառակորդի վրա՝ *հետապնդմամբ:* Պաշտպանվող հակառակորդի վրա կարելի է Հ. նրա հետ անմիջական շփման պայմաններից կամ ընթացքից:

ՀԱՐՅՈՒՐՅԱԿ, սովորաբար 100 մարդուց կազմված զինվորական ստորաբաժանում, կազմակերպչական և մարտական միավոր:

ՀԱՐՅՈՒՐԱՊԵՏ, հարյուր զինվորից բաղկացած ստորաբաժանման պետ, հրամանատար:

ՀԱՐՎԱԾ, մարտի բաղադրամաս է: Հակառակորդի խմբավորումների և օբյեկտների միաժամանակ խոցումն է եղած բոլոր միջոցների և ուժերի հզոր ներգործությամբ: Հ. կարող է լինել.

ԱՋԱԿՑՈՂ, գլխավոր հարվածի ուղղությունից մեկ այլ ուղղությամբ ուժերի և միջոցների մի մասով հասցվող հարված: Հիմնականում իրականացվում է հակառակորդի ուշադրությունը գլխավոր հարվածի ուղղությունից շեղելու, նրա ուժերի և միջոցների մի մասը կաշկանդելու և ուժերով ու միջոցներով զորաշարժը բացառելու նպատակով:

ԳԼԽԱՎՈՐ, դիմադրող հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելու և օպերացիայում (մարտում) տրված առաջադրանքը կատարելու նպատակով ընտրված ուղղությամբ (շրջանում) զորքերի (ուժերի) հարձակողական գործողություններ:

ԹԵՎԱՅԻՆ, հարված հակառակորդի մարտակարգի (օպերատիվ դասավորվածության) թևին, հետագայում նրա գլխավոր խմբավորման թիկունք դուրս գալու նպատակով:

ԿԱՆԽՈՂ, պատերազմի ժամանակ հակառակորդին նախօրոք հասցված հարված, նախքան նրա ակտիվ գործողություններն սկսելը: Հասցվում է հակառակորդին հանկարծակիի բերելու, նրան մեծ կորուստներ պատճառելու և նախաձեռնությունը նրա ձեռքից խլելու նպատակով:

ՀԱՏՈՂ Հ., հարձակվող զորքերի գործողությունների ձև, որը սովորաբար օգտագործվում է հակառակորդի խմբավորումը մասնատելու և հետագայում առանձին-առանձին նրանց ջախջախելու նպատակով:

ՀԱՐՎԱԾԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, զորքերի գլխավոր խմբավորման հարվածի ուղղության փոփոխություն: Իրականացվում է, որպես կանոն, վերախմբավորում կամ զորաշարժ կատարելով:

ՀԵԾԵԼԱԶՈՐ, զորատեսակ: Եգիպտոսի, Հնդկաստանի, Չինաստանի, Միջագետքի երկրների բանակներում, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում մինչև Հ-ի երևան գալը կիրառվել են ձի լծած մարտակառքեր: Հ. որպես զորատեսակ երևան է եկել Ք.ա. II հազարամյակի վերջում: Ք.ա. VIդ. Պարսկաստանում այն հիմնական զորատեսակ էր (ծանր և թեթև): Կանոնավոր Հ. Հին Հունաստանում առաջին անգամ օգտագործվել է Ք.ա. IVդ. և ավելի կատարելագործվել Ալեքսանդր Մակեդոնացու բանակում (ծանր, միջին և թեթև Հ.):

Իր մարտունակությամբ և հզորությամբ հռչակված էր հայկական Հ.: Հին հռոմեական բանակում Հ. օժանդակ զորատեսակ էր լեգեոնի կազմում:

ԹԵԹԵՎԱԶԵՆ Հ., թեթև զինված զինվորներից կազմված հեծելազորի տեսակ: Հին աշխարհի բանակներում ի հայտ է եկել անկանոն հեծելազորի տեսքով:

ԾԱՆՐԱԶԵՆ Հ., ծանր զինված զինվորներից կազմված հեծելազորի տեսակ: Որպես առան-

ձին տեսակ լայն կիրառում է գտել Հին Մակեդոնիայի բանակում (Ք.ա. IVդ.): Հրազենի տարածմանը զուգահեռ Ծ.Հ. կորցրել է իր նշանակությունը:

ՀԵՏ ՔԱՇՎԵԼԸ (ՆԱՀԱՆՁ ՆԱԽՕՐՈՔ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԲՆԱԳԻԾ), գերակշռող հակառակորդի հարվածի տակից զորքերի կողմից զբաղեցված բնագծերի (շրջանների) հարկադրյալ կամ կանխամտածված լքումը և նրանց հետբերումը ավելի նպաստավոր դիրք հետագա գործողությունների համար:

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԴԱՐԱՆ, հետախուզության ձև: Կատարում է հետախուզական դետքը՝ գերիներ, հակառակորդի փաստաթղթեր, սպառազինության ու տեխնիկայի նմուշներ վերցնելու նպատակով: Դրա էությունն այն է, որ խմբի ստորաբաժանումը նախօրոք ու թաքուն տեղաբաշխվում է հակառակորդի շարժման սպասվող կամ հավանական ուղիների վրա՝ նրա վրա հանկարծակի հարձակվելու համար:

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՈՒՄԲ (ՋՈԿԱՏ), ստեղծվում է զորային հետախուզության ստորաբաժանման հատուկ նախապատրաստված անձնակազմից: Նախատեսված է հակառակորդի թիկունքում օբյեկտներ բացահայտելու համար:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ, զորքերի գործողությունների մարտական ապահովման կարևորագույն տեսակն է: Կազմակերպվում է հակառակորդի և տեղանքի մասին տեղեկություններ հավաքելու համար:

Հ. դերի բարձրացմանը զուգընթաց բարձրանում են նաև դրան ներկայացվող պահանջները, որոնցից հիմնականներն են. նպատակասլացությունը, անընդհատությունը, ակտիվությունը, ճիշտ ժամանակին լինելն ու օպերատիվությունը, գաղտնիությունը, կոորդինատները որոշելու ճշգրտությունը: Տվյալները հայթայթվում են տարբեր ձևերով: Դրանցից հիմնականներն են դիտարկումը, գաղտնալսումը, հետախուզական դարաններն ու հարձակումները, տեղացի բնակիչների հարցումներն ու գերի փախստականների հարցաքննությունները, հակառակորդից բռնագրավված փաստաթղթերի ուսումնասիրությունը:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏՈՎ, 1) հետախուզության ձև: 2) Հատուկ առանձնացված ստորաբաժանումների կողմից հակառակորդի մասին տվյալների հայթայթումը: Մարտով հետախուզությունը կատարվում է այն դեպքում, երբ հետախուզության մյուս եղանակները չեն կարող հրամանատարությանն ապահովել հակառակորդի մասին անհրաժեշտ տվյալներով, կամ երբ չկա դրանք այլ եղանակներով ձեռք բերելու հնարավորություն: Երկրորդ աշխարհամարտի ընթացքում մարտով կատարվող հետախուզությունը լայն կիրառություն է գտել և, որպես կանոն, տվել է բավականին դրական արդյունքներ:

ՀԵՏԱԽՈՒՅԶ, գործող և հավանական հակառակորդի մասին տվյալներ հայթայթող, ուսումնասիրող և ընդհանրացնող անձ:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ, հարձակողական մարտի տարատեսակներից է: Իրականացվում է հակառակորդի պաշտպանության խորքում՝ նահանջող հակառակորդի վրա հարձակվելիս:

ՀԵՏԵՎԱԿ (ՀԵՏԵՎԱՋՈՐ), ցամաքային զորքերի տեսակ: Նախատեսված է մարտում հակառակորդին ջախջախելու և նրա տարածքը գրավելու համար: Մարտ է մղում օրվա բոլոր ժամերին, տարվա բոլոր եղանակներին, ամենատարբեր տեղանքում: Ամենահին զորատեսակն է, որը հասարակության զարգացմանը զուգընթաց զգալի փոփոխություններ է կրել: Հին աշխարհում (Եգիպտոս, Հունաստան, Հռոմ ևն) Հ. եղել է գլխավոր զորատեսակ: Միջին դարերում Հ-ի նշանակությունը նվազել է: Տարբերվում էր ծանր և թեթև Հ:

ԹԵԹԵՎԱՋԵՆ Հ., թեթև զինված զինվորներից կազմված հետևակի տեսակ: Նախատեսված էր մարտը սկսելու, մարտի ընթացքում հիմնական ուժերի թևերը և թիկունքը պաշտպանելու, հետախուզություն վարելու և այլ խնդիրներ կատարելու համար: Հին աշխարհում կազմված էր նետաձիգներից, պարսատիկավորներից ևն:

ԾԱՆՐԱՋԵՆ Հ., հետևակի տարատեսակ: Նախատեսված է մարտում (ճակատամարտում) հակառակորդին վճռական հարված հասցնելու համար: Գոյություն է ունեցել Հին աշխարհի երկրներում: Ի տարբերություն թեթև հետևակի, այն գործել է խիտ սեղմված շարքերով:

«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ» ԳՐՈՀ, պաշտպանվող հակառակորդին սարսափեցնելու (վախեցնելու), նրա հոգեվիճակը կտրուկ և խիստ ապակայունացնելու, դիմադրելու կամքը ճնշելու նպատակով իրականացվող գրոհ: Ներառում է արտաքին էֆեկտի տարրեր, նոր զինատեսակների անակնկալ կիրառում ևն:

ՀՈՂԱԹՈՒՄԲ (ՀՈՂԱՊԱՏՆԵՇ, ԲՐՈՒՍՏՎԵՐ), հողային լիցք խրամատի կամ խրամուղու առջև, որը ծառայում է հրազենից կրակելու հարմարավետությունը, հրաձիգներին հրաձգային զենքերի գնդակներից, բեկորներից պաշտպանելու և հակառակորդի դիտարկումը ապահովելու համար:

ՀՈՊԼԻՏՆԵՐ, Հին հունական քաղաք-պետությունների բանակների հիմքը կազմող զինվորներ: Սպառազինված էին երկար ծանր նիզակներով, կարճ սրով և լրիվ մետաղական պաշտպանական հանդերձանքով (սաղավարտ, վահան, զրահ, սռնապաններ): Մարտնչում էին փաղանգի մարտակարգում (շարքում):

ՀՐԱԿՆԱՏ, բաց (երբեմն կափարիչով ծածկվող) նեղ ճեղք պաշտպանական կառույցներում, խրամուղու հողաթմբի, զրահամեքենաների, զրահավահանի, ամրոցի պատի վրա կրակի վարման և դիտարկման համար:

ՀՐԱՄԱՆ, ենթականերին ուղղված հրամանատարի գրավոր կամ բանավոր կարգադրություն, որը պահանջում է կոնկրետ գործողությունների, այս կամ այն կանոնների կատարում կամ հրամանատարի կողմից հաստատագրված կարգ, դրություն:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԵՏ (ՎՐԱՆ), մարտադաշտին (տեղաբաշխման ժամանակ՝ սեփական զորքին) հետևելու համար հարմար վայր, որտեղ գտնվելով՝ հրամանատարը արդյունավետորեն կազմակերպում է զորքի կենսագործունեությունը:

ՀՈՒՆԱԿԱՆ ԿՐԱԿ, հին հրկիզող խառնուրդ, կիրառվել է ծովամարտերում և ամրոցները պաշարելիս, որի պատճառով կոչվել նաև «ծովային կրակ», «մարտական կրակ», «հեղուկ կրակ»: Հավանաբար կազմված է եղել ազոտից, ծծմբից, նավթից, խեժից և ջրում չհանգչող այլ նյութերից: Նետելու համար օգտագործվել են պղնձյա խողովակներ (նավերի վրա), ձեռքի սիֆոններ, «բոցավառ եղջյուրներ», ինչպես նաև նետող մեքենաներից նետվող տակառներ և կավե կճուճներ:

Հ.Կ կիրառման մասին առաջին հիշատակումները պատկանում են VIIդ.: Հ.Կ. գյուտարար է համարվում Կալլինիկոս անունով մեկը, որն Ասորիքից էր: Հ.Կ. պատրաստումը Բյուզանդական կայսրության պետական գաղտնիք էր: Հ.Կ. վերջին անգամ հիշատակվում է 1453թ.:

Ձ

ՁԵՌՆԱՄԱՐՏ, ձեռնակռիվ, սվինամարտ:

ՁԻԱՎՈՐՆԵՐ, ձիավորք, ձիավարժք, հեծելվորք, ասպետք, մանր ու միջին ազնվականների դաս Կիլիկյան Հայաստանում: Հասարակական-տնտեսական վիճակով գտնվել են ավատապետական սանդուղքի երրորդ աստիճանում: Համապատասխանում են Արշակունյաց և Բագրատունյաց Հայաստանի ազատների (ոստանիկներ, սեպուհներ) դասին: Հողի գերագույն տերերից՝ թագավորներից և ավատառու բարձրադաս ազնվականներից ստանալով կալվածներ և ռոճիկ (հռոգ), վասալ Ձ. նրանց համար կատարել են զինվորական ծառայություն (գերազանցապես հեծելազորային), վարել գործակալական մանր պաշտոններ: Պարտավորությունները խախտելու դեպքում ավատատերն իրավունք է ունեցել հետ գրավել պայմանով ձիավորին հատկացված կալվածը, դատել նրան: Ըստ «ձիավորեցման հրահանգի», ձիավոր ասպետի աստիճան ստանալու համար Ձ. հրապարակայնորեն քննություն են հանձնել ձիավարժությունից, զինախաղերից: Ձիավորեցման արարողությունները սովորաբար կատարել են նշանավոր իրադարձությունների ու տոնահանդեսների ժամանակ: Ձ. խաղաղ ժամանակներում բնակվել են իրենց հատկացված կալվածքներում, զբաղվել տնտեսությամբ, զինախաղերով: Կրել են կապույտ համազգեստ՝ ոսկեգույն խաչի և հայկական այրուձիու նշաններով:

Ճ

ՃԱԿԱՏ, ռազմական միավորի դասավորվածության առջևի գիծը, տարածությունը:

ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, ռազմական գործողություն, կռիվ:

ՎՃՌԱԿԱՆ Ճ., պատերազմող կողմերի գլխավոր ուժերի վճռական ընդհարումը տեղանքի սահմանափակ շրջանում, որտեղ հակառակորդներից մեկի բանակի ջախջախումով կարող է որոշվել ողջ պատերազմի ելքը:

ՃԱՄԲԱՐ, զորքերի մշտական տեղակայման վայրից դուրս գտնվող ժամանակավոր կայան:

ՃԵՂՔՈՒՄ (ՄԱՐՏԱԿԱՐԳԻ, ՁՈՐՔԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՄ ԵՐԹԱՅԻՆ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ), ճակատի նեղ տեղամասում հակառակորդի պաշտպանության երկփեղկումն է:

Մ

ՄԱՂԽԱԶՈՒԹՅՈՒՆ, արքունի գործակալություն վաղ միջնադարյան Հայաստանում: Ունեցել է արքունիքի պահակազորի և թագավորի թիկնազորի պարտականություն: Ժառանգաբար վարել են Խորխոռունիների նախարարական տոհմը, որի տանուտեր իշխանը եղել է թիկնազորի հրամանատարը և կրել «մաղխազ» տիտղոսը: Այդ պատճառով էլ Խորխոռունիները կոչվել են Մաղխազունիներ (Մաղխազունիք) կամ Մաղխազյաններ:

ՄԱՏՅԱՆ ԳՈՒՆԴ, պարսկական բանակի լավագույն մարտիկներից (Աքեմենյանների օրոք (Ք.ա. VI-IVդդ.)՝ հետևակային, Սասանյանների օրոք (III-VIIդդ.) նաև՝ հեծյալ)՝ բաղկացած ընտիր 10 հազարանոց զորամաս: Մ.Գ. անվանումը կապվում է այն մատյանի հետ, որում գրանցվում էին լավագույն մարտիկների անունները: Ընդունված էր համարել, որ մատյանում գրանցվածներն «անմահանում» էին: Այդ պատճառով «անմահ» մարտիկի զոհվելուց անմիջապես հետո նրան փոխարինում էր նորը:

Մ.Գ. թվի նվազում թույլ չտալու համար զորամասին հետևում էր «անմահների» մատյանում գրանցվելու թեկնածու համարվողների մեկ այլ զորամաս (2-3 հազար հոգի): Մ.Գ. համալրման համակարգի անխափանությունն ապահովելու նպատակով համալրող զորամասի մարտիկները մարտադաշտ դուրս չէին բերվում և վտանգավոր հանձնարարությունների կատարման չէին ուղարկվում:

ՄԱՐՏ, զորքերի, ինչպես նաև օդուժի, նավատորմի ուժերի մարտավարական գործողությունների հիմնական ձևն է: Ջորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների կազմակերպված և նպատակով, տեղով ու ժամանակով համաձայնեցված հարվածներն է, կրակը (խոցումը) և զորաշարժը՝ հակառակորդին ոչնչացնելու (ջախջախելու), նրա հարվածները հետ մղելու և սահմանափակ շրջանում կարճ ժամանակի ընթացքում այլ խնդիրներ կատարելու նպատակներով: Ժամանակակից Մ. կարող է լինել համազորային, հակաօդային, օդային և ծովային: Մ. երկկողմանի երևույթ է, որտեղ հակամարտում են ուժերի և միջոցների երկու խմբավորումներ միևնույն նպատակով՝ հաղթել հակառակորդին: Մ-ում հաղթանակի հասնելու միջոցներն են զենքը, տեխնիկան ու մարդիկ: Այդ դեպքում զենքի ու տեխնիկայի արդյունավետությունը կախված է մարդու կողմից դրանք գրագետ ձևով կիրառելուց (իրավիճակի բոլոր առանձնահատկությունների հաշվառմամբ):

ՄԱՐՏԱԴԱՇՏ, տարածք, որի սահմաններում անց են կացվում (վարվել են) մարտական գործողություններ:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (ԽՆԴԻՐ), մարտում նշված ժամկետում որոշակի նպատակի հասնելու համար զորքերին կամ առանձին զինծառայողին տրված առաջադրանք:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ, զորքերի մարտական գործողությունների համակողմանի ապահովումը անհրաժեշտ միջոցներով և տվյալներով: Մարտական ապահովման տեսակներն են՝ *հետախուզություն, պահպանություն, քիմիական ապահովում, պաշտպանություն զանգվածային խոցման զենքից, ռադիոէլեկտրոնային պաշտպանություն, մարտավարական քողարկում, ինժեներական ապահովում*:

ՄԱՐՏԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐ, մարտական առաջադրանքների, զինվորական ծառայության հետ կապված բանակում պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցվող կանոնների, ավանդույթների և զինծառայողների վարվելակարգի նորմեր:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ստորաբաժանումների, զորամասերի, միավորումների, զինված ուժերի բոլոր զորատեսակների միավորման կազմակերպված գործողությունները՝ մարտական առաջադրանքները կատարելու համար: Մարտական գործողությունների հիմնական ձևերն են պաշտպանությունը և հարձակումը: Դրանք վարվում են օպերացիաների, ճակատամարտերի և մարտերի տեսքով:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ, մարտական գործողությունները դադարեցնելու կամ կանգնեցնելու ձևերից մեկը: Առավելապես օգտագործվում է տեղական զինադադարի պայմանները ապահովելու համար և սահմանափակվում է ըստ ժամանակի, տարածքի և նպատակների: Օգտագործվում է մասնակի խնդիրներ լուծելու համար. վիրավորներին հավաքելու և նրանց փոխանակելու, բանագնացներ ուղարկելու և այլ նպատակների համար: Առանձին անձանց կողմից Կ.Դ-ի պայմանների խախտումը դիտարկվում է որպես պատերազմի օրենքների և ավանդույթների խախտում:

ՄԱՐՏԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ, գործոնների և պայմանների ամբողջություն, որոնցում իրականացվում է մարտի նախապատրաստումը և վարումը:

ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՑԻՆ (ՏԱՊԱՐ), հնագույն կտրող-հարվածող սառը զենք: Փայտե բռնակի վրա ամրացված ձգված սեպ կամ լայնաբերան սայր:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, բարձր մարտական պատրաստականության մեջ գտնվող պլանավորված կամ հանկարծակի ծագող խնդիրները և մարտական գործողությունները վարելու համար հատուկ առանձնացված ուժերի և միջոցների կողմից հերթապահության հատուկ ձև: Իրականացվում է հակառակորդի հարձակման սկիզբը ժամանակին բացահայտելու, առավել կարևոր օբյեկտները անհապաղ խոցելու, պետական սահմանի խախտումը կանխելու նպատակով:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆ, զորքերի (ուժերի) անձնակազմի գիտելիքների, կարողությունների և հմտությունների համալիր, նրա բարոյահոգեբանական և ֆիզիկական հատկությունները, ստորաբաժանումների, զորամասերի, միավորումների, կառավարման օրգանների պատրաստվածությունը և ներդաշնակությունը, ինչպես նաև տարբեր իրավիճակներում մարտական գործողություններ վարելու կամ առաջադրված այլ խնդիրներ կատարելու նրանց կարողությունը:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ, մարտի (օպերացիայի) նախապատրաստման ժամանակ զորքերին (ուժերին) առաջադրվող մարտական խնդիրների ձև: Մ.Հ. բոլոր ձևակերպումներն արտահայտվում են հակիրճ և միանշանակ: Մ.Հ. կարող է տրվել բանավոր և գրավոր, տեղանքի վրա կամ էլ քարտեզով:

ՄԱՐՏԱԿԱՆ ՇՓՈՒՄ (ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇՓՈՒՄ), կռվող կողմերի զորքերի փոխադարձ տեղաբաշխումը, որի դեպքում նրանք խոցման միջոցներով կարող են ազդել միմյանց վրա:

ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, մարտում զորքերը պահպանելու համար հատկացվող ուժեր և միջոցներ, մարտական և նախամարտական կարգերի տարածք հակառակորդի հետախուզության մուտքը թույլ չտալու, պահպանվող զորքերի վրա հակառակորդի հանկարծակի հարձակումը կանխելու համար:

ՄԱՐՏԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ, զորամասի անհապաղ բերումը մարտական խնդիրներ կատարելու պատրաստվածության:

ՄԱՐՏԱԿԱՌՔ, ռազմակառք, հատկապես ռազմական նպատակներով օգտագործվող երկանիվ կամ քառանիվ մարդատար թեթև կառք: Մ-ին լծում էին մեկ կամ երկու և ավելի զույգ ձի (մասամբ նաև ջորի): Մարտիկի պաշտպանության նպատակով Մ. առջևից և կողերից պատվում էր 0,5 մ և ավելի բարձր թափքակողերով: Մ-ում տեղավորվում էին հիմնականում մարտիկը և կառավարը: Մ-ի թափքում ամրացվում-պահվում էին նետերի կամ տեգերի կապարճը,

նիզակը և անհրաժեշտ այլ զենքեր: Հին աշխարհի զորքերում Մ-երի մարտիկները կազմում էին հատուկ ջոկատներ, որոնք գործում էին հետևազորի առջևից կամ թևերից: Մ-երի ջոկատների հարվածները խառնաշփոթություն էին առաջացնում հակառակորդի շարքերում՝ հետևազորի համար ստեղծելով նպաստավոր պայմաններ: Մ-երն օգտագործվում էին նաև հաղթական կամ հանդիսավոր շքահանդեսներում ու մարզական մրցույթներում: Հայկական լեռնաշխարհում Մ-երի պեղածոներ են հայտնաբերվել Ք.ա. XIV-VIIդդ. ժամանակաշրջանին վերաբերող դամբարաններում: Արդեն Ք.ա. I հազարամյակի սկզբներից ռազմարվեստում, որպես առավել ճկուն ու հարվածային զորատեսակ, առաջնակարգ դիրք է գրավում հեծելազորը (այրուձին)՝ աստիճանաբար փոխարինելով Մ-երի ջոկատներին:

ՄԱՐՏԱԿԱՐԳ, զորքերի դասավորվածությունը մարտ վարելու համար: Այն պետք է համապատասխանի իրավիճակի պայմաններին և նպաստի մարտի նպատակին հասնելուն:

ՍԱՆԴՈՒԱՋԵՎ Մ., առաջին գծում անհարթ (կենտրոնը կամ թևերից մեկը առաջ կամ հետ ընկած) դասավորություն:

ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ, մարտական գործողությունների հետևանք, որի արդյունքում ամբողջությամբ և ժամանակին կատարվել են ստորաբաժանումներին, զորամասերին և միավորումներին մարտում տրված մարտավարական առաջադրանքները:

ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՈՒՄ, նպատակն է հասնել ստորաբաժանումների գործողությունների անսպասելիության և դրանց մարտունակության պահպանման: Քողարկման խնդիրները սեփական ստորաբաժանումների գաղտնիությունն ապահովելն ու հակառակորդին մոլորության մեջ գցելն է դրանց կազմի, դրության և մարտի մտահղացման վերաբերյալ:

ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ռազմարվեստի բաղկացուցիչ մասերից է, որն ուսումնասիրում է զորքերի դիրքը, զորաշարժն ու գործողությունները տարբեր մարտատեսակներում: Այլ կերպ ասած, մարտավարությունն ուսումնասիրում է մարտի բնույթն ու դրան զինված ուժերի մասնակցությունը: Ընդգրկում է բոլոր տեսակի մարտական գործողությունների (հարձակում, պաշտպանություն, հանդիպական մարտ, մարտավարական վերախմբավորում և այլն) ուսումնասիրումը, մշակումը, նախապատրաստումը և վարումը: Մարտավարությունը բաժանվում է ընդհանուր մարտավարության և զորատեսակների ու հատուկ զորքերի մարտավարության:

ՄԱՐՏԻԿ (ԿՈՄԲԱՏԱՆՏ), պատերազմող կողմերի զինված ուժերի կազմի մեջ մտնող և մարտական գործողություններում անմիջականորեն մասնակցություն ունեցող, այսինքն՝ կռվող անձ: Մ. են նաև աշխարհազորի և կամավորական ջոկատների անդամները: Մ. պարտավոր է պահպանել պատերազմի օրենքները և ավանդույթները: Մ. են համարվում նաև ռազմաբժշկական, ռազմահիրավաբանական, թիկունքի անձնակազմը, զինվորական հոգևորականները և ռազմական լրագրողները:

ՄԱՐՏԻ ՄՏՑՎԵԼՈՒ ԲՆԱԳԻԾ, տեղանքի պայմանական գիծ (տեղանքի գոտի), որից երկրորդ էշելոնը կամ համազորային ռեզերվը սկսում են մարտական գործողությունները:

ՄԱՐՏԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ, զորքերի մարտական գործողություններ, նրանց հետքաշումը կամ այլ ուղղությամբ զորաշարժը ապահովող հեռավորության վրա հակառակորդից պոկվելու նպատակով: Մ.Դ.Գ. իրականացվում է ծածուկ և հանկարծակի, սովորաբար գիշերը կամ սահմանափակ տեսանելիության այլ պայմաններում:

ՄԵՆԱՄԱՐՏ, զենքի կիրառմամբ կամ առանց զենքի հակառակորդ երկու մարտիկների կռիվը՝ սահմանված կանոնների պահպանմամբ:

ՄԻՋՆԱԲԵՐԴ, ինքնուրույն պաշտպանությանը հարմարեցված և խիստ ամրացված կառույց քաղաքի կամ ամրոցի մեջ:

ՄԻՋՆԱՊԱՐԻՍՊ, արտաքին և ներքին պարիսպների միջև գտնվող պարիսպ:

ՄԿՈՒՆԴ, Զենքի հնագույն տեսակ է՝ մեծ գեղարդ (նիզակ կամ տեգ): Սկզբում պատրաստել են քարե, ապա՝ պղնձե, բրոնզե և երկաթե շեղբերով, որոնք ամրացվել են փայտե կոթերին: Շատ տարածվել է միջին դարերում: Մ. կրող զինվորները կոչվել են մկունդավորներ:

ՄՇՏԱԿԱՆ ԲԱՆԱԿ, մշտապես պահվող բանակ (խաղաղության և պատերազմի ժամանակ),

ի տարբերություն աշխարհազորի և միլիցիոն բանակի, որոնք կազմավորվում են միայն պատերազմի ժամանակ:

ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄ, ռազմական ուժերը խաղաղ իրադրությունից պատերազմականի բերելը, պատերազմի համար զորահավաքի կատարում:

ՄՏԱՀՂԱՑՈՒՄ (ՄԱՐՏԻ), զորքերի (ուժերի) խմբավորման կողմից տրված մարտական առաջադրանքի կատարման գլխավոր մտահղացումը: Մարտի որոշման հիմքը: Մ.Մ. որոշվում են. հիմնական ջանքերի կենտրոնացման շրջանները (գլխավոր և այլ հարվածների ուղղությունները), հակառակորդին ջախջախելու ձևերը (որ խմբավորումները, որտեղ, ինչ հաջորդականությամբ և ինչպես ջախջախել, հակառակորդին խոցելու և խաբելու (մոլորեցնելու) կարգը), զորքերի (ուժերի) խմբավորումը և նրանց մարտակարգը:

Ն

ՆԱԽԱՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԳ, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների դասավորվածությունն է մարտակարգի ծավալվելու համար: Ն-ը պետք է ապահովի հարձակվող ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների միաժամանակյա դուրս գալը գրոհի անցման բնագիծ և մարտակարգի ծավալումը հարձակման ողջ ճակատում:

ՆԱՀԱՆՋ, հակառակորդի գերակշռող ուժերի հարվածների տակից սեփական ստորաբաժանումները հետ քաշելու, ժամանակ շահելու և ավելի նպաստավոր դիրք (բնագիծ, շրջան) զբաղեցնելու նպատակով կատարվող զորաշարժն է:

ՆԵՏ ՈՒ ԱՂԵՂ, հնագույն հեռահար զենք: Գործածվել է որսորդության և ռազմական նպատակներով: Օգտագործել են աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները (բացի Ավստրալիայի և Միկրոնեզիայի բնիկներից)՝ միջին քարի դարից մինչև XVIդ., որոշ ժողովուրդներ՝ մինչ այժմ: Հասարակ աղեղը բաղկացած է փայտյա (երբեմն՝ մետաղյա) ճկված ձողից և ծայրերը պիրկ կապող լարից (բուսական թել, աղիք), նետը՝ եղեգնյա կամ բարակ փայտյա ձողից (մի ծայրին սլաք, մյուսին փետուր ագուցված): Կատարելագործված աղեղի փայտե հիմքը արտաքինից պատվել է ջլերով, ներսից՝ եղջյուրից պատրաստված թիթեղներով: Բռնակի միջին մասը և ծայրերը երբեմն ամրացվել են ոսկրե վրադիրներով:

Աղեղնափայտի և լարի միջև եղած տարածությունը կոչվում է լիճ: Որքան լայնալիճ է աղեղը, այնքան այն առաձգական է և հեռանետ: Նետերն ունեցել են ոսկրե, քարե, հետագայում՝ մետաղյա սլաքներ: Պահվել են պատյանում, որը կոչվում է կապարճ, աղեղնարան, աղեղնաբուն: Միջին դարերում Ն.Ու.Ա երկար ժամանակ գործածվել է հրազենին զուգահեռ:

Հայկական լեռնաշխարհում Ն.Ու.Ա-ի մեծ ու փոքր տեսակներն օգտագործվել են հնագույն ժամանակներից: Ն.Ու.Ա է պատկերված Հայաստանի տարածքում գտնված մի շարք հնագույն առարկաների վրա (խեցեղեն, բրոնզե գոտիներ ևն): Հայաստանի տարբեր հնավայրերում հայտնաբերվել են մեծ քանակությամբ երկաթե նետասլաքներ, որոնք բաժանվում են վեց խմբի (ճանկավոր, եռանիստ ակոսավոր, տերևաձև տափակ, կոնաձև քառանիստ, սրածայր երկարավուն և անկանոն սրածայր): Դրանք ունեն տարբեր չափեր ու գործածվել են որոշակի նպատակներով (մարմնի վրա խոր վերք բացելու, զրահներ ծակելու ևն): Գործածվել են նաև թունավոր նետասլաքներ: Հին և միջնադարյան բանակներում գործել են նետաձիգների զորամասեր: Ք.ա. Vդ. հույն հեղինակ Քսենոփոնը գովեստով է խոսում Հայաստանում տարածված լայնալիճ (3 կանգուն) աղեղի և երկար (2 կանգուն) նետերի մասին, որոնց դեմ անզոր են եղել հույն զինվորների զրահները: Միջին դարերում նույնպես հայերը հռչակված են եղել որպես քաջ աղեղնավորներ և հմուտ նետաձիգներ:

ՆԵՏԱՁԻԳ, նետեր արձակող թեթևազեն զինվոր:

ՆԵՏՈՂ ՁԵՆՔԵՐ (ՄԵՔԵՆԱՆԵՐ), հին և միջին դարերում հակառակորդի կենդանի ուժը ոչնչացնելու և պաշտպանական կառույցներն ավերելու նպատակով կիրառվող ռազմական մեքենաներ: Նետող մեքենաների կառուցվածքը հիմնված է ոլորված և ձգված թելքերի (ջլեր, մազեր ևն) էներգիայի օգտագործման վրա: Նետող մեքենաները հայտնի էին դեռ Հին Արևել-

քում (Ասորեստանում, Հնդկաստանում ևն), Հին Հռոմում և, հատկապես, Հին Հռոմում: Այդ մեքենաները բաժանվում էին բալիստների և կատապուլտների: IV դարում սկսեցին կիրառել նետող մեքենաների նոր տեսակ՝ ֆրանդիբոլը:

ՆԵՐԽՈՒԺՈՒՄ, մեկ կամ մի քանի պետությունների զինված ուժերի մուտք գործելը մի այլ պետության տարածք՝ առանց նրա կառավարության հետ համաձայնության: Ն. համարվում է ագրեսիայի ակտ և, որպես կանոն, իրականացվում է հանկարծակի:

ՆԻԶԱԿ, մոտիկից և հեռվից (նետմամբ) խոցող հնագույն զենք: Գործածվել է որսի ժամանակ և մարտերում: Սկզբում Ն. սրածայր փայտե ձող է եղել: Հետագայում 1,5 մ-ից մինչև 5 մ երկարությամբ ձողի ծայրին ամրացրել են սուր շեղբեր (քարե կամ ոսկրե, հետագայում՝ մետաղյա):

Հայկական լեռնաշխարհում տերևաձև և դաշույնաձև շեղբերով բազմաթիվ մեծ ու փոքր նիզակներ են գտնվել բրոնզի և երկաթի դարաշրջանների հնավայրերից: Հայաստանում եղել է ծանրազեն (զրահակիր) հեծելազորի գլխավոր զենքը: Հնում նիզակը իշխանության խորհրդանիշ է համարվել: Պատերազմում պարտված հակառակորդին ու գերիներին նիզակներից պատրաստված յուրահատուկ «լծի» տակով անցկացնելու հին սովորույթը համարվել է անարգանքի ու ստորացման նշան: Հայ պատմիչները վկայում են պարտված երկրում, որպես քաջության նշան, արքայի կամ զորավարի նիզակը կանգնեցնելու հին հայկական սովորույթի մասին:

ՆՇԱՆԱԿԵՏ, օբյեկտ, որն ընտրվել է կամ պետք է ընտրվի խոցելու համար:

ՈՉՆՉԱՑՆԵԼ Ն., ամբողջությամբ զրկել մարտունակությունից:

ՃՆՇԵԼ Ն., այնպիսի կորուստներ հասցնել նրան, որոնց դեպքում այն ժամանակավորապես կորցնում է մարտունակությունը, սահմանափակվում է զորաշարժը կամ խախտվում է կառավարումը:

ԿՈՐՃԱՆԵԼ Ն., շարքից հանել Ն-ը:

Շ

ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ, անձնակազմին շարային կեցվածքի, ձգվածության, ճարպկության և դիմացկունության, հրամանների և զենքով ու առանց զենքի շարային վարժաձևերի ճիշտ և հստակ կատարման, ինչպես նաև ստորաբաժանումների, զորամասերի ներդաշնակ գործողությունների ուսուցանում: Շ.Պ. զգալիորեն ներազդում է զորքերի առօրյա և ընդհանուր գործունեության բոլոր կողմերին՝ կոփում է զինծառայողների կամքը, կատարելագործում իրենց մարմնին տիրապետելու ունակությունը, շարային կեցվածքը, զարգացնում ուշադրությունը, դիտողականությունը, կոլեկտիվիզմի զգացողությունը, համառությունը: Վարժաձևերի հստակ, համաձայնեցված և միաժամանակյա կատարումը ոգեշնչում է զինծառայողներին, վստահություն ներշնչում սեփական գործողությունների նկատմամբ, ամրապնդում կատարողական կարգապահությունը: Ստորաբաժանումների անձնակազմին համատեղ գործողությունների նախապատրաստելու հիմքը եղել և մնում է շարքը: Ուսուցման ոչ մի այլ ձև պետի կարգադրությունն ու հրամանը այնքան արագ, հստակ ու միասնաբար կատարելու հնարավորություն չի ընձեռում, որքան շարքը:

ՇԱՐԱՍՅՈՒՆ (ՋՈՐԱՍՅՈՒՆ), շարք, որտեղ զինծառայողները տեղավորված են մեկը մյուսի թիկունքում՝ ծոծրակի ուղղությամբ, իսկ ստորաբաժանումները՝ իրար հետև, կանոնադրությամբ կամ հրամանատարի կողմից սահմանված հեռավորության վրա: Շ. կարող են լինել միաշարասյուն, երկշարասյուն, եռաշարասյուն և ավելի: Շ. կիրառվում են ստորաբաժանումներն ու զորամասերը երթային կամ ծավալուն շարքով շարելու համար:

ՇԱՐՔ, զինծառայողների, ստորաբաժանումների ու զորամասերի՝ կանոնադրությամբ սահմանված դասավորությունը հետիոտն ու մեքենաներով՝ համատեղ գործողությունների համար:

ՇԵՂՔ, կտրող, հատող և ծակող շեղբավոր զենքի մարտական մասը: Շ. կարող է լինել ուղիղ և ծռված, մեկ և երկսայրանի, տափակ, օվալաձև, եռանիստ ևն:

ՇՐՋԱՆՑՈՒՄ, զորաշարժի տեսակ, որի ժամանակ ստորաբաժանումը դուրս է գալիս հակառակորդի թիկունք:

ՇՐՋԱՊԱՏՈՒՄ, հիմնական զորքերից (ուժերից) հակառակորդի խմբավորման մեկուսացումը, ոչնչացնելու կամ գերեվարելու նպատակով:

ՇՐՋԱՊԱՏՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ, շրջապատման ճակատը ճեղքելու և շրջապատված զորքերը դուրս բերելու նպատակով իրականացվող մարտական գործողություններ: Իրականացվում է ինքնուրույն կամ շրջապատումից դուրս գտնվող զորքերի աջակցմամբ:

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ, օբյեկտը մեկուսացնելուն, նրա արտաքին կապերը խզելու միջոցով, ուղղված մարտական գործողություններ: Շ. օբյեկտ կարող են հանդիսանալ առանձին պետություններ, քաղաքներ, զորքերի խոշոր խմբավորումներ, տնտեսական շրջաններ, կղզիներ ևն: Շ. նպատակ կարող են լինել. պետության ռազմատնտեսական հզորության քայքայումը, հակառակորդի զինված ուժերի շրջափակված խմբավորման ուժերի և միջոցների հյուծումը, նրա հետագա ջախջախման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, հակառակորդին կապիտուլացվելու (հանձնվելու) հարկադրումը, ինչպես նաև մեկ այլ ուղղությամբ զորքերի (ուժերի) տեղափոխում թույլ չտալը: Շ. կարող է լինել լրիվ կամ մասնակի: Ռազմավարական մասշտաբների շրջափակմանը սովորաբար նախորդում է (կամ իրականացվում է միաժամանակ) տնտեսական շրջափակումը:

ՇՔԵՐԹ, պաշտոնական տոնակատարությունների, պետական և ռազմական նշանակության կարևոր միջոցառումներին նվիրված տոնակատարությունների և այլ միջոցառումների ժամանակ, ինչպես նաև զորավարժությունների ավարտից հետո զորքերի հանդիսավոր ստուգատես:

Ո

ՈՐՈՆՈՒՄ, հետախուզության ձև: Կազմակերպվում է գերիներ վերցնելու նպատակով և անցկացվում է, որպես կանոն, հարձակումից առաջ, առավելապես գիշերն ու սահմանափակ տեսանելիության այլ պայմաններում: Խումբը (ստորաբաժանումը) գաղտնի մոտենում է օբյեկտին, հանկարծակի հարձակվում է դրա վրա՝ գերիներ, փաստաթղթեր, սպառազինության ու հանդերձանքի նմուշներ վերցնելու նպատակով և արագորեն նահանջում է դեպի յուրային զորքերի դիրքերը:

ՈՐՈՇՈՒՄ (ՄԱՐՏԻ), հրամանատարի կողմից որոշված մարտական առաջադրանքների կատարման կարգը և ձևերը: Ներառում է մարտի մտահղացումը, զորքերի (ուժերի) խնդիրները, փոխգործողության հիմնական հարցերը, ղեկավարման կազմակերպման հիմունքները և ապահովման հիմնական տեսակների խնդիրները: Մ.Ո. հանդիսանում է զորքերի (ուժերի) ղեկավարման հիմքը:

Պ

ՊԱՀԱԿԱԽՈՒՄԲ, պահակություն անող զինվորների խումբ:

ՊԱՀԱԿԱԿԵՏ, պահակային հսկողության տակ գտնվող կետ, օբյեկտ:

ՊԱՀԵՍՏԱԶՈՐ (ՌԵԶԵՐՎ), տարբեր զորատեսակների կազմավորումներ, մարդկային ռեսուրսներ, սպառազինություն և այլ նյութական միջոցներ, որոնք նախատեսված են նոր զորախմբեր ստեղծելու և գործող զորախմբերը ուժեղացնելու (համալրելու), պատերազմի (պատերազմաշրջանի), օպերացիայի և մարտի ժամանակ ծագող նոր խնդիրներ կատարելու, գործող բանակը համալրելու համար:

ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, նպատակն է թույլ չտալ հակառակորդի հետախուզության, նրա օդային դեսանտի (աերոմոբիլային խմբերի) թափանցումը սեփական ստորաբաժանումների գործողությունների (տեղաբաշխման) շրջան, պահպանվող ստորաբաժանումներին ապահովել ծավալման (մարտական պատրաստության բերելու) և մարտի մեջ մտնելու ժամանակով ու ձեռնտու պայ-

մաններով: Կախված կատարելիք խնդիրների բնույթից՝ ստորաբաժանումները պահպանվում են. մարտում՝ *մարտական*, երթում՝ *երթային*, տեղում տեղաբաշխվելիս՝ *պահակային* պահպանությամբ: Բացի դրանից, բոլոր դեպքերում կազմակերպվում է *անմիջական* պահպանություն:

ԱՆՄԻՋԱԿԱՆ Պ., կազմակերպվում և իրականացվում է բոլոր պայմաններում, մշտապես՝ անկախ գործողությունների բնույթից, հակառակորդի հեռացումից, տարվա եղանակից և օրվա ժամանակից:

ԵՐԹԱՅԻՆ Պ., կազմակերպվում է ճակատից, թևերից և թիկունքից: Ճակատից ստորաբաժանումները պահպանվում են *դետքային ջոկերի* (*տանկերի*), *գլխամասային դետքերի* և *գլխամասային երթային ուղեկալների* կողմից: Գլխավոր ուժերը պահպանելու համար սպառնալից թևերից ուղարկվում են *կողային երթային ուղեկալներ*, ստորաբաժանումների պահպանությունը թիկունքից իրագործվում *է թիկունքային երթային ուղեկալների* կողմից:

ՄԱՐՏԱԿԱՆ Պ., որպես կանոն, ուղարկվում է հակառակորդի հետ շփման բացակայության պայմաններում, երբ պաշտպանվող զորքերի դիմաց չեն ստեղծվում ապահովման ու առաջավոր դիրքի գոտիներ:

ՊԱՀԱԿԱՅԻՆ Պ., նախատեսված է տեղում տեղաբաշխվելիս ստորաբաժանումները պահպանելու համար:

ՊԱՇԱՐՈՒՄ, ամրոցը (ամրացված քաղաք) կամ ամրոցատիպ այլ կետ գրավելու համար վարվող մարտական գործողության ձև: Ամրոցը շրջապատվում էր զորքերով, նրա շուրջ պաշարողական ամրակառույցներ էին կառուցվում, պաշարող զորքերի համար պատրաստվում էր ամրացված ճամբար: Պ. սովորաբար ավարտվում էր ամրոցի գրոհով:

ՊԱՇԱՐՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ, գրոհողներին պատսպարելու, ինչպես նաև պարիսպը գրոհելու և կործանելու նպատակով ամրոցները պաշարելու ժամանակ օգտագործվող տեխնիկական միջոցներ: Պ.Տ-ի մեջ մտնում էին տեղափոխվող և տեղաշարժվող վահաններ, մի քանի հարկանի հետգցովի կամրջակներով պաշարողական աշտարակներ, գրոհային աստիճաններ, նետող զենքեր, բաբաններ, խոյեր ևն:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, պաշտպանվող զորքերի անընդհատ ներազդեցությունը հարձակվող հակառակորդի վրա: Պաշտպանությունը կազմակերպելու և վարելու հիմնական պահանջներից է: Պ.Ա-ն մարտի (ճակատամարտի) ընթացքում հակառակորդի հարձակմանը պատրաստվելու և գրոհի, ինչպես նաև առավել վտանգավոր տեղամասերում պահեստազորով զորաշարժի ժամանակ նրան հարվածներ հասցնելն է:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵԶՐԸ, հակառակորդին մոտիկ առաջին էշելոնի ուժերի դիրքերը միավորող պայմանական գիծը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԵՂՔՈՒՄ, հարձակողական գործողություններ վարելու ձև: Իրականացվում է հակառակորդի կողմից զբաղեցված ամրացված բնագծերը (գոտիները, դիրքերը) երկփեղկելու համար, հետագայում պաշտպանության խորքում հարձակումը զարգացնելու և թևերի ուղղությամբ զորաշարժ կատարելու նպատակով:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑ, զորքերը, մարտական տեխնիկան և նյութական միջոցները հակառակորդի խոցման միջոցներից պաշտպանելու համար նախատեսված ամրաշինական կառույցներ:

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ (ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔ), մարտում զինվորին և նրա ձիուն պաշտպանելու անհատական միջոց, ասպազեն: Նախահրազենային շրջանում Պ.Ս-ը հիմնականում նախատեսված էր նետող և սառը զենքից պաշտպանելու համար: Պ.Ս-ին պատկանում էին. վահանները, սաղավարտները (գլխանոցները), մարմինը պաշտպանող ասպազենը (օղազրահը, թերթազրահը, զրահը ևն), հագուստի որոշ տարրեր (բազկակալ, երեսակալ, ձեռնոցներ, կրծքակալ, սռնապան, ոտնազրահներ ևն): Ձիուն պաշտպանելու համար օգտագործում էին մետաղյա թիթեղներով կարված խիտ կտոր կամ կաշի:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, մարտի հիմնական տեսակներից է: Նպատակն է կասեցնել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը, առավելագույն կորուստներ պատճառելով նրան՝ պահել տեղանքի կարևոր շրջաններն ու դրանով իսկ ստեղծել պայմաններ վճռական հար-

ձակման անցնելու համար: Կարող է կազմակերպվել կանխամտածված կամ ստիպողաբար, հակառակորդի հետ անմիջական շփման բացակայության կամ նրա հետ անմիջական շփման պայմաններում: Պ. կարող է լինել դիրքային և զորաշարժային:

ԱԿՏԻՎ Պ., պատերազմող կողմերից մեկի կողմից պաշտպանական գործողությունների վարում, ոչ միայն տարածքը պահելու, այլև հիմնականում հակառակորդի խոշոր ուժերը հյուծելու և արյունաքամ անելու նպատակով:

ԴԻՐՔԱՅԻՆ Պ., հիմնական տեսակն է: Հիմնվում է զբաղեցրած շրջանների սահմաններում ստորաբաժանումների ստեղծած մի շարք պաշտպանական դիրքերը պահելու, ստորաբաժանումների խոցող հնարավորություններն առավելագույնս օգտագործելու և տեղանքի ավելի ամբողջական ինժեներական սարքավորման վրա:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ Պ., վարվում է հակառակորդին կորուստներ հասցնելու, ժամանակ շահելու և սեփական ուժերը պահպանելու նպատակներով, նախօրոք նշված ու դեպի խորքը էշելոնացված բնագծերում հետևողական պաշտպանական մարտերի միջոցով՝ զուգակցված կարճատև հակահարձակումների հետ:

ՊԱՏԱՆԴ, հակառակորդի կողմից բռնությամբ կալանված և պահվող քաղաքացի, որի ազատագրումը ուղղակի կամ անուղղակի կերպով կապված է պատերազմող կողմին պարտադրվող պայմանների ընդունումից:

ՊԱՏԵՐԱԶՄ, զինված ընդհարում երկու կամ ավելի պետությունների միջև:

ԶՈՐԱՇԱՐԺԱՅԻՆ Պ., լայնամասշտաբ զորաշարժային գործողություններով առանց կայուն ռազմաճակատի և արագ փոփոխվող իրադրությամբ բնութագրվող պատերազմ: Կարող է կիրառվել ամբողջ պատերազմի կամ էլ նրա որոշ էտապներում:

ՏԵՂԱՅՆԱԿԱՆ Պ., սահմանափակ քաղաքական նպատակներով, ռազմական գործողությունների ծավալման տարածքով, կիրառվող զինված ուժերի և միջոցների քանակով և որակով բնութագրվող պատերազմ:

ՊԱՏԵՐԱԶՄԱՇՐՋԱՆ, ընդհանուր մտահղացմամբ միավորված և պատերազմի կարևոր քաղաքական ու ռազմավարական նպատակներին նպատակաուղղված ռազմական գործողությունների թատերաբեմում տարակազմ զորախմբերի օպերացիաների, մարտերի, հարվածների և մարտական գործողությունների ամբողջություն: Որպես կանոն, ընդգրկում է համեմատաբար ակտիվ մարտական գործողությունների (վաղ գարունից մինչև ուշ աշուն) մեկ կամ մի քանի շրջափուլ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ, որևէ կողմի հայտարարությունը պետության կամ պետությունների դաշինքի հետ խաղաղ հարաբերությունները դադարեցնելու և պատերազմական վիճակի անցնելու մասին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, պատերազմող կողմերի և չեզոք պետությունների իրավունքները և պարտականությունները կանոնակարգող միջազգային իրավական նորմերի և բարոյական սկզբունքների ամբողջություն:

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, գիտություն, որն ուսումնասիրում է անցյալի պատերազմները, ընդհանրացնում է անցած պատերազմների նախապատրաստման, կազմակերպման և վարման փորձը: Որպես հասարակության հատուկ երևույթ ուսումնասիրում է պատերազմի սոցիալական էությունը, բացահայտում է նրա ծագման պատճառները և սոցիալ-տնտեսական պայմանները, կոնկրետ պատերազմների քաղաքական և ռազմավարական նպատակները, բնույթը և առանձնահատկությունները, գնահատում է կողմերի ուժերը և պլանները, դիտարկում պատերազմաշրջանների, օպերացիաների և մարտերի ընթացքը, վերլուծում դրանց արդյունքները, որոշում հասարակության զարգացման վրա տվյալ պատերազմի թողած ազդեցությունը: Պ.Պ. բացահայտում է պատերազմների օրենքները, օրինաչափությունը և հարուստ նյութ տալիս ռազմական տեսության ժամանակակից խնդիրները հիմնավորված լուծելու, եզրահանգումներ անելու և դասեր քաղելու համար:

ՊԱՏԵՐԱԶՄՈՂ ԿՈՂՄ, միջազգային իրավունքում՝ պատերազմի կամ զինված ընդհարման մասնակից, որը հետևում է պատերազմի սահմանված օրենքներին և ավանդույթներին:

ՊԱՏԻՎ, արտաքին նշան, իբրև հայտնի զարդարանք կամ զգեստի մաս և այլն, որը թագավորը պարգևում էր նախարարներին, գահի հետ միասին, և որ այդ նախարարի սերունդները ժառանգաբար կրում էին: Պ-ի և նրա տեսակների մասին մեզ հասած տեղեկությունները քիչ են, այնպես որ դժվար է որոշել Պ բաշխելու օրենքները և նրանց տեսակները: Խորենացին հիշում է Բագարատին շնորհված Պ-ը՝ երեք շարք մարգարիտներից վարսակալ՝ առանց ոսկու և արծաթի: Ուրիշ տեղ Խորենացին հիշում է Արտաշեսի շնորհած Պ-ը Մուրացան նախարարին՝ պսակ հակնթապատ, երկու ականջներին գինդեր, մի ոտքին կարմիր կոշիկ, ոսկեղեն գդալ, պատառաքաղ և ոսկեղեն բաժակ: Նույն Պ-ը Արտաշեսը շնորհում է Սմբատին՝ բացի գինդերից և կարմիր կոշիկներից: Եղիշեն ավելի մանրամասն նկարագրում է Վասակի ունեցած Պ-ները, որ նա հագավ թագավորի մոտ ընթրիքի գնալու համար:

ՊԱՏՄՈՒՃԱՆ, տղամարդու երկար ու լայն թիկնոցանման վերնազգեստ:

ՊԱՐԵԿ, զինծառայողների խումբ՝ նշանակված հակառակորդին հետևելու, որոշակի շրջան (գոտի, տեղամաս) պահպանելու և ծածկելու համար:

ՊԱՐՍԱՏԻԿ, հակառակորդի վրա քար նետելու ձեռքի զենք: Պատրաստվել է կաշվե փոկից (նաև բրդյա կամ բուսական թելերից), որի լայնացող միջնամասում դրել են քար կամ կապարագունդ: Պ. թափով պտտեցնելով գլխավերևում, ապա մի ծայրը բաց թողնելով՝ պարունակությունը նետել են դեպի նշանակետ: Պ. գործածել են որսորդության մեջ, ինչպես նաև մի շարք երկրների բանակներում: Պ-ով շուրջ 200 մ տարածությունից կարելի էր լրջորեն վնասել անգամ զրահավոր հակառակորդին:

ՊԱՐՍՊԱՄԱՐՏ, պարսպի համար մղվող մարտ, պարիսպներից ներս թափանցելու՝ պարիսպները գրավելու համար մղվող մարտ:

ՊՐՈՏՈՄԱՆԴԱՏՈՐ, «առաջին մանդատոր», բյուզանդական աստիճան է: Այդպես էին կոչվում զորավարների հրամանները զորքերին հասցնող զինվորականները: Պ. գլխավոր մանդատորն էր և առավել վստահելին: Նրան էր վստահվում առանձնակի կարևորության հրամանների կատարումը (փաստաթղթերը տեղ հասցնելը), որը կապված էր դժվարությունների հետ կամ պահանջում էր համարձակություն:

Ջ

ՋԱՐԴ, հակամարտող կողմերի մեծաքանակ զորքերի ճակատամարտ, որն աչքի է ընկնում զանգվածային կորուստներով և ավարտվում է կողմերից մեկի լիակատար հաղթանակով:

ՋՈԿԱՏ, զորքերից առանձնացված հատուկ զինված խումբ, զորախումբ, ինքնուրույն զինված խումբ:

ԱՌԱՋԱՊԱՀ Ջ., մարտի ժամանակ ինքնուրույն առաջադրանքներ կատարող ուժեղացված ստորաբաժանում: Մարտակարգի տարր է: Հարձակման ժամանակ ապահովում է գլխավոր ուժերի կազմակերպված մարտի մեջ մտնելը (մարտակարգի ծավալվելը): Պաշտպանությունում գործում է ապահովման գոտում: Առաջապահ ջոկատ կարող է առանձնացվել նաև ռազմերթի ժամանակ՝ մարտի մեջ մտնելու մտադրության դեպքում:

ԳՐՈՀԱՅԻՆ Ջ., ամրացված շրջանների վրա հարձակվելիս, քաղաքում (բնակավայրում), լեռներում և այլ պայմաններում մարտ վարելիս լավ ամրացված առանձին հենակետերի և կարևոր օբյեկտների բռնագրավման և ոչնչացման համար կազմավորված ժամանակավոր խմբավորում:

ԹԵՎԱՆՑՈՂ (ՇՐՋԱՆՑՈՂ) Ջ., հակառակորդին թևից (թիկունքից) հարվածներ հասցնելու, նրա տեղաբաշխման խորքում կարևոր օբյեկտներ գավթելու և պահելու նպատակով ստեղծված հատուկ կազմավորում:

Ռ

ՌԱԶՄԱԲԵՐԴ, ռազմական բերդ, պատերազմի համար ամրացված և զենքով ու զինամթերքով ապահովված բերդ:

ՌԱԶՄԱԳԵՐԻ (ԳԵՐԻ), պատերազմի ժամանակ թշնամու ձեռքն ընկած զինված ուժերի մեջ մտնող անձինք (այդ թվում պարտիզաններ, Դիմադրության շարժման մասնակիցներ և այլ մարտիկներ): Ռ-ի շարքին են դասվում նաև որոշ ոչ մարտիկներ՝ զինվորական թղթակիցներ, առևտրական նավատորմի և քաղաքացիական ավիացիայի անձնակազմի անդամներ ևն:

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, կյանքի ներքին և միջազգային պայմանների իրավիճակ, որոնք չեզոքացնում կամ բացառում են անհատին, հասարակությանը, պետությանը ռազմական բռնության միջոցներով վնասումը:

ՌԱԶՄԱՐՎԵՍՏ, ցամաքում, ծովում և օդում ռազմական գործողություններ նախապատրաստելու և իրականացնելու տեսություն և պրակտիկա: Ռ-ի տեսությունը ռազմագիտության կարևոր ճյուղն է: Ռ-ի բաղկացուցիչ մասերն են ռազմավարությունը, օպերատիվ արվեստը և մարտավարությունը: Ռ-ի զարգացումը բնորոշվում է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Վաղ փուլում Ռ. հիմնվել է ստրկատիրական տնտեսության վրա, որը հնարավորություն էր տալիս ստեղծել համեմատաբար փոքրաթիվ, սառը զենքով զինված բանակ: Հիմնական զորատեսակը հետևակն էր: Հին Արևելքի երկրներում հետևակից զատ կիրառվել են նաև հեծելազոր, մարտակառքեր, փղեր, ուղտեր: Հին Արևելքում, Հին Հունաստանում, Հին Հռոմում սաղմնավորվել է ռազմական տեսությունը, երևան են եկել պատերազմների ու ճակատամարտերի փորձն ընդհանրացնող աշխատություններ: Ավատատիրական պետություններում բանակի գլխավոր ուժը ժողովրդական աշխարհազորն էր, որի միջուկը ավատատիրոջ (այդ թվում ամենամեծը համարվող՝ արքայի) ջոկատն էր: VIII-XIIIդդ. Արևմտյան Եվրոպայում ռազմական հիմնական ուժը ծանր (ասպետական) հեծելազորն էր, հետևակը դարձել է օժանդակ զորատեսակ:

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱԶԱ (ՀԵՆԱԿԵՏ), զինված ուժերի միավորումների և զորամասերի (ուժերի և միջոցների) տեղաբաշխումը մարտական և ամենօրյա գործունեությունը ապահովող, ռազմական տեսանկյունից հարմար տեղավորված և հատուկ կահավորված շրջան (տեղանքի հատված):

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ, պետության ռազմական կազմակերպության նկատելի ձևափոխությունների ամբողջություն՝ ուղղված փոփոխված արտաքին պայմաններին նրա համապատասխանելիությանը: Ռ.Բ. պայմանավորվում է օբյեկտիվ պայմաններով, որպես կանոն՝ պատերազմում կրած պարտությամբ կամ էլ հաղթանակով, պետության հասարակական-քաղաքական կառուցվածքի ձևափոխմամբ և միջազգային իրադրության փոփոխություններով, սպառազինության նոր տեսակների հայտնվելով, տնտեսական դրդապատճառներով, զինված պայքարի միջոցների և ձևերի, դրանց արտադրության մակարդակի փոփոխմամբ ևն:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ, հրապարակման համար չնախատեսված ռազմական բնույթի տեղեկություն: Ռ.Գ-ի բացահայտումը, ձեռքբերումը և տարածումը համարվում է պետական հանցագործություն և քրեորեն խիստ պատժվում է:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գիտելիքների համակարգ պետությունների, պետությունների խմբավորումների պատերազմների բնույթի, օրենքների, վարման եղանակների մասին: Ռ.Գ. տվյալներն օգտագործվում են ռազմական տեսություններ մշակելու ժամանակ: Ռ.Գ. կառուցվածքն ու բովանդակությունը կապված են պետության ազգային գաղափարախոսության և ռազմական հայեցակարգի (դոկտրինի) հետ: Ռազմական պատմության և տեսության առաջին ուսումնասիրությունները երևան են եկել Ք.ա. Vդ.: Ռազմական գիտելիքների զարգացման գործում կարևոր նշանակություն է ունեցել Հին Հռոմի մղած պատերազմների փորձի ընդհանրացումը: Միջին դարերում պատերազմներն իրենց նպատակներով և մասշտաբներով սահմանափակ էին, և ռազմատեսական միտքը մեծ զարգացում չի ստացել:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, 1) կողմերի հակամարտությունը պատերազմում: 2) Քաղաքական և ռազմական նպատակներին հասնելու համար զինված ուժերի, ռազմավարա-

կան և օպերատիվ խմբավորումների կազմակերպված կիրառումը: Ռ.Գ. վարվում են օպերացիաների, ճակատամարտերի, մարտական գործողությունների ձևով, այդ թվում մարտերի և հարվածների, կարող են լինել պաշտպանողական և հարձակողական:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ, պատերազմող կողմերի միջև ամբողջ ճակատով կամ նրա որևէ մասում ռազմական գործողությունների (օպերացիաների) դադարեցում: Դադարեցվում են մարտական գործողությունները, բայց կողմերը մնում են պատերազմական դրության մեջ: Ռ.Գ.Դ. հիմնական ձևերն են համընդհանուր կամ տեղային մարտական գործողությունների դադարեցումը (հրադադարը) և հաշտության կամ խաղաղության կնքումը (կապիտուլացումը):

ՌԱԶՄԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գործոնների և պայմանների ամբողջություն, որոնցում իրականացվում են մարտի նախապատրաստումը և վարումը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, պետության իրավական համակարգի մի մասը, որը կարգավորում է ռազմական համակարգի և զինված ուժերի գործունեության հասարակական հարաբերությունները:

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, 1) ռազմական գործի զարգացման ընթացքը հին ժամանակներից ցայսօր: 2) Գիտություն, որն ուսումնասիրում է անցյալի պատերազմները և զինված ուժերը, ռազմարվեստի և ռազմական մտքի զարգացումը, ընդհանրացնում է անցած պատերազմների վարման և նախապատրաստման փորձը: Այս տեսակետից Ռ.Պ. ռազմական գիտության, ինչպես նաև պատմական գիտության մի մասն է: Ռ.Պ. կարևորագույն բնագավառներն են պատերազմների պատմությունը, զինված ուժերի շինարարության պատմությունը, ռազմարվեստի պատմությունը, ռազմական մտքի պատմությունը: Ռ.Պ., իբրև որոշակի գիտելիքների ամբողջություն, ծագել է Հին աշխարհում: Ռազմական իրադարձությունների մասին առաջին տեղեկությունները հանդիպում են Հին Արևելքի գրավոր հուշարձաններում (Ք.ա. III հազարամյակ):

Հունա-հռոմեական, բյուզանդական, հայ և այլ հեղինակների ստեղծագործություններում ընդարձակ նյութ կա Ռ.Պ. խնդիրների վերաբերյալ: Դարերի ընթացքում կուտակվել է ռազմապատմական հսկայական նյութ, գրվել են պատերազմների և ռազմարվեստի վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ, սակայն միայն XIXդ. է Ռ.Պ. դարձել ինքնուրույն գիտություն, որի մեջ, պատերազմների պատմությանը զուգընթաց, առանձնացվել են ռազմարվեստի պատմությունն ու մյուս բնագավառները:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, երկրի քաղաքացիների մեջ Հայրենիքի հանդեպ սիրո, նրա զինված պաշտպանության պատրաստականության նպատակաուղղված ձևավորումն է: Իրականացվում է պետության սահմանադրության, «Պաշտպանության մասին» օրենքի և երկրի պաշտպանության հարցերը կանոնակարգող այլ օրենսդրական ակտերի համաձայն: Ռ.Դ. հիմնական խնդիրներն են քաղաքացիների հայրենասիրության ինքնագիտակցության ձևավորումը, բանակի մարտական և հերոսական ավանդույթների հանդեպ վստահության դաստիարակությունը: Այն իրականացվում է ընտանիքի, դպրոցի, աշխատանքային կոլեկտիվի, պետական իշխանության մարմինների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, ստեղծագործական միությունների համատեղ ջանքերով: Երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, նրանց առաջիկա զինվորական ծառայությանը նախապատրաստելու գործին զգալի աջակցություն են ցուցաբերում զորամասերի հրամանատարությունը և ամբողջ անձնակազմը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ (ԱՌԱՋԱԴՐԱՆՔ), պատերազմի ժամանակ որոշվող խոշոր առաջադրանք, որի կատարումը կարող է վճռել պատերազմի ելքը կամ կտրուկ փոփոխություններ մտցնել ռազմական գործողությունների թատերաբեմում:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՇՏ, պաշտպանության գլխավոր շերտի (երկրի կենտրոնական կամ տնտեսական ու քաղաքական առումով առավել կարևոր նահանգների), ամրացված շրջանի և սահմանային ամրությունների առջևում հակառակորդին ընդհարման մեջ ներքաշելու համար նախապատրաստված տարածք՝ նրա առաջխաղացումը դանդաղեցնելու, ուժերը

վաղօրոք հյուծելու և պաշտպանական գլխավոր շերտում (ռազմավարական առումով կարևոր շրջանում) վճռական ընդհարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ռազմարվեստի բարձրագույն ոլորտն է, որն ընդգրկում է երկրի և նրա զինված ուժերի՝ պատերազմին նախապատրաստվելու տեսական և գործնական սկզբունքները, պատերազմի և ռազմավարական օպերացիաների կազմակերպումն ու վարումը:

Ս

ՍԱԴՐԱՆՔ (ՌԱԶՄԱԿԱՆ), պետության կամ քաղաքականության այլ սուբյեկտի կողմից սահմանափակ քանակությամբ զինված ուժերի կանխամտածված կիրառումը ռազմաքաղաքական իրադրությունը սրելու, հակառակորդի զինված ուժերի մարտունակությունը ստուգելու, այլ պետության ներքին գործերում իր միջամտությունն արդարեցնելու, պատերազմ սկսելու համար ռազմական միջադեպ ստեղծելու և այլ նպատակների համար:

ՍԱԿՐ, կացնատիպ կտրող սառը զենք: Ունի փայտե կարճ կոթ և կիսալուսնի ձևի 0,2-0,3 մ երկարությամբ սայր:

ՍԱՂԱՎԱՐՏ, 1) մետաղյա գլխաման սառը զենքի հարվածներից պաշտպանվելու համար: 2) Հատուկ ձևի մետաղյա գլխարկ, որը պատում է զինվորի գլուխն ու ծոծրակը:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ, 1) պատերազմ վարելու միջոցների կամ որոշակի նշանակության տարրերի (պաշտպանական Ս. ևն) ամբողջություն:

ՍԱՌԸ ԶԵՆՔ, ձեռնամարտի զենք: Պայմանականորեն դասակարգվում է.

ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ՝ *շեղբավոր* (դաշույն, թուր, սուր, սուսեր, դանակ, սվին ևն), *կոթավոր* (ալեբարդ, սակր, գեղարդ, նիզակ, տեգ ևն) և *հարվածային* (գուրզ, մարտական կացին ևն):

ԸՍՏ ԽՈՅՄԱՆ՝ ծակող, հատող, ծակող-հատող, ծակող-կտրող, հարվածող-հատող և հարվածող-փշրող:

Ս.Զ. հայտնի է հնուց, և մինչև այժմ էլ որոշ նմուշներ օգտագործվում են զորքերում (դաշույն, դանակ, սվին, սուսեր):

ՍԵՊՈՒՀ, նախարարի կամ նրա տոհմի որդի: Վաղ ավատատիրական Հայաստանում կազմել են ազնվականական կրտսեր դասը: Ս. ենթարկվել է նախարարին, կրտսեր (որոշ դեպքերում՝ միջին) հրամանատարական պաշտոններ զբաղեցրել նրա զորամասում, կատարել այլ պարտականություններ:

Արաբական տիրապետության շրջանում (VIII-IXդդ.) նախարարական հողատիրության քայքայումից հետո Ս., ընդարձակելով իրենց տիրույթները, ձեռք բերելով ամրոցներ ու կազմելով զինված ջոկատներ, վերածվել են գահակալ իշխանների՝ ձևականորեն ընդունելով գահերեց իշխանի վերածված նախարարների գերիշխանությունը:

ԱՎԱԳ ՍԵՊՈՒՀ, խոշոր նախարարական տոհմի Ս. կամ կրտսեր նախարարի գահաժառանգ: Անհամեմատ ավելի նշանակալի դեր ուներ, քան Ս., մասնավորապես, իրավունք ուներ որոշակի մասնակցություն ունենալ պետական գործերին: Ա.Ս. կարող էր հրավիրվել աշխարհաժողովների, ունենալ կնիք, պաշտոններ վարել արքունիքում և այլն:

ՍԵՊՈՒՀԱԿԱՆ ԳՈՒՆԴ, 1. Նախարարական տների կրտսեր ներկայացուցիչներից բաղկացած ընտիր հեծյալ զորամաս, որը կազմվում էր կարևոր նշանակություն ունեցող առաջադրանք կատարելու նպատակով: Ս.Գ. կարող էր գործել գլխավոր ուժերի հետ համատեղ կամ լինել առանձին զորամաս (ներգրավվել գլխավոր ուժերից որոշ հեռավորության վրա ինքնուրույն լուծում պահանջող խնդիրների կատարմանը): Ս.Գ. կազմավորելու կամ ցրելու իրավունք ունեին միայն գերագույն գլխավոր հրամանատարը (արքան) և գլխավոր հրամանատարը (սպարապետը կամ նրա լիազորություններով օժտված փոխարինող անձը): Որպես կանոն, Ս.Գ. կազմավորվում կամ ցրվում էր պատերազմի ընթացքում՝ վճռական ճակատամարտից կամ ռազմավարական առումով արտակարգ կարևորություն ունեցող այլ իրադարձությունից անմիջապես առաջ կամ հետո:

2. Արքայի և սպարապետի (բացառիկ դեպքերում՝ այլ խոշոր նախարարի) ենթակայության տակ գտնվող բանակից կամ այլ մեծաթիվ զորքից առանձնացված և ավագ սեպուհի հրամանատարությանը հանձնված զորամաս: Ս.Գ. կազմը կարող էր փոփոխական լինել, որը բխում էր ռազմական անհրաժեշտությունից: Օրինակ՝ 364թ. Բագոս Մամիկոնյանի գլխավորությամբ գործող զորքը կարգավիճակով Ս.Գ. էր: Այն այնքան մեծաթիվ էր, որ ի վիճակի էր բաց դաշտում (Առեստի մոտ) ճակատամարտ տալ հակառակորդին, այլ խոսքերով՝ կատարել առանձին բանակի խնդիրներ:

ՍՊԱՐԱՊԵՏ, սպահապետ, սպայապետ, ասպահապետ, ասպարապետ, սպարապետության գործակալի՝ զինված ուժերի գլխավոր հրամանատարի անվանումը հին և միջնադարյան Հայաստանում: Անմիջապես ենթարկվել է թագավորին և գործել է նրա հրամանով: Ղեկավարել է ինչպես արքունի զորաբանակը, այնպես էլ իշխանական (նախարարական) զորամասերը:

ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, զինված ուժերը կառավարող արքունի գործակալություն հին և միջնադարյան Հայաստանում: Գործակալը՝ գլխավոր հրամանատարը, կոչվել է սպարապետ: IV-Vդդ. Ս. ժառանգաբար վարել են Մամիկոնյանները:

ՍՎԻՆ, (պատմ.) նիզակի ծայրին ագուցվող սլաքաձև խոցող ծայրակալ:

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ, որպես կանոն, մշտական և միատարր կազմ ունեցող զինվորական կազմավորում: Մտնում է ավելի խոշոր Ս-ի կամ զորամասի կազմի մեջ:

ՍՈՒՐ, երկար, դանակի նման երկսայր սառը հատող և խոցող զենք: Ձեռնամարտում գործադրվող հատող և ծակող սառը զենք: Բաղկացած է միսայրի կամ երկսայրի, սուր կամ բութ ծայրով պողպատյա շեղբից և երախակալից (դաստապան): Երբեմն շեղբը երախակալից բաժանվում է խաչաձև կռվանով: Սուրը կրել են կողքից կախվող պատյանի մեջ: Սրի նորքարեդարյան նախատիպերը եղել են ոսկրե կոթերին ամրացված վանակատե շեղբերը: Ք.ա. II հազարամյակում տարածված են եղել բրոնզե սրերը: Մետաղյա հնագույն սրերը բաժանվում են հատողների և ծակողների, ավելի ուշ՝ ծակող-հատողների: Ք.ա. I հազարամյակում երևան են եկել երկաթյա (հաճախ բրոնզե երախակալով) երկար սրերը: Սկյութները գործածել են կարճ սրեր: Ք.ա. I հազարամյակի 2-րդ կեսից հետևակը և ծանրազեն հեծելազորը գործածել են երկար (հռոմեական հետևակը գործածել է կարճ և լայն) հատող սրեր: Հայկական լեռնաշխարհում բրոնզե տարատեսակ սրեր հայտնաբերվել են մ.թ.ա. II հազարամյակի հնավայրերից: Միջին դարերում պողպատյա սուրը եղել է Հայոց զորքերի հիմնական զինատեսակներից: Հայ պատմիչները սուրը հաճախ անվանել են «երկսայրանի», «պողովատ», «պողովատիկ»:

Վ

ՎԱՀԱՆ, հատող, հարվածող կամ խոցող սառը զենքերից պաշտպանվելու հնագույն զինատեսակ: Մարտիկը կրել է սովորաբար ձախ ձեռքին (ներսի կողմից հարմարեցված կաշվե, փայտե կամ մետաղե հատուկ բռնակի միջոցով), իսկ աջ ձեռքով գործադրել է հարձակողական զենքը: Տարբեր ժողովուրդների մոտ հանդիպում են տարբեր ձևերի (կլոր, ձվադիր, եռանկյուն, ուղղանկյուն, բազմանկյուն ևն) ու չափերի Վ.: Հնագույն Վ. պատրաստվել են փայտից կամ հյուսվել ծառի դալար ճյուղերից, դիմացկուն դարձնելու համար դրանք պատվել են կաշվով, ավելի ուշ՝ նաև մետաղյա թիթեղներով: Ք.ա. II հազարամյակում տարածում են գտել նաև բրոնզե Վ.: Վանի թագավորության զորաբանակում կաշեպատ ու թիթեղապատ փայտե Վ. բացի, օգտագործվել են նաև բրոնզե շրջանաձև Վ-ներ: Վանի արքաների բրոնզե Վ., որոնք ունեն 0,7-1 մ տրամագիծ, արտաքին կողմից դրվագված են կենդանիների (առյուծ, ցուլ) բարձրաքանդակ պատկերներով, սեպաձև արձանագրությամբ (արտահայտում են կրողի անունը): Դրանք ներսի կողմից ունեն մեկ մեծ և երկու փոքր բռնակներ (մեծը՝ բռնելու, փոքրերը՝ կաշեփոկերով բազկին ամրացնելու համար): Ծանրազեն հետևակայինները կրել են երկար (մարդահասակ) Վ., որոնք (վահանափակ շղթաներ ստեղծելու եղանակով) հակառակորդից պատնեշել են զորաճակատը և յուրայինների համար հարձակվելու կամ պաշտպանվելու հնարավորություն ստեղծել: Միջնադարյան զորաբանակներում տարբեր չափերի ու ձևերի Վ.

կրել են թե՛ հետևակային, թե՛ հեծելակ մարտիկները: Ձենք ու զրահի կատարելագործման հետ Վ-ը աստիճանաբար փոքրացվել են: Գործածությունից աստիճանաբար դուրս են մղվել հրազենի զարգացման ընթացքում: Այժմ Վ. գործադրվում է ոստիկանական հատուկ նշանակության ստորաբաժանումներում: Վ. համարվել է զինվորական պատվի ու հաղթանակի խորհրդանիշ: Հնում Վ-ի վրա երդվել են ռազմիկները: Վիրավոր կամ զոհված մարտիկներին մարտադաշտից տարել են Վ.-ի վրա: Մարտի ժամանակ Վ.-ի կորուստը դիտվել է մեծագույն անպատվություն: Մարտիկի Վ.-ին դիպչելը նշանակել է մենամարտի հրավեր: Մարտում զոհվածի դին ծածկել են Վ.-ով:

ՎԱՍԻԼԻԿՈՍ, Բյուզանդական կայսեր մերձավոր պալատական, որը զբաղվում էր հույժ կարևոր հանձնարարությունների (գլխավորապես դիվանագիտության ու ներքին անվտանգության հարցերով) կատարումով:

ՎԱՂՐ (ճԿԻՌ), երկար շեղբով կացնաձև զենքի տեսակ: Կրել են ազդրի վրա: Միջնադարյան Հայաստանում եղել են վաղրավորների զորամասեր: Մովսես Խորենացու վկայությամբ՝ Վ.-ով է սպանվել Հայոց Երվանդ Վերջին թագավորը:

ՎԱՌ, ծագում է պահլավերեն գրեթե նույն ձևով արտասանվող բառից և նշանակում է ասեղնագործած զարդարուն արքայական դրոշակ կամ նրբաթել քող: Միջնադարյան հայ պատմիչների կողմից բազմիցս կիրառված «խաչ-վառ» ձևը, որը նշանակում էր խաչակիր կամ խաչի դրոշակ, ևս Վ. բառի կիրառության օրինակ է:

ՎԱՐՁԿԱՆ ԲԱՆԱԿ, զինվորական ծառայություն կատարելու համար արհեստավարժ զինվորներից հավաքագրվող բանակ: Ծագել է Ք.ա. III հազարամյակում Եգիպտոսում: Հիմնականում համալրվում էր օտարերկրացի վարձկաններով:

ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄ, զորաշարժի տեսակ, զորքերի կողմից իրականացվում է կարգը (երթային և մարտական), որում նրանք մինչ այդ գտնվում էին, փոխելու նպատակով:

ՎԵՐՁԱՊԱՀ, երթային պահպանության օրգան: Գլխավոր ուժերի հետքաշումը ապահովելու նպատակով հիմնական ուժերից առանձնացվող ստորաբաժանում: Վ. կազմը և գլխավոր ուժերից նրա հեռավորությունը որոշում է գլխավոր հրամանատարը՝ ելնելով պահպանվող զորքերի կազմից, տեղանքի պայմաններից, հակառակորդի դիրքից և գործողությունների բնույթից: Վ.-ի խնդիրն է՝ դիմակայել հարձակվող հակառակորդին՝ ապահովելով նրանից գլխավոր ուժերի պոկվելը և նրանց կազմակերպված հետքաշումը:

ՎԻՐԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ, մարդու մկանային համակարգի, կմախքի և ներքին օրգանների վնասվածություն (ամբողջության խախտում), որը կարող է խախտել դրանց ձևն ու ֆունկցիան (գործունեությունը):

ՎՐԱՆ, դաշտային պայմաններում արագ հավաքվող կտորե շինություն, անձնակազմը, պահեստները, մարտական տեխնիկան, բուժհաստատությունները, արհեստանոցները ևն տեղավորելու համար:

Տ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ, ռազմավարական շրջանի մաս, որի սահմաններում տեղավորված է պետության (պետությունների) ռազմատնտեսական ներուժը, և ռազմական գործողություններ (ագրեսիա) սկսելու դեպքում կարող են մեծամասշտաբ մարտական օպերացիաներ վարվել, ստացվել պատերազմի որոշ կամ բոլոր ռազմավարական նպատակները:

ՏԵԳ (ՆԵՏԱՆԻՁԱԿ), նետելու նիզակ, նիզակի նման նետողական զենք:

ՏԵՂԱՁՆՆՈՒԹՅՈՒՆ, հրամանատարի կողմից հակառակորդի և տեղանքի տեսողական ուսումնասիրումը որոշում կայացնելու կամ այն ճշտելու համար անհրաժեշտ տվյալներ ստանալու նպատակով: Մարտը կազմակերպելու հրամանատարի աշխատանքի բաղկացուցիչ մասերից է:

ՏԵՂԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ռելիեֆի, բուսականության և տեղի առարկաների առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս նվազեցնել խոցման միջոցների

ազդեցությունը: Առավել լավ պաշտպանական հատկություններով օժտված է ձորակներով ու իջվածքներով կտրտված լեռնային տեղանքը:

ՏՈՂԱՆ, շարք, որում զինծառայողները տեղավորված են կողք կողքի մեկ գծի վրա, միմյանցից կանոնադրությամբ որոշված կամ հրամանատարի կողմից նշված հեռավորության վրա:

ՏՈՒՐՄԱՐԽ, զորավարից հետո ամենաբարձր աստիճանավորն էր բանակաթեմում: Նրա հրամանատարության տակ էր լինում 500 նետաձիգներից, 300 վահանակիրներից և 100 նիզակակիրներից բաղկացած զորամասը: Որպես կանոն, կրում էր *պրոտոսպաթարի* կոչում:

Ց

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԶՈՐՔԵՐ, զինված ուժերի տեսակ, որոնք կոչված են լուծելու ռազմավարական և օպերատիվ մարտավարական խնդիրներ գործողությունների ցամաքային թատերաբեմում: Իրենց մարտական հնարավորություններով Ց.Զ. կարող են ինքնուրույն կամ զինված ուժերի այլ տեսակների հետ համագործակցելով հետ մղել հակառակորդի ներխուժումը, ճեղքել հակառակորդի պաշտպանությունը և իրականացնել ռազմավարական հարձակում: Հին աշխարհում Ց.Զ. կազմված էին հետևակից և հեծելազորից կամ մեկ զորատեսակից, առավել զարգացած երկրների Ց.Զ. ունեին նաև պաշարողական և նետող տեխնիկա:

ՑՐՎԱԾ ՇԱՐՔ (ՆՈՍՐ ՄԱՐՏԱԿԱՐԳ), ճակատով կտրտված (տարաբաժանված) մարտակարգ: Սովորաբար այն կիրառել են գլխավոր ուժերի առջևում գործող հետևակի ջոկատները (ստորաբաժանումները, զորամասերը): Նրանց մարտական նշանակությունը սահմանափակում էին հակառակորդի հետ մարտի (ճակատամարտի) մեջ մտնելը և գլխավոր ուժերի գրոհի նախապատրաստումը: Ց.Շ. հայտնի է հին ժամանակներից (նետաձիգները, պարսատիկավորները, նիզակներ նետողները գործել են Ց.Շ. կազմում):

ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, մարտական և այլ գործողություններ՝ հակառակորդին մոլորեցնելու, սպասվող մարտական գործողությունների բնույթի, գլխավոր հարվածի ուղղության (հիմնական ջանքերի կենտրոնացման շրջանի) մասին նրան ապատեղակացնելու և նրա ուժերը կեղծ ուղղությամբ շեղելու նպատակով:

Ու

ՈՒԺԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ, նշված շրջաններում ուժերի (զորամասերի, զորամիավորումների և միավորումների) հավաքը և տեղաբաշխումը:

ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ, իրականացվում է հրամանատարի կողմից մարտի որոշման ժամանակ: Ընդ որում, որոշվում են գլխավոր և այլ ուղղություններում գործող զորախմբերը (ուժերի խմբավորումները), առաջին և երկրորդ էշելոնների, ռեզերվի կազմը և մարտակարգի այլ տարրեր:

Փ

ՓԱՂԱՆԳ, Հին Հունաստանի, Հին Մակեդոնիայի, ինչպես նաև Հին Հռոմի բանակների մարտակարգ (Ք.ա. VI-Ք.հ. IVդդ.): Ծանր սպառազինված հետևակի խիտ դասավորված տողան է: Ուներ 8-16 տողան (որոշ դեպքերում՝ մինչև 25), յուրաքանչյուրում 800-1000 ծանրազեն զինվոր: Օժտված էր մեծ հարվածային ուժով, բայց դանդաղաշարժ էր և կարող էր գործել միայն հարթ տեղանքում: Փ-ի խոցելի տեղերը եղել են թևերը և թիկունքը: Դրանց ապահովումը դրվում էր հեծելազորի և թեթևազեն հետևակի վրա:

ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ), մարտի նպատակներին հասնելու համար ստորաբաժանումների, զորամասերի, միավորումների և զորատեսակների, մարտակարգի տարրերի և տարբեր զինատեսակների համաձայնեցված համատեղ գործողություններն են ըստ խնդիրների (օբյեկտների), ուղղությունների, բնագծերի (շրջանների), տեղի և

տրված առաջադրանքները կատարելու ձևերի: Կախված մարտական գործողությունների մասշտաբից՝ տարբերում են ռազմավարական Փ., օպերատիվ Փ. և մարտավարական Փ.:

ՓՈՒՇՏԻՊԱՆԱՑ ՍԱՂԱՐ (ՓՈՒՇՏԻՊԱՆ ՍԱԼԱՐ), թիկնապահների վերակացու: Պարսից արքունի թիկնազորի պետ, որը մոտավորապես այն դերն էր կատարում, ինչ որ հայ Արշակունիների մաղխազը:

Ք

ՔՈՂԱՐԿՈՒՄ, մարտական ապահովման տեսակ: Միջոցառումների համալիր՝ ուղղված զորքերը և օբյեկտները հակառակորդից թաքցնելու և նրան զորքերի (ուժերի) առկայության, տեղաբաշխման, կազմի, վիճակի, գործողությունների և մտադրությունների, ինչպես նաև հրամանատարության պլանների մեջ մոլորեցնելու համար:

Օ

ՕՂԱԶՐԱՀ, տարբեր երկարությամբ թևերով կամ էլ առանց թևերի շապիկի տեսքով օղակներից հյուսված պաշտպանական սպառազինություն: Հայտնվել է Հին Արևելքի երկրներում Ք.ա. I հազարամյակում:

Պայմանական նշաններ



Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակների) հարձակում (գրոհ)[1]

Հեծելազորի հարձակում (գրոհ)



Մարտական գործողությունները երկրորդ փուլում (հեծելազորի գրոհը՝ միաթև սլաքով)

Մարտական գործողությունները երրորդ փուլում (հեծելազորի գրոհը՝ միաթև սլաքով)

Հետևակի գրոհի կամ զորաշարժի շարունակման ուղղություն (հեծելազորը՝ միաթև սլաքով)

Հետևակային ուժերի նահանջ (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի նահանջի նշանը համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)

Հարձակումը կասեցվել է (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի նշանը համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)



Հետևակի մարտակարգը մարտադաշտում (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի մարտակարգի նշանը համապատասխան գույնով), եթե ճակատամարտի սխեմայի վրա նշված է մարտակարգը ճակատամարտի (փուլի) վերջում, ապա ցույց է տալիս միայն սկզբնական մարտական դասավորությունը

Հեծելազորի մարտակարգը մարտադաշտում (հայոց բանակի դաշնակից ուժերի և հակառակորդի մարտակարգի նշանը համապատասխան գույնով), եթե ճակատամարտի սխեմայի վրա նշված է մարտակարգը ճակատամարտի (փուլի) վերջում, ապա ցույց է տալիս միայն սկզբնական մարտական դասավորությունը

---

[1] Մարտավարական բոլոր նշանները գունավորված են հետևյալ սկզբունքով՝ հայոց բանակ և համատեղ ուժեր՝ կարմիր, հայոց բանակի դաշնակիցներ՝ նարնջագույն, հակառակորդ՝ կապույտ:

Հետևակի գրոհի անցման բնագիծն ու գրոհի ուղղությունը (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Թեթևազեն հետևակի կամ ծանրազեն հետևակի երկրորդական նշանակություն ունեցող զորամասերի ուժերով հասցվող ոչ մեծ հարվածների ուղղությունը

Հեծելազորի կենտրոնացման տեղամաս

Հարձակում իրականացնող հետևակային զորամասի ջախջախում (հեծելազորը՝ միաթև սլաքով)

Պայմանագրի կնքման վայր

Մարտական փիղ (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Ամրոցի կամ այլ տեսակի ամրության պաշարում (միայն քարտեզների վրա)

Լեռներ (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Հրամանատարական դիտակետ (զորավարի վրան)

Ամրոց կամ ամրացված բնակավայր (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Ճակատամարտի վայր (միայն քարտեզների վրա)

Կամուրջ (միայն սխեմաների վրա)

Մայրաքաղաքներ (ներառյալ՝ այդ պատմական ժամանակաշրջանում մայրաքաղաք չհանդիսացող քաղաքներ)



Այլ բնակավայրեր

Ռազմական գործողությունների ընթացքում (կամ նկարագրվող իրադարձություններին նախորդած փուլում) փոփոխված պետական սահմաններ: Միասնական գծով գծված են այն պետական սահմանները, որոնք մնացել են անխախտ կամ ձևավորվել են նկարագրվող ռազմական գործողությունների արդյունքում

Բանակի երթակարգը (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում): Կարող են առանձին ցույց տրված լինել մարտավարական առումով կարևոր այլ բաղկացուցիչներ, որոնց առանձնացումը կարևոր է իրավիճակի առավել ամբողջական բացատրության համար

Ապստամբության օջախներ (միայն քարտեզների վրա)

Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) հարձակման մոտակա խնդիր (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) հարձակման հետագա խնդիր կամ հարձակումը շարունակելու ուղղություն (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)



Հետևակի (մի քանի զորատեսակներից բաղկացած բանակի) խմբավորումը կամ անկանոն դասավորությունը գրոհ իրականացնելու նպատակով (հայոց բանակի, դաշնակից ուժերի և հակառակորդի նշանը՝ համապատասխան գույնով, հեծելազորը՝ միաթև սլաքով)

Հորիզոնի կողմերը (միայն այն ճակատամարտերի սխեմաների վրա, որոնցում ընդունված կարգը (հյուսիսը՝ սխեմայի վերևի կողմում) խախտված է)

Խարս գյուղի այգիների ցանկապատերն ու դրանց քանդված հատվածները

Հետևակի հարձակումը (գրոհը) մարտական գործողության (ճակատամարտի նշված փուլի) ավարտին (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Նետաձգության (տեգաձգության, պարսաքարերի նետման և թեթևազեն հետևակի ստորաբաժանումների կողմից հասցվող այլ կարգի խոցման) հիմնական ուղղություն (միայն ճակատամարտերի սխեմաներում և սխեմատիկ պատկերներում)

Հրամանատարական նավ (միայն սխեմաներում և սխեմատիկ պատկերներում), մարտակարգում նավի համարից բացի կարող են նշվել նաև նավում գտնվող ստորաբաժանման կազմը և այլ կարևոր տեղեկատվություն

Մարտին մասնակցած մյուս նավերը (միայն սխեմաներում և սխեմատիկ պատկերներում), մարտակարգում նավի համարից բացի կարող է նշվել նաև նավում գտնվող ստորաբաժանման կազմը

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....3

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ.....5

ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐԽՈՒԺԱԾ ՄԱՔՔՈՒԹՆԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ 336-337ԹԹ.....7

ԳԱՆՁԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 363Թ. 12

ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ 364Թ. 16

ԱՐՏԱԳԵՐՍԻ ՀԵՐՈՍ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ԱՐՏԱԳՐՈՀԸ 368Թ. 22

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ 370Թ. 28

ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 371Թ. 33

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ 383Թ. 41

ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ 450-451ԹԹ. 49

ԽԱՂԽԱՂԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 450Թ. 50

ԱՌԱՆՁԱՐ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՋՈՐԱՄԱՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՊԱՐՍԻԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՊԱՀ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ 451Թ. ՄԱՅԻՍ.....58

ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 451Թ. ՄԱՅԻՍԻ 26.....64

ՎԱՀԱՆԱՆՑ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 481-484ԹԹ. 71

ԱԿՈՌԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 481Թ. 74

ՆԵՐՍԵՀԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 482Թ. 79

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՅՔՈՒՄ 482-484ԹԹ. 86

ՀԱՅՈՑ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ VI - VII ԴԴ. 94

ԴՎԻՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 572Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 2.....95

ԽԱՂԱՄԱԽԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 572Թ. 100

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՋՈՐԱՄԱՍԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՕՁ ԲԵՐԴԱՔԱՂԱՔՈՒՄ 602Թ. 106

ՄԱՀՈՒ ԲԼՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 607Թ. 113

ՊԱՅՔԱՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ ԵՎ ՋՈՐԱՎԱՐ ԹԵՈԴՈՐՈՍ ՌՇՏՈՒՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....120

ԵՂԲԱՐՔ ՍԱՐԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 643Թ. 125

ԱՐԾԱՓԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 647Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12.....131

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԱ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ....136

ՎԱՐԴԱՆԱԿԵՐՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 703Թ. ՓԵՏՐՎԱՐ....141

ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ ՎԱՆԱՆԴՈՒՄ ՈՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ, ԳՈՒԿԱՆՔԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 703Թ. 145

ԱՐԱԲ ՀԱՐԿԱՀԱՆՆԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ ԿՈՒՄԱՅՐԻՈՒՄ 774Թ. 149

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԽԱՐՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 774Թ. 154

ԲԱԳԱՎԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 774Թ. 160

ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ 849-855ԹԹ. 166

ԱՐՃՈՒՃԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 850Թ. 168

ՄՈՒՇԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 851Թ. 173

ՄՈՒՇԻ ԱՋԱՏԱԳՐՈՒՄԸ ԽՈՒԹԵՑԻ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 852Թ. ՀՈՒՆՎԱՐ....181

ԱՐՅԱՆ ԼՃԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 852Թ. 186

ՔԹԻՇԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 854Թ. 193

ՊԱՎԼԻԿՅԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՎՐՈՊՈՏԱՄՈՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 843Թ. 201

ՍԱՄՈՍԱՏԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 859Թ. 205

ԽՐԻՍՈԽԻՐԻ ԵՎ ԿԱԼԼԻՍՏՈՍԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ ԴԵՊԻ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԱՐԵՎՄՈՒՏՔ 870Թ. 211

ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ 860-870-ԱԿԱՆ ԹԹ. 219

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՋԱՀԱՊԻ ՋՈՐՔԵՐԻ ԴԵՄ 863Թ. 221

ՀԱՅ ՀԵՏԱԽՈՒՅԶՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ....228

ԴՈՂՍԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 894Թ. 236

ԱՇՈՏ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ....246

ՀԱՂԹԱՄԱՐՏԸ ԲՇԻՐԻ ՋՈՐԱԳՆԴԻ ԴԵՄ ՄԱՋԱՋ ԳԱՎԱՌՈՒՄ 924Թ. 254

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 925Թ. 261

ԲՇԻՐԻ ՋՈՐՔԵՐԻ ՁԱԽՁԱԽՈՒՄԸ ՔԵՂԱ ԱՄՐՈՑԻ ՄՈՏ 925Թ. 270

ԱԲԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ....275

ԾՈՒՄԲԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ 998Թ. 281

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ....291

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 292

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ....294

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ....326

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՏՈՐ Բ

ԵՐԵՎԱՆ-2009

«Մեր հաղթանակները» նախագծի ղեկավար և հեղինակ՝
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հատորի հեղինակ՝
Սուրեն ՄԱՐՏԻԿՅԱՆ

Գիտական խմբագիր՝
Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
պատմ. գիտ. դոկտոր

Ռազմական խմբագիր՝
Վահան ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բառարանի հեղինակային խումբ՝
Սամվել ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հրաչյա ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
Գագիկ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արեգ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Աբել ՆԱԶԱՐՅԱՆ

Հատորի ռազմական քարտեզների, սխեմաների
և սխեմատիկ պատկերների հեղինակ՝
Սուրեն ՄԱՐՏԻԿՅԱՆ

Քարտեզագիր՝
Տիգրան ՎԱՐԴԱՆՅԱՆ

Քարտեզագրական հիմք՝
Վազգեն ՂԱԶԱՐՅԱՆ

Ձենքերի գծանկարիչ՝
Թագուհի ՀՄԱՅԱԿՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ձևավորում և էջադրում՝
Արմեն ԲԱՐԻՇՅԱՆ

Տպագրված է «ԳԱՍՊՐԻՆՏ» ՍՊԸ: Տպաքանակը՝ 1000 օրինակ:
Ծավալը՝ 41.5 տպ. մամուլ: